


ՉՆ. ՏԱՐԻ

ԵՍԱՅԻ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՐՎԱՆԴԻՐ
ԱՐԵՆԱՅՅՆ ՀԱՅՑԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԵՋՄԻԱԾՆԻ

Յո–հո–ապ

2026
Ա. ԵՋՄԻԱԾԻՆ



ՀՐԱՄԱՆԱՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«ԷՋՄԻԱԾԻՆ»
կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրակազմ

Գլխաւոր խմբագիր՝ **Գէորգ Մադոյեան**

Գլխաւոր խմբագրի տեղակալ՝ **Արման Մալոյեան**

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Մկրտիչ եպս. Պռօշեան,**
Տ. Յովնան եպս. Յակոբեան,
Տ. Ղաբարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Ռուբէն վրդ. Ղարգարեան,
Տ. Յուսիկ աբղ. Սմբատեան,
Տ. Արարատ քհյ. Պօղոսեան,
Ազատ Բոզոեան,
Վահէ Թորոսեան,
Կարէն Մաթեւոսեան

“Etchmiadzin”
Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**
Deputy Editor-in-Chief **Arman Maloyan**
Stylistic editor **Nare Sargsyan**
Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Bishop Mkrtich Proshyan,**
Bishop Hovnan Hakobyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Ruben Zargaryan,
Rev. Fr. Husik Smbatyan,
Fr. Ararat Poghosyan,
Azat Bozoyan,
Vahe Torosyan,
Karen Matevosyan

«Эчмиадзин»
Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворк Мадоян**
Заместитель главного редактора **Арман Малоян**
Стилистический редактор **Наре Саргсян**
Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Епископ Мкртич Прошян,**
Епископ Овнан Акопян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Рубен Заргарян,
Иеромонах Иусик Смбатян,
Иерей Арарат Погосян,
Азат Бозоян,
Ваге Торосян,
Карен Матевосян



ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵԻ ՅԱՅՏՆԵՑԱԻ.
ՁԵՁ ԵԻ ՄԵՁ ՄԵԾ ԱԻԵՏԻՍ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՒ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 6 հունվարի, 2026 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

> «Խավարի մեջ նստած ժողովուրդը մեծ լույս տեսավ. եւ լույս ծագեց նրանց վրա, որ նստում էին մահվան երկրի եւ ստվերների մեջ»
>
> *(Մատթ. Դ.16)։*

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Այսօր վերստին Սուրբ Ծննդյան հրեշտակաձայն ավետիսն է թեւածում մեր եկեղեցիներում, մեր ընտանիքներում: Միասնաբար փառաբանում ենք մեր Տիրոջն ու Փրկչին, Ով ծնվեց եւ աշխարհ եկավ մեր փրկության համար:

«Խավարի մեջ նստած ժողովուրդը մեծ լույս տեսավ. եւ լույս ծագեց նրանց վրա, որ նստում էին մահվան երկրի եւ ստվերների մեջ»: Ավետարանիչը Աստվածորդու Ծնունդը համեմատում է լույսի ծագման հետ:

Արդարեւ, «խորհուրդ մեծ եւ սքանչելի»: Անժամանակն Աստված անցավոր աշխարհ եկավ: Անծայրածիր տիեզերքը ստեղծողը պարփակվեց մարդկային մարմնում, երկնային գահին բազմողը՝ փոքրիկ ու աղքատիկ քարայրում: Ազգերը հրավիրվեցին մեղքը թոթափելու, մահվան խավարից ելնելու եւ հավիտենության ժառանգորդ լինելու: «Աստված մարդացավ, որպեսզի մարդը աստվածանա»,— ուսուցանում են Եկեղեցու Սուրբ Հայրերը: Հիրավի, Աստծու մարդանալը սկիզբն էր մարդու մաքրագործվելու, սրբագործվելու ու աստվածանալու:

Սիրելիներ, Քրիստոսի ուղենշած այս ճանապարհից խոտորվելը աշխարհը դարձնում է անարդարության, թշվառության ու դժբախտությունների թատերաբեմ, ընկղմում մոլորությունների խավարի մեջ, հանգեցնում անձնական ու հասարակական կյանքի խեղման, արժեքների աղավաղման ու ոչնչացման, որոնց դրսեւորումները տեսնում ենք նաեւ մեր իրականության մեջ: Այսօր մեր կյանքում տկարանում են միմյանց հանդեպ հավատն ու վստահությունը, որպես քաջություն է ընկալվում անհարգալից ու անզուսպ պահվածքը, խոսքի ազատությունը հակադարձվում է այլակարծության անհանդուրժողությամբ, բանավեճը՝ վերածվում վիրավորանքների ու վարկաբեկումների, իսկ հանրային օգուտը, հայրենանպաստ եւ ազգանվեր ծառայությունը ստորադասվում անձնական եւ խմբակային նեղ շահերի: Մեր Սուրբ Եկեղեցին շարունակում է ենթարկվել բռնաճնշումների: Այս իրավիճակը լուրջ հարված է մեր ազգի ու պետության հեղինակությանը եւ խորը վերք՝ հասցված համայնքներին ու հավատացյալներին: Հակառակ անօրինական ու կանոնախախտ գործողությունների՝ մեր Սուրբ Եկեղեցին իր բարեպաշտ ժողովրդով ամուր ու անսասան է, հավատարիմ իր տերունաշնորհ կոչմանն ու առաքելությանը: Հայոց Եկեղեցին սուրբ է ու սրբարար՝ հիմնադրված մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությամբ որպես «մարդկանց քավարան, հրեշտակաց բնակարան եւ տուն Աստծու»: Առաքելական մեր Մայր Եկեղեցին պատմության հոլովույթներում ենթարկվել է բազում հարձակումների, անցել սոսկալի նեղությունների ու տառապանքների միջով, մարտիրոսվել ու նահատակվել, բայց երբեք հուսահատության գերի չի դարձել, քանզի գիտակցել է, որ ճշմարիտ ազատությունը եւ փրկությունը Քրիստոսին հնազանդվելու, Նրան ապավինելու մեջ է: Քրիստոսով կյանքը լցվում է սիրով ու ողորմությամբ, ազնվությամբ ու արդարությամբ: Քրիստոս ճանապարհն է խավարից դեպի լույս, մեղքից դեպի սրբություն: Տերը միշտ հավատարիմ է՝ փրկելու խոտորումներից ու անկումներից մեղսակորույս մարդուն, քանզի ինչպես հռչակում է եզեկիել մարգարեն, Աստված չի տենչում մեղավորի մահը, այլ նրա դառնալը չար ճանապարհից եւ ապրելը (ԺՀ. 23): Քրիստոսով մեր առջեւ բացվում է վերհառնումի, հավատով նորոգության ուղին: Ըստ առաքյալների խոսքի՝ Փրկիչը մեր կենդանի Վեմն է, որ կարող է մեզ հաստատուն պահել (հմմտ. Ա. Պետր. Բ. 4, Հռ. ԺԴ. 24) խռովահույզ աշխարհի ալեկոծություններում: Աստվա-

ծորդու փրկարար զորութ֊յամբ է, որ նահանջում են հեծութ֊յուն, մահ ու կործանում, եւ Փրկչի Սուրբ Ծննդ֊յամբ լույս է ծագում նրանց վրա, որ նստում են մահվան երկրի եւ ստվերների մեջ։

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, Սուրբ Ծննդյան հրեշտակաձայն ավետիսը եւ բեթղեհեմյան աստղի լույսը այսօր էլ բոլոր մարդկանց ուղղված հրավեր են Աստծուն ապավինութ֊յամբ կյանքը վերափոխելու բարիով ու բարիքով, հաստատելու խաղաղութ֊յուն աշխարհում եւ հաճութ֊յուն մարդկանց մեջ։ Երկնառաք այս պատգամին ունկնդիր՝ ապրենք ու գործենք Տիրոջ հետ՝ բոլոր բնագավառներում մեր նախանձախնդիր ու ամբողջանվեր ծառայութ֊յամբ, ի խնդիր անձնական, ընտանեկան ու հայրենական կյանքի ապահով ու բարօր ընթացքի։ Վճռակամ լինենք հաստատուն պահելու օրինահարգութ֊յունը, մերժելու անիրավութ֊յունն ու կամայականութ֊յունը, ատելութ֊յունն ու քինախնդրութ֊յունը, որոնք մեծապես վնասում ու քայքայում են պետական ու ազգային մեր ներուժը։ Մեր առջեւ բացված է ճանապարհը դեպի Տերը, դեպի երկնառաք պարգեւներ ու հավիտենութ֊յուն։ Այդ ուղիով, տերունական պատգամների իրագործումով է, որ մեր ժողովուրդը կհաղթահարի տառապանքների խավարը, եւ, ավետարանչի խոսքի համաձայն, լույս կծագի մեր կյանքում, մեր նեղութ֊յունների ու դժբախտութ֊յունների հաղթահարման ճանապարհին։ Արդ, պարզասիրտ հովիվների ու իմաստուն մոգերի պես անվարան երկրպագենք նորամանուկ Հիսուսին եւ մեր սրտերը բացենք մարդեղացյալ Աստվածորդուն ընդունելու համար։ Նախանձախնդիր լինենք Փրկչի պարգեւած շնորհներով վերափոխվելու, որպեսզի ինչպես Քրիստոս ծնվեց եւ դարձավ մարդու Որդի, այդպես էլ մենք ճշմարիտ ընթացքով լինենք Աստծու որդիներ՝ ըստ առաքյալի խոսքի. «Երբ ժամանակը իր լրումին հասավ, Աստված ուղարկեց Իր Որդուն..., որպեսզի մենք որդեգրութ֊յուն ընդունենք» (Գաղ. Դ. 4–5)։ Հավատարիմ մնանք Աստծուց մեզ ընծայված այս մեծագույն շնորհին եւ աստվածահաճո նորանոր իրագործումներով կերտենք մեր անվտանգ ու ապահով ներկան եւ սերունդների լուսավոր գալիքը։

Սուրբ Ծննդյան բերկրալի ավետիսով Մեր ողջույնն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ








արքեպիսկոպոս Մաշալյանին։ Ի Քրիստոս սիրով ողջունում ենք քույր Եկեղեցիների Պետերին՝ հայցելով մարդեղացյալ Փրկչի զորակցությունը իրենց աստվածապատվեր առաքելության մեջ։ Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ համայն հավատավոր մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս։

Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության հուսառատ այս օրը աղոթք բարձրացնենք առ Փրկիչ մեր Տերը՝ խնդրանքով, որ խաղաղությունը թեւածի ողջ աշխարհում, հայրենի մեր եզերքներում, եւ ապահովության ու շենության մեջ հզորանա մեր պետությունը, բարօրության մեջ հարատեւի մեր ժողովուրդը։ Հայց վերառաքենք հայրենազրկված արցախահայ Մեր զավակների տոկունության ու ոգու ամրության եւ նրանց ոտնահարված իրավունքների վերականգման համար։ Աղոթենք հայրենյաց պաշտպան զինվորականների, հայրենիքի համար զոհված մեր քաջորդիների հոգիների հանգստության եւ նրանց ծնողների ու հարազատների մխիթարության համար։ Աղոթենք ապօրինաբար ազատազրկված հոգեւորականների, ազգային բարերարի ու նվիրյալ հայորդիների, այլեւ գերության մեջ գտնվող եւ անհայտ կորած մեր զավակների համար։ Թող Բարձրյալի Սուրբ Աջի պահպանության ներքո մեր կյանքը լուսավորյալ մնա աստվածային ներկայությամբ, զարդարվի հավատավոր բարի գործերով, եւ մենք գոհությամբ փառաբանենք մարդեղացյալ Փրկիչ մեր Տիրոջը այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն։

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս։

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ



Տ. ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(21 դեկտեմբերի, 2025 թ.)

Յաճուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.ամէն:

«Աստուա՛ծ, ſաւեա՛ զիս զմեղաւորս»
(Ղուկ. ԺԸ. 13):

Սիրելի՛ հավատացյալ եղբայրներ և քույրեր,

Այսօրվա Ավետարանական հատվածում մեր Տերը Հիսուս Քրիստոս Իր շուրջը հավաքված մարդկանց պատմում է մաքսավորի և փարիսեցու վերաբերյալ մի առակ, որը լավագույնս բացահայտում է մարդկային լավ և վատ հատկանիշները՝ մի կողմից խոնարհությունն ու սեփական սխալները գիտակցելու կարողությունը, մյուս կողմից՝ մեծամտությունն ու անձնասիրությունը: Քրիստոսավանդ այս պատմությունը մեզ ուսուցանում և իրավամբ առաջնորդում է դեպի խոնարհություն ու ազնվություն, սրտաբուխ աղոթք, որոնք մարդուն պարգևում են անմիջական և ճշմարիտ հաղորդակցություն Աստծու հետ:

Տիրոջ ներկայացրած առակում Փարիսեցին, որպես Հին Ուխտի ներկայացուցիչ, աղոթքի ժամանակ կարծես հաշվետվություն էր ներկայացնում սեփական «բարեպաշտության» վերաբերյալ՝ պարծենալով իր կատարած գործերով: Նա մանրամասն թվարկում էր իր պահած կանոններն ու օրենքները և գոհանում էր իր կատարած ծիսակարգերից, որոնք, իրականում ոչ այլ ինչ էին, քան ցուցամոլություն և սեփական անձի գովաբանություն: Փարիսեցին իրեն համարում էր անբասիր և օրինապահ մարդ, սակայն նրա աղոթքը վերածվել էր մեծամտության և ինքնագովության երկար մի շարադրանքի՝ խախտելով բարոյական և հոգևոր բոլոր սկզբունքները: Նա զուրկ էր այն գիտակցումից, որ Աստծու առջև կանգնած մարդը

պետք է լինի խոնարհ ու երկյուղած, այլ ոչ թե մեծամիտ և պարծենկոտ։ Դեռ ավելին՝ փարիսեցին, առանց գիտակցելու, ծածուկ՝ հավանաբար ինքն իրեն արդարացնելով, փորձում էր արհամարհել իր կողքին կանգնած մաքսավորին՝ միամտորեն կարծելով, թե այդ համեմատությունը կօգնի, որ ինքն արդարանա, որովհետև նրա համար խորթ էին դիմացինին սիրելու կարողությունը, գթությունն ու մարդկային կարեկցանքը, հակառակ այն բանի, որ ինքը շատ լավ գիտեր աստվածաշնչյան հետևյալ ճշմարտությունը՝ «Տերը հակառակ է ամբարտավաններին, Նա շնորհ է տալիս խոնարհներին» (Առակ. Գ. 34)։ Ահա թե որտեղ է թաքնված մարդկային մեծագույն արատը՝ հանուն ինքնարդարացման՝ ընկերոջը դատապարտել, կամ սեփական անձը մեկ ուրիշի հետ համեմատել, անձնական տկարություններն ու սխալները թաքցնել։ Այս ամենը շատ հեռու են քրիստոնեական ճշմարտություններից և բարոյական սկզբունքներից, քանզի իրական քրիստոնյան պետք է խուսափի ինքնագովասանքից, դիմացինին դատապարտելուց ու համեմատականներ անցկացնելուց՝ գիտակցելով, որ միայն Աստված է կատարյալ և արդար։ Փարիսեցու աղոթքը, ինչպես Ավետարանն է վկայում, իրականում աղոթք չէր, այլ՝ ինքնագովասանք։ Նա կարծես տաճար էր եկել՝ Աստծու առջև ցույց տալու իր արդար և սուրբ լինելը։ Այդպիսի աղոթքը ոչ թե Աստծու հետ հաղորդվելու միջոց է, Աստծու շնորհը ստանալու ցանկություն ու բաղձանք, այլ սեփական անձի պաշտամունք, որը մերժելի է մեր Տիրոջ համար։

Փարիսեցու և մաքսավորի միջև առկա է արմատական հակադրություն։ Փարիսեցու աղոթքն ուղեկցվում է ինքնաբավությամբ և արտահայտում էր նրա հպարտությունը, մինչդեռ մաքսավորի աղոթքը խորապես խոնարհված հոգու ճիչ է՝ լի զղջումով և ապաշխարությամբ։ Իր մեղքերի ծանրությունից հոգեպես տկարացած, Աստծու զորությունից վախեցած ու Նրա ամենատես հայացքի առջև կանգնած մաքսավորը նույնիսկ չէր համարձակվում իր հայացքը բարձրացնել դեպի երկինք, չէր փորձում արդարանալ, համեմատվել ուրիշների հետ, այլ գիտակցելով սեփական մեղսավորությունը՝ ցանկանում էր անկեղծ սրտով ապաշխարել։ Համակված զղջման խոր զգացումներով՝ նա միայն ծեծում էր իր կուրծքը՝ աղոթելով՝ «Աստվա՛ծ, ների՛ր ինձ՝ մեղավորիս»։ Նրա անկեղծ աղոթքը արտահայտում էր մարդկային հոգու ճշմարիտ ձգտումը՝ անդադար պայքարել սեփական մեղքերի դեմ՝ առանց անձնասիրության և հպարտության։ Մարդկային կյանքի թերևս ամենագեղեցիկ և ամենանվիրական պահը աղոթական վիճակն է, երբ

մարդը, առանձնության մեջ և Աստծու հետ դեմառդեմ, անդրադառնում է իր գործերին ու մեղքերին, զղջում դրանց համար և հասնում ինքնամաքրագործման՝ միաժամանակ խնդրելով Աստծու ողորմությունն ու գութը:

Սա է աղոթքի ճշմարիտ ընկալումը.այն չպետք է դառնա ինքնարդարացման կամ ուրիշներին, իր նմաններին արհամարհելու առիթ, այլապես՝ աղոթքը կկորցնի իրական նշանակությունը և կվերածվի միայն ձանձրալի ինչ-որ բարբաջանքի:

Մաքսավորի համար աղոթքը երջանիկ այն պահն էր, երբ ինքը, զգալով իր մեղքերի ծանրությունը, ցավով և տրտմությամբ աղերսում էր Աստծու ներողամտությունը: Ս. Գրիգոր Նարեկացու խոսքերով՝ «....նրա սրտի ողբաձայն հառաչանքների աղաղակն էր, որ բարձրանում էր առ Աստված»: Դա սրտի հառաչանք էր, որը բարեպաշտ էր դարձնում նրան ոչ թե արտաքուստ, այլ ներքուստ՝ իր խոնարհությամբ: Աստված կատարում է միայն այն աղոթքը, որը լի է ճշմարիտ սիրով և զղջումով, բայց ոչ ինքնագովությամբ ու ցուցամոլությամբ: Այս առակում տեսնում ենք կյանքում երբեմն հանդիպող երկու հակադիր կերպարների. մեկը՝ ամբարտավան, մյուսը՝ խոնարհ: Եւ Հիսուս Քրիստոս ամփոփում է այս առակը՝ նշելով. «Սա,— նկատի ունենալով մաքսավորին,— իջավ իր տունը արդարացած, ոչ մյուսը, որովհետև ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի» (Ղուկ. ԺԸ. 14): Սույն պատգամը մեզ համար ոչ միայն կարևոր վկայություն է, այլ նաև Աստծուն և մեր մերձավորներին ջերմագին ու անկեղծորեն սիրելու կոչ:

Սիրելի՛ հավատացյալներ, մարդը, որպես հողեղեն արարած, ունի թերություններ, թույլ է տալիս սխալներ: Այն թերությունը, որ նա տեսնում է ուրիշների մեջ, իրականում առկա է նաև իր մեջ: Այո՛, երբ մարդն արհամարհում է ինչ-որ մեկին կամ սեփական անձը վեր դասում մյուսներից, նա չի կարող արդարացված լինել ո՛չ մարդկանց, ո՛չ իսկ Աստծու առջև: Մարդը ճշմարիտ արդարության, Տիրոջ գնահատանքին կարող է հասնել միայն այն ժամանակ, երբ նկատելով սեփական տկարություններն ու սխալները՝ անկեղծ զղջումով ծնկի գա, աղերսի Աստծու ողորմությունն ու գութը և այդպիսով բռնի իրական արդարացման ճանապարհը: Քրիստոնեական ընկալմամբ՝ աղոթքը խոկման պահ է, երբ մարդը, իր Արարչի հետ դեմառդեմ կանգնած, հոգևոր հաղորդակցություն է հաստատում Նրա հետ՝ մի կողմից զգալով Աստծու անսահման մեծությունը, իսկ մյուս կողմից՝ սեփական խեղճությունն ու փոքրությունը:

Աղոթքի ընթացքում էականը ոչ թե ուրիշների հետ համեմատվելն է, ուրիշների գործած սխալները հիշելն ու դատապարտելն է, այլ՝ գիտակցելը սեփական սխալներն ու մեղքերը և դրանց համար զղջալն ու ապաշխարելն է: Մարդը որպես նախաօրինակ պետք է ունենա Քրիստոսի երկրային կյանքն ու Աստծու սրբությունը, որ չընկնի ինքնարդարացման սնափառ և ունայն զգացումների որոգայթը:

Սակայն ցավ ի սիրտ պետք է նշել, որ մեր օրերում հատկապես ականատես ենք լինում որոշ անձանց, որոնք ինչպես փարիսեցի չեն հապաղում հանրայնորեն փնովելու և քննադատելու իրենց եղբայրներին, իրենց հայրերին ու իրենց Մայր Եկեղեցին, ովքեր հանրային կերպով քննադատում են դիմացինին, միայն ու միայն իրենք իրենց օրինապահ և սուրբ ներկայացնելու համար: Նման մարդկանց մասին է Քրիստոս ասում. «Դուք նման եք սպիտակեցրած գերեզմանների, որոնք դրսից գեղեցիկ են երևում, բայց ներսից լի են ապականությամբ» (հմմտ. Մատթ. ԻԳ. 27): Բայց Տերը լսում է և կատարում է ոչ թե նրանց՝ հին ու նոր կեղծավոր փարիսեցինների խնդրանքները, այլ նրանց ովքեր խոնարհ սրտով ու հոգով, զղջացող անձով՝ ինչպես ավետարանական մաքսավորը, կանգնած տաճարի մի անկյունում, բախելով իրենց ներքին տաճարի դռները, անձայն, բայց հոգեպես բարձրաղաղակ առ Աստված՝ աղոթում են՝ եղբայրների, հայրերի և ողջ սուրբ Եկեղեցու և Հայրենի երկրի համար: Եւ ինչպէս Սուրբ Գիրքն է ասում՝ «Ով Ինձ հաւատում է, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն» (Հովհ. է. 38): Այո՛, միայն խոնարհ ու զղջացող անձի ներաշխարհում կարող է բնակվել ու առատապես բխել Սուրբ Հոգին՝ Իր կենդանի ջրերով հարուցանելով անկյալ, մեռյալ անձին:

Իրապես, սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մարդկությունն այսօր, առավել քան երբևէ, մաքսավորի նման աղոթողների կարիքն ունի՝ ճշմարիտ լույսը վերագտնելու և Աստծուն նվիրվելու համար: Պետք է գնալ առ Աստված՝ ազատվելով փառամոլությունից և անձնասիրությունից: Հպարտությամբ ու մեծամտությամբ համակված մարդը չի կարող ապրել աղոթքի այդ սրբազան պահը: Քրիստոնեական աղոթքը պետք է լինի ճշմարիտ ու խոնարհ՝ առանց ինքնագովության: Մեր Տեր Հիսուս Քրիստոս, մաքսավորի և փարիսեցու վերաբերյալ առակը պատմելով, բացահայտում է մի պարզ, բայց հավիտենական ճշմարտություն՝ Աստված նայում է ոչ թե մարդու արտաքին բարեպաշտությանը, այլ՝ նրա սրտի խոնարհությանը:

Ուստի, սիրելինե՛ր, եկե՛ք առաջին հերթին քննենք մեր անձերը, հաստատակա՛մ լինենք Աստծու օգնությամբ մեր սխալները ուղղելու մեջ։ Եւ թող մեր հանապազօրյա աղոթքը լինի մաքսավորի աղոթքի նման՝ լի հեզությամբ ու խոնարհությամբ, իսկ մենք՝ իբրև մաքսավորներ, եկե՛ք երկինք առաքենք մեր հոգու խորքից բխող ճիչը՝ «Աստվա՛ծ, ների՛ր մեզ՝ մեղավորներիս». այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։

Տ. ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱՄ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(4 հունվարի, 2026 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Եւ ես ուխտեմ ձեզ, որպես եւ Հայր իմ ուխտեաց ինձ, զարեայութիւն։ Ջի ուտիցէք եւ ըմպիցէք ի սեղան իմ յարեայութեանն իմում»
(Ղուկ. ԻԲ. 29–30)

Սիրելի՛ հավատացյալ եղբայրներ եւ քույրեր,

Մենք այսօր ապրում ենք մեր եկեղեցական տարվա վերջին կիրակին։ Աշխարհը Նոր տարին սկսում է հունվարի մեկով՝ մի թվի փոփոխությամբ, օրացույցի վերջին թերթի շրջումով։ Սակայն Սուրբ Եկեղեցին իր Նոր տարին սկսում է մեծ եւ աքանչելի խորհրդով՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնով։ Եկեղեցական տարին բացվում է ոչ թե ժամանակի հաշվարկով, այլ՝ փրկագործության պատմությամբ։

Մեր ծիսական մատյաններից հաստափոր Ճաշոց գիրքը, որից ամեն օր հնչում է աստվածաշունչ խոսքը, եկեղեցական տարվա սկիզբը հռչակում է մարմնացյալ Բանի՝ Հիսուս Քրիստոսի ծննդյամբ, երբ Լույսը ծագեց աշխարհի խավարում, եւ հավիտենությունը հպվեց արարչադիր ժամանակին։

Արդարեւ, Սուրբ Ծնունդը մեզ հիշեցնում է, որ մարդ էակի կյանքի ու վերափոխման սկիզբը, բնավ, նոր օրացույցը չէ, այլ՝ նորոգյալ միտքը, սիրտը, հոգին, միով բանիվ՝ ողջ անձը, նոր մարդն ի Քրիստոս Հիսուս։ Այո, միայն Փրկչի Սուրբ Ծնունդն է ի զորու վերափոխելու մարդուն եւ մարդկային կյանքն առհասարակ։ Միմիայն Քրիստոսի Սուրբ Ծննդյամբ է,

որ սկսվում է ճշմարիտ նոր կյանքը։ Եւ ահա, սիրելինե՛ր, մենք այսօր ապրում ենք նախերգանքը սքանչելափառ Սուրբ Ծննդյան։

Եւ կանգնած այդ մեծ ու սքանչելի խորհրդի առջե՝ւորով բացվում է Աստծու արքայութիւնը եւ գալով շաղախում է մեր կյանքն ու հաստատվում նաեւ մեր մեջ, մտաբերենք, որ հոգեւոր կյանքի հիմքը եղող եկեղեցական տարին մեզ սովորեցնում է ապրել ոչ թե անցնող ամսաթվերով, այլ՝ սրբազան ու փրկարար հիշողութիւնմբ՝ Քրիստոս Աստծու Սուրբ Ծննդյամբ, Նրա կյանքով, խաչի ճանապարհով ու խաչելութիւնմբ, Նրա հաղթական ու ամենակեցույց Սուրբ Հարութիւնմբ։ Եւ այդ սրբազան ու փրկարար հիշողութիւնը՝ որպես ամենամյա ճշմարիտ ճանապարհ, մեզ առաջնորդում ու տանում է դեպի անվախճան հավիտենութիւն՝ դեպի Աստծու արքայութիւն, որը, սակայն, սկիզբ է առնում այս աշխարհում եւ իր լրումին հասնում երկնքում՝ Նոր աշխարհում, որտեղ էլ, Տիրոջ խոստման համաձայն, պետք է ուտենք եւ խմենք Իր սեղանից Իր արքայութեան մեջ։

Իսկ այդ խոսքերը, սիրելի՛ հավատացյալներ, մեր Տեր Հիսուս Քրիստոս, ինչպես վկայում է Սուրբ Ղուկաս ավետարանիչը, արտասանում էր Վերջին ընթրիքի ժամանակ. այն գիշերը, երբ խավարը կարծես «հրճվանքով» հաղթում էր լույսին։ Աստվածընտրյալ առաքյալները, որոնք ի մի էին եկել Վերնատանը, դեռ լիովին չէին հասկանում Քրիստոս Փրկչին սպասվող տառապանքի խորութիւնն ու խորհուրդը, ավելին, նրանք էլ՝ որպես տակավին պարզ, Հոգով չվերածնված մարդիկ, տարված էին մեծ կամ փոքր համարվելու ունայն մտորումներով ու հակաճառութիւններով։ Իսկ մեր Տերը՝ կատարելապես գիտակցելով Իր խաչի ճանապարհը, նրանց հետ խոսում էր վճռական, խոսում էր հաղթութեան ու խոստման լեզվով։ Քրիստոս Աստված վերջ դնելով առաքյալների աշխարհային մտորումներին ու հակաճառութիւններին՝ վճռապես հռչակում էր

Իր խոստումը. «Եւ դուք եք, որ իմ փորձութիւնների մեջ ինձ հետ էիք մնում մինչեւ այժմ։ Եւ ես խոստանում եմ ձեզ,— ինչպես եւ իմ Հայրն ինձ խոստացավ տալու արքայութիւնը»։ Մարդու Որդի դարձած Աստվածորդին, մեծագույն տառապանքի այդ ժամին, չէր ընկրկում, չէր դատապարտում, չէր խոսում պարտութեան մասին, այլ՝ աստվածաբար խոստանում էր տալ Իր արքայութիւնը։

Հիրավի, այս խոսքը Սուրբ Ավետարանի ամենախորին մխիթարական խոսքերից մեկն է, որովհետեւ այն հնչում է ոչ թե երանական խաղաղութեան մեջ, այլ՝ ծանր, մահացու փորձութեան շեմին։ Խոսք, որի մեծագույն արժեքն

ու զորեղ կենսունակությունը միշտ տեսանելի է նաեւ մեր ժողովրդի կյանքում՝ անցյալում, այսօր եւ ցկատարած աշխարհի։

Արդարեւ, սիրելի՛ հավատացյալներ, մեր ժողովրդի պատմությունը միանգամայն նման է այդ Տերունի գիշերվան։ Մեր ազգային ճանապարհը շատ հաճախ անցել է խավարի ու մահվան ստվերների միջով։ Մենք էլ ենք տեսել ու կրել դավաճանություն ու մատնություն, հայրենիքի ավերում ու կորուստ, սրբավայրերի պղծում եւ խորտակում, ցեղասպանություն, հայրենազրկում եւ ազգի տարասփռում։ Սակայն այդ ամենի մեջ մեր աստվածազգյաց հայոց ազգը երբեք չի՛ կորցրել մեկ բան՝ Արքայության խոստումը, որն արտահայտվել է Տիրոջ կենարար ու կենսատու Սուրբ Սեղանի շուրջ համախմբվելու հաստատուն հավատքով ու կամքով։

Քրիստոս Աստված ասում է. «Եւ ես խոստանում եմ,— ինչպես եւ իմ Հայրն ինձ խոստացավ տալու արքայությունը»։ Տերունի այս խոսքը սքանչելիորեն մեկնաբանելով բացահայտում է աստվածային կամքը՝ անարգ խաչից դեպի փառավորում, ծառայակերպ հնազանդությունից դեպի Հոր աջակողմը կանգնում։ Հայր Աստված արքայությունը տալիս է Իր մարդեղացյալ Որդուն՝ Նրա կատարյալ սիրուն ու վստահությանը, Նրա կատարյալ հնազանդությանը եւ զոհաբերությանն ի տրիտուր։ Եւ այդ նույն արքայությանն է Քրիստոս Աստված կոչում Իր աշակերտներին, իսկ նրանց միջոցով՝ ամբողջ Եկեղեցուն՝ բոլոր քրիստոնյա ժողովուրդներին, մեզ ամենքիս. «Եթե Քրիստոսի հետ մեռանք, նրա հետ էլ պիտի ապրենք, եթե համբերենք, նրա հետ էլ պիտի թագավորենք, եւ եթե ուրանանք, նա էլ մեզ պիտի ուրանա, եւ եթե հավատարիմ չմնանք, նա հավատարիմ է մնում, որովհետեւ ինքն իրեն ուրանալ չի կարող»,— ահա այսպես էին երգում քրիստոնյա մարտիրոսներն ըստ Սբ Պողոս առաքյալ վկայության։

Սիրելի՛ հավատավոր հայորդիներ,

Որոշ է, որ Աստծու արքայությունը չի տրվում ուժով, բռնությամբ, այլ՝ բացառապես սիրով, արդարությամբ, հավատարմությամբ ու հնազանդությամբ։ Այն ձեռք չի բերվում զենքերով, այլ՝ ինքնազոհողությամբ եւ խաչի ճանապարհով։ Ահա, հենց այս ճշմարտությունն է, որ դարեր շարունակ պահպանել ու պաշտպանել է մեր քրիստոնյա մայր ժողովրդին։

Երբ մեր ժողովուրդը զրկվել է երկրային թագավորներից ու իշխաններից, նա՝որպես Քրիստոսի խորհրդական մարմին, որպես Սուրբ Եկեղեցի երբեք չի՛ զրկվել իր երկնային Արքայից։ Երբ խլվել ու խորտակվել են հայոց գահերն ու պալատները, դպրոցներն ու տաճարները,

այդ Սուրբ Եկեղեցում՝ հավատավոր հայ ժողովրդի մեջ, կանգուն է մնացել Աստծու արքայությունն իր հոգեղեն Սուրբ Սեղանով: Եւ այդ Սուրբ Սեղանի շնորհիվ հայ մարդը սովորել է ապրել ոչ միայն որպես պատմական ազգ, այլ՝ որպես հավատքի կենդանի ժողովուրդ, ոգու ժողովուրդ, որպես քրիստոսաօծ արարչական անմահ զարմ:

«Որ ուտեք եւ խմեք իմ սեղանից իմ արքայության մեջ». մեր Տիրոջ այս խոսքով բացվում է քրիստոնեական կյանքի խորագույն խորհուրդներից մեկը: Արքայությունը հեռավոր խոստո՛ւմ չէ, միայն ապագայո՛ւմ տրվելիք չէ. այն կենդանի իրականություն է, որն սկսվում է այստեղ, այս զգալի աշխարհում՝ Հայոց Եկեղեցու Սուրբ Մկրտությամբ եւ Սուրբ Պատարագի սեղանի շուրջ: Ամեն անգամ, երբ մենք հավատքով ու ապաշխարությամբ մոտենում ենք Սուրբ Հաղորդությանը, ոչ միայն հաղորդակից ենք դառնում գալիք Արքայության խոստմանը, այլեւ թույլ ենք տալիս, որ մեր ներսում հաստատված Աստծու արքայության սերմն աճի ու զարգանա: Քրիստոս Աստված ազդարարում է. «Աստծու արքայությունը դրսից տեսանելի կերպով չի գալիս, ...Աստծու արքայությունը ներսում, ձեր մեջ է» (Ղուկ. ԺԷ. 21):

Այո, Սուրբ Հոգով վերածնվելով եւ կենդանի տաճար դառնալով, այնուհետեւ Սուրբ Հաղորդությունն ընդունելով՝ մարդս դառնում է Աստծու արքայության կենդանի բնակավայր: Եւ Աստված գալիս բնակվում է մեր մեջ, եւ մարդու սրտից իսպառ վերանում է եսասիրությունն ու անարդարությունը, եւ թագավորում են աստվածային սերն ու աստվածային արդարությունը՝ իրենց բոլոր բարերար ներգործություններով ու բարիքներով:

Հետեւաբար, սիրելինե՛ր, Սուրբ Հաղորդությունը սոսկ ծիսական մասնակցություն, պարտավորություն չէ: Այն խորին խորհուրդ է, որը վերափոխում է մարդուն ի ներքուստ, զորացնում նրա հավատքը, հույսը, բժշկում նրա հոգին եւ նրան դարձնում Աստծու արքայության բնակարան եւ վկան այս աշխարհում: Եւ որքան մեր ներսում հաստատված է այդ արքայությունը, այնքան մեր աձնական կյանքում, մեր ընտանիքներում, մեր համայնքներում, մեր եկեղեցական ու հասարակական, մեր ազգային կյանքում կառատանա ու կլիանա փրկարար լույսը. եղիցի լույս:

Հիշենք, սիրելինե՛ր, պատմական դառնագույն ժամանակներում մեր նախնիները հաճախ զրկված են եղել հացի ու ջրի առատությունից՝ կրելով դժվարագույն, երբեմն անասելի նեղություններ: Բայց նրանք

երբեք չեն հրաժարվել Աստծու արքայության իրենց ժառանգությունից. ամենուր դպրության սեղանի հետ հաստատել են նաեւ աստվածային Սուրբ Սեղան: Նրանք, մեր նախնիք, քաջ գիտակցում էին՝ եթե Տերունի սուրբ սեղանը կա, ուրեմն, կա եւ կլինի հայ ժողովուրդը: Քրիստոսի խոստմանը հավատարիմ մնալով՝ ազգն ու հայրենիքը հավե՛տ չեն կորչի: Իսկ կորուստներն էլ, որոնք ցավի ու ողբերգության են մատնել հայ կյանքը, անտարակույս, վերականգնվելու են: Այո, քանի որ այն, ինչ կորուսյալ կհամարվի, տակավին ենթակա է վերափոխվելու իրական հնարավորության, որովհետեւ Ամենակալ Աստծու հավատարմությունը կապված չէ մարդկային ուժի տրամաբանության կամ ճակատագրական որոշումների արդյունքների հետ. «Նախ խնդրեցեք Աստծու արքայությունը եւ նրա արդարությունը, եւ այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա»,— վստահեցնում է մեզ Քրիստոս Աստված:

Ուստի, մեր բարեպաշտ նախնիները, ամենայն պատասխանատվությամբ ջանացել են իրենց անձով, իրենց կյանքով, իրենց գործով արժանի լինել Քրիստոսի պատարագի այս սուրբ սեղանին մոտենալու եւ ապա, Տիրոջ երկրորդ գալստյամբ, Աստծու արքայության մեջ աստվածային սեղանի առջեւ նստելու պատվին:

Եւ ինչպե՞ս է արտահայտվել այդ ամենը, այդ պատրաստությունը, եթե ոչ զորեղ հավատքով, մաքուր սրտով, ճշմարտությամբ ու արդարությամբ, խոնարհությամբ ու հնազանդությամբ, սիրով ու համերաշխությամբ, հավատարմությամբ ու միմյանց բեռը կրելով, առաքյալի պատգամի համաձայն՝ բոլորի հանդեպ բարին գործելով:

Այսօր, երբ մեր սիրելի Հայրենիքն ու ժողովուրդը կրկին գտնվում են ծանր փորձությանց մեջ, հույժ մխիթարական է մեզ համար բարձր հնչում Քրիստոս Աստծու խոսքը՝ ամենակեցույց իր զորությամբ ու ներգործությամբ. «Ես խոստանում եմ ձեզ տալու արքայությունը»:

Փառք Տիրոջ, Աստծու արքայությունն այսօր էլ ապրում է մեր ներսում, այն մեր սրտում է, մեր հոգում է Մկրտության վերածննդյան սուրբ պահից: Աստծու արքայությունը շաղախել է մեր ողջ էությունը եւ ճշմարիտ աստվածգիտությամբ լուսավորել մեր միտքը: Հետեւաբար, սիրելինե՛ր, մենք չենք կորչի: Մեր Հայոց պատմությունը չի՛ ունենա փակուղի, իսկ մեր սուրբ եւ ուղղափառ հավատքն էլ չունի՛ վերջակետ. «Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են,— ասում է մեր լավ ու բարի հովիվ Հիսուս Քրիստոս,— եւ ես ճանաչում եմ նրանց, եւ նրանք գալու են իմ հետեւից, եւ ես նրանց

կտամ հավիտենական կյանք, եւ նրանք չեն կորչի հավիտյան, եւ ոչ ոք նրանց իմ ձեռքից չի հափշտակի» (Հովհ. ժ. 27–28)։

Սիրելի՛ հավատացյալներ, թող այս ավետարանական խոսքը դառնա մեր սրտերի խարիսխը, եւ մենք, մեր նախնյաց աստվածահաճո օրինակով, շարունակենք հավատարիմ մնալ Քրիստոսի խոստմանը, որ ուտելու եւ խմելու ենք Իր սեղանից Իր արքայության մեջ։ Թող մեր անմահ հույսը դառնա մեր հոգեւոր դիրքորոշումը, մեր սուրբ հավատքը՝ գոյաբանական կենսաձեւը, իսկ սերը՝ կյանք եւ հաղթանակ պարգեւող հրաշք զորություն։

Արդ, մնանք քաջարի, մնանք հուսավառ, հանապազ գործենք հավատով, նվիրումով ու հավատարմությամբ, ամենայն սիրով ու եռանդով՝ որպես Տիրոջ արքայության ժառանգորդներ ընդմիշտ կատարյալ վստահելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի հավատարմությանը։ Եւ «Նրան՝ միա՛կ Աստծուն եւ մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին, Տեառն մերոյ փառք, մեծություն, զորություն եւ իշխանություն յառաջ քան զամենայն յաւիտեանս, եւ այժմ եւ յամենայն յաւիտեանս. ամէն»։

Տ. ԱՆԴՐԵԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՋԵԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 հունվարի, 2026 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։

«եւ չի՛ պլով իւիւ փրկութիւն. զի եւ ո՛չ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժա՛ն իցէ կեալ մեզ»
(Գործք Դ. 12)։

Սիրելի՛ հավատացյալ եղբայրներ եւ քույրեր ի Քրիստոս,

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր նշում է մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի անվանակոչության տոնը։ Ղուկասի Ավետարանից կատարված այսօրվա ընթերցվածքը մեզ ներկայացնում է այդ իրադարձությունը։ Երբ լրանում է մարդացյալ Տիրոջ ութ օրը, հրեական օրենքի համաձայն՝ Նրան թլփատում են եւ անունը դնում Հիսուս, ինչպես պատվիրել էր Գաբրիել հրեշտակապետը։ Այս համառոտ, բայց խորախորհուրդ պատմության մեջ ամփոփված է համայն մարդկության փրկության ծրագիրը։ Ութ օրական մանկան թլփատությունն ու անվանակոչությունը պարզապես մի ավանդական արարողություն չէր. այն Աստծու կամքի հայտնությունն է մարդկությանը։

Աստվածաշնչյան անունների գերակշիռ մասը խորհրդաբանական նշանակություն ունի. դրանք հաճախ ցույց են տալիս Աստծու՝ տվյալ անձի համար ուղենշած առաքելությունը կամ կապված են տվյալ անձի ծննդյան հանգամանքի հետ։ Այսպես օրինակ՝ Աստված Աբրամին վերանվանում է Աբրահամ, որ թարգմանաբար նշանակում է «շատերի հայր»՝ ի նշան վերջինիս՝ բազմաքանակ սերունդ շնորհելու խոստման։ Սամուել մարգարեի անունը նշանակում է «Տերը լսեց»։ Այդ անունը նա ստացել է ի կատարումն իր մոր՝ Աննայի՝ իրեն զավակ պարգեւելու Տիրոջն ուղղված խնդրանքի։

Հիսուս անունը եբրայեցերենում նշանակում է «Տերը փրկում է»: Այս անունը մարդացյալ Աստվածորդուն չտրվեց մարդկանց կամքով, այլ Հայր Աստծուց՝ հրեշտակի միջոցով: Դեռեւս մինչեւ Նրա ծնունդը Տերն արդեն հայտնում է, թե ով է Նա եւ ինչ առաքելությամբ է գալիս աշխարհ: Հիսուս գալիս է փրկելու եւ հավիտենական կյանք պարգեւելու համայն մարդկությանը:

Սիրելինե՛ր, Հիսուսի անունը պարզ մի անուն չէ, այն զորություն ունի: Այդ անունով են հիվանդները բժշկվում, մեղավորները՝ ներվում, հուսահատները՝ մխիթարություն գտնում: Այդ անունն են առաքյալները քարոզել, այդ անունն իրենց շուրթերին են մարտիրոսները նահատակվել, սրբերը՝ ապրել: Եւ ինչպես ասում է Սուրբ Եփրեմ Ասորին. «Հիսուսի անունը շնչառություն է հոգու համար. ով Նրան կանչում է հավատով, կյանք է գտնում»:

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր ոչ միայն մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի անվանակոչության տոնն է, այլեւ մեր անվանակոչության օրն է: Քանզի Սուրբ Մկրտությամբ անդամագրվելով Սուրբ Եկեղեցուն՝ մեզ վրա ենք վերցնում նաեւ մեր Տիրոջ անունը, ինչպես որ ասվում է Սուրբ Մկրտության ծեսի աղոթքներից մեկում. «Լցո՛ զսա երկնային շնորհօքդ, եւ զարճացո՛ ամենաբարի կոչմամբ քրիստոնեայ անուանելով...» («Լցրու սրան Քո երկնային շնորհներով, եւ ուրախացրու նրան քրիստոնյա ամենաբարի անունը շնորհելով...»), ինչպես նաեւ Սուրբ Դրոշմի խորհրդակատարությամբ մեզ վրա ենք կրում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անվան կնիքը:

Սուրբ Աթանաս Ալեքսանդրացին իր ճառերից մեկում ասում է. «Քրիստոսի անունը կրողը պարտավոր է ապրել Քրիստոսի կյանքով»: Եւ այսօր, երբ տոնում ենք մեր Փրկչի անվանակոչության տոնը, ինքներս մեզ հարց պիտի տանք, թե ինչքանո՛վ է մեր կյանքը համահունչ մարդացյալ Տիրոջ կյանքին եւ ուսուցմանը: Արդյոք Հիսուսի անունը միայն մեր շուրթերի վրա՞ է, թե՞ նաեւ՝ սրտներիս մեջ: Արդյոք մենք ապրո՞ւմ ենք այնպես, ինչպես վայել է Նրա անունը կրողներին:

Սուրբ Եկեղեցու հայրերն առանձնացնում են քրիստոնեական ինքնագիտակցության երեք աստիճան՝ միտք, խոսք եւ գործ: Դրանք տեսնում ենք նաեւ մեր Եկեղեցու Ջղջման բանաձեւում-աղոթքի մեջ. «Մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով...»:

Սիրելի՛ եղբայրներ եւ քույրեր, պետք է համարձակություն ունենանք նայելու ինքներս մեր ներսը, անաչառ կերպով քննելու մեր մտավոր եւ ներքին բարոյական աշխարհը, որպեսզի տեսնենք, թե արդյոք մենք

ունենք իրական քրիստոնեական մտածողություն, արդյոք մեր ներքին բարոյական ես-ն առաջնորդվում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կյանքին եւ ուսուցմանը համապատասխան: Եւ եթե տեսնենք, որ սխալվել ենք, սայթաքել ենք, թերացել ենք, կարողանանք վերստին նորոգվել եւ շարունակել մեր կյանքը Հիսուս Քրիստոսի ուղենշած ճանապարհով: Որպեսզի չդառնանք լոկ անվանական քրիստոնյաներ, ինչպես շատերն են այժմ: Երբեմն գալիս են եկեղեցի, մոմ վառում, սովորության բերումով իրենց երեխաներին մկրտում, ամուսնացնում, երբեմն, հաճախ պատահմունքի բերումով, մասնակցում Սուրբ Պատարագին, ժամերգությանը, բայց իրենց մտքում ու սրտում չունեն Քրիստոսին:

Մեր հոգեւոր էությունն իր արտահայտումն է գտնում մեր խոսքերում, ինչպես ասում է Հիսուս. «Բերանը սրտի լիությունից է խոսում: Բարի մարդն իր սրտի բարի գանձերից բարիք է հանում, իսկ չար մարդն իր սրտի չար գանձերից չարիք է հանում» (Մատթ. ԺԲ. 34–35): Մենք՝ Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի անունը կրողներս, պարտավոր ենք վերահսկել մեր խոսքերը, պիտի ջանանք հեռու մնալ ստախոսությունից, բամբասանքից, դատարկաբանությունից, հայհոյանքից: Այսօր, երբ մեր հասարակությունը, ցավոք սրտի, լի է ստի, ատելության, հայհոյանքի, զրպարտության խոսքերով, մենք քրիստոնյաներս, պետք է ուշադրություն դարձնենք մեր արտաբերած յուրաքանչյուր խոսքին, չտրվենք գայթակղություններին: Քանզի ստից ճշմարտություն չի ծնվում, ատելությունից՝ սեր, զրպարտությունից՝ արդարություն: Մեր արտաբերած ամեն մի լավ եւ վատ խոսքի համար մենք պատասխանատվություն ենք կրելու, ինչպես որ ասում է Հիսուս. «Մարդիկ ամեն դատարկ խոսքի համար, որ խոսում են, հաշիվ են տալու դատաստանի օրը: Քո խոսքերը արդարացնելու են քեզ, եւ քո խոսքերը դատապարտելու են քեզ» (Մատթ. ԺԲ. 36–37): Այնպես որ, սիրելի՛ եղբայրներ եւ քույրեր, մեր բերանները թող բացվեն միայն սիրո, ճշմարտության, եղբայրության խոսքեր արտաբերելու համար, Տիրոջը փառաբանելու եւ օրհնաբանելու համար:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս Իր կյանքով եւ ուսուցմամբ մեզ ցույց տվեց սիրո ճանապարհը: Քրիստոնեական հավատը կենդանի հավատ է, եւ այդ հավատը լիարժեք է դառնում միայն այն ժամանակ, երբ արտահայտվում է բարի գործերով: Ինչպես ասում է Սուրբ Հակոբոս Առաքյալը. «Հավատը. եթե գործեր չունի, ինքնին մեռած է» (Հակոբոս Բ. 17): Քրիստոնյայի համար բարի գործերը պարզապես բարոյական պարտականություններ չեն:

Դրանք Աստծու սիրո արտահայտությունն են մեր կյանքում: Երբ մենք օգնություն ենք ցուցաբերում կարիքավորին, խնամում հիվանդին, որբին, մխիթարում վշտացածին, մենք դառնում ենք Աստծու սիրո գործակիցներն այս աշխարհում: Տեր Հիսուս ասում է. «Թող ձեր լույսը փայլի մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերը եւ փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթ. ե. 16): Այս խոսքերը մեզ հիշեցնում են, որ մեր բարի գործերը ոչ թե մեր փառքի համար են, այլ Աստծու փառքի: Մեր կյանքը պետք է լինի կենդանի վկայություն այն սիրո, որ ստացել ենք Աստծուց: Բարի գործերը նաեւ մեր հոգեւոր աճի միջոցն են: Երբ մենք դուրս ենք գալիս մեր անձնասիրությունից եւ մտածում ենք մեր կողքին ապրող մարդու մասին, մեր հոգին ու սիրտը մաքրվում են, խոնարհվում եւ մոտենում են Աստծուն: Բարի գործերով ապրելը մեզ փոխում է ներքնապես, դարձնում Քրիստոսին առավել նման:

Սիրելի՛ հավատացյալ եղբայրներ, եկեք աղոթենք Տիրոջը, որ Նա լուսավորի մեր միտքը եւ այն լցնի հավերժականի խորհուրդներով, մեր բերանը դարձնի ճշմարտության եւ սիրո խոսքերի աղբյուր եւ զորացնի մեզ բարի գործերի մեջ, որպեսզի մեր կյանքը լինի Նրա սիրո կենդանի ավետարանը, որպեսզի մեզ վրա արժանավորապես կրենք մեր Տիրոջ եւ Փրկչի անունը: Թող Հիսուսի սուրբ անունը լինի մեր հույսը փորձություններուն մեջ, մեր ուժը՝ թուլության պահին, եւ մեր լույսը՝ խավար ճանապարհներին: Եւ ինչպես Սուրբ Մարիամն ու Սուրբ Հովսեփը հնազանդվեցին Աստծու խոսքին, այնպես եւ մենք մեր կյանքը հանձնենք Նրա կամքին: Քանզի «ուրիշ մեկի միջոցով փրկություն չկա, որովհետեւ երկնքի տակ չկա մարդկանց տրված մեկ այլ անուն, որով մենք կարողանանք փրկվել» (Գործք Դ. 12): Ամեն:

Doi: 10.56 737/2953-7843-2026.01-24

ԱՐՍԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սանկտ Պետերբուրգի պետական համալսարան

ԴԱՐՁՅԱԼ Է. ԴԱՐԻ ՍԵԲԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԻՇԱՏԱԿԱԾ ՊԱՐՍԻՑ ԵԿԵՂԵՑԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ[1]

Դվինի Դ. ժողովի (644/5 թ.) մասնակից Սեբեոս եպիսկոպոսը[2] վկայում է, թե ինչպես Կոստանդ Բ. կայսրը (641–668) Հայոց իշխանապետություն ներխուժելուց չորս տարի առաջ՝ այսինքն 648 թ.[3], հրովարտակ էր հաստցեագրել Դվին՝ «առնել միաբանութիւն հաւատոյ ընդ Հոռոմս»՝ ըստ Տիեզերական Դ. եկեղեցաժողովի (Քաղկեդոն, 451 թ.) բանաձեւի[4]՝ «Մի Քրիստոս յերկուս բնութիւնս»:

Եպիսկոպոսն իր «Պատմութեան» ԽԶ. գլխում ամբողջությամբ մեջբերում է «Պատճէն պատասխանի թղթոյն եկելոյ ի Հայս ի Հոռոմոց թագաւորէն Կոստանդինայ...»-ը: Լայնածավալ դավանաբանական թղթից երեւում է, որ դրա տակ առկա են եղել Հայոց կաթողիկոս Ներսես Գ. Տայեցու (641–661) եւ գահերեց իշխան Թեոդորոս Ռշտունու (641–մոտ 659) ստորագրությունները, եւ որ այն կազմվել էր Դվինի Ե. ժողովում (648 թ.)[5]: Յավոք, սրա ժողովականը՝ ի տարբերություն Դվինի նախորդ եկեղեցաժողովի (644/5 թ.), չի պահպանվել[6]:

---

[1]* *Ստացվել է 22.12.2025, գրախոսվել՝ 13.02.2026: Էլ. հասցե՝* a.shaginyan@spbu.ru:

[2] *Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխ.՝ Վ. Հակոբյանի, հտ. Բ., Երեւան, 1971, էջ 200–215:*

[3] *Տվյալ արշավանքը տեղի է ունեցել 652 թ. աշնանը (տե՛ս* А. Шагинян, Армения и страны Южного Кавказа в условиях византийско-иранской и арабской власти, Санкт-Петербург, *2011, էջ 115–116):*

[4] Սեբէոս, *Պատմութիւն, «Մատենագիրք Հայոց», հտ. Դ., է. դար, Անթիլիաս–Լիբանան, 2005, էջ 538–540:*

[5] *Անդ, էջ 540–556:*

[6] *Նշենք, որ Դվինի Ե. ժողովի մասնակիցները, որոնց շարքերում պետք է որ Սեբեոսը նույնպես ներկա լիներ, հիմք ընդունելով «Ճշմարիտ եւ ուղղադաւան նամակ Նիկիական»-ը, երրորդ անգամ (554 թ. Դվինի Բ. եւ 607 թ. Դվինի Գ. ժողովներից հետո) բանադրեցին Քաղկեդոնի վարդապետությունը (*Սեբէոս, *էջ 540–551):*

Հետագայում՝ կաթողիկոս Սարգիս Ա. Սեւանցու (992–1019) օրոք, «Պատճէն պատասխանի թղթոյն...»-ը՝ որոշ հապավումներով եւ սրբագրումներով, ընդօրինակել է Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկն իր «Պատմութիւն Տիեզերական»-ում[7]։

Ի պատասխան կայսրին՝ Ներսես Տայեցին եւ Թեոդորոս Ռշտունին պնդում էին, թե պարսկական բանակի կողմից Երուսաղեմի գրավումից եւ Տիրոջ Սուրբ Կենարար Խաչի գերեվարումից հետո շահանշահ Որմիզդի որդի Խոսրով (Փարվեզը, 590–628) «հրաման ետ ամենայն եպիսկոպոսաց կողմանցն Արեւելից եւ Ասորեստանի ժողովել ի դուռն արքունի»[8], այսինքն՝ Այվանում[9]։ Քրիստոնյա բոլոր երկրներից եպիսկոպոսներին (այդ թվում՝ բյուզանդական պատերազմի ընթացքում նվաճած գավառներից) Տիզբոն ներկայանալը Խոսրովը հիմնավորում էր հետեւյալ կերպ. «Լսեմ եթէ երկու կողմանք են քրիստոնէիցն, եւ մին զմիւսն նզովէ. վասն զի չհամարին իրաւացի։ Արդ՝ միաբանութեամբ ժողովեսցին ի դուռն արքունի, զի զուղիղն հաստատեսցեն եւ զթիւրն ի բաց մերժեսցեն»[10]։ Մեկ էլ արքունիքին մոտ գտնվող երկու անձանց արքայից արքան նշանակեց որպես ժողովի ոստիկաններ։

Դրանցից մեկը Սմբատ Բագրատունին էր՝ «զանուանեալն Խոսրովայ Շընումն»[11]։ Սասանյան Վրկան (Gurgān) մարզպանությունից 607 թ. հեռացնելուց հետո, շահանշահը սրան ուղարկել էր իր հայրենիք՝ Հայոց[12] մարզպանություն՝ Խոսրով Շնոմ (Խոսրով-Շում)[13] (պահլավերենից թարգմանաբար՝ «Խոսրովի բավարարվածություն») պատվանունով եւ լուրջ լիազորություններով՝ վստահելով Իրանի յոթ ազնվական տների բանակների հրամանատարի պաշտոնը[14]։

Երկրորդ ոստիկանի անունը բացակայում է կայսերն ուղղված պատասխան թղթի պատճենում. նա հիշատակված է որպես «բժշկապետ արքունի»[15]։

---

[7] Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, *Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», հտ. ժե., ժ. դար, Պատմագրութիւն երկու գիրքով, Գիրք Բ., Անթիլիաս–Լիբանան, 2012, էջ 696–701։*

[8] Սեբէոս, *էջ 541. հմմտ.* Ասողիկ, *էջ 697։*

[9] *Տե՛ս* E. Keall, Ayvān (or Ṭāq)-e Kesrā, “Encyclopædia Iranica”, *1987,* vol. III, fasc. *2, էջ 155–159։*

[10] Սեբէոս, *էջ 541. հմմտ.* Ասողիկ, *էջ 697։*

[11] Սեբէոս, *էջ 541. հմմտ.* Ասողիկ, *էջ 697։*

[12] *Կարդա՛ Arminān։*

[13] *Կարդա՛* Hasraw/Husrōy-Šnōm. *ավեստերեն՝* xšnaōma *(բառ.՝ «բավարարվածություն»)։*

[14] *Տե՛ս* S. McDonough, The “Warrior of the Lords”*։* Smbat Bagratuni at the Center and Periphery of Late Sasanian Iran, “Iranian Studies”*, 2016,* vol. *49/2, էջ 233–245։*

[15] Սեբէոս, *էջ 541. հմմտ.* Ասողիկ, *էջ 697։*

Անկասկած՝ խոսքն ուղղափառ ասորի Գաբրիել Դուրուստպետ[16] անունով մի մարդու մասին է, նույն ինքը՝ Գաբրիել Շիգգարացի[17]։ Իրանագիտությունից մեզ հայտնի է, որ Խոսրով Փարվեզի արքունիքում ծառայում էր Գաբրիել անունով մի հեղինակավոր բժիշկ Վերին Միջագետքի Սինգարա քաղաքից (արդի Սինջարը Իրաքում), որ մերժում էր եւ քաղկեդոնականությունը, եւ նեստորականությունը, կրում էր պատվավոր սասանյան մակդիր կամ տիտղոս։ Պահլավերեն այն հնչում էր drwdstpt եւ համապատասխանում հին հունարեն αρχιάτρος*-ին՝ թարգմանաբար «բժշկապետ»[18]։*

Արեւելասասորական ծեսին պատկանող, 410 թ. ի վեր Սասանյան Պարսկաստանի սահմանների ներքո գործող, Արեւելքի Եկեղեցու[19] բարձրաստիճան հոգեւորականը՝ ենթադրաբար Մերվի (արդի Մարին Թուրքմենստանում) մետրոպոլիտ Եղիան (մահ. 659 թ. հետո[20]), Գաբրիելի մասին գրում էր, թե սա շահանշահի եւ նրա սիրելի կնոջ Շիրինի[21] ընտրյալն էր[22]։

Գաբրիելին հանդիպում ենք նաեւ Արեւելքի Եկեղեցու եպիսկոպոս հայրերի գումարման առիթով կազմված արձանագրություններում[23]։ Բանն այն է, որ Այվանում, ինչպես հետեւում է հայ հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդների կայսերն ուղղված պատասխան թղթից, ընդունելության էին արժանացել ո՛չ միայն նրանք, ովքեր բանավիճում էին Քաղկեդոնի ὅρος*-ի շուրջ, այլեւ նրանք, ովքեր դատապարտում էին Տիեզերական Գ. ժողովի որոշումները (Եփեսոս, 431 թ.)։ Պարսից կամ Արեւելքի Եկեղեցին, նզովելով միաբնակությունը, դեռեւս 486 թ. էր հաստատել «երկաբնակության ոգուն համապատասխան մի դավանանք»[24], որի հիմքում ըն-*

---

[16] *Կարդա՛* [Gaḇrīl Drōstḇēd]։

[17] *Կարդա՛* [Gaḇrīl ḏ-Šiggar]։

[18] *Տե՛ս* A. Tafazzoli, Drustbed, “Encyclopædia Iranica”, *1996*, vol. VII, fasc. *6*, *էջ 564–565*։

[19] *Կարդա՛* [ʿĒḏtā ḏ-Maḏnḥā]։

[20] *Տե՛ս* P. Nautin, L’auteur de la «Chronique Anonyme de Guidi»։ Élie de Merw, «Revue de l’Histoire des Religions», *1982*, *հտ. 199*, *էջ 303–314*, *P. Wood*, The Chronicle of Seert։ Christian Historical Imagination in Late Antique Iraq, Oxford, *2013*, *էջ 183–184*։

[21] *Խոսրովի սիրելի կնոջ՝ ուղղափառ ասորուհու մասին տե՛ս* P. Orsatti, Ḵosrow o Širin. “Encyclopædia Iranica”, *2006*, online ed., available at https://www.Encyclopædia Iranicaonline.org/articles/kosrow-o-sirin/ (last updated: November *15*, *2012*)։

[22] *Տե՛ս* “A Short Chronicle on the End of the Sasanian Empire and Early Islam *(590–660* A. D.)”, ed. & transl. by Nasir al-Kaʿbi, NJ, USA, *2016*, *էջ 22*, *23*։

[23] *Տե՛ս* «Synodicon orientale ou recueil de synodes nestoriens», ed. et trad. par J.–B. Chabot, Paris, *1902*, *էջ 562–580*, *580–598*։

[24] *Տե՛ս* S. Brock, The Christology of the Church of the East, “Traditions and Heritage of the Christian East”, Moscow, *1996*, *էջ 172*, W. Baum, D. Winkler, The Church of the East: A Concise

կած էր Կ. Պոլսի արքեպիսկոպոս Նեստորի (428–431) ուսմունքը առ այն, թե Քրիստոս ունի երկու բնություն եւ երկու դեմք։

Հիշատակվող արձանագրությունը, որը կցված է Արեւելքի Եկեղեցու Կանոնագրքին՝ «Synodicon Orientale»-ին[25], թվագրվում է Որմիզդի որդու Խոսրովի գահակալման ԻԹ. տարով (612/3 թ.)։ Այդ պատճառով Նիկողայոս Ադոնցը (1871–1942) եւ Զիյա Բունիյաթովը (1923–1997) Տիզբոնի ժողովը թվագրել են 612/3 թ.[26]։ Սակայն դեռ Գեորգ Հոֆֆմանը (1845–1933) եւ Երվանդ վրդ. Տեր-Մինասյանցը (1879–1974) թվագրում էին այն 615/6 թ.[27], հետագայում նրանց հետեւեցին Էդուարդ Դանիելյանը (1944–2017) եւ Ալեքսան Հակոբյանը[28], իսկ մեր օրերում Գոռ սրկ. Թարվերդյանն առաջարկեց 616 թ.[29]։

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի «Պարսից ժողով» հոդվածում նույնպես նշված են այս վիճելի տարեթվերը[30], իսկ «Իրանիկա»-ի «Խոսրով Բ.»[31] հոդվածում ժողովը թվագրվում է մինչեւ Արեւելքի Եկեղեցու կաթողիկոս Մար Գրիգորի (605–609) վախճանը[32]։ Վերջապես, «Ուղղափառ հանրագիտարան»-ում[33] ներառված տարբեր հոդվածների հեղինակներն առաջարկում են 612 եւ 616 թթ.[34]։

History. London, New York, *2003, էջ 17–21, 28–30։*

[25] *Կարդա՛* [Ktābā d-swnhdw]։ *Ժան-Բատիստ Շաբոյի (1860–1948)՝ ասորերեն բնագրով եւ ֆրանսերեն թարգմանությամբ հրապարակած «Սիւնհադոս» ժողովածուն իր մեջ է ներառել Արեւելքի Եկեղեցու ե.–Ը. դդ. գումարած թվով 15 ժողովների արձանագրություններն ու հաստատված կանոնները։*

[26] *Տե՛ս* Н. Адонцъ, Арменія въ эпоху Юстиніана. Политическое состояніе на основѣ нахарарскаго строя, Санкт-Петербургъ, *1908, էջ 295,* З. Буниятов, Азербайджан в VII–IX вв. Баку, *1965, էջ 48։*

[27] *Տե՛ս* G. Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer, Leipzig, *1880, էջ 121,* Dr. E. Ter-Minassiantz, Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syr. Kirchen. Leipzig. *1904, էջ 63։*

[28] *Տե՛ս* Э. Даниелян, Политика Хосрова Парвеза по отношению к армянской церкви, «ИФЖ», *1981, № 4, էջ 195–200,* А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, *1987, էջ 192։*

[29] Գ. սրկ. Թարվերդյան, *Հայ-ասորական եկեղեցական առնչությունները է. դ. սկզբին, «Էջմիածին» ամսագիր, 2012, Ժ., էջ 23։*

[30] Ա. Ղազարյան, *Պարսից ժողով 612/613, «Քրիստոնյա Հայաստան։ հանրագիտարան», խմբ. խորհ.՝ Հ. Այվազյան եւ ուրիշ. Երեւան, 2002, էջ 859։*

[31] *Կարդա՛* Ḵosrow II։

[32] *Տե՛ս* J. Howard-Johnston, Ḵosrow II, “Encyclopædia Iranica”, 2000, online ed., available at https://Encyclopædia Iranicaonline.org/articles/khosrow-ii (last updated: May *14, 2018):*

[33] *Կարդա՛* Православная энциклопедия*։*

[34] *Տե՛ս* В. дкн. Саакян, Печать веры, «Православная энциклопедия», под ред. Патриарха Московского и всея Руси Алексия II по благословению Патриарха Московского и всея Руси Кирилла,

Եւ սա դեռ հրապարակումների այն ամբողջական ցանկը չէ, որտեղ մեզ հետաքրքրող ժողովի թվագրման շուրջ նմանատիպ տարակարծութիւններ են շրջանառվում։ Ավելին, գիտական շրջանակներում գոյութիւն ունի նաեւ այնպիսի մի տեսակետ, թե իբր ոչ մի ժողով էլ չի գումարվել, Այվանում քրիստոնյա համայնքների ներկայացուցիչները սահմանափակվել են միայն բուռն բանավեճով[35]։ Իսկ եթե գումարվել է, ապա՝ Արեւելքի եկեղեցու նոր կաթողիկոս ընտրելու օրակարգով միայն[36]։

Մինչդեռ Հայոց կաթողիկոս Ներսես Տայեցին, որին հասանելի էին Դվինի պահոցների փաստաթղթերը, եւ գահերեց իշխան Թեոդորոս Ռշտունին 648 թ. Կոստանդ Բ.-ին հասցեագրված թղթում հատակ նշում էին, որ Որմիզդի որդի Խոսրովը «հրաման ետ ամենայն եպիսկոպոսաց կողմանցն Արեւելից եւ Ասորեստանի ժողովել ի դուռն արքունի», եւ արքայից արքայի այս հրամանը հրապարակվեց «յետ գերութեանն Երուսաղէմի»[37]։ (Ակնհայտ է, որ Խոսրով Փարվեզը ոգեւորված էր պարսկական զորքերի խոշոր հաղթանակով)։ Ահա թե ինչու կաթողիկոս Կոմիտաս Ա. Աղցեցին (615–628), որ Դվինի վեհարանը զբաղեցրել է, ինչպես ստորեւ ցույց կտանք, Տիզբոնից վերադառնալուց հետո միայն, Այվան ներկայացավ որպես Մամիկոնյանց տան եպիսկոպոս[38]։

Սասանյանների հարստութեան վերջին շրջանի պաշտոնական պատմագրութիւնում՝ «Տիրակալների գրքում»[39], որը մեզ է հասել մահմեդականացված իրանցիների վերամշակած եւ արաբերեն թարգմանած տարբերակներով, Երուսաղեմի գրավումը թվագրվում է Խոսրով Փարվեզի ԻԴ. տարով[40]։ Դրա տարեմուտը 613 թ. հունիսի 27-ն է[41]։

Москва, *2024, հտ. 56, էջ 331–332,* Е. Заболотный, С. Моисееева, Мафриан, «Православная энциклопедия», *2021, հտ. 44, էջ 399–400,* И. Попов, П. Кузенков, Ираклий, «Православная энциклопедия», *2016, հտ. 26, էջ 280–292։*

[35] *Տես, օրինակ,* T. Greenwood, Oversight, influence and Mesopotamian connections to Armenia across the Sasanian and early Islamic periods, “Mesopotamia in the Ancient World: Impact, Continuities, Parallels”, vol. Melammu *7,* ed. R. Rollinger & E. van Dongen, Munster, *2015, էջ 509–522։*

[36] *Տես, օրինակ,* Ե. Վրդ. Տէր-Մինասեանց, *Այսպէս կոչուած պարսից ժողովը, «Արարատ» ամսագիր, 1907, Բ., էջ 194–195։*

[37] Սեբէոս, *էջ 541,* Ասողիկ, *էջ 697։*

[38] *Տես* Սեբէոս, *էջ 541,* Ասողիկ, *էջ 698։*

[39] *(*Xwadāy-nāmag*)։*

[40] *Տես* А. Шагинян, «Отец мусульманской историографии» ат-Табари *(839–923)* о странах и народах Армянского нагорья, Кавказа и Малой Азии, СПб., *2024, էջ 134։*

[41] *Ըստ դրամագիտական տվյալների՝ Փարվեզը թագադրվել է 590 թ. հունիսի 27-ի սկիզբ առած՝ հին պարսից քաղաքացիական օրացույցի համաձայն, տարեմուտից հետո (տե՛ս*

Երուսաղեմի գրոհի իրադարձությունների ականատես, մկրտված արաբ Անտիոքոս Ստրատեգոսը (Անտիոքոս Պաղեստինցի, 630-ականներին հեղինակելով «Առումն Երուսաղէմայ ի Պարսից. ի թուին 614»[42] աշխատությունը՝ պահպանել է ո՛չ միայն սուրբ քաղաքի գրավման տարին, այլեւ ամիսը: Նրա երկը մեզ է հասել արաբերեն («Սրբության տան» կործանման պատմությունը») եւ վրացերեն՝ «Մայիսի Ի: Երուսաղեմի գերությունը»[43]): Այսպիսով, Անտիոքոս Ստրատեգոսի մի տարբերակով Երուսաղեմը ընկել է մայիսի 20-ին: Մեկ այլ տարբերակի համաձայն՝ պարսիկները սուրբ քաղաքը գրավել են պաշարման 21-րդ օրը, որն սկսվել էր կայսեր Հերակլ Ա.-ի (610–641) Դ. տարվա ապրիլի 15-ին. ստացվում է 614 թ. մայիսի 5-ը[44]: Դեպքերի ժամանակակից Սեբեոսը նույնպես Երուսաղեմի պարսկական գրավումը թվագրում է մայիսով՝ սբ. Զատիկից 10 օր անց. «Եւ եղեւ յաւուրն ԺԹ.-երորդի յամսեանն մարգաց, որ աւր ԻՀ. էր ամսոյն...» (=մայիսի 18)[45]:

Ինչպես որ Ներսես Տայեցին եւ Թեոդորոս Ռշտունին շարունակում էին պատասխանել Կոստանդ Բ.-ին 648 թ., Կոմիտասից բացի, արքայական պալատի նիստերի դահլիճ մտավ եւս մեկ հայ եպիսկոպոս՝ Մատթեոս Ամատունին: Ներս մտան նաեւ Ալեքսանդրիայում[46] գերեվարված մի քանի հայտնի իմաստասերներ, Վիրո կաթողիկոսը Աղվանից (595–629) «եւ այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ»: Վերջապես մուտք գոր-

---

S. Tyler-Smith, Calendars and Coronations: The Literary and Numismatic Evidence for the Accession of Khusrau II, Byzantine and Modern Greek Studies, *2004, հտ. 28, էջ 33–65):*

[42] *Կարգա՛ Ἅλωσις τῆς Ἱερουσαλὴμ ὑπὸ τῶν Περσῶν τῷ 614:*

[43] *Կարգա՛* მაისსა ჳ՛წარტყუენცაჲ იერუსალჱმისაჲ:

[44] *Տե՛ս* Антіохъ Стратигъ, Плѣненіе Іерусалима персами въ 614 г., Груз. текстъ изслѣдовалъ, издалъ, перевелъ и араб. извлеченіе приложилъ Н.Я. Марръ, СПб., *1909, էջ 15–16, 15:*

[45] Սեբէոս, *էջ 512: Միայն չգիտես թե՛ ինչու եպիսկոպոս-պատմիչը Երուսաղեմի գրավումը թվագրում է Խոսրովի Իե. տարով (614/5 թ.):*

[46] *Ըստ Սասանյան պատմագրության՝ եգիպտական Ալեքսանդրիայի բանալիները հանձնվել են Խոսրով Փարվեզին Տիզբոնում նրա ԻՀ. տարում (617/8 թ.) (տե՛ս* А. Шагинян, «Отец мусульманской историографии» ат-Табари *(839–923)...», էջ 134) : Հետեւաբար, մենք կարող ենք պնդել, որ խոսքը կիլիկիայում գտնվող Փոքր Ալեքսանդրիայի (*Ἀλεξάνδρεια κατὰ Ἰσσόν, Ἀλεξανδρέττα, *Ալեքսանդրիա առ Իսոսի՝ Ἀλεξανδρέττα – Ալեքսանդրետ. ներկայիս Իսքենդերունը) մասին է, որը պարսիկները նվաճել էին երուսաղեմից առաջ (տե՛ս* W. Kaegi, Heraclius: emperor of Byzantium. Cambridge, U.K., New York, *2003, էջ 75–77): Մեր պնդումները հիմնված են այն փաստարկի վրա, որ Սեբեոսի «Պատմութեան» մեջ, բացառությամբ այս մեկ դրվագի, Ալեքսանդրիան հիշատակելիս՝ հեղինակը գրառում է կատարում առ այն, որ նկատի ունի եգիպտոսի մայրաքաղաքը: Իսկ ինչ վերաբերում է Ասողիկին, ապա նա պարզապես սույն հատվածը փոխառել է Սեբեոսի գրքից:*

ծեց Երուսաղեմում գերեվարված պատրիարք Զաքարիան (609–631)[47], ինչը նույնպես վկայում է Պարսից եկեղեցաժողովը Երուսաղեմի անկումից հետո թվագրելու օգտին: Ի դեպ՝ Անտիոքոս Ստրատեգոսը, որին պարսիկները որպես պատանդ տեղափոխել էին Տիզբոն, նույնպես խոսում է Զաքարիայի գերեվարման մասին[48]:

Արեւելքի եկեղեցու բարձրագույն հոգեւորականներից Այվանում էին գտնվում, ինչպես որ նշված է «Պատճէն պատասխանի թղթոյն եկելոյ ի Հայս ի Հոռոմոց թագաւորէն Կոստանդինայ...»-ում, «Երան[49] անուանեալ կաթուղիկոսն, եւ այլ եպիսկոպոսունք յԱսորեստանէ[50] եւ յԱրուաստանէ[51] եւ ի Խուժաստանէ[52]»[53]:

Ինչպես նշված է Արեւելքի եկեղեցու դեռ առաջին ժողովականում (410 թ.), սասանյան հենց այս եւ Միջագետքում զետեղված մյուս մարզպանությունների սահմաններում կազմավորվել էին վեց մետրոպոլիտություններ[54]:

Պահպանվել են Տիզբոն ժամանած Արեւելքի եկեղեցու բոլոր չորս բարձրաստիճան հոգեւորականների անունները, բայց ոչ դրա կանոնագրքում: «Քանի որ եկեղեցում կաթողիկոս չկար,– գրում է հետասասանյան ժամանակաշրջանի հոգեւորականներից մեկը,– այդ իսկ պատճառով կամավոր բանավեճի եկան Ադիաբենի[55] մետրոպոլիտ Հովնադա-

---

[47] Սեբէոս, *էջ 541–542. հմմտ.* Ասողիկ, *էջ 697–698, 699:*

[48] *Տե՛ս* Антіохъ Стратигъ, *էջ 26, 25 եւ հաջորդիվ:*

[49] *Պահլ.՝* Ērān *(Իրան):*

[50] *Սասանյան* Āsōrestān [Bēṯ ʾĀramāyē], *բառ.՝ «Արամեացիների տուն») մարզպանությունը Տիզբոն կենտրոնով գտնվում էր Ներքին Միջագետքում (տե՛ս* G. Widengren, Āsōristān, "Encyclopædia Iranica," *1987,* vol. II, fasc. *8, էջ 785–786): Այստեղ գործում էր Արեւելքի եկեղեցու* Salīq *կամ* Māḥōzē *մեծ մետրոպոլիտությունը:*

[51] *Սասանյան* Arwāstān *(ասոր.՝* [Bēṯ ʿArəbāyē], *բառ.՝ «Արաբների տուն») մարզպանությունը Մծբին կենտրոնով զբաղեցնում էր Հռոմի կողմից 363 թ. զիճված Մեծ Հայքի Արզանի, Կորդվաց եւ Մոկաց աշխարհները, ինչպես նաեւ Միջագետք Հայոցի Ծաւդէք եւ Ռեհմենե գավառները (տե՛ս* G. Widengren, Arbāyistān, "Encyclopædia Iranica," *1986,* vol. II, fasc. *3, էջ 276–277): Այստեղ գործում էր Արեւելքի եկեղեցու* Niṣībīn *մետրոպոլիտությունը:*

[52] *Սասանյան* Hūžestān [Bēṯ Hūzāyē], *բառ.՝ «Խուժական [ազգի] տուն») մարզպանությունը Ռմիզդ-Արտաշիր կենտրոնով գտնվում էր Իրանի հարավ-արեւմուտքում (տե՛ս* C. Bosworth, Ahvāz: i. History, "Encyclopædia Iranica," *1984,* vol. I, fasc. *7, էջ 688–691): Այստեղ գործում էր Արեւելքի եկեղեցու* Bēṯ Lapaṭ *բառ.՝ «լափատի տուն?») մետրոպոլիտությունը:*

[53] Սեբէոս, *էջ 542. Ասողիկի կողմից Ասորեստանի եպիսկոպոսը բաց է թողնված (տե՛ս* Ասողիկ, *էջ 698):*

[54] *Տե՛ս «*Synodicon orientale ou recueil de synodes nestoriens», *էջ 33–34, 272–273:*

[55] *Ադիաբենում* [Ḥaḏyʾaḇ]*, նույն ինքն է Նոր Շիրականը, որն Սասանյանները* NodŠēragān *կամ* Nōd-ArdaxŠīragān*-ն էին կոչում, գործում էր Արեւելքի եկեղեցու համանուն մետրոպոլի-*

*բը (*Yōnādāb*)[56], Շուբհալմարանը (*Shubḥālmāran*) Քարկաւատից[57], Նահրգուլի[58] եպիսկոպոս Գիվարգիսը (*Gīwargīs*) Իզալայի լեռներից[59], Սարգիս (*Sargīs*) Քաշքարցին[60] Թել-Փախխարեից[61]։ Եւ սրանք արքունիքում բանավեճի բռնվեցին»[62]։*

Վերջապես, ըստ Ներսես Տայեցու եւ Թեոդորոս Ռշտունու, արքունի դահլիճ էր ներխուժել նաեւ հրէապետը՝ բղավելով. «Մի՛ կոչեսցի Աստուած այրն այն»։ Բայց նրան անմիջապես վտարեցին արքունիքից Խոսրովի հրամանով[63]։ Հնարավոր է, որ խոսքը Երուսաղեմի գրոհի հայտնի մասնակցի՝ հրեա հրամանատար Նեհեմիա բեն Հուշիէլ բեն Աբրահամ բեն Հովսեփի[64] մասին է։ Սասանյան ռազմական վարչակազմի որոշումով, սա Երուսաղեմի քաղաքապետի պաշտոնը զբաղեցրեց մինչեւ 617 թ.[65]։

Ինչ վերաբերում է եկեղեցաժողովի օրակարգին, որը պետք է համաձայնեցված լիներ Խոսրով Փարվեզի հետ, ապա այն ներառում էր ընդամենը մեկ հարց՝ բացահայտել Նիկիայի (325 թ.), Կ. Պոլսի (381 թ.), Եփեսոսի (431 թ.) եւ Քաղկեդոնի (451 թ.) տիեզերական ժողովների էությունը[66]։

Ահա թե ինչ ենք ընթերցում օրակարգի մասին Արեւելքի Եկեղեցու Կանոնագրքին կցված արձանագրության նախաբանում. «Մենք գրում ենք

տությունը Արբելա [ʾArbīl], արդի Էրբիլը Իրաքում) կենտրոնով։

[56] Սրա ստորագրությունն առկա է կաթողիկոս Մար Գրիգորի կողմից 605 թ. գումարված ժողովի արձանագրության տակ. Yōnādāb, évêque d'Arbèle, métropolitain de Ḥedayab *(տե՛ս* «Synodicon orientale ou recueil de synodes nestoriens»*, էջ 213, 478)։*

[57] Ասոր.՝ [Karkā ḏ-Bēṯ Selōḵ]*, բառ.՝ «Սելեւկի տան միջնաբերդ»), քաղաք սասանյան* Garamīkān [Bēṯ Garmē]*, բառ.՝ «Ոսկորներից տուն») մարզպանությունում, որը գտնվում էր Ադիաբենի եւ Ասորեստանի միջեւ։ Քարկաւատ (արդի Քիրքուքը Իրաքում) կենտրոնով գործում էր Արեւելքի Եկեղեցու* Bēṯ Garmē *մետրոպոլիտությունը։*

[58] Ասոր.՝ [Nahargūr / Nahargūl] *(բառ.՝ «Գոլ գետ»), քաղաք սասանյան* Mēšān/Mēšūn *(ասոր.՝* [Mayšan]*) մարզպանությունում՝ Ասորեստանից հարավ։ Նահրգուլում գործում էր Արեւելքի Եկեղեցու* Mayšan *(կենտրոնը՝ Մէշուն, ասոր.՝* [Prāṯ ḏ-Mayšan]*) մետրոպոլիտության համանուն թեմը։*

[59] Ասոր.՝ [Ṭūr Īzlāʾ]*, լեռնազանգված Մծբինի շրջակայքում, որտեղ որ գործում էին Արեւելքի Եկեղեցու վեց մենաստաններ։*

[60] Ասոր.՝ [Kaškar]*, քաղաք Ասորեստանում՝ Արեւելքի Եկեղեցու մեծ մետրոպոլիտության իրավասության տակ գործող համանուն թեմի կենտրոնը։*

[61] Ասոր.՝ [Tell-Paḥḥārē] *(բառ.՝ «Խեցեգործների բլուր») տեղանունը գետեղվում է Միջագետքը Արաբիային կապող ճանապարհին։*

[62] Տե՛ս “A Short Chronicle on the End of the Sasanian Empire and Early Islam *(590–660* A. D.*)*”*, էջ 38–40։*

[63] Սեբէոս*, էջ 541. համմ.* Ասողիկ*, էջ 698։*

[64] Իմա՝ [Nəḥemyāʾ ben Ḥûšîʾēl ben ʾAḇrāhām ben Yōsēp̄]*)։*

[65] Տե՛ս H. Ben-Sasson, A History of the Jewish people. Cambridge, Mass.*, 1976, էջ 362։*

[66] Սեբէոս*, էջ 541–542.* Ասողիկ*, էջ 698։*

երախտագիտության ու փառաբանության (խոսքեր.– Ա. Շ.), որոնք Պարսից եպիսկոպոս հայրերը արքունիքում նրանց հետ հավաքված սուրբ հայրերի եւ վանականների հետ միասին ներկայացրեցին արքային՝ Որմիզդի որդու Խոսրովին իր ԻԹ. տարում, երբ Գաբրիել Դուրուստպետը հորդորեց արքային մեզ հրավիրել բանավեճի իր հետեւորդների՝ հերետիկոսների հետ: Եւ հավատքի իրականությունն ապացուցելու արքայի պահանջով՝ փաստերի համադրությամբ, նրանք՝ (Պարսից եպիսկոպոս հայրերը.– Ա. Շ.), այն ներկայացրին քաջաբար եւ համարձակորեն՝ առանց վախի զգացողության»[67]:

«Գաբրիելը եւ նրա կողմնակիցները պարտվեցին, իսկ մեր ուղղափառ (նեստորականները.– Ա. Շ.) հաղթանակ տարան»,– պնդում է ենթադրաբար Մերվի մետրոպոլիտ Եղիան[68]:

Արեւելքի Եկեղեցու հոգեւորականները Տիզբոն էին ժամանել՝ «ձեռքներին «Գիրքն Հաւատոյ», որ Որմիզդի որդու՝ արքայից արքա Խոսրովի գահակալման ԻԹ. տարում արքայից արքայի խնդրանքով կազմել էին արքունիքում հավաքված եպիսկոպոս հայրերը եւ ներկայացրել իրենց հավատքի ճշմարտացիությունը»[69]:

Սույն «Գիրքն Հաւատոյ»[70] առաջին անգամ բացահայտորեն հաստատում էր Նեստորի ուսմունքը՝ սրբերի մեջ փառաբանելով ո՛չ միայն նրան, այլեւ նրա ուսուցիչներին՝ Թեոդորոս Մոպսվեստացուն (392–428) եւ Դիոդորոս Տարսոնցուն (372–390)[71]:

Նման պայմաններում հայկական կողմը չէր կարող ժողովին ներկայանալ անպատրաստ: Անկասկած՝ «Կնիք Հաւատոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ. Յուղղափառ եւ սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց», որը վերագրվում է Կոմիտաս Մամիկոնյանին (Աղցեցուն)[72], որ

---

[67] *Տե՛ս* «Synodicon orientale ou recueil de synodes nestoriens», *էջ 562, 580:*

[68] *Տե՛ս* "A Short Chronicle on the End of the Sasanian Empire and Early Islam *(590–660* A. D.*)*", *էջ 40:*

[69] *Տե՛ս* «Synodicon orientale ou recueil de synodes nestoriens», *էջ 564–567, 581–584:*

[70] *Աստր.՝* [Ṣəḥāḥā ḏ-haymānūṯā]*):*

[71] *Անդ: Նշենք, որ «Գիրք Հաւատոյ»-ի երեւան գալով ասորագետները պնդում են թե Արեւելքի Եկեղեցին վերջնականորեն «նեստորականացավ» (տե՛ս* S. Brock, *նշ. աշխ., էջ 173–174,* W. Baum, D. Winkler, *նշ. աշխ., էջ 28–41):*

[72] Կոմիտաս Աղցեցի, *Կնիք Հաւատոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ. Յուղղափառ եւ սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց.... «Մատենագիրք Հայոց», հտ. Դ., է. դար, Անթիլիաս–Լիբանան, 2005, էջ 49–311.* Ե. Տեր-Մինասյան, *«Կնիք Հաւատոյ» ժողովածուն եւ Հայոց Եկեղեցու դավանաբանական դիրքը Զ. եւ է. դարերում, «Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երեւան, 1971, էջ 88–118:*

Տիզբոնում գլխավորում էր հայկական պատգամավորությունը, կազմվել էր Հայոց քրիստոսաբանությունը պարսից արքունիքում ներկայացնելու նպատակով։

Այս հանրագիտարանային բնույթի ծավալուն աստվածաբանական եւ բանավեճային ժողովածուն կազմված էր Ալեքսանդրիայի պատրիարք Տիմոթեոս Բ. Կուզի (457–460, 475–477) «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի» երկի նմանությամբ, որն ամբողջությամբ մեզ է հասել միայն գրաբարյան թարգմանությամբ[73]։ Հայ-քաղկեդոնիկ անհայտ մի հոգեւորական, որ շուրջ 700 թ. հեղինակել է «Պատմութիւն սուրբ Գրիգորի օրերից մինչեւ այժմ»[74] խորագրով գիրքն, նույնպես հիշատակում է «Կնիքն Հաւատոյ»՝ անվանելով այն հունարեն «Աբարտակամ»[75]։ Ստուգաբանորեն սա պետք է որ վերադառնա գրաբարյան «Հաւատարմատ» բառին[76]։

«Կնիքն Հաւատոյ», որի հիմքում ընկած են ինչպես Հայոց եկեղեցու հայրերի երկերը, այնպես էլ Ընդհանրական եկեղեցու հայրերի գրաբարյան թարգմանությունները, բաղկացած է 10 գլխից։ Առաջին գլուխը պարունակում է Հայոց եկեղեցու Սուրբ Երրորդության մասին ուսմունքը (տրիադալոգիան), երկրորդ գլուխը՝ բանավեճ ընդդեմ նեստորականների եւ քաղկեդոնականների, երրորդ գլուխը՝ Տիրոջ մարմնի անապականության հարցը Նրա երկրային կյանքի ընթացքում եւ այսպես շարունակ[77]։

Դատելով «Կնիք Հաւատոյ»-ի առաջին երեք գլուխների բովանդակություններից՝ Կոմիտաս Մամիկոնյանը եւ Մատթեոս Ամատունին Տիզբոնի եկեղեցաժողովում կարող էին հրապարակային բանավեճի մեջ մտնել՝ դատապարտելով ինչպես նեստորականներին եւ քաղկեդոնականներին, այնպես էլ միաբնակներ սեւերիոսյաններին, որոնք «ապականության» մասին ուսմունքի հետեւորդներն էին։

---

[73] Ե. Տեր-Մինասյան, *Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի» երկի թարգմանության ժամանակը, «Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երեւան, 1971, էջ 394–410։*

[74] *Կարդա՛ «*Διήγησις ἀπὸ τῶν ἡμερῶν τοῦ ἁγίου Γρηγορίου μέηρι τοῦ νῦν...*»։*

[75] *Կարդա՛ «*Ἀβαρτακὰμ*». տե՛ս «*La Narratio de rebus Armeniae*», ed. et trad. par G. Garitte, Louvain, 1952, էջ 42։*

[76] Հ. Բարթիկյան, «Narratio de rebus Armeniae», *հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», 1962, հտ. 6, էջ 467 (ծանոթ. 76)։*

[77] *Տե՛ս* J. Lebon, Les Citation Patristiques du «Sceau de Ia Foi», «Revue d'Histoire Ecclésiastique», *1929,* t. *25, էջ 5–32։*

Ինչպես հայտնի է, Հայոց Եկեղեցու դավանանքը հիմնված էր Քալկեդոնի Հուլիանոս եպիսկոպոսի (մահ. 527 թ. հետո) հակառակ ուսմունքի վրա[78]։ Այվանում սեւերիոսյանների պատվիրակության գտնվելու մասին հիշատակումը պահպանվել է միայն Ասողիկի «Պատմութիւն Տիեզերական»-ում. «Սեւերիտք եւ այլ բազմութիւն խառնիճաղանջ աղանդոյն»[79]։ Սեբեոսի «Պատմութիւն»-ում կարդում ենք. «...Նեստորականք, եւ այլ բազում խառնիճաղանջ աղանդոցն»[80]։

«Աղանդոցն» ասելով՝ պետք է նկատի ունենալ հենց Անտիոքի պատրիարք Սեւերիոսի (512–518) ուսմունքի հետեւորդներին, որոնք որ հիմնադրեցին Ասորի Ուղղափառ Եկեղեցին[81]։ Արեւմտաասորական ծեսին պատկանող սույն Եկեղեցին մինչ օրս ոչ պաշտոնապես կրում է Եդեսիայի եպիսկոպոս Հակոբ Բարադեոսի (541–578) անունը, քանզի վերջինս վերակազմավորել է Սեւերիոսի միաբնակների աստիճանակարգը, որը ոչնչացրել էր Հուստինիանոս Ա. կայսրը (518–527)։

Այվանում Արեւելքի Եկեղեցու հոգեւորականները նույնպես հանդես եկան հակոբիկների դեմ. նրա եպիսկոպոս հայրերի 612/3 թ. գումարման առիթով կազմված նյութերը պարունակում են «ուղղափառների առարկությունները Սեւերիոսյանների, Աստվածաչարչարականների[82], դեմ» մի փաստաթուղթ[83]։ Ինչպես ստորեւ՝ հայոց մատենագրության հիման վրա ցույց կտանք, Հակոբիկյան Եկեղեցու դիրքորոշումը ներկայացնում էր 11 եպիսկոպոսներից բաղկացած պատվիրակությունը, այդ թվում Արեւելքի մետրոպոլիտը։

---

[78] *Սեւերիոսի եւ Հուլիանոսի միջեւ տարաձայնությունների մասին տե՛ս* В. Болотов, Лекции по истории древней церкви, т. IV, История церкви в период Вселенских соборов, III История богословской мысли, Петроград, *1918, էջ 343–348,* А. Карташёв, Вселенские соборы. Минск, *2008, էջ 432–435։*

[79] Ասողիկ, *էջ 698։*

[80] Սեբէոս, *էջ 541։*

[81] *Կարդա՛* [ʿIdto Sūryoyto Trīṣat Šubḥo]։

[82] *Կարդա՛* θεοπασχίται. *այսպես էին նեստորականները անվանում իրենց հակառակորդ միաբնակներին (տե՛ս* B. Studer, Theopaschites, "Encyclopedia of Ancient Christianity," *2014,* vol. *3, էջ 762, 763)։*

[83] *Թվարկված են հինգ առարկություններ. «Ա. Նրանց դեմ, ովքեր Քրիստոսի մեջ խոստովանում են մեկ բնություն կամ մեկ դեմք* [qnōmaʾ]։ *Բ. Նրանց դեմ, ովքեր պնդում են, թե Աստված մարմնով տառապեց եւ մարմնով մահացավ։ Գ. Նրանց դեմ, ովքեր հարցնում են՝ Սուրբ Կույսը Աստծո՞ մայրն է, թե՞ մարդու մայրը։ Դ. Նրանց դեմ, ովքեր մեզ կեղծ մեղադրանք են ներկայացնում Աստծու մեջ երրորդության փոխարեն քառյակ խոստովանելու մեջ։ Ե. Նրանց դեմ, ովքեր մեզ մեղադրում են Որդու երկվությունը ընդունելու մեջ» (տե՛ս* «Synodicon orientale ou recueil de synodes nestoriens», *էջ 568–573, 586–591)։*

Հաջորդիվ՝ Ներսես Տայեցին եւ Թեոդորոս Ռշտունին պնդում էին, թե արքայից արքայի հրահանգով՝ արքունի դահլիճում գտնվող նեստորականները՝ իրենց «անուանեալ կաթուղիկոսի» գլխավորությամբ, դուրս վռնդվեցին: Ավելին, «վասն որոյ հրաման ետ արքայ խոսրով քանդել զամենեցունց նոցա զեկեղեցիսն եւ սրով սատակել զնոսա, թէ ո՛չ դարձցին ի մոլորութենէն եւ ելանիցեն յարքայական պողոտայն»[84]: Կոստանդ Բ. կայսրին հասցեագրված պատասխան թղթի շարակարգից հետեւում է նաեւ, որ նեստորականներին անգամ հնարավորություն չտրվեց բանավիճել ազգությամբ ոչ ասորի քրիստոնյա այլ համայնքների հոգեւորականների հետ[85], քանի որ միայն նրանց վտարումից հետո արքայից արքան առաջարկեց մնացած երկու կողմերին՝ քաղկեդոնականներին ու հակաքաղկեդոնականներին, արտահայտել իրենց դիրքորոշումները[86]:

Ներսես Տայեցու եւ Թեոդորոս Ռշտունու Պարսից եկեղեցաժողովի ընթացքի վերաբերյալ շարադրված մանրամասնությունների համապատկերում կատարյալ տեղավորվում է նեստորական համայնքի վրա խոսրովի դրած արգելքը: Ըստ դրա՝ Մար Գրիգորի մահից հետո (609 թ.) սրանց թույլ չէր տրվում նոր կաթողիկոս ընտրել: Որմիզդի որդու Խոսրովի հանձնարարությամբ Արեւելքի Եկեղեցու եպիսկոպոս հայրերի գումարման առիթով կազմված փաստաթղթերում մենք հայտնաբերում ենք «Հայրերի ներկայացրած խնդրանքն Արքային, որպեսզի վիրջինս նրանց (առաջնորդ.– Ա. Շ.) շնորհի Արեւելքում»[87]:

Արեւելքի Եկեղեցու կանոնագրքին կից փաստաթղթերի փաթեթը ներառում է նաեւ նրա եպիսկոպոս հայրերի գրավոր պատասխանը շահանշահի առաջադրած հարցին. «Նեստորականներն էին շեղվել հին ուսու-

---

[84] Սեբէոս, *էջ 542. հմմտ.* Ասողիկ, *էջ 699:*

[85] *Մեր համոզմամբ՝ սա է պատճառը, որ Արեւելքի Եկեղեցու հետագա հետեւորդների կողմից հեղինակած երկերում ի սպառ բացակայում են տեղեկություններն այս ժողովի վերաբերյալ: Տե՛ս, օրինակ, արեւելասասորերեն վերջին գրական հուշարձան համարվող՝ Եղիա Մծբնացու (975–1046) «Ժամանակագրություն»-ը (տե՛ս* M. Debié et al., Syriac and Syro-Arabic Historical Writing, c.*500*–c.*1400*, "The Oxford History of Historical Writing, vol. II, *400–1400*, Oxford, *2012, էջ 158): Կամ՝ արաբալեզու անանուն «Սեարդի Տարեգրություն»-ը* [Ḥawliyāt Saʿard]*), որը ենթադրաբար կազմվել է 9-րդ դարում համանուն քաղաքում (արդի Սղերդը Թուրքիայում) (տե՛ս* P. Wood, *նշ. աշխ.): Կամ էլ՝ Ամր իբն Մաթթային եւ Մարի իբն Սուլեյմանին վերագրվող (տե՛ս* C. Моисеева, Мари ибн Сулейман, «Православная Энциклопедия», *2021,* т. *43, էջ 451) արաբերենով կազմված ծավալուն աստվածաբանական «Աշտարակի գիրք»* [Kitāb al-Mağdal li-l-Istibṣār wa-l-Ğadal]*) խորագրով հանրագիտարանը:*

[86] Սեբէոս, *էջ 542. հմմտ.* Ասողիկ, *էջ 699:*

[87] *Տե՛ս «*Synodicon orientale ou recueil de synodes nestoriens»*, էջ 568, 585–586:*

ցիչների հաստատած հավատքի սյուներից, թէ (միաբնակ.– Ա. Շ.) վանականները։ Եւ կա՛ր, թէ չկար որեւէ մեկը Նեստորից առաջ, որ ասեր, թէ Քրիստոսն ունի երկու բնութիւն եւ երկու դեմք»[88]։

Այն բոլոր հանգամանքները, որոնց ներքո էին տեղի ունեցել ասորի՝ նեստորականութիւն ու միաբնակութիւն դավանող, հոգեւորականների միջեւ թեժ բանավեճերը, նկարագրված են նաեւ սբ. նահատակ Գիվարգիս Իզալացու[89] վկայաբանութեան մեջ։ Այն վերագրվում է Պարսից եկեղեցու կաթողիկոսի տեղապահ Բաբայ Մեծին, որ մեր կարծիքով՝ հայ մատենագիրների հիշատակած «Երան անուանեալ կաթողիկոսն» է։ Սրբագրական այս հուշարձանի համաձայն՝ Գիվարգիսը, որ ինչպես տեսանք, Արեւելքի եկեղեցու Nahargūr/Nahargūl *թեմի առաջնորդն էր, ի ծնե զրադաշտական է եղել՝ Մեհր-Գուշնասպ (պահլ.՝* Mehr-Gušnasp*) անունով։*

Արքունիք գալով՝ Արեւելքի եկեղեցու եպիսկոպոս հայրերի անունից նոր քահանայապետի ընտրութեան հարցի խնդրագրով՝ Գիվարգիսը մարտահրավեր նետեց միաբնակութեան կողմնակից Գաբրիել Դուրուստպետին։ Ուստի արքունիքի բժշկապետը մեղադրեց Գիվարգիսին կրակապաշտութեունն ուրանալու մեջ եւ շահանշահից հրաման ստացավ նրան բանտարկելու (ըստ զրադաշտական կանոնների) յոթ, ապա եւս ութ տարի (կարդա՛ ամիս) ժամկետով։ Ի վերջո, Գիվարգիսը խաչվեց Վեհարտաշիրում[90] Սելեւկյան 926 թ., ասորական Քանուն հրայ[91] ամսվա ԻԴ., Որմիզդի որդու Խոսրովի ԻԵ. տարում (=615 թ. հունվարի 14)[92]։

Բաբայ Մեծի վկայութիւնները կես դար անց գրի է առել նրա հայրենակիցը. «Ապա Գաբրիելը դառն հայհոյանքներ հնչեցրեց ուղղափառների դեմ։ Նա արքայի առաջ մեղադրեց Գիվարգիս Իզալացուն առ այն, որ վերջինս մոգերի կրոնն ուրացել էր եւ քրիստոնյա դարձել... Արքան հրաման ուղարկեց, եւ (Գիվարգիսը.– Ա. Շ.) մեկ տարով բանտարկվեց, ապա խաչվեց Վեհարտաշիրում»[93]։

Հետեւաբար Գիվարգիսը, մետրոպոլիտ Հովնադաբի, եպիսկոպոսներ Շուբհալմարանի եւ Սարգսի հետ միասին, կարող էր Այվան հասնել

---

[88] *Տե՛ս անդ, էջ 574–579, 591–597։*

[89] *Կարդա՛* [Gīwargīs ḏ-Īzlā᾽]։

[90] *Պահլ.՝* Vēh-Ardaxšēr, *անտիկ դարաշրջանի* Σελεύκεια ἐπὶ τῷ Τίγρει։

[91] *Կարդա՛* [kānōn (᾽) ḥrāy]։

[92] *Տե՛ս* G. Hoffmann, *նշ. աշխ., էջ 91–115։*

[93] *Տե՛ս* “A Short Chronicle on the End of the Sasanian Empire and Early Islam *(590–660* A. D.*)*”, *էջ 40–42։*

Արեւելքի Եկեղեցու եպիսկոպոսաց հայրերի խնդրանքով արքունիքում եկեղեցաժողով գումարվելուց շուրջ մեկ տարի առաջ։ Մենք հաշվի ենք առնում ո՛չ միայն նրա 15-ամսյա կալանքի առավելագույն ժամկետը, այլեւ այն ժամանակը, որը պահանջվում էր իր Նահրգուլի թեմից մայրաքաղաք հասնելու համար, եւ այն ժամանակը, որը պահանջվում էր Գաբրիելի հետ երկար ու թեժ բանավեճ վարելու համար։ Նրանք բոլորը պետք է ճանապարհ ընկնեին ոչ ուշ, քան 613 թ. հունիսի 27-ին, երբ ավարտվում էր Որմիզդի որդու Խոսրովի ԻԹ. տարին, որով թվագրված էր համապատասխան արձանագրությունը։

Արեւելքի Եկեղեցու եպիսկոպոս հայրերի անունից փաստաթղթերի կազմողն ամփոփում է. «Նրանք գրեցին այս հավատքի խոստովանությունը, ինչպես նաեւ դրան կցված քննարկումը, եւ ներկայացրին արքային»։ Սակայն նրանք արքայից պատասխան չստացան կա՛մ այն պատճառով, որ հեթանոսությունը չէր կարողանում ըմբռնել Աստծու վախի ճանաչելու իմաստը եւ, հետեւաբար, արհամարհում էր այն, կա՛մ այն պատճառով, որ արքայից արքան հարգանք էր տածում հերետիկոս աստվածաշարչարականների խմբակցության առաջնորդ Գաբրիելի հանդեպ[94]։

Այսպիսով՝ դատելով Արեւելքի Եկեղեցու Կանոնագրքին կցված եւ 612/3 թվագրվող փաստաթղթերի ամբողջությունից, նեստորականներին թույլ էր տրված իրենց քրիստոսաբանությունը ներկայացնել միայն գրավոր. եւ նրանք պատրաստեցին այդ փաստաթղթերը Տիզբոնում «ամենայն եպիսկոպոսաց կողմանցն Արեւելից եւ Ասորեստանի» եկեղեցաժողովի գումարումից առաջ։ Մեր տեսակետը հաստատվում է նաեւ այն կարեւոր հանգամանքով, որ արքունիքում «ուղղափառների» (կարդա՛ ներստորականների) եւ «հերետիկոսների» (կարդա՛ միաբնակների) միջեւ տեղի ունեցած թեժ բանավեճի մասին (ենթադրաբար) Մերվի մետրոպոլիտ Եղիայի մոտ շարադրված է Երուսաղեմի անկումից առաջ[95]։

Նեստորականներին ուղղված Գաբրիել Բժշկապետի խիստ քննադատությունից[96] եւ նրանց վռնդելուց հետո Այվանում դեմ առ դեմ մնացին

---

[94] *Տե՛ս* «Synodicon orientale ou recueil de synodes nestoriens», *էջ 580, 598։*

[95] *Տե՛ս* “A Short Chronicle on the End of the Sasanian Empire and Early Islam *(590–660* A. D.*)*”, *էջ 38–50, 39–51։*

[96] *Նեստորականների հանդեպ Գաբրիելի ատելության պատճառը մեզ հայտնի է. «Քանի որ նա բաց էր թողել իր օրինական կնոջը, որին կնության էր առել եւ որը ազնվական ընտանիքից դավանող կին էր, եւ երկու հեթանոս կանանց էր վերցրել ու հեթանոսական հարաբե-*

Քաղկեդոնի սահմանման կողմնակիցներն ու հակառակորդները, որոնք շարունակեցին բուռն բանավեճը: Ըստ ամենայնի, սրանց մասին էր խոսվում շահանշահի՝ Երուսաղեմի գրավմանը հաջորդած հրամանի նախաբանում. «Լսեմ եթէ երկու կողմանք են քրիստոնէիցն, եւ մին զմիւսն նզովէ»:

Փաստորեն՝ հայ-հակաքաղկեդոնիկ սակավաթիվ պատվիրակությունը, ըստ երեւույթին, եկեղեցաժողովի երկու ոստիկանների՝ Սմբատ Բագրատունու եւ բժշկապետ Գաբրիելի աջակցությամբ, «Կնիքն Հաւատոյ» ներկայացնելուց հետո, առավելություն ստացավ Տիեզերական Դ. ժողովի կողմնակիցների նկատմամբ: Դերեվարված Երուսաղեմի Զաքարիա պատրիարքին եւ (Փոքր) Ալեքսանդրիայի իմաստասերներից մեկին մնում էր հրապարակայնորեն հայտարարել, ինչպես նշված է Ներսես Տայեցու եւ Թեոդորոս Ռշտունու՝ Կոստանդ Բ.-ին ուղղված պատասխան թղթում. «Հաւատ ճշմարիտ այն է՝ զոր ի Նիկիայն ասացին առ երանելոյն Կոստանդիանոսիւ (Ա. Մեծ, 306–337.– Ա. Շ.): Եւ նմին միաբան Կոստանդնուպաւլսին եւ Եփեսոսին. եւ նոցին միաբան Հայոց հաւատն ճշմարտութեամբ: Իսկ Քաղկեդոնի ասացեալն ոչ է միաբան նոցին, որպէս ձեր բարերարութիւնդ ծանեաւ»[97]: Եւ ծնվեց շահանշահի հրամանագիրն առ այս. «եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին»[98]:

Հայ-քաղկեդոնական ավանդույթն անուղղակիորեն հաստատում է նմանատիպ հրահանգի արձակումը. «Ապա [յաթոռ նստաւ] հերետիկոս կոմիտաս կաթողիկոսը, որի ժամանակ բազում խռովություն եւ ավերածություններ տեղի ունեցան Հոռոմոց աշխարհում խոսրովի ձեռքով: Նա [Կոմիտասը] բոլորից սուր կերպով գրգռեց վեճը՝ նզովելու համար Քաղկեդոնի ժողովը»[99]:

Փոխարենը քաղկեդոնականների պարտության մասին է վկայում Հակոբիկյան եկեղեցու եպիսկոպոս Կիրիակոս Ամիդացին (մահ. 623 թ.).

րութիւններ էր ունեցել նրանց հետ՝ կաթողիկոս (Մար Գրիգորը.– Ա. Շ.) համոզում էր նրան բաց թողնել հեթանոս կանանց եւ վերցնել իր օրինական [կնոջը], բայց նա անտեսեց: Ապա նա շրջվեց եւ անցավ հերետիկոսների (կարդա՛ միաբնակների.– Ա. Շ.) կողմը եւ մեծ վնասներ հասցրեց մեր կողմնակիցներից շատերին (տե՛ս "A Short Chronicle on the End of the Sasanian Empire and Early Islam *(590–660* A. D.*)", էջ 24): Ջնայած (ենթադրաբար) Մերվի մետրոպոլիտ եղիայի այս վկայությանը, բրիտանացի արեւելագետ եւ բյուզանդագետ Ջ. Հովարդ-Ջոնսթոնը Գաբրիելին անվանում է «նեստորական բարեփոխիչ» (տե՛ս* J. Howard-Johnston, *նշ. աշխ.):*

[97] Սեբէոս, *էջ 542. հմմտ.* Ասողիկ, *էջ 700:*

[98] Սեբէոս, *էջ 543. հմմտ.* Ասողիկ, *էջ 700:*

[99] *Տե՛ս* Հ. Բարթիկյան, *նշ. աշխ., էջ 467:*

«Աստծու հրամանով Պարսից Խոսրով արքան՝ Որմիզդի որդին, եկավ եւ նվաճեց Եփրատից արեւելք գտնվող ամբողջ տարածաշրջանը: Ապա, Աստծուց ոգեշնչված եւ Շիրին թագուհու խորհրդով, նա քաղկեդոնիկ եպիսկոպոսներին վտարեց Եփրատից արեւելք գտնվող քաղաքներից եւ նրանց փոխարեն ուղղափառների նշանակեց»[100]: Իրանի հակոբիկյան աստիճանակարգի առաջնորդ՝ մափրիան[101] Գրիգոր Բար-Հեբրեոսը (1264–1286) հետագայում նույնպես կգրի. «Խոսրովի հրամանով... Քաղկեդոնի հիշատակը չնչվել էր Եփրատից արեւելք ընկած (բոլոր թեմերից.– Ա. Շ.)»[102]:

Ներսես Տայեցու եւ Թեոդորոս Ռշտունու վկայությամբ՝ Դվինի Ե. ժողովի (648 թ.)՝ Կ. Պոլիս ուղարկվելիք դավանաբանական թուղթը շարադրելու պահին[103] Խոսրով Փարվեզի մատանիով կնքած հրամանագիրը տակավին պահվում էր արքունական գանձարանում: Նրանք նաեւ պնդում էին, որ թե՛ «աստվածասեր» թագուհի Շիրինը[104], թե՛ բժշկապետը (Գաբրիելը), իսկ «կողմանցն Ասորեստանի»՝ մետրոպոլիտ «Կամյիշով»/«Կայէշով»-ը եւ եւս 10 եպիսկոպոսներ ժողովից հետո դարձի են եկել՝ ընդունելով «հաւատ զՀայոցն»[105]:

Սեբեոսի «Կամյիշով»-ին կամ Ասողիկի «Կայէշով»-ին կարելի է նույնականացնել Բար-Հեբրեոսի հիշատակած Քմաիշո[106] անունով մետրոպոլիտի հետ, չնայած որ ԺԹ. դարի մափրիանի ձեռքի տակ ունեցած տվյալները ցույց են տալիս, որ Արեւելքի Կամիշո մետրոպոլիտը մահացել էր դեռեւս Սելեւկյան 920 թ. (608/9 թ.)[107]: Մինչդեռ, «Թուղթ Կոմիտասայ Հայոց կաթուղիկոսի ի Պարսս»-ի ամբողջական տարբերակում, որտեղ թվարկված են մնացյալ տասն ասորի եպիսկոպոսների անունները, դարձյալ երեւան է գալիս Կամիշոն՝ «Կամբիշոյ» ձեւով: Փաստաթղթում նշված է, որ այն կազմվել է Խոսրով Փարվեզի Իէ. տարում (616/7 թ.)՝ Դվին ժամա-

---

[100] *Տե՛ս* Récit de Mar Cyriaque... ed. et trad. par F. Nau, «Revue de l'Orient Chretien», *1902*, t. *7*, *էջ 198, 203–204:*

[101] *Կարդա՛* [mapṛyānā]:

[102] *Տե՛ս* M. Mazzola, Bar 'Ebroyo's Ecclesiastical History: writing Church History in the 13th century Middle East. History. Paris, *2018*, *էջ 38, 246–247:*

[103] Սեբէոս, *էջ 543.* Ասողիկ, *էջ 700:*

[104] *Շիրին թագուհին, ըստ Անտիոքոս Ստրատեգոսի, նեստորականն էր ի ծնե (*Антіохъ Стратигъ, *էջ 54, 52):*

[105] Սեբէոս, *էջ 543.* Ասողիկ, *էջ 700:*

[106] *Կարդա՛* [Qāmīšōʿ]:

[107] *Տե՛ս* M. Mazzola, *նշ. աշխ., էջ 17, 357:*

նած 11 ասորի եպիսկոպոսներից երկուսի խնդրանքով.[108] «...որք խնդրեցէք զհաւատ քրիստոսասէր Հայոց՝ որք ի դրան արքունի հասեալ կայիք։ Ի խնդրոյ ձերմէ, հրամանաւ տէրանց, ես Կոմիտաս Մամիկոնէից եպիսկոպոս, որ յաջորդեցայ ի կաթուղիկոսութիւն Հայոց Մեծաց, ետու զետակաս զայս բոլորով սրտիւ եւ անկեղծելի հաւատով, առաջի բազում նախարարաց Հայոց եւ այլ ազգաց քրիստոնէից, որ ի դրան արքունի հասեալ էին, մանաւանդ առաջի մեծի տանուտեառն Խոսրովշնումն կոչեցելոյ, որոյ ճանաչիւր անուն Սմբատ, յազգէ Բագրատունեաց...»[109]։

Սույն մեջբերումը միանշանակ փաստում է, որ այդ 11 եպիսկոպոսները Տիզբոնի ժողովում ներկայացնում էին Հակոբիկյան եկեղեցու պաշտոնական պատվիրակությունը։

Վերին ժամանած Հակոբիկյան եպիսկոպոսներից մեկի անունը Պետրոս էր, մյուսինը՝ Մարմարութա։ Վերջինիս կարելի է նույնականացնել Տիկրիտի մետրոպոլիտ սբ. Մարութայի[110] հետ։ Ըստ Հակոբիկյան եկեղեցու կաթողիկոս Միքայել Ա. Մեծի (1166–1199) եւ Բար-Հեբրեոսի, Մարութան է նշանակվել առաջին մափրիանը Արեւելքում՝ Սելեւկյան 940 թ. (628/9 թ.)՝ պարսիկների նկատմամբ կայսեր Հերակլի տարած հաղթանակից հետո[111]։ Մարութայի վարքը հեղինակած աշակերտն ու հաջորդողը՝ Դենհան (649–659), պնդում է, թե ուսուցիչը, գտնվելով Տիզբոնում՝ բժշկապետ Գաբրիելի հովանու ներքո, արժանացել էր Խոսրովի արքունիքի բարեհաճությանը[112]։

Ահա մնացած ութ ասորիների անունները, որոնք կաթողիկոս Կոմիտասի պնդմամբ դարձի եկան՝ ընդունելով «հաւատ զՀայոցն». Պողոս/Պաւղոս Արուեստան եպիսկոպոս (Bēṯ ʿArəbāyē թեմ), Գաբրիէլ Տաճկաց եպիսկոպոս (Ṭayyāyē թեմ), Յովնան Հերթայ եպիսկոպոս (Ḥīrta թեմ), Սիմօն/Սիմաւն

---

[108] Ի դեպ՝ Արեւելքի եկեղեցու պատմությանը նվիրված վերջին ուսումնասիրություններում մետրոպոլիտ կամիշոյի մահը թվագրվում է 619 թ. (տե՛ս P. Wood, Miaphysites in Iraq during the Last Great War of Antiquity (c. 604–28) and its Aftermath, "The Journal of Ecclesiastical History", 2022, vol. 73, no 1, էջ 5)։

[109] Թուղթ Կոմիտասայ Հայոց կաթուղիկոսի ի Պարսս, հրատ. կարապետ վրդ. Կոստանեանցի, «Արարատ» ամսագիր, 1896, ԺԱ, էջ 535. Գիրք Թղթոց, 2րդ հրատ., աշխ.՝ Նորայր արք. Պողարեանի. Երուսաղէմ, 1994, էջ 412։

[110] Կարդա՛ [Mārūṯā ḏ-Ṭagrīṯ]։

[111] Տե՛ս Chronique de Michel le Syrien, ed et trad. par J.–B. Chabot. Paris, 1899–1910, t. 2, էջ 414, t. 4, էջ 411, M. Mazzola, Op. cit., էջ 18, 358։

[112] Տե՛ս Histoires de Marouta Métropolitain de Tagrit et de Tout l'Orient (VIe – VIIe siècle), écrite par son successeur Denha, ed. et trad. par F. Nau, Patrologia Orientalis, 1905, t. 3, fasc 1, no 11, էջ 73–77։

*Նինուէի եպիսկոպոս (*Nīnwē *թեմ), Գաբրիէլ Քարմա եպիսկոպոս (*Karmē *թեմ), Սաբասխոյ Կոհինհորական եպիսկոպոս, Բենիամին Սրընգի եպիսկոպոս (*Šiggar *թեմ), Ստեփան/ն/ոս Արզնոյ եպիսկոպոս (*Arzūn*) թեմ*[113]*։*

Միքայել Ասորու եւ Բար-Հեբրեոսի տեղեկութիւնների հիման վրա մեզ հաջողվում է նույնականացնել Հակոբիկյան եկեղեցու թվարկված բոլոր թեմերը, բացառությամբ Կոհի-Նիհորականի, որը Անանիա Շիրակացու (մոտ 612–685) խմբագրությանը վերագրվող «Աշխարհացոյց»-ում տեղադրվում է Ուրմիա լճից հարավ-արեւմուտք[114]*։ Իսկ ինչ վերաբերում է Կոհի-Նիհորականի եպիսկոպոսի անվանը, կարծում ենք, որ մենք գործ ունենք գրաբարում աղավաղված միջին արամեերեն [Սաբրիշո՛] (բառ.՝ «հույսը Յիսուսի վրա») անվան հետ։*

Նույնականացման են ենթակա նաեւ ութ ասորի եպիսկոպոսներից առնվազն երկուսի անունները։ Գրականությունում հաստակեցված է, որ 600–620 թթ. արաբների եպիսկոպոսը Հովնանն էր[115]*, որը երկար թափառումներից հետո հաստատվել էր ալ-Հիրայում՝ Սասանյաններին ենթակա Լախմիդների արաբական թագավորության մայրաքաղաքում*[116]*։ Հաստակեցված է նաեւ այն փաստը, որ Քարմայի թեմի վերջին նեստորական եպիսկոպոսը Գաբրիելն էր*[117]*, որը դարձի եկավ դեպի Հակոբիկյան եկեղեցի*[118]*։*

Սույն ուսումնասիրությունն ամփոփելով՝ պետք է խոստովանել, որ ինչպես ԺԲ.–ԺԳ. դարերի Հակոբիկյան առաջնորդներն (Միքայել Ասորին եւ Բար-Հեբրեոսը), այնպես եւ է. դարի նույն եկեղեցուն պատկանող հեղինակները, որեւէ տեղեկություն չեն պահպանել մեզ հետաքրքրող եկեղեցաժողովի վերաբերյալ։ Մեր կարծիքով, պատճառը շահանշահի հրովարտակն էր, որով «հաւատ զՀայոցն» սահմանվեց որպես Պարսկաստանի բոլոր քրիստոնյաների պաշտոնական դավանանք։ Մինչդեռ Հայոց եկեղեցին չմոռանանք, որ ի տարբերություն հակոբիկյանների (Սեւերիոս Անտիոքցու հետեւորդների) հավատարիմ էր Հուլիանոս Հալիկառնասցու ուսմունքին։ Իսկ Տիզբոնի ժողովում, ինչպես տեսանք, Հակոբիկյան եկե-

---

[113] «Թուղթ կոմիտասայ Հայոց կաթուղիկոսի ի Պարսս», էջ 535. «Գիրք Թղթոց», էջ 412։

[114] Աշխարհացոյց, «Մատենագիրք Հայոց», հտ. Բ., ե. դար, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 2153։

[115] [Yōḥannān Ṭayyāyē]*).*

[116] Տե՛ս M. Morony, Iraq after the Muslim Conquest. Princeton, NJ, *1984, էջ 376։*

[117] Կարդա՛ [Gaḇrīl ḏ-Karmē].

[118] Տե՛ս D. Wilmshurst, The Martyred Church. A History of the Church of the East. London, *2011, էջ 75։*

ղեցու 11 եպիսկոպոսներ՝ մետրոպոլիտ Կամիշոյի գլխավորությամբ, դարձի եկան հենց «հաւատին զՀայոցն», այլ կերպ ասած՝ համալրեցին հուլիանականների շարքերը[119]։

Մեր կարծիքով՝ «հաւատին զՀայոցն» դարձի եկած քահանայապետերի շարքերում պետք է փնտրել նաեւ Երուսաղեմի պատրիարք Զաքարիային, որը մահացավ գերության մեջ[120], եւ Աղվանից կաթողիկոս Վիրոյին։

Զնայած որ Աղվանից եկեղեցին Դվինի հովանու ներքո էր[121], Վիրոն, գտնվելով Տիզբոնում պատվավոր պատանդի կարգավիճակում[122], ժողովին հանդես էր եկել, ինչպես պնդում են Ներսես Տայեցին եւ Թեոդորոս Ռշտունին, քաղկեդոնականների կողմից՝ հույն եպիսկոպոսների հետ կողք-կողքի[123]։

ՎԵՐՋԱԲԱՆ

Խոսրով Փարվեզի՝ Տիզբոնում գումարած ժողովում Դվինի կաթողիկոսությունը ձեռք բերեց փաստաթուղթ, որով հակաքաղկեդոնական՝ միաբ-

---

*[119] Սա առաջին դեպքը չէր, երբ պարսկահպատակ ասորի եպիսկոպոսները միանում էին Հայոց եկեղեցուն։ Դվինում կաթողիկոսներ Բաբգեն Ա.-ի (490–516) եւ Ներսես Բ.-ի (548–557) կողմից 506 եւ 544 թթ. գումարված ժողովների նյութերից տեսնում ենք, որ ասորիները իրենց ակտիվ մասնակցությունն են բերել նեստորականներին համատեղ բանադրման գործընթացներում (*Բաբգէն կաթողիկոս Որմսեցի, [Ա.], [Բ.] *Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս, «Մատենագիրք Հայոց», հտ. Դ., Ջ. դար, Անթիլիաս–Լիբանան, 2004, էջ 113–124,* Ներսէս Բագրեւանդացի, *Պատասխանի թղթոյն Ասորեաց, ի Ներսեսէ Հայոց կաթուղիկոսէ… անդ, էջ 417–417,* Ներսէս Բագրեւանդացի, *Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս… անդ, էջ 419–420)։*

[120] Տե՛ս Антіохъ Стратигъ*, էջ 66, 65։*

[121] Ա. Շահինեան*, Ե.–Է. Դարերի Պարսկահպատակ Հայոց Հայրապետերի Իրաւասութեան եւ Հովանու Ներքոյ Գտնուող Տարածքները, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հտ. ԼՀ., 2018, էջ 93–116։*

*[122] Ըստ Է. դարի Աղվանից մարզպանությունից անանուն մի հայ մատենագրի՝ Վիրոն մինչեւ Խոսրովի սպանությունը (628 թ.), 25 տարի շարունակ, գտնվել է նրա արքունիքում՝ որպես պատանդ։ Միաժամանակ, (Շիրին) թագուհու միջնորդությամբ, նրան հաջողվել էր պահպանել կաթողիկոսական տիտղոսը (*Անանուն Կաղանկատուացի*, Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց… «Մատենագիրք Հայոց», հտ. Դ., Է. դար, Անթիլիաս–Լիբանան, 2005, էջ 396–397)։*

[123] Սեբէոս*, էջ 542.* Ասողիկ*, էջ 699. Վիրոյի վերաբերյալ հայ մատենագիրների փաստարկները հիմնավորվում են Վրաց եկեղեցու կաթողիկոս Արսեն Սափարեցուն (860–887) վերագրվող «Վրաց եւ Հայոց բաժանման մասին» (*განყოფისათჳს ქართველთა და სომეხთა*) երկում տեղ գտած նյութերով։ Վրաց-քաղկեդոնիկ հեղինակը գրում է, որ Հայոց կաթողիկոս Կոմիտաս Ա.-ն վերադարձրեց Աղվանից եկեղեցին հակաքաղկեդոնական դավանանքին (Վրաց աղբյուրները Հայաստանի յեւ հայերի մասին, թարգմ.՝ Լ. Մելիքսեթ-Բեկի, հտ. Ա.։ Ե.–ԺԲ. Դար, Յերեվան, 1934, էջ 37–38)։*

նակ հավատամքը իրավական ձեւակերպում ստացավ։ Խոսրովը, անկասկած, իր առջեւ նպատակ էր դրել օգտագործել «հաւատ զՀայոցն» որպես գաղափարախոսական զենք՝ ամրապնդելու իր դիրքերը Բյուզանդիայի արեւելյան պրովինցիաններում, որոնք պատերազմի սկզբից (603 թ.) անցել էին իր բանակի վերահսկողության տակ։

Ահա թե ինչու Հայոց եկեղեցին, ի տարբերություն նեստորականների, կաթողիկոս Աբրահամ Ա. Աղբաթանեցու մահից մի քանի տարի անց՝ Խոսրովի ԻԱ. տարում (610/1 թ.)[124], հնարավորություն ստացավ թափուր գահը համալրել նորընտիր հայրապետով։

Ջաքարիային պարսիկների կողմից գերեվարելուց անմիջապես հետո Երուսաղեմում նրա տեղապահ Մոդեստոսը[125] թուղթ է հղում Կոմիտասին՝ նրան դիմելով արքեպիսկոպոս։ Կոմիտասը նույն կերպ է ինքն իրեն կոչում պատասխան թղթում՝ հայերեն համարժեք տարբերակով՝ եպիսկոպոսապետ։ Սույն թղթակցությունը նույնպես գրի է առել Սեբեոսը[126]։ Սակայն արդեն «Թուղթ Կոմիտասայ... ի Պարսս»-ում, որը կազմվել էր Տիզբոն այցելելուց հետո, հեղինակը, ինչպես տեսանք, գրում է իր մասին որպես Մեծ Հայքի կաթողիկոս, որ այդ տիտղոսին արժանացավ Սմբատ Բագրատունու (Խոսրով Շընումի) միջնորդությամբ[127]։

Այս փաստաթղթի ամբողջական տարբերակը, որը հրապարակվել է «Արարատ» ամսագրում դեռ 1896 թ., թվագրվում է Խոսրով Փարվեզի ԻԷ. տարով (616/7 թ.)։ Եթե ընդունենք ընդօրինակող որեւէ գրչի մեխանիկական սխալը՝ ով կարող էր «ԻԸ» տառերը հեշտությամբ շփոթել «ԻԷ»-ի հետ, կստանանք Պարսից եկեղեցաժողովի տարեթիվը շահանշահի ԻԸ. տարում։ Այն մեկնարկել է 614 թ. հունիսի 27-ին, երբ Երուսաղեմը արդեն մեկ ամսից ավելի է, ինչ ընկած էր։

Ինչ վերաբերում է Այվանում գտնվող նեստորական եւ միաբնակ աստրիների միջեւ դավանական հողի վրա տեղի ունեցած բանավեճին, ապա այն, ըստ ամենայնի, սկսվել էր 613 թ. կեսերին եւ շարունակվել մեկ տա-

---

[124] Սեբէոս, էջ 508։

[125] Անտիոքոս Մարաւեգոսի վկայությամբ՝ Մոդեստոսը, Հերակլի ԻԱ. տարում, Տիրոջ խաչի վերադարձից հետո մարտի 21-ին՝ գերությունից 17 տարի անց եւ Խոսրովի սպանության Գ. տարում, այսինքն՝ 631 թ., կարճ ժամանակով զբաղեցրեց Երուսաղեմի պատրիարքի գահը (տե՛ս Անտիոքъ Стратигъ, էջ 65–66, 65–66)։

[126] Սեբէոս, էջ 512–516։

[127] Տե՛ս «Գիրք Թղթոց», էջ 412։

րի, երբ արքայից արքայի հրահանգով եւ արքունիքի բժշկապետի անմիջական միջամտությամբ, փակվեց միաբնակների հաղթանակով։

Հայոց կաթողիկոս Ներսես Գ. Տայեցու եւ գահերեց իշխան Թեոդորոս Ռշտունու Կոստանդ Բ. կայսրին հասցեագրված պատասխան թղթից պարզ էր, որ երբ հայ եպիսկոպոսներ Կոմիտասն ու Մատթեոսը ժամանեցին «ի դուռն արքունի», «երան անուանեալ կաթուղիկոսն, եւ այլ եպիսկոպոսունք յԱսորեստանէ եւ յԱրուաստանէ եւ ի Խուժաստանէ» արդեն այնտեղ էին գտնվում։ Նրանք, հավանաբար, սպասում էին գրավոր ներկայացված «հավատքի խոստովանության» պատասխանին, ինչի մասին ամփոփելով գրում էր Արեւելքի Եկեղեցու եպիսկոպոս հայրերի անունից փաստաթղթերի կազմողը։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Պարսից Եկեղեցաժողով, Խոսրով Փարվեզ, Հայոց Եկեղեցի, Արեւելքի Եկեղեցի, Ասորոց Հակոբիկյան Եկեղեցի, նեստորականներ, միաբնակներ, քաղկեդոնականներ, հակաքաղկեդոնականներ։

РЕЗЮМЕ

В исследовании выявлены предпосылки, причины и последствия упоминаемого участником IV Двинского собора (644/5 г.), епископом Себэосом, синода, который был созван в Ктесифоне сасанидским царем царей Хосровом II Парвизом (590–628). Оно базируется на разноязычных нарративных источниках, эпистолярных документах, синодальных материалах, а также на энциклопедических сборниках начала VII века, содержаших богословские тексты. Автор статьи критикует различные версии датировки Персидского синода, а также теорию о том, что дело в столице завершилось лишь диспутами, а не заседаниями епископов. Он демонстрирует, что мы имеем с синодом, созванным непосредственно после пленения в мае 614 г. сасанидской армией Иерусалима. В статье реконструирован список основных участников синода из числа высшего духовенства стран Христианского Востока, имена обоих блюстителей из числа высшей светской знати Ирана, восстановлены повестка дня и принятое постановле-

ние. Это был шахиншахский указ, который юридически оформлял «армянскую веру» в качестве единственной доктрины для всех подданных христиан, в том числе проживавших на оккупированных территориях Византии.

SUMMARY

The study reveals the background, causes and consequences of the Synod convened in Ctesiphon by the Sasanian King of Kings Ḵosrow II Parvēz (590–628), and mentioned by Bishop Sebēos, a participant of the Fourth Council of Dvin (644/5). The article is based on multilingual narrative sources, epistolary documents, synodal materials, and collections containing theological texts from the early 7th century. The author criticizes various theories regarding the dating of the Persian Synod, as well as the theory that the proceedings in the capital consisted only of debates and not of actual meetings of bishops. He demonstrates that we have a synod convened immediately after the capture of Jerusalem by the Sassanid army in May 614. The article reconstructs the list of the synod's main participants from among the high clergy of the Christian East, the names of both guardians from among Iran's highest secular nobility, and restores the agenda and the resolution adopted. It was the Shāhanshāh's decree that legally formalized the "faith of the Armenians" as the sole doctrine for all Christian subjects, including those residing in the occupied territories of Byzantium.

ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՔԱՐՈԶԸ ՀԱՒԱՏՔԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ, ԱՅՆ ԽՕՍՔԻՆ ՄԱՍԻՆ, ՈՐ Կ'ԸՍԷ. «[ՈՎ ՈՐ ԻՄ ԱՅՍ ԽՕՍՔԵՐՍ ԿԸ ԼՍԷ ՈՒ ԿԸ ԿԱՏԱՐԷ ՁԱՆՈՆՔ], ԿԸ ՆՄԱՆԻ ԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՐԴՈՒ ՄԸ, [ՈՐ ԻՐ ՏՈՒՆԸ ԺԱՅՌԻ ՎՐԱՅ ՇԻՆԵՑ]»[1]

Գիտելի է, թէ մեր Տէրը հաւատքը տաճնհինգ բաներու կը նմանցնէ, այսինքն՝

Նախ՝ շինուածեան[2]։

Երկրորդ՝ գինիի[3]։

Երրորդ՝ հագուստի։

Չորրորդ՝ կրակի[4]։

Հինգերորդ՝ սերմերու[5]։

Վեցերորդ՝ մանանեխի հատիկի[6]։

Եօթներորդ՝ խմորի[7]։

Ութերորդ՝ արծաթի[8]։

Իններորդ՝ խաղողի որթատունկի[9]։

Տասներորդ՝ արքայի[10]։

Տասնմէկերորդ՝ հովիւի[11]։

Տասներկրորդ՝ հարսանիքի[12]։

---

[1] Մատթ. է. 24։

[2] Տես Մատթ. է. 24–29։

[3] Տես Մարկ. Բ. 22։

[4] Տես Ղուկ. ԺԲ. 49–53։

[5] Տես Մատթ. ԺԳ. 4։

[6] Տես Մատթ. ԺԷ. 19։

[7] Տես Մատթ. ԺԳ. 33։

[8] Տես Մատթ. Իե. 15–28։

[9] Տես Մատթ. ԻԱ. 33։ Առաջնորդուելով քարոզի յետագայ շարադրանքէն, այս թուարկումներուն մէջ նշուած նմանութիւնները համապատասխանեցուցած ենք քարոզի ընդարձակ բացատրուող թուարկումներուն մէջ նշուածներուն։ Այսպէս՝ Ա. Գ. Դ. արքայութեան փխ. խաղողի որթատունկի (ծանօթագրութիւնը խադ քահանայ Ղազարեանինն է)։

[10] Տես Ղուկ. ԺԹ. 12։ Ա. Գ. Դ. քանքարի փխ. արքայի (ծանօթագրութիւնը խադ քահանայ Ղազարեանինն է)։

[11] Տես Մատթ. ԻՋ. 31։ Ա. Գ. Դ. տունկի փխ. հովիւի (ծանօթագրութիւնը խադ քահանայ Ղազարեանինն է)։

[12] Տես Մատթ. Իե. 6։ Ա. Գ. Դ. հովիւի փխ. հարսանիքի (ծանօթագրութիւնը խադ քահանայ Ղազարեանինն է)։

Տասներեքերորդ՝ քանքարի[13]։
Տասչորրորդ՝ մարգարիտի[14]։
Տասնհինգերորդ՝ պահուած գանձի[15]։

Արդ, բազմաթիւ պատճառներով «շինութեան»[16] կը նմանի։

Նախ՝ որովհետեւ շինութիւնը բազմաթիւ մասերէ ու կողմերէ կը հաւաքուի եւ մէկ տուն կ'ըլլայ. այդպէս ալ մենք բոլոր ազգերէն եւ բոլոր լեզուներէն կը հաւաքուինք եւ մէկ միտք կ'ըլլանք, որ է Աստուծոյ սուրբ խորանը։

Երկրորդ՝ քանի որ իւրաքանչիւր ոք, որ տուն կը շինէ, ո՛չ մէկ բան կ'արհամարհէ, այսինքն՝ փայտ, խոտ, եղէգ եւ շինութեան բոլոր նիւթերը. այդպէս ալ մենք հաւատքի շինութեան մէջ պէտք չէ ոչինչ արհամարհենք, այսինքն՝ առաքինութիւնները, պահքերը, եւ այլն։

Երրորդ՝ որովհետեւ եթէ նիւթերէն մէկը արհամարհենք, հնարաւոր չէ տուն շինել. այդպէս ալ եթէ պահքը, ողորմութիւնը եւ այլնը արհամարհենք, հնարաւոր չէ մեր հաւատքի [տունը] շինել։

Չորրորդ՝ քանի որ իւրաքանչիւր ոք, որ տուն կը շինէ, հանգիստ չունենար մինչեւ չ'աւարտէ. այդպէս ալ մենք պէտք է պահքով եւ աղօթքով միշտ արթուն ըլլանք եւ յաւիտենական [մեր] յարկը շինենք։

Հինգերորդ՝ որովհետեւ իւրաքանչիւր ոք, որ փայտ ու եղէգ կը կրէ շինութեան համար, չի՛ ամչնար եւ ամօթ չի՛ համարեր. այդպէս ալ մենք պէտք չէ ամօթ համարենք բոլոր առաքինութիւնները՝ համարձակօրէն կատարելով զանոնք։

Վեցերորդ՝ քանի որ իւրաքանչիւր ոք, որ կը շինէ, ինքն իր համար կը շինէ եւ ո՛չ թէ ուրիշներու. այդպէս ալ մենք հաւատքի տունը մեզի համար կը շինենք եւ ո՛չ թէ ուրիշներու, ու ո՛չ ոք կը յափշտակէ զայն իմ ձեռքերէս. տակաւին, գովութիւն լսելու համար պէտք չէ ըլլայ միայն, որպէսզի միայն այդ վարձատրութիւնը չընդունինք։

Եօթներորդ՝ որովհետեւ ամռան կը շինեն ու կը շտապեն, որպէսզի ձմեռը հասնելով չխափանէ [շինութիւնը]. այդպէս ալ մենք, այնքան ատեն որ ողջ ենք, ամռան օրեր են եւ կրնանք հաւատքի [մեր տունը] շինել։ Իսկ

---

[13] *Մատթ. Իե. 6։ Ա. Գ. Դ. հարսանիքի փխ. քանքարի (ծանօթագրութիւնը խադ քահանայ Ղազարեանինն է)։*
[14] *Տե՛ս Մատթ. ԺԳ. 45։*
[15] *Տե՛ս Մատթ, ԺԳ. 44։*
[16] *Տե՛ս Մատթ. է. 24–29։*

եթէ մահուան ձմեռը հասնի եւ այնտեղ ուզենք շինել՝ չենք կրնար, քանի որ այստեղ արժանի է երկինքի Արքայութիւնը շինել։

Ութերորդ՝ որովհետեւ քարերը հաստատապէս կը դրուին հիմքերուն մէջ եւ անոնց վրայ կը բարձրանայ շինութիւնը. այդպէս ալ մենք պէտք է քարերով՝ ծանրագոյն առաքինութեամբ հաստատուինք եւ ապա անոր վրայ վայելչականները զարդարենք, ըստ այնմ. «Ես հիմմեռուն մէջ անկիւնի քար մը կը դնեմ»[17], եւ այլն։

Իններորդ՝ քանի որ նախ խորունկ կը փորեն եւ ապա քարը կը հաստատեն. այդպէս ալ մենք պէտք է մարմնական բոլոր խարդախութիւնները [մեղաւոր կիրքերը, չար ցանկութիւնները] եւ չարամիտ ջանքերը քանդենք եւ հոգեւորի դարձնենք, ու այնտեղ՝ անշարժ պահպանութեամբ հաստատենք հաւատքը։

Տասներորդ՝ որովհետեւ եթէ շինութեան ծախսին մէջ բան մը պակսի, գործի [տունի] տիրոջ մօտ կ'երթան ու կը խնդրեն անորմէ եւ ո՛չ թէ ուրիշի մը մօտ. այդպէս ալ մենք, պէտք է հարուստ Աստուծոյ՝ որ այս գործին [շինութեան] Տէրն է, մօտ ընթանանք, եւ եթէ մեր սէրը, ողորմութիւնը կամ ուրիշ բան պակաս է [քիչ է], Իր առատ ողորմութեան համաձայն կու տայ մեզի դիմելու Իր դռներուն եւ Իրմէ խնդրելու։

Երկրորդ, Տէրը Իր հաւատքը «գինիի»[18] *կը նմանցնէ։*

Այս եւս բազմաթիւ պատճառներով, ըստ այնմ. «Ո՛չ ոք նոր գինիս հին տիկերու մէջ կը լեցնէ»[19]։

Նախ՝ որովհետեւ գինին երբ հնձանէն կ'ելլէ՝ նոր կը կոչուի. այդպէս ալ խաչի հնձանէն եւ Տիրոջ ուսմունքները հինէն աւելի նոր եղան, քանի որ հինը օրինակ էր, իսկ ասիկա ճշմարտապէս կատարուեցաւ։

Երկրորդ՝ որովհետեւ նոր գինին զօրաւոր է եւ բոլոր կողմերէն կ'եռայ. այդպէս ալ Աստուծոյ խօսքը ազդեցիկ ու զօրաւոր է եւ կը թափանցէ մինչեւ շունչը, օդն ու մարմնական ուղղութեան խորքը։

Երրորդ՝ քանի որ հին տիկերը չեն կրնար նոր գինիի զօրութեան դիմանալ, այլ՝ անմիջապէս կը պատռին՝ Տիրոջ ըսածին համաձայն[20]. այդպէս ալ մեղքերով հինցած հոգին չի՛ կրնար տանիլ աստուածային ուսու-

---

[17] *Համմ. Ես. ԻՀ. 16։*
[18] *Մարկ. Բ. 22։*
[19] *Մարկ. Բ. 22։*
[20] *Մարկ. Բ. 22։*

ցումներուն վարդապետութիւնը, այլ՝ զարնուելով կը տրորուի եւ կը փտի յաւիտենական կորուստով։

Չորրորդ՝ որովհետեւ տիկերը նախ նոր կ՚ըլլան եւ յետոյ աղտոտելով կը հինանան. այդպէս ալ մենք նոր ու անարատ ստեղծուեցանք Աստուծմէ, իսկ ետքէն մեր անձերը աղտոտեցինք պոռնկութեամբ եւ ամէն տեսակի չարիքներով։

Հինգերորդ՝ քանի որ նոր գինին մարդուն սիրտը կ՚ուրախացնէ, որովհետեւ առատ է. այդպէս ալ մեր Տիրոջ վարդապետութիւնը մեր ուրախարարն է, ըստ այնմ. «Ուրախ եղէք Տիրոջմով»[21]։

Վեցերորդ՝ քանի որ միտքէն բոլոր հոգերը կը տանի. այդպէս ալ Տիրոջ խօսքերը կը քակեն բոլոր հոգերը, որ մեղքերու համար մեր միտքին մէջ են՝ ըստ այնմ. «Անոնց երեսէն ամէն արցունք պիտի ֆակէ [սրբէ]»[22]։

Եօթներորդ՝ որովհետեւ եթէ զօրութեամբ տկար է, այնուհետեւ կը մոռնայ իր տկարութիւնը եւ հսկաներուն դէմ պատերազմելով չի՛ վախնար. այդպէս են Տիրոջ խօսքերը. օրինակի համար, Պօղոսի պարագային կը տեսնենք, թէ երբ Հոգիով լեցուեցաւ՝ աթէնացիներու իմաստուններուն հետ «կը պատերազմէր»[23]։

Ութերորդ՝ քանի որ մարդուն քուն կը բերէ՝ մարմինին բոլոր անդամները վառելով. այդպէս ալ Տիրոջ խօսքերը կամաց-կամաց կը սորվեցնեն ու վառելով կը յորդորեն աստուածայինը սիրելու, որմէ թմրելով՝ տանջանքները չենք զգար՝ ըստ այնմ. «Ո՞վ պիտի բաժնէ մեզ Քրիստոսի սէրէն»[24]։

Իններորդ՝ որովհետեւ եթէ ոեւէ մէկ աղքատ թագաւորի մը տունը մտնէ ու գինի խմէ, այնուհետեւ կը մոռնայ իր տունը եւ այնտեղ գինովնալով ոտքերը կը պարզէ. այդպէս ալ մենք, երբ եկեղեցի կու գանք ու կ՚ըմպենք Քրիստոսի քաղցր վարդապետութենէն, հեթանոսական կռապաշտութեան տունը կը մոռնանք եւ մոռնալով այլեւս այնտեղ չենք երթար։

Տասներորդ՝ քանի որ գինովցածները անարգանքները ոչինչ կը համարեն. եթէ կատակեն՝ կը ծիծաղին, եթէ բան մը կորսնցնէ՝ հոգ չի՛ ըներ. այդպէս ալ մենք, երբ մեր Տիրոջ վարդապետութեան առատութիւնը ըմպենք, այն ատեն կրնանք ընել այն, որ կ՚ըսէ, թէ՝ «եթէ մէկը [աջ] երեսիդ

---

[21] Փիլիպ. Դ. 4։
[22] Տես Յայտ. է. 17։
[23] Գործք ԺԷ. 18։
[24] Հռոմ. Ը. 35։

ապտակէ, միւսն ալ դարձուր անոր»[25], *ինչպէս նաեւ նոյնիսկ յանձն առնել մահ՝ Քրիստոսի համար։*

Երրորդ, Տիրոջ հաւատքը հագուստի կը նմանի՝ ըստ այնմ. «Ոչ nf նոր կտորը հին հագուստի վրայ կը դնէ»[26]։ *Ասիկա՝ բազմաթիւ կերպերով։*

Նախ՝ որովհետեւ իւրաքանչիւր ոք, որ պայծառ հագուստներ հագած է, ամէն տեղ փառք ու պատիւ կ՚ունենայ. այդպէս ալ, ով որ զՔրիստոս եւ Անոր վարդապետութիւնը հագած է, հրեշտակները կը պատուեն զինք եւ բոլոր մարդիկը կը սարսին իրմէ։

Երկրորդ՝ քանի որ հագուստը ցուրտէն ու տաքէն կը պահէ. այդպէս ալ Տիրոջ վարդապետութիւնը կը պահէ մեղքերու տօթէն եւ անհաւատութեան ցուրտէն։

Երրորդ՝ որովհետեւ ով որ [նոր հագուստ] հագուած է, կը խնայէ հագուստին պայծառութիւնը եւ կը պատրաստուի աղտոտել զայն [օգտագործելով]. այդպէս ալ մենք պէտք է զգուշութեամբ պահենք հոգեւոր ուսմունքը, որպէսզի խոզերը չ՚աղտոտեն մեզ։

Չորրորդ՝ քանի որ եթէ հագուած հագուստը աղտոտի, ծաղր ու ծանակի ենթակայ կը դառնայ տուեալ մարդը. այդպէս ալ պիղծ գործով մեր սուրբ հաւատքը կը սպանենք, կը ծաղրուինք Թշնամի սատանայէն։

Հինգերորդ՝ որովհետեւ եթէ հագուստը միայն արտաքնապէս պայծառութիւն ունի՝ այդ պայծառութիւնը շուտով կը կորսուի. այդպէս ալ եթէ ոեւէ մէկը Տիրոջ հրամանները երեսանց կատարէ միայն եւ ո՛չ թէ սիրտով, շուտով յայտնի կը դառնայ այդպիսիին կորուստը։

Վեցերորդ՝ քանի որ աղտոտ ծառան, որ արժանի չէ թագաւորին, եթէ թագաւորի հագուստներ հագուի, չի՛ վայելեր իրեն. այդպէս ալ եթէ ոեւէ մէկը պիղծ գործով վարդապետէ, Ահարոնի որդիներուն՝ Նադաբին ու Աբիուդին նման է, որովհետեւ սրբութեան հագուստով առանց հրամանի կամեցան [պատարագ] մատուցել, կրակով այրեցան[27], այդպէս ալ անոնք [այդպիսիները] կը պատուհասուին։

Եօթներորդ՝ քանի որ հին հագուստն ու նոր կտորը իրարու չեն միաբանիր՝ Տիրոջ համաձայն[28]. այդպէս ալ մեղքն ու արդարութեան օրէնքը

---

[25] *Մատթ. Ե. 39։*
[26] *Մատթ. Թ. 16։*
[27] *Ղեւտ. Ժ.։*
[28] *Մատթ. Թ. 16։*

միաբանութիւն չունին՝ ըստ այնմ. «Ի՞նչ միաբանութիւն կայ լոյսին ու խաւարին միջեւ»[29]:

Ութերորդ՝ որովհետեւ հինն ու նորը կտոր-կտոր կ'երեւան. այդպէս ալ, եթէ մեղք կը գործես ու Անոր հրամանները չես պահեր, խղճմտանքդ չի՛ դադրիր ամօթանք տալէ քեզի։

Իններորդ՝ քանի որ նոր հագուստը ամբողջ մարմինը կը պարունակէ, իսկ հինը՝ մէկը մասը միայն. այդպէս ալ Քրիստոսի վարդապետութիւնը հոգին ու մարմինը կը պահպանէ, իսկ հին օրէնքն ու մեղքը՝ միայն մէկ մասը, այսինքն՝ մարմինը կամ կը պահպանեն եւ կամ կը հաճոյացնեն։

Տասներորդ՝ որովհետեւ մարդ արագօրէն կը հագուի ու կը հանէ հագուստը. այդպէս ալ մենք մեր մէկ խօսքով զՔրիստոս մեզի կը մօտեցնենք եւ մեր մէկ խօսքով կը հեռացնենք՝ ուրացումով, ատոր համար կ'ըսէ. «Խօսեցաւ պիտի արդարանաս եւ խօսեցաւ պիտի փառաւորուիս»[30]:

Ջորրորդ՝ «կրակի» *կը նմանի, ըստ այնմ.* «Եկայ կրակ ձգելու երկրի եկայ»[31], *եւ այս մասին գրուած է Ղուկասի մօտ. այնտեղ տասներորդ գլուխին մէջ կը գտնես*[32]։

«Եկայ կրակ ձգելու երկրի վրայ. [եւ ինչքան կ'ուզէի, որ արդէն իսկ բորբոքած ըլլար]» (Ղուկ. 12.49):[33]

Տէրը Աւետարանին զօրութիւնը օրինակներով կը նմանցնէ, ինչպէս հնարաւոր է օրինակը տալ, որով ճշմարտութիւնը մատնանշուի, որովհետեւ երբեմն խմորի կը նմանցնէ՝ անոր բաշող զօրութեան համար: Նմանապէս գանձի կը նմանցնէ, բնութեան փարթամեցուցիչ ըլլալուն եւ պատուականութեան համար: Իսկ այստեղ «կրակի» կը նմանցնէ, բազմաթիւ պատճառներու համար:

---

[29] *Բ Կորնթ. Ջ. 14։*

[30] *Մատթ. ԺԲ. 37։ Ջուղայեցի Վարդապետը* փառաւորուիս *գրած է, բայց պէտք է ըլլայ* դատապարտուիս, *համաձայն Աւետարանական համարին, ինչպէս նաեւ այս տողերուն մէջ արծարծուած միտքին (ծանօթագրութիւնը թարգմանիչինն է)։*

[31] *Ղուկ. ԺԲ. 49–53։*

[32] *Մատթէոս վրդ. Ջուղայեցին նկատի ունի իր իսկ գրած «Ղուկասի Աւետարանի մեկնութիւնը», տե՛ս ձեռագիր ՄՄ 5332 (ծանօթագրութիւնը խադ քահանայ Ղազարեանինն է)։*

[33] *2022 թուականին երեւանի մէջ, Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի գիտական խորհուրդի որոշումով հրատարակուած է Ջուղայեցիի «Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու» գործը: Բնագիրը հրատարակութեան պատրաստած են Յովհաննէս Պէյլէրեանն ու Վիգէն Ղազարեանը: Յառաջաբանն ու ցանկերը պատրաստած է Յովհաննէս Պէյլէրեանը: Այդ հրատարակութենէն օգտուելով կատարեցինք վերի թարգմանութիւնը՝ շեղագիր ամբողջ հատուածը՝ տասը կէտերով (էջ 141–143), որպէսզի ճառը ամբողջական ըլլայ (ծանօթագրութիւնը թարգմանիչինն է)։*

Նախ՝ որովհետեւ «կրակը» բնութեամբ տաճցնող է, այսպէս ալ է Աւետարանին շնորհիը. [անոնք] որոնք միտեռնին կը պահեն, աստուածային սիրով կը տաճնան, Պօղոսի համաձայն. «*[Որովհետեւ համոզուած եմ, որ ո՛չ մահը եւ] ո՛չ կեանքը, [ո՛չ հրեշտակները, ո՛չ ալ չար ոգիներու իշխանութիւնները, եւ ոչ ալ ինչ որ կան], եւ ո՛չ ալ գալիքը եւ ո՛չ ալ ուրիշ որեւէ մէկ բան կրնան մեզ բաժնել [Աստուծոյ սէրէն, որ մենք ճանչցանք [մեր Տիրոջ] Յիսուս Քրիստոսի միջոցաւ*» (Հռոմ. Ը. 38–39)։

Երկրորդ՝ ըսի որ կրակը իր ընթացքը դէպի վեր ունի. այդպէս ալ Աւետարանին խօսքերը կը հրաւիրեն մեզ երկինք ելլել, ըստ այնմ. «*Դուք ձեզի համար երկինքին մէջ, [ուր ցեցն ու ժանգը չեն կրնար փճացնել]*» (Մատթ. Զ. 20). իսկ Պօղոս. «*Երկնաւոր բաներու մասին խորհեցէք, ուր է Քրիստոս, Աստուծոյ աջ կողմը նստած*» (տե՛ս Կող. Գ 1–2)։

Երրորդ՝ որովհետեւ «*կրակը*» բնութեամբ լուսաւոր է. այդպէս ալ Աւետարանին խօսքերը կը լուսաւորեն մեղքերով խաւարած հոգին, ըստ այնմ. «*Մինչեւ որ ձեր սիրտերուն մէջ Աւետարանին լոյսը ծագի*» (հմմտ. Բ. Կորնթ. Դ. 46), եւ թէ՝ «*խաւար տեղերը կը լուսաւորէ*» (տե՛ս Բ. Պետ. Ա. 19). եւ թէ՝ «*մինչեւ լոյս բացուիլը կը լուսաւորէ, եւ Արուսեակը [Առաւօտեան Աստղը] [պիտի ծագի ձեր սիրտերուն մէջ]*» (Բ. Պետ. Ա. 19)։

Չորրորդ՝ ըսի որ կրակի զօրութիւնը անպիտան ախտն ու ժանգը, որ խառնուած են ոսկիին եւ ուրիշ այլ նիւթերը կը մաքրէ եւ նախկին պայծառութեան կը դարձնէ։ Այսպէս ալ մեր բնութիւնը, որ մեղքերով ժանգահարուած է, Հոգիին կրակով դարձեալ ձուլեց Սուրբ Աւետարանով եւ առաջին պայծառութեան բարձրացուց, ըստ այնմ. «*Ան ձեզ պիտի մկրտէ Սուրբ Հոգիով եւ կրակով*» (Մարկ. Ա. 8)։

Հինգերորդ՝ որովհետեւ անոնք որոնք կրակին կը մօտենան, բոլորը միեւնոյն ձեւով կը վառէ. այդպէս ալ անոնք որոնք Աւետարանին հետեւեցան, բոլորը միեւնոյն ձեւով Աստուծոյ որդիներ եղան, ըստ այնմ. «*Հրեայի ու հեթանոսի խտրութիւն չկայ*» (Գաղ. Գ. 28), ըսի որ բոլորս ալ հաւատքով Աստուծոյ որդիներ ենք։

Վեցերորդ՝ որովհետեւ կրակը նախ նիւթին պաղութիւնը կը հանէ եւ ապա իրը կու տայ. այդպէս ալ Աւետարանին խօսքերը մարդոցմէ անհաւատութեան պաղութիւնը կը հանեն եւ ուղղափառութեան հաւատքը կը հաստատեն, ըստ այնմ. «*Ան որ պտուղ կու տայ՝ կը սրբէ զայն, որպէսզի աւելի պտղաբեր ըլլայ*» (տե՛ս Յովհ. ԺԵ. 2)։

Եօթներորդ՝ ըանի որ շատ կրակը ներհակ ջուրը կը լափէ, իսկ պակասը [ինչը] կ՚անցնի անոր մէ. այսպէս ալ, եթէ մէկը Աւետարանին մէկ խօսքը միայն առնէ, չի՛ կրնար գիջութեան ախտին հակառակիլ, այդ պատճառով կ՚ըսէ. «*Ով որ Իմ այս խօսքերս կը լսէ եւ կը գործադրէ զանոնք, իմաստուն մարդու նման է, որու տունը հեղեղները չէն կրնար փլել։ Իսկ ով որ չի առներ ամբողջը՝ յիմարի նման է, որու տունը գետը փլեց*» (հմմտ. Մատթ. է. 24–25). եւ թէ՝ «*Եթէ մէկը [այս փոքր պատուիրաններէն] մէկը զանց ընէ [եւ այդպէս սորվեցնէ մարդոց, Երկինքի Արքայութեան մէջ փոքր] պիտի կոչուի*» (տե՛ս Մատթ. ե. 19)։

Ութերորդ՝ որովհետեւ կրակին մէջ խաւար չկայ. այդպէս ալ Աւետարանի խօսքերուն մէջ թերութիւն չկայ, ատոր համար Տէրը ճշմարտութեան համար կ՚ըսէ. «*Երկինքն ու երկիրը պիտի անցնին, բայց Իմ խօսքերս պիտի չանցնին*» (Մարկ. ԺԳ. 31)։

Իններորդ՝ ըանի որ կրակը ամբողջ էութեան փակիչ է. այդպէս ալ անոնք որոնք Աւետարանին հետեւեցան, փակուեցան աշխարհէն ու Ատուծոյ մէջ հաստատուեցան, ատոր համար կ՚ըսէ. «*Սուր նետելու եկայ*» (Մատթ. Ժ. 34). եւ «*Քանի եկայ զաւակը հօրմէն բաժնելու, աղջիկը՝ մօրմէն*» (Մատթ. Ժ. 35) եւ այլն։

Տասներորդ՝ որովհետեւ [կրակը] հին նիւթը կը նորոգէ. այդպէս ալ մեղքերով հինցածները արագօրէն զարդարեց. ատոր համար կ՚ըսէ. «*Եկայ կրակ ձգելու երկրի վրայ*» (Ղուկ. ԺԲ. 49)։

Հինգերորդ՝ «սերմերու» կը նմանցնէ, ըստ այնմ. «Սերմնացան մը սերմանելու ելաւ»[34]*. իսկ մեզ «հող» կը կոչէ։ Ասիկա՝ բազմաթիւ կերպերով.*

Նախ՝ որովհետեւ մէկ հոգի է, որ սերմ կը սերմանէ. այդպէս ալ մեր Տէրը մէկ է՝ Առաքեալին համաձայն. «Մեր Տէրը մէկ է Յիսուս Քրիստոս, որմէ է ամէն բան...»[35]։

Երկրորդ՝ քանի որ սերմանողը նախ հողը կը հերկէ եւ ապա կը սերմանէ. այդպէս ալ մեր Տէրը Իր չարչարանքներով մեր սիրտերը հերկեց եւ ապա առաքեալներուն միջոցով կենաց Բանը սերմանեց։

Երրորդ՝ որովհետեւ մէկ բուռը բազմաթիւ ցորեններ կը ցանէ. այդպէս ալ Տիրոջ խօսքերէն մէկ հատը բազմաթիւ ճիւղեր ու իմաստներ ունի, որ մեր հոգիներուն մէջ կը սերմանէ։

---

[34] *Մատթ. ԺԳ. 4։*

[35] *Հմմտ. Հռոմ. ԺԱ. 36։*

Չորրորդ՝ քանի որ ընտիր սերմը կը ցանեն եւ «Տիրոջ խօսքերը սրբուած են, պարզեցուած եւ արծաթի նման են», կ՚ըսէ Մարգարէն[36]։

Հինգերորդ՝ որովհետեւ սերմանողը առանց խնայելու սերմերը հողին մէջ կը նետէ. այդպէս ալ մեր Տէրը չի՛ խնայեր մարդոց ուսուցանելէ։

Վեցերորդ՝ քանի որ [սերմերը] ընդունող հողը միատեսակ հող չէ, այլ՝ քար ալ է, մաս մըն ալ ճանապարհին, եւ այլն. այդպէս ալ ո՛չ բոլոր անոնք որոնք Տիրոջ խօսքը կը լսեն, հողի նման կը հնազանդին, այլ՝ կան ոմանք որոնք կը հակառակին, ինչպէս հերձուածողներն ու անհաւատները։

Եօթներորդ՝ որովհետեւ ապառաժը, որ սերմը կ՚ընդունի, կրկնակիօրէն կը տանջէ սերմը. մէկը՝ իր պնդութեան տակ, միւսը՝ արեգակի տօթէն ջերմացած կը կիզէ սերմը. այդպէս ալ անհաւատները Տիրոջ խօսքը կրկնակիօրէն կ՚անարգեն. մէկը՝ իրենց չար գործերով, որ ապառաժի նման է, իսկ միւսը՝ նախատինքով, որ չարը կը հրահրէ ու ըսել կու տայ։

Ութերորդ՝ քանի որ ճանապարհը, որ սերմը կ՚ընդունի, յայտնի կը դարձնէ թռչուններուն, որոնք նոյն պահին կը տանին. այդպէս ալ անոնք որոնք իրենց միտքերը բելիարին համար ճանապարհ դարձուցած են, սատանային կը յայտնեն բարիներու կամքը եւ յաւիտենական կորուստի տանիլ կու տան։

Իններորդ՝ որովհետեւ փուշերուն մէջ ինկածը բոլոր կողմերէն կը խեղդի. այդպէս ալ անոնք, որոնք ագահութեամբ փուշ բուսցուցած են, Աստուծոյ խօսքը չեն ընդունիր, եւ եթէ ընդունին իսկ, ագահութիւնը աւելի է եւ չի՛ ձգեր որ Աստուծոյ խօսքը աճի։

Տասներորդ՝ քանի որ լաւ հողը անմիջապէս հարիւրաւոր, վաթսունաւոր եւ երեսնաւոր պտուղ կը բերէ. այդպէս ալ հաւատացեալներն ու Քրիստոսի հնազանդողները անմիջապէս կը պտղաբերին բարի գործերու մէջ, տալով կուսութիւն՝ հարիւրաւոր, պարկեշտ ամուսնութիւն՝ վաթսունաւոր եւ ապաշխարութեան արդարութիւն՝ երեսնաւոր։ Այսքան։

Վեցերորդ՝ «մանանեխի» հատիկի կը նմանի, ըստ այնմ. «Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք...»[37]։ Ասիկա՝ բազմաթիւ ձեւերով.

Նախ՝ որովհետեւ բոլոր սերմերէն աւելի փոքր է, համաձայն Տիրոջ

---

[36] *Համմտ. Սաղմ. ԺԱ. 7։*

[37] *Մատթ. ԺԷ. 19։*

ըսածին[38]. այդպէս ալ Տիրոջ արդարութեան խօսքերը փոքր են քան բոլոր մեղքերն ու մեղքերու օրէնքները։

Երկրորդ՝ քանի որ այնքան ատեն որ դեռ չէ սերմանուած, չի՛ երեւիր անոր մեծութիւնը. այդպէս ալ Աւետարանին խօսքերը փոքրիմաստ կ'երեւին, մինչեւ որ դպիրը [սորվողը, կարդացողը] աշխատութեամբ կը հանէ անկէ հինն ու նորը։

Երրորդ՝ որովհետեւ նախ կը սերմանուի ու ապա անոր մեծութիւնը կ'երեւայ. այդպէս ալ՝ մենք նախ պէտք է Տիրոջ վարդապետութեան հաւատանք եւ ապա մեր առաքինութիւնները կ'աճին։

Չորրորդ՝ քանի որ բոլոր սերմերէն աւելի կլոր է. այդպէս ալ մեր հաւատքը՝ մեր Տիրոջ նկատմամբ պէտք է կատարեալ ըլլայ եւ ո՛չ թէ պակաս, ինչպէս հերձուածողներունը։

Հինգերորդ՝ որովհետեւ չփշրուող է. այդպէս ալ պէտք է մեր հաւատքը հաստատուն պահենք եւ ո՛չ թէ ձգել փորձանքներուն, որ կործանեն զայն։

Վեցերորդ՝ քանի որ երբ կը բուսնի, միւս բոլոր բանջարներէն աւելի մեծ կ'ըլլայ. այդպէս ալ մեր հաւատքը, երբ հանդերձեալին մէջ բուսնի, գերագոյն ու աւելի մեծ է քան հինին բոլոր բանջարները։

Եօթներորդ՝ որովհետեւ այստեղ ու այնտեղ ճիւղեր կ'արձակէ. այդպէս ալ մեր հաւատքը, որ Տիրոջ վարդապետութեան վրայ [հիմնուած] է, բազմապիսի առաքինութիւններ կը յառաջացնէ։

Ութերորդ՝ քանի որ թռչունները անոր ոստերուն վրայ կը բնակին. այդպէս ալ հրեշտակները Տիրոջ ուսմունքին վրայ կը հանգչին, որովհետեւ Անոր կամքին համաձայն կ'ընթանան։

Իններորդ՝ քանի որ կամաց-կամաց կ'աճի ու ծառ կ'ըլլայ. այդպէս ալ մեր հաւատքը, կամաց-կամաց կը սորվինք՝ բարձրանալով մինչեւ ծայր՝ Արքայութիւն։

Տասներորդ՝ որովհետեւ անոր կերպարանքը պայծառ է. այդպէս ալ գեղեցիկ է հաւատքը, որ ի Քրիստոս է, քանի որ Ան է զայն պայծառացնողը։

Եօթներորդ՝ «խմորի» կը նմանի, ըստ այնմ, որ կ'ըսէ. «Կին մը, առնելով, երեք չափ ալիւրի մէջ դրաւ»[39]։ Ասիկա՝ բազմաթիւ պատճառներով.

---

[38] *Տե՛ս Մատթ. ԺԳ. 32։*

[39] *Մատթ. ԺԳ. 33։*

Նախ՝ որովհետեւ խմորը ձգող զօրութիւն ունի, որ դէպի իրեն կը քաշէ ամէն բան՝ ուր որ հասնի. այդպէս ալ մեր Տիրոջ հաւատքը ուր որ հասնի, դէպի Իրեն կը քաշէ բոլորը։

Երկրորդ՝ քանի որ իր կերպարանքին կը փոխէ. այդպէս ալ հաւատքը, որ Տիրոջ նկատմամբ է, քրիստոսակերպ կը դարձնէ, ըստ այնմ. «Որ քրիստոնեաներ կը կոչուինք»[40]։

Երրորդ՝ որովհետեւ խմորը երբեք ալիւր չըլլար. այդպէս ալ մեր հաւատքը, որ Տիրոջ նկատմամբ է, Անոր սէրէն կը ցամքի։

Չորրորդ՝ քանի որ ծածկաբար դէպի իրեն կը գրաւէ բոլորը. այդպէս ալ Տիրոջ ուսմունքները հոգիին մէջ կը տպաւորուին, հոգիով Տիրոջ կը միաւորէ՝ ըստ այնմ. «ՋՔրիստոս զգեցած էք»[41]։

Հինգերորդ՝ որովհետեւ երեք չափ է, կ՚ըսէ, խմորեց. այդպէս ալ հոգի, մարմին եւ միտք, կ՚ըսէ, Աստուծոյ տաճարը կը կազմեն, [ինչպէս նաեւ] հաւատքը, որ Տիրոջ նկատմամբ է։

Վեցերորդ՝ քանի որ մարդուն կենդանութիւնը խմորէն է. այդպէս ալ Տիրոջ հաւատքով կը կենդանանանք ու կը հոգեւորինք։

Եօթներորդ՝ որովհետեւ խմորը խոցին թարախը կը հանէ. այդպէս ալ Տիրոջ նկատմամբ եղած հաւատքը, մեղքը մեր հոգիներէն կը քակէ ու սրբելով [մաքրելով] կ՚առողջացնէ։

Ութերորդ՝ քանի որ ամէն տեսակի փուտ բան կը յայտնէ. այդպէս ալ Տիրոջ նկատմամբ հաւատքը, երբ մօտնանք անոր, անմիջապէս սիրտին խորհուրդները կը յայտնուին։

Իններորդ՝ որովհետեւ եթէ ուրիշ բանի մը հետ խառնուի, պիտանի չըլլար, այսինքն՝ մազի կամ փայտի կամ ուրիշ բանի մը. այդպէս ալ օրէնքը մեղքին հետ խառնուելով՝ օրէնքին հետ չի՛ կայանար. տակաւին, բոլոր կենդանիները ընդունակ չեն հաւատքի, որ Տիրոջ նկատմամբ է, այլ միայն մարդկային բնութիւնը։

Տասներորդ՝ քանի որ «խմորը» Իր մարդեղութեան որպէս օրինակ տուաւ, որովհետեւ աստուածացուց Իր հոգին, մարմինն ու միտքը, որ [երեք] չափի ալիւր կը կոչէ։ Եւ այն, որ ալիւրը սպիտակ է, այս մէկը մարմինին անմեղութիւնը կը ցուցնէ։ Իսկ խմորելով կը կարմրի, այդ ալ Աստուածութեան միաւորութիւնը կը խորհրդանշէ։

---

[40] *Տե՛ս Գործք ԺԱ. 26։*

[41] *Գաղ. Գ. 27։*

Ութերորդ՝ հաւատքը «արծաթի» կը նմանի, ըստ այնմ. «Կանչեց իր ծառաները եւ իր ունեցուածքը տուաւ անոնց՝ հինգ քանքար, երկու քանքար...»[42]: Ասիկա՝ բազմաթիւ կերպերով.

Նախ՝ որովհետեւ արծաթը պատուական իր է, զոր իւրաքանչիւր ոք կը ցանկայ [ունենալ]. այդպէս ալ իմաստութիւնը, որ Տիրոջ մօտ է, գերադրական է քան բոլոր արարածներուն գիտութիւնը, քանի որ զօրութիւնը Աստուծոյ է, կ'ըսէ Առաքեալը[43]:

Երկրորդ՝ որովհետեւ արծաթը յստակ է առանց ժանգի. այդպէս ալ հաւատքը, որ մեր Տիրոջ նկատմամբ է, պէտք է առանց ժանգի ըլլայ, այսինքն՝ հերձուածի ու սուտի: Արդ, ինքն ըստ ինքեան, առանց ասոնց է, բայց մարդիկ չարէն սորվելով՝ կ'ապականեն զայն:

Երրորդ՝ քանի որ իւրաքանչիւր ոք, ով արծաթ ունի, ինչ որ կամենայ՝ ատով [արծաթով] կը գտնէ. հաց եւ ուրիշ բաներ. այդպէս ալ անոնք որոնք ուղիղ հաւատք ունին Տիրոջ նկատմամբ, ատով կը ժառանգեն այստեղ ու հանդերձեալին մէջ, ըստ այնմ. «Նախ Արքայութիւն եւ արդարութիւն խնդրեցէք եւ այդ բոլոր աւելիով կը տրուի ձեզի»[44]:

Չորրորդ՝ որովհետեւ առանց արծաթի իւրաքանչիւր ոք մարդոց առջեւ անարգ է. այդպէս ալ առանց հաւատքի իւրաքանչիւր ոք անարգ է Աստուծոյ առջեւ:

Հինգերորդ՝ քանի որ արծաթով իւրաքանչիւր ոք ինքնիշխանօրէն ծառայ կ'առնեն իրենց համար. այդպէս ալ, կ'ըսէ Տէրը, եթէ Աստուծոյ նկատմամբ հաւատք ունենաք, լեռները, զորս հնարաւոր չէ վերցնել, ձեր հաւատքին պատճառով ծով կ'իյնան[45]:

Վեցերորդ՝ որովհետեւ արծաթը առանց պատկերի ոչ կու տան եւ ոչ ալ կ'առնեն. այդպէս ալ հաւատքը առանց գործերու ոչ կրնայ տալ եւ ոչ ալ այս կամ այն ընել:

Եօթներորդ՝ քանի որ մէկ արծաթը բազմաթիւ շահ կը բերէ, եթէ մէկը աշխատի. այդպէս ալ, եթէ ոեւէ մէկը հաւատքին վրայ աշխատի, բազմաթիւ շահ կ'ունենայ, ըստ այնմ. «Ով որ հաւատայ Ինծի, յաւիտենական կեանքը պիտի ժառանգէ»[46]:

---

[42] *Տե՛ս Մատթ. ԻԵ. 14–28:*
[43] *Հմմտ. Հռոմ. Ա. 16:*
[44] *Մատթ. Զ. 33:*
[45] *Տե՛ս Մարկ. ԺԱ. 23:*
[46] *Ղուկ. ԺՀ. 30:*

Ութերորդ՝ որովհետեւ ոմանք արծաթը չեն աշխատցներ [շահեցնել], այլ՝ հողին մէջ կը թաղեն. այդպէս ալ շատեր կան, որոնք Տիրոջ նկատմամբ հաւատքը առնելով, ծուլութեան տակ ծածկուած կը մնան ու այդ պատճառով պատիժներու արժանի կը դառնան։

Իններորդ՝ քանի որ ոմանք արծաթը շատակերութեան վրայ կը կորսնցնեն. այդպէս ալ ոմանք կան, որոնք հաւատքը կը ձգեն որովայնամոլութեան պատճառով, ինչպէս հերձուածները եւ ուրիշներ։

Տասներորդ՝ որովհետեւ արծաթը անհաշիւ կ՚ըլլայ, բայց իրարու նման եւ ախորժելի կ՚ըլլան, այդ պատճառով պէտք չէ գարշիլ անկէ, այլ՝ պէտք է փութալ միշտ յարիլ անոր։

Իններորդ՝ Տէրը իր հաւատքը նմանցուց «խաղողի որթատունկի», ըստ այնմ. «Մարդ մը այգի տնկեց»[47] եւ թէ՝ «Ես եմ ճշմարիտ որթատունկը»[48]: Ասիկա՝ բազմաթիւ կերպերով.

Նախ՝ որովհետեւ սկիզբը որթատունկը որպէս մէկ գաւազան կը տնկուի առանց ճիւղերու. այդպէս ալ նախ պէտք է հաւատալ, թէ Աստուած մէկ է, ըստ հաւատքի դաւանութեան։

Երկրորդ՝ քանի որ եռքը կը հաստնայ եւ արմատներ կը նետէ. այդպէս ալ բնութեան միութեան հաւատալէ ետք, պէտք է երեք անձերը խոստովանիլ, իբրեւ մէկէն միւս երկուքը յառաջացած։

Երրորդ՝ որովհետեւ նախ կը ծաղկի եւ ապա տերեւ կը հանէ. այդպէս ալ նախ պարտաւոր ենք հաւատքը ստանալ եւ ապա գործերու ձեռնարկել, որ հաւատքի պահապան են։

Չորրորդ՝ քանի որ չետոյ հասած պտուղը բոլորին հաճելի կու գայ. այդպէս ալ հաւաքուած հաւատքէն ու գործերէն՝ եռքէն մեզի հասունցած պտուղներ կու տան Երկինքի Արքայութեան մէջ։

Հինգերորդ՝ որովհետեւ մշակները միշտ կը փորեն որթատունկի արմատին չորս կողմը փխրեցնելու համար զայն. այդպէս ալ վարդապետները, որոնք Եկեղեցւոյ մշակներն են, պարտին միշտ խրատել, որով կը կակուղնայ մարդուն քարացած սիրտը։

Վեցերորդ՝ քանի որ կը մաքրեն բարունակները, այսինքն՝ աւելորդները, այդպէս ալ վարդապետներուն խրատները կը կտրեն աւելորդները, որ է չարերուն խրատը, որով ծառը առոյգ կը դառնայ զայն մաքրելէն ետք։

---

[47] *Մատթ. Իէ. 33։*

[48] *Յովհ. ԺԵ. 1։*

Եօթներորդ՝ որովհետեւ չորս կողմը մոլախոտ բուսած կ՚ըլլայ, այդ եւս կը կտրեն [կը մաքրեն]. այդպէս ալ հերձուածները, որոնք քոսի նման են, որոնք այժ կ՚առնեն Քրիստոսի որթատունկէն եւ կը ցամքեցնեն անոր հաւատքը, ատիկա քաղելով պէտք է նետեն, որպէսզի խանգարում չբերէ որթատունկին։

Ութերորդ՝ քանի որ ամէն ինչ իր ժամին ընել պէտք է եւ ոչ թէ ետ կամ առաջ. այդպէս ալ նախ ուսուցումը, եւ ապա՝ հաւատքը, որովհետեւ եթէ ծուռ հաւատք ստանայ, ետքէն ճշմարիտ ուսուցումը չի՛ օգներ իրեն։

Իններորդ՝ որովհետեւ հով, անձրեւ, տօթ եւ տաքութիւն պէտք կ՚ըլլայ որթատունկին, որով կը պտղաբերի. այդպէս ալ հաւատացեալներուն միշտ Սուրբ Գիրք ընթերցել պէտք է, որով երբեմն կը զովանան եւ երբեմն ալ կը տաքնան։

Տասներորդ՝ քանի որ այգիին պտուղը կ՚ուրախացնէ այգիին տիրոջ. այդպէս ալ հաւատացեալներու գործին պտուղը, այսինքն՝ բարիքը, կ՚ուրախացնեն զՔրիստոս, ըստ այնմ. «Ձեր բարի ընթացքով եւ արդարութեան ճամբաներէն քալելուն համար թող ուրախանայ»։

Տասներորդ՝ «արքայի» նման է, ըստ այնմ. «Ազնուական մարդ մը հեռու երկիր մը գնաց իր թագաւորութիւնը ստանալու ու վերադառնալու»[49]. ասոր հետ քանքարներուն մասին ալ գրուած է։

«Ազնուական մարդ մը հեռու երկիր մը գնաց իր թագաւորութիւնը ստանալու ու վերադառնալու»[50]։

Ինչո՞ւ «*մարդ մը*»՝ մեր բնութեան համար կ՚ըսէ, որ Բանն Աստուած առաւ, իսկ «*ազնուական*»՝ Բանին միաւորութեան համար։ Արդ, ինչո՞ւ համար Ան ազնիւ էր, բան բոլոր գոյերը, բազմաթիւ եղանակներով պիտի ցուցնեմ։

Նախ՝ որովհետեւ բնութեամբ Աստուած է մեր Տէրը մարմինով, իսկ միւս բոլոր գոյերը՝ ծառաներ ու ստեղծուածներ։ Այս մէկ համեմատութիւնը բաւարար է ցոյց տալու ամէն ինչ, սակայն փիչ մըն ալ պիտի երկարեմ, համբակ-

---

[49] Ղուկ. ԺԹ. 12։

[50] 2022 թուականին Երեւանի մէջ, Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի գիտական խորհուրդի որոշումով հրատարակուած է Ջուղայեցիի «Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու» գործը։ Բնագիրը հրատարակութեան պատրաստած են Յովհաննէս Պէյլէրեանն ու Վիգէն Ղազարեանը։ Յառաջաբանն ու ցանկերը պատրաստած է Յովհաննէս Պէյլէրեանը։ Այդ հրատարակութենէն օգտուելով կատարեցինք վերի թարգմանութիւնը՝ շեղագիր ամբողջ հատուածը՝ տասը կէտերով (էջ 263–265), որպէսզի ճառը ամբողջական ըլլայ (ծանօթագրութիւնը թարգմանիչինն է)։

ներուն համար, որովհետեւ ինչպէս որ Բանը կատարեալ Աստուած է մարմինով, նոյնը՝ Ինք, կատարեալ մարդ է։

Երկրորդ՝ բանի որ մարմինով անապական է, ըստ այնմ. «*Անոր մարմինը ապականութիւն չտեսաւ*» (հմմտ. Գործ Բ. 31), իսկ մեր մարմինը ապականացու է եւ հողին մէջ լուծուելիք։

Երրորդ՝ որովհետեւ մենք միշտ կը մեղանչենք, իսկ Ան «*մեղք չգործեց եւ [Անոր բերանին մէջ] նենգութիւն չգտնուեցաւ*» (Ա. Պետ. Բ. 22)։

Չորրորդ՝ բանի որ մենք ո՛չ իսկ մազ մը կրնանք ճերմկցնել, իսկ Ան կրնայ, ինչպէս նաեւ այլ բազմաթիւ արարածներ ալ [կրնայ] ստեղծել։

Հինգերորդ՝ որովհետեւ մեր կամքն ու կարողութիւնը հակառակ են, բանի որ ինչ որ կ՚ուզենք [կամենանք]՝ չենք կրնար ընել։ Իսկ Անորը հաւասար է, որովհետեւ ինչ որ ուզէ [կամենայ]՝ կրնայ ընել, եւ ինչ որ կրնայ՝ կ՚ուզէ [կը կամենայ], ըստ այնմ. «*[Ամէն ինչ] որ կամեցաւ՝ ըրաւ*» (Սաղմ. ճԼԵ. 6)։

Վեցերորդ՝ բանի որ մարդուն մէկ մասը, այսինքն՝ հոգին կամ մարմինը առանձնաբար կատարեալ մարդ չէ։ Իսկ Անոր Հոգին կամ Մարմինը կատարեալ Աստուած է, որովհետեւ Բանին մէջ միաւորուած է անբաժանելիօրէն։

Եօթներորդ՝ բանի որ մեր մարմինը չի՛ կրնար մեր հոգին ողջնցնել, իսկ Աստուծոյ Բանին մարմինն ու արիւնը կը սրբէ մեզ ամէն տեսակի մեղքերը, կ՚ըսէ Առաքեալը. «*Եւ կ՚ապրեցնէ հոգին*» (տե՛ս Ա. Յովհ. Ա. 7)։

Ութերորդ՝ որովհետեւ մարդուն մարմինը մեզի համար ուտուելիք չէ, իսկ Անորը ճշմարիտ կերակուր է, եւ արիւնը՝ խմելիք, ինչպէս Ինք ըսաւ (տե՛ս Յովհ. Զ. 56)։

Իններորդ՝ բանի որ պարզ մարդը չի՛ կրնար մեղքերը ներել, իսկ Ան կրնայ ներել, որովհետեւ բնութեամբ Աստուած է, ինչպէս ըսաւ. «*Մեղքերդ թող նեղուին քեզի*» (Ղուկ. է. 48), որ է՝ իշխանաբար։

Տասներորդ՝ բանի որ իւրաքանչիւր ոք, եթէ այստեղ է՝ այնտեղ չէ, իսկ եթէ այնտեղ է՝ այստեղ չէ. իսկ մեր Տէրը երկինքին մէջ Հօր աջ կողմը կը նստի, եւ անծախապէս [առանց սպառելու] բոլոր եկեղեցիներուն մէջ կը պատարագուի, այլեւ կը բնակի բոլոր սուրբերուն մէջ, ինչպէս կ՚ըսէ Առաքեալը. «*Ձեզի օրինակ ունիք Քրիստոսը, որ ինձմով ձեզի հետ կը խօսի*» (հմմտ. Բ . Կորնթ. ԺԳ. 3)։

Տասնմէկերորդ՝ որովհետեւ մենք՝ արարածներս, ամէն ինչի կարօտ կ՚ըլլանք, իսկ Ան բնութեամբ անկարօտ է, ըստ այնմ. «*Որ միայն Ինք ունի անմահութիւնը՝ անմատչելի լոյսին մէջ բնակողը*» (տե՛ս Ա. Տիմ. Զ. 16)։

Տասներկրորդ՝ բանի որ մենք կը փափաքինք հրեշտակներուն նմանիլ, իսկ Ան հրեշտակներէն, սերովբէներէն ու քերովբէներէն երկրպագութիւն կը ստանայ։

Տասներեքերորդ՝ որովհետեւ բնութեամբ մենք փոփոխական ու այլալական ենք, իսկ Ան՝ անփոփոխ եւ անեղ է բնութեամբ։

Տասնչորրորդ՝ քանի որ մենք նախան յարութիւնը ուրիշ կերպով ենք եւ ուրիշ՝ յարութենէն ետք. իսկ Ան, մէկ եւ նոյն մարմինով առաջ եւ յետոյ, ըստ որում կ'ըսէր. «*Շօշափեցէք ու տեսէք թէ Ե՛ս եմ*» (հմմտ. Ղուկ. ԻԴ. 39)։

Տասնհինգերորդ՝ որովհետեւ մենք դատաստանի կը կանգնինք, իսկ Ան կը դատէ մեզ, կը պատժէ ու կը փառատրէ, ըստ այնմ. «*Ամէն դատաստան Իր Որդիին տուած է*» (Յովհ. Ե. 22)։

Տակաւին բազմաթիւ բաներ կան, սակայն չձանձրացնելու համար չգրեցի։ Բայց այսքանը ձեր իմաստութեան համար թող ըլլայ, որպէսզի իմանաք Անոր յղիանալէն սկսեալ, ծնունդը, աշխատանքը, յարութենէն ետք ուտելն ու հագուստներով երեւնալը, որով զինք ցոյց կու տայ ազնիւ ու գերակատար, ու ատոր համար կ'ըսէ. «*Ազնուական մարդ մը*» (Ղուկ. ԺԹ. 12)։

Տասնմէկերորդ՝ «հովիւ» կը կոչուի, ըստ այնմ. «Ով է այն հովիւը, որ եթէ հարիւր ոչխար ունենայ, եւ կորսուի...»[51]*, եւ թէ՝ «Ես եմ քաջ հովիւը»*[52]*։ Եւ ասիկա՝ բազմաթիւ պատճառներով.*

Նախ՝ որովհետեւ հովիւը անկոխ ճանապարհը հօտին առջեւէն կ'երթայ. այդպէս ալ մեր Տէրը նախ Ինք ընթացաւ անով, ինչ որ քարոզեց։

Երկրորդ՝ քանի որ ոչխարները կը խոնարհին հովիւին, եթէ սպաննէ, եթէ կտրէ, եթէ ծախէ. այդպէս ալ մենք եւս պէտք է հնազանդինք Քրիստոսի մինչեւ մահ եւ մեր արիւնը տանք փոխանակ Իր արեան։

Երրորդ՝ որովհետեւ հովիւը սուլելով ոչխարներուն առջեւէն կ'երթայ. այդպէս ալ մեր Տէրը քաղցր ձայնով կ'ըսէ. «Ինծի եկէք, դուք բոլորդ յոգնածներ...»[53]*։*

Չորրորդ՝ քանի որ երկու հովիւներ կան, որոնցմէ մէկը [առջեւէն կ'երթայ եւ միւսը] ետեւէն կու գայ. այդպէս ալ մեր Տէրը երկու հովիւի գործ կը կատարէ, առջեւէն ու ետեւէն երթալով, որովհետեւ Ան Իր ակնարկը մեր վրայ կը պահէ՝ միշտ խնամելով։

Հինգերորդ՝ քանի որ եթէ ոչխարը մոլորի, հովիւը կը փնտռէ զայն. այդպէս ալ երբ մենք մոլորինք Ան է մեզ փնտռողը, ինչ բանի համար եկաւ՝ կորսուածներուն համար, եւ մարդ եղաւ։

---

[51] *Մատթ. ԺԸ. 12–14։ Ղուկ. ԺԵ. 3–7։*

[52] *Յովհ. Ժ. 11։*

[53] *Մատթ. ԺԱ. 28։*

Վեցերորդ՝ որովհետեւ այն ոչխարները որոնք հովիւին ետեւէն չեն երթար, գազանները կը բզկտեն զանոնք. այդպէս ալ մենք, եթէ կամովին Տէրը ձգենք, գազան սատանային կերակուր կ՚ըլլանք։

Եօթներորդ՝ քանի որ երբ փարախի դռան հասնի, նախ ոչխարները կը մտցնէ եւ ապա ինք դուռը ապահով կերպով կը փակէ. այդպէս ալ մեր Տէրը մինչեւ մեր մահը մեր առջեւէն գնաց։ Իսկ երբ Անոր սիրոյն համար մահուան դռան կը հասնինք, նախ մեզ երկինքի Արքայութիւն կը մտցնէ եւ հաստատապէս կը բնակեցնէ այնտեղ։

Ութերորդ՝ որովհետեւ ուր որ հովիւն է, հօտն ալ այնտեղ կը հաւաքուի. այդպէս ալ ուր որ մեր Հովուապետը՝ Քրիստոս կը նստի, այնտեղ կը հանգստանան Անոր հաւատացեալները, ըստ այնմ. «Ուր Ես եմ, Իմ ծառաս ալ այնտեղ կ՚ըլլայ»[54]*։*

Իններորդ՝ քանի որ ամէն օր հովիւը առանձինն կ՚ակնարկէ իւրաքանչիւր ոչխարի եւ բոլորն ալ կը ճանչնայ. այդպէս ալ մեր Տէրը ըստ մեր վաստակին, իւրայատուկ վարձք կու տայ եւ չարերուն հետ չի՛ խառներ, այլ՝ մեծ աշխատանքը մեծապէս կը պսակէ, իսկ փոքրը՝ փոքր։

Տասներորդ՝ որովհետեւ հովիւը կը զատէ ոչխարները այծերէն. այդպէս ալ մեր Տէրը սուրբերը անսուրբերէն պիտի բաժնէ Իր գալուստին ժամանակ, ինչպէս կ՚ըսէ Տէրը գալուստի մասին պատմած առակին մէջ։

Տասներկրորդ՝ կը նմանի «փեսային ու հարսի հարսանիքին», ըստ այնմ. «Զայն մը լսուեցաւ, ելէք փեսան ու հարսը դիմաւորելու»[55]*։ Եւ ասիկա՝ բազմաթիւ ձեւերով։*

Նախ՝ որովհետեւ երբ հարսը փեսային նշանուած կ՚ըլլայ, հեռու է ան եւ չի կրնար տեսնել զայն, այլ՝ միջնորդները կը պատմեն իր փեսային գեղեցկութեան մասին, եւ հարսը բոլորէն կը բորբոքուի փեսան սիրելու, կը ջանայ ձգել իր հայրենի բնակութիւնը եւ ըլլալ անոր հետ, որու անունը միայն լսած է. այդպէս ալ մենք, առաքեալներուն միջոցաւ որպէս հարս նշանուեցանք Քրիստոսի հետ եւ անոնցմէ լսելով Անոր պայծառ Աստուածութեան մասին, կը փափաքինք այստեղի մարմինէն ելլել եւ Փեսային հետ ըլլալ, որ չենք տեսած, այլ միայն անունը լսելով՝ հաւատացած ենք։

---

[54] *Յովհ. ԺԲ. 26։*

[55] *Հմմտ. Մատթ. Իե. 6։*

Երկրորդ՝ քանի որ փեսան փեսաւէրներ կը ղրկէ հարսը խնդրելու համար եւ հարսը անոնց կը հաւատայ. այդպէս ալ մեր Տէրը առաքեալները եւ երկինքէն հրեշտակները կը ղրկէ՝ տանելու մեզ դէմ յանդիման Փեսային, եւ անոնց մօտ ապաստան կ'ըլլայ մեզի։

Երրորդ՝ որովհետեւ փեսաւէրները զարդարուած հագուստներ հագուած կ'ըլլան, բայց փեսային հագածէն նուազ զարդարուած. այդպէս ալ առաքեալներն ու հրեշտակները փառքի հագուստը հագած կ'ըլլան, սակայն անոնք իրենց փառքով կրտսերագոյն են, քան՝ Քրիստոսինը։

Չորրորդ՝ քանի որ փեսան բոլոր փեսաւէրներուն գլուխն է, ինչպէս կ'ըսէ Առաքեալը. այդպէս ալ մեր Տէրը բոլոր իշխանութիւններուն ու պետութիւններուն գլուխն է, ինչպէս նաեւ գլուխն է իր մարմինին՝ Եկեղեցիին[56]։

Հինգերորդ՝ հարսը կը վաստակի իր հայրենի տունէն հագուստ առնելու համար, որպէսզի հաճելի երեւայ իր փեսային. այդպէս ալ մենք այս աշխարհին մէջ կը վաստակինք բարի գործեր պատրաստելու, որպէսզի մեր [այս աշխարհէն] ելլելուն՝ անոնցմով հաճելի ըլլանք Քրիստոսի։

Վեցերորդ՝ քանի որ փեսան իրեն նշանուած կոյսին համար օտար չէ, որովհետեւ ասոնք մէկ բնութենէ են. այդպէս ալ մենք օտար չենք մեր Տիրոջմէ, քանի որ բնութենակից եւ ազգակից է մեզի։

Եօթներորդ՝ որովհետեւ վայել չէ, որ կինը իր փեսային անկողինը փոխէ եւ ուրիշի մը խառնուի, քանի որ այսպիսին շուն կը համարուի. այդպէս ալ մենք պէտք չէ մեր Աստուծոյ երկրպագութիւնը ձգենք եւ մարմինի պղծութեան ծառայենք, որովհետեւ եթէ այսպէս վարուինք, շան կը նմանինք։

Ութներորդ՝ քանի որ այն օրէն ետք երբ հարսը փեսային կ'ըլլայ, ատկէ ետք հարսը զգաստութեամբ անոր ծառայութեան մէջ կ'ըլլայ. այդպէս ալ մենք, այն օրէն ետք երբ Անոր անունով քրիստոնեայ գրուինք, պէտք է զգաստութեամբ ծառայենք Անոր, Առաքեալին ըսածին համաձայն[57]։

Իններորդ՝ որովհետեւ հարսը միշտ կը զարդարուի, քանի որ փեսան ատիկա կը սիրէ. այդպէս ալ մենք պէտք է արդարութեամբ պճնուինք ու զարդարուինք, որովհետեւ մեր Փեսան՝ Քրիստոս այդ կը սիրէ։

Տասներորդ՝ քանի որ երբ հարսը կը զարդարուի, իր դրացիին չի՛ հարցներ թէ արդեօք գեղեցի՞կ եմ, այլ՝ հայելի մը կ'առնէ եւ անոր մէջ իր պատկերը կը տեսնէ, եւ եթէ իրեն համար հաճելի է, ապա կը գիտնայ, թէ փե-

---

[56] *Եփես. Ա. 22։*

[57] *Տե՛ս եփես. ե. 22։*

սային ալ հաճելի կ՚ըլլայ։ Իսկ եթէ սպի մը երեւի իր պատկերին մէջ, հնար կ՚ընէ հանելու համար զայն, որպէսզի արատ մը չերեւի փեսային աչքին. այդպէս ալ մենք չենք գիտեր մեր գեղեցկութիւնը, ատոր համար պէտք է Սուրբ Գիրքի հայելին առնենք եւ անոր մէջ տեսնենք, թէ Տիրոջ հաճելի՞ ենք, իսկ եթէ ոչ, ապա մեր մէջէն արատը հանենք, որպէսզի մեզմէ չգարշի։

Եւ այսպէս, ուրիշ տեղ չափով կը գտնես գրուած ասոր մասին, ուրիշ ձեւով։

Տասնչորրորդ՝ նման է «մարգարիտի», ըստ այնմ. «Արքայութիւնը նմանեցաւ վաճառականի մը, որ պատուական մարգարիտ կը փնտռէ. եւ գտնելով [պատուական մարգարիտ մը՝ երթալով] ծախեց [ամէն ինչ որ ունէր եւ այդ մարգարիտը գնեց][58]»։ Ասիկա՝ բազմաթիւ պատճառներով.

Նախ՝ ինչպէս ոստրէն մարգարիտը կը կազմէ երկինքէն իջած ցօղով եւ արեւին տաքութենէն, այդպէս ալ Սուրբ Կոյսը երկինքէն իր մէջ ընդունեց Ցօղը եւ իր ջերմագոյն արեամբ խառնելով միացուց եւ գեղեցիկ Մարգարիտ կազմեց, ըստ այնմ. «Իմ պատգամս իբրեւ ցօղ պիտի իջնէ»[59]։

Երկրորդ՝ որովհետեւ ինչպէս [մարգարիտը] ոստրէի որովայնին մէջ կը կազմուի եւ ո՛չ թէ դուրսը, այդպէս ալ Բանն Աստուած [Իր] մարմինը ո՛չ թէ Իր հետ՝ երկինքէն բերաւ, այլ՝ Կոյսին ծոցին մէջ կազմեց Իր մարմինը։

Երրորդ՝ քանի որ ոստրէն ծովի յատակը կ՚իջնէ եւ շատ ու երկար աշխատանքէ ետք կրնանք գտնել զայն. այդպէս ալ մեր Տէրը աստուածական ծովու խորութենէն՝ Հօր աջ կողմէն ելաւ եւ մենք պէտք է շատ ու երկար աշխատանքով մտնենք այդ հանգիստը [Երկինքի Արքայութիւնը]։

Չորրորդ՝ որովհետեւ մարգարիտը սուղ է, ինչպէս նաեւ պատուական. այդպէս ալ մեր Տէրը թանկագին է, քանի որ արեամբ կը գնուի։

Հինգերորդ՝ որովհետեւ ով որ մարգարիտ մը կը գտնէ, սիրտով կ՚ուրախանայ. այդպէս ալ մենք երբ ճանչնանք զԻնք հաւատքով, մեր սիրտը ուրախանալով կը բերկրի։

Վեցերորդ՝ քանի որ ով որ մարգարիտ փնտռելու կ՚ելլէ, մանաւանդ ջրասոյզը, մահ յանձն կ՚առնէ եւ իր արեան գինը կ՚առնէ նախ ու ապա կ՚երթայ. այդպէս ալ մենք պէտք է Քրիստոսի համար մահը յանձն առ-

---

[58] *Համմտ. Մատթ. ԺԳ. 45։*

[59] *Տես Բ. Օր. ԼՒ. 2։*

նենք, եւ մեր արեան գինը այստեղ հատուցուած է մեզի, ըստ այնմ. «Հաբիւրապատիկ պիտի առնէ եւ յաւիտենական կեանքը ժառանգէ»[60]:

Եօթներորդ՝ որովհետեւ իւրաքանչիւր ոք, որ մարգարիտ կը փնտռէ՝ կը գտնէ. այդպէս ալ ան որ մեր Տիրոջ հետ կ'ընթանայ, արժանի է Անոր եւ կը գտնէ գինք, ըստ այնմ. «Երբ հոգոց հանէք, պիտի ըսեմ՝ ահաւասիկ ես կամ»[61]:

Ութերորդ՝ քանի որ կ'ըսէ երթալով ծախեց ամէն ինչ որ ունէր եւ գնեց այդ մարգարիտը. այդպէս ալ երբ մեր Տէրը գտնենք, հաւատքով մեր կեանքը ծախել արժանի է ի գին Անոր, որ եւ շատերը այդպէս ըրին:

Իններորդ՝ որովհետեւ բոլորը չէ, որ մարգարիտ կրնան գտնել. այդպէս ալ ո՛չ բոլորը որոնք կը հաւատան Տիրոջ, Անոր մօտ պիտի մտնեն՝ ըստ այնմ. «Ոչ բոլորը, որոնք Ինծի «Տէր, Տէր» կ'ըսեն, Արքայութիւն պիտի մտնեն, այլ՝ անոնք որոնք Հօրս կամքը կը կատարեն»[62]:

Տասներորդ՝ քանի որ ով որ մարգարիտը ունի, անզգուշութեամբ մէկ կողմ չի դներ, այլ՝ տարբեր-տարբեր տեսակի կտորներով կը ծրարէ ու իր սիրտին մօտիկ կը պահէ. այդպէս ալ մենք պէտք է զՔրիստոս զգուշութեամբ մեր սիրտին մէջ պահենք, բազմաթիւ առաքինութիւններով ծրարենք եւ տեսակ-տեսակի սրբութեան կնիքով, եւ մեր միտքին մէջ միշտ պէտք է իմանանք, ինչ բանի պատճառով ալ կը վախնանք մեղք գործելէ:

Տասնհինգերորդ՝ նման է արտին մէջ պահուած «գանձի», ըստ այնմ. «Նման է պահուած գանձին, որ մարդ մը գտնելով՝ պահեց»[63]: Եւ ասիկա՝ բազմաթիւ պատճառներով.

Նախ՝ որովհետեւ պահուած գանձը խորունկ տեղ մը կ'ըլլայ՝ բոլոր մարդոց համար անհասանելի. այդպէս ալ մեր Գանձը՝ Տէր Յիսուս նախ Հօր ծոցին մէջ կը դրուէր՝ անհասանելի ըլլալով եղականներուս համար:

Երկրորդ՝ քանի որ երբ մէկը գանձ գտնէ, ո՛չ թէ այդ պահուան դրուած կ'ըլլայ, այլ՝ երկար ժամանակներէ ի վեր. այդպէս ալ Բանն Աստուած ո՛չ թէ վերջին ժամանակներուն եղաւ՝ ինչպէս չարափառները կ'ըսեն, այլ՝ յաւիտեաններէն իսկ առաջ Հօրմէ ծնած է, եւ հիմա մարմինով երեւցաւ:

---

[60] *Տե՛ս Ղուկ. ԺԸ. 30:*
[61] *Համմտ. Ես. ԿԸ. 1:*
[62] *Տե՛ս Մատթ. է. 21:*
[63] *Մատթ. ԺԳ. 44:*

Երրորդ՝ որովհետեւ շատեր կ՚անցնին այդտեղէն, բայց չեն գիտեր տեղը. այդպէս ալ բազմաթիւ նահատակներ «փափաքեցան տեսնել ձեր տեսած Քրիստոսը, սակայն չտեսան, եւ լսել ինչ որ դուք լսեցիք՝ ու չլսեցին»[64], ըսաւ Տէրը։

Չորրորդ՝քանի որ հեռուէն ո՛չ ոք գիտէ գանձին մեծութիւնը, այլ՝միայն երբ մօտենայ անոր [կը գիտնայ]. այդպէս ալ մենք հիմա մարմինով հեռու ենք ու ուղղակի Անոր Աստուածութեան մեծութիւնը չենք գիտեր, այլ՝ երբ այն աշխարհին մօտենանք, ապա կը տեսնենք Անոր բարձրութիւնը, ըստ այնմ. «Պիտի տեսնենք զինք Իր իսկութեան մէջ»[65]։

Հինգերորդ՝ որովհետեւ պահուած գանձը ոչ մէկ բան է, այլ՝ բազմաթիւ ու զանազան. այդպէս ալ մեր Տէրը ոչ [թէ] միայն զօրութիւն է, այլ՝ Անոր մէջ ծածկուած են իմաստութեան եւ գիտութեան բոլոր գանձերը՝ Առաքեալին համաձայն[66]։

Վեցերորդ՝քանի որ երբ մէկը կը գտնէ զայն [գանձը], անոր սիրտը կը թմրի ու կը տագնապի՝ ըստ գանձի մեծութեան. այդպէս ալ մենք Յիսուսի Աստուածութեան մեծութիւնը կը տեսնենք, կը յիմարանանք՝ գիտութեամբ չկարենալով հասնիլ Անոր անչափութեան, որովհետեւ Անոր մարդեղութիւնը անհասանելի է։

Եօթներորդ՝քանի որ գտնուածը գտնողէն մեծ է, ատոր համար կ՚ուրախանայ. այդպէս ալ մեր Տէրը բոլոր արարածներէն աւելի մեծ է, ատոր համար կ՚ուրախանանք երբ կը տեսնենք զինք։

Ութերորդ՝ որովհետեւ իւրաքանչիւր ոք, որ կը գտնէ զայն, կը ջանայ որ միայն իրը ըլլայ ու ոչ թէ ուրիշինն ալ, եւ կը դողայ անոր վրայ. այդպէս ալ անոնք որոնք զՔրիստոս սիրեցին, կը ջանան միայն իրենց համար գանձել զինք, քանի որ շատ պատուական է Ան։

Իններորդ՝քանի որ ահ եւ երկիւղ կ՚իյնայ գտնողին վրայ, թէ՝ թերեւս իրմէ զօրաւոր մէկը գայ ու յափշտակէ զայն իրմէ։ Նմանապէս մենք, ահով ու դողով պէտք է ապրինք Քրիստոսի սիրոյն մէջ, որպէսզի անհոգ գտնուելով՝ սատանան ցորենին մէջ չարութեան որոմ չցանէ, ու զրկուինք Քրիստոսէ։

Տասներորդ՝ այդ պատճառով ծածուկ [պահուած] կը կոչուի եւ ոչ թէ յայտնի, այդպէս ալ, թէեւ շատ աշխատանքով կ՚իմանանք Անոր Աստուա-

---

[64] Համմ. Մատթ. ԺԳ. 13։

[65] Ա. Յովհ. Գ. 2։

[66] Տե՛ս Կող. Բ. 3։

ծութիւնը, ինչքան որ մենք կարելիութիւն ունինք, սակայն, Ան տակաւին ծածուկ կը մնայ մարմնաւորներէն, բայց Հոգին ամէն ինչ կը քննէ եւ գիտէ Աստուծոյ խորքերը, կ'ըսէ Պօղոս Առաքեալը[67]*։*

Հարցում. ինչո՞ւ համար սուրբերը կը տօնենք։

Պատասխան. բազմաթիւ պատճառներու համար։

Նախ՝ որովհետեւ Քրիստոսի նմանեցան իրենց չարչարանքներով եւ իրենց կուսութեամբ, արդարութեամբ ու սրբութեամբ, ատոր համար կը տօնենք։

Երկրորդ՝ սուրբերուն չարչարանքներու մասին կը խօսինք, կը պատմենք, որպէսզի փափաքինք անոնց վարքը եւ անոնց նման ըլլանք, քանի որ ինչ որ չտեսանք, արդարեւ եթէ չլսենք այդ մասին, ինչպէ՞ս կը կատարենք։

Երրորդ՝ սուրբերը նահատակուեցան. արդարեւ մենք արթնութեամբ, սաղմոսերգութեամբ եւ պաշտելով կցորդ կ'ըլլանք անոնց չարչարանքներուն ու անոնց փառքին մասնակից կ'ըլլանք, այդ պատճառով Առաքեալը կ'ըսէ. «Հաղորդակից եղէք սուրբերու կարիքին»[68]*։*

Չորրորդ՝ որովհետեւ կարդալով անոնց սուրբ վարքը, կ'ամչնանք չարութիւն գործելէ եւ զղջալով կը դառնանք մեղքերէ։

Հինգերորդ՝ զԱստուած փառաւորելու համար, քանի որ կարդալով անոնց վարքը՝ կ'իմանանք, թէ Աստուծոյ նկատմամբ ունեցած ահին պատճառով այդպէս ըրին, ու ատոր համար փառք վերառաքենք՝ ըստ այնմ. «Տեսնեն ձեր բարի գործերը»[69]*։*

Վեցերորդ՝ որպէսզի անոնցմով յանդիմանենք չարութիւն գործողները ու անոնց վարքը աշխարհի համար որպէս խրատ կարգենք, թերեւս դառնան պիղծ ճամբաներէն։

Եօթներորդ՝ յամօ՛թ հերձուածողներուն, որոնք այս աշխարհի ուտելը, խմելն ու հեշտութիւնը կը քարոզեն, որոնց կ'ըսենք, թէ սուրբերը աստուածային Հոգիով լեցուած էին։ Արդ, եթէ աշխարհի հեշտութիւնը պէտք էր, ինչպէ՞ս անոնք չըրին։

Ութերորդ՝ առ ի յիշատակ անոնց անուններուն եւ անոնց նահատակութիւններուն, որովհետեւ Տէրը կ'ըսէ. «Ձեր անունները երկինքի մէջ

---

[67] *Տե՛ս Ա. Կորնթ. Բ. 10։*

[68] *Հռոմ. ԺԲ. 13։*

[69] *Մատթ. Ե. 16։*

գրուած են»[70]: Նմանապէս պէտք է եկեղեցին ալ անջնջելի ըլլայ, այնքան ատեն որ կայ։

Իններորդ՝ որպէսզի Տէրը մեղքերուն պատուհասները վերցնէ, որ մեր վրայ կու գայ՝ միջնորդ ունենալով ասոնք, ինչպէս Տէրը Հին Ուխտին մէջ կ'ըսէ. «Իմ ծառայ Դաւիթին համար, պիտի ներեմ ձեզի»[71]:

Տասներորդ՝ որպէսզի սուրբ հայրերուն երախտիքները ասով վճարենք, քանի որ իւրաքանչիւր որդի պէտք է իր հօր պարտքերը վճարէ եւ հայրը՝ ժառանգ ձգէ որդիներուն։ Արդ, սուրբերը մեզի բազմաթիւ չիշատակներ ձգեցին. ոմանք՝ սուրբ վարքը, ոմանք՝ չարչարանքները եւ ուրիշներ՝ պահեցողութիւնը, կուսութիւնը, Աստուածաշունչին իմաստն ու մեկնութիւնը։ Եւ անոնց խօսքերուն միջոցաւ աստուածապաշտներ եղանք, այս բոլոր երախտիքներուն համար ուրիշ բան չունինք փոխարինելու համար, բացի միայն անոնց տօնը կատարել։

Գրաբարէ արեւմտահայերէնի վերածեց
ՎԱՐԱՆԴ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ

---

[70] *Ղուկ. ժ. 20։*
[71] *Համմտ. Ես. Լէ. 35։*

ԴԱՆԻԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՖԸՆՏԸԳԵԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

«ՓԱԿ» ԿԱՄ «ԳՈՑ» ՊԱՏԱՐԱԳ.
ՄԵՐ ՊԱՀՈՑ ՓԱԿ ՎԱՐԱԳՈՅՐԻ ՀԱՐՑԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սկիզբը՝ թիվ ԺԲ. 2025 թ.

Դ. ՓԱԿ ՊԱՏԱՐԱԳԻ ԾԷՍԻՆ ԱՌՆՉՈՒՈՂ ԾԻՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պատարագը փակ վարագոյրով մատուցելն առաջ է բերում մի շարք գործնական դժուարութիւններ, որոնք «Տօնացոյցի» սեղմ կանոններն իսպառ անտեսում են: Արդիւնքը համատարած շփոթութիւնն է եւ տարբեր վայրերում կիրառուող սովորոյթների զգալի բազմազանութիւնը: Փորձելով կանոնակարգել կամ մեկնաբանել այս ծիսական անորոշութիւնները՝ թեմակալ առաջնորդներն ստիպուած են ապաւինել իրենց անձնական կարծիքին, քանի որ, ինչպէս նշեցինք, աւանդութիւնը նրանց չի ընձեռում որեւէ աստուածաբանական, կանոնական կամ ծիսական հիմք՝ առաջնորդուելու համար: Մեզ յայտնի միակ բնագիրը, որը պարունակում է «Փակ պատարագի» համար նախատեսուած ծիսական յատուկ հրահանգներ, Տիրան արքեպիսկոպոս Ներսոյեանի «Պատարագամատոյցի» կարճ հատուածն է՝ “On Celebrating ‘Veiled Liturgy” *(«Յաղագս մատուցանելոյ զՊատարագն վարագուրեալ» («Վարագուրուած»)*[1]*: Թւում է, թէ ինչպէս իր ողջ աշխատութեան պարագային այնպէս եւ այս հակիրճ՝ ընդամենը մէկ էջանոց հատուածում, Ներսոյեանի կանոնները խարսխուած են* “...on the practice prevalent in the Armenian Monastery in Jerusalem” *(«Երուսաղէմի Հայոց վանքում տիրող աւանդոյթին»)*[2]*:*

Առաջին հարցն այն է, թէ ինչպէ՞ս է պէտք սկսել պահոց շրջանի Պատարագը: Սովորաբար պատարագիչն ու սպասաւորներն աւանդատնից թափորով դուրս են գալիս դէպի ատեան, որտեղ յընթացս սաղմոսասացու-

---

[1] Ներսոյեան, Divine Liturgy, *էջ 233–234: Իմ տեղեկութեամբ, հայկական տպագիր կամ ձեռագիր ծիսական գրքերում Փակ Պատարագի համար որեւէ հրահանգ գոյութիւն չունի:*

[2] *Նոյն տեղում, էջ 195:*

թեան, մուտքի քարոզների ու աղօթքների քահանան լուանում է ձեռքերը, արտասանում խոստովանութեան բանաձեւը, ապա բարձրանում խորան՝ ընծաների պատրաստութեան համար։ Ինչպէս պէտք է հոգեւորականները շարժուեն փակ վարագոյրի շուրջ եւ արդեօք առհասարակ պէ՞տք է շարժուեն։ «Տօնացոյցն» այս հարցում որեւէ օգնութիւն չի ցուցաբերում։ Ներկայիս ընդհանրական փորձառութեամբ Պատարագի այս հատուածը Մեծ Պահքի ընթացքում ամբողջութեամբ բաց է թողնւում։ Պատարագն սկսւում է ընծաների պատրաստութիւնից յետոյ, բայց ոչ թէ որեւէ կանոնական կամ հեղինակաւոր հրահանգի հիման վրայ։ Բացի Ներսոյեանի ժամանակակից ցուցումներից, ոչ մի այլ ծիսական գիրք չի նախատեսում, որ պահքային Պատարագի ժամանակ պէտք է բաց թողնուեն դրա աւանդական սկզբնական արարողութիւնները[3]։

Կարող է տրամաբանական հարց առաջանալ, թէ ինչո՞ւ են Մեծ Պահքի ընթացքում այս արարողութիւնները համարւում անպատշաճ, յատկապէս քահանայի անձնական մեղքերի խոստովանութիւնը, որը մուտքի ծէսի կարեւոր մասն է։

Աւելի ակնառու է մէկ այլ սովորոյթ, որին ես անձամբ ականատես եմ եղել բազմիցս. քահանան Պատարագը մատուցում է առանց պատշաճ ծիսական զգեստաւորման՝ դրա փոխարէն մնալով պարզ փիլոնով, որը սովորաբար կրում են ժամերգութեան ժամանակ։ Կարելի է պատկերացնել քահանայի տրամաբանութիւնը. «Ինչո՞ւ կրել խորհրդակատարութեան զգեստներ, եթէ ողջ Պատարագը վարագուրուած է ժողովրդից»։

Արդեօ՞ք պէտք է կատարուի Ողջոյնը։ Հայ Եկեղեցում, ինչպէս եւ այլ ծիսական աւանդոյթներում, Ողջոյնը միաժամանակ ծառայում է եւ որպէս ողջագուրում, եւ որպէս օրհնութիւն[4]։

Ողջոյնը նախաձեռնում է պատարագիչը, որը խորանից ասում է՝ «Խաղաղութիւն ամենեցուն», երբ շրջւում է դէպի հաւատացեալներն ու օրհնում նրանց խաչակնքմամբ։ Սարկաւագը, որը նախապէս համբուրել է

---

[3] "When the Morning Office ends, the Liturgy should begin with the Enarxis." *(«Առաւօտեան ժամերգութեան աւարտին պէս, Պատարագը պէտք է սկսուի էնարքսիս-ով»։ Նոյն տեղում, էջ 234։*

[4] L. Edward Phillips, The Ritual Kiss in Early Christian Worship, Alcuin/GROW Liturgical Study *36 (*Cambridge*:* Grove Books, *1996);* Robert F. Taft S.J., The Great Entrance*:* A History of the Transfer of the Gifts and Other Pre-anaphoral Rites of the Liturgy of St. John Chrysostom, Orientalia Christiana Analecta *200 (*Rome, *1975) 35–52;* Michael Philip Penn, Kissing Christians*:* Ritual and Community in the Late Ancient Church *(*Philadelphia*:* University of Pennsylvania Press, *2005)*։

Սուրբ Սեղանն ու պատարագիչ քահանայի ձեռքը, իջնում է խորանից եւ փոխանցում ողջոյնը նախագահող հոգեւորականին եւ/կամ ժողովրդի ներկայացուցիչներին, որոնք այդ նպատակով առաջացել են դէպի ատեան: Վերջիններս իրենց հերթին վերադառնում են նաւ, որտեղ Ողջոյնը փոխանցում են մնացեալ հաւատացեալներին: Այսպիսով, Ողջոյնն ունի որոշակիօրէն նուիրապետական բնոյթ, ինչը հարցականի տակ է դրւում, երբ վարագոյրը փակ է:

Պահքային Պատարագների ժամանակ Ողջոյնի փոխանցման վերաբերեալ միասնական ըմբռնում գոյութիւն չունի: Թեմերի մեծ մասում Մեծ Պահքի ընթացքում Ողջոյնը բաց է թողնւում, բայց ոչ ծիսական գրքերում առկայ որեւէ արգելքի հիման վրայ: Այնուամենայնիւ, այս հարցը շարունակում է մնալ քննարկման առարկայ հայ հոգեւորականութեան եւ հաւատացեալների շրջանում[5]:

Ինչ եղանակով պատարագիչը պէտք է փոխանցի Ողջոյնը, կամ, առհասարակ պէ՞տք է փոխանցի: Ինչպէս արեւելեան բոլոր ծիսակարգերում հայկականում եւս Պատարագի ընթացքում ծիսակատար քահանան ժամանակ առ ժամանակ շրջւում է դէպի ժողովուրդը եւ խաչակնքում նրանց՝ ասելով. «Խաղաղութիւն ամենեցուն»: Մեծ Պահքի ընթացքում այս գործողութիւնը քօղարկուած է կամ՝ անտեսանելի փակ վարագոյրի պատճառով: Եթէ յիրաւի ինչպէս նշուած է «Տօնացոյցի» հակիրճ հրահանգում, փակ վարագոյրը խորհրդանշում է Ադամի եւ Եւայի արտաքսումը դրախտից, ապա բնական հարց. քահանան առհասարակ պէ՞տք է խաղաղութեան օրհնութիւն տայ: Ներկայումս քահանաների մեծ մասը Մեծ Պահքի ընթացքում օրհնութեան կարգը կատարում է սովորականի պէս, թէեւ այդ ամենը որոշակիօրէն արհեստական, նոյնիսկ թատերական տպաւորութիւն է թողնում[6]:

Իսկ ինչպէս եւ որտեղից սարկաւագը պէտք է ընթերցի Աւետարանը: Գրեթէ ամենուր սարկաւագը դուրս է գալիս փակ վարագոյրի ետեւից ու, դեռեւս կանգնած մնալով բեմին, սովորականի պէս ընթերցում է Աւետարանը: Ճիշտ այսպէս է Ներսոյեանը նկարագրում այս արարողութիւնը[7]:

---

[5] "The deacon should not give the greeting to the people. He should remain behind the veil" *(«Սարկաւագը չպէտք է Ողջոյն տայ ժողովրդին: Նա պէտք է մնայ վարագոյրի հետեւում»),*– գրում է Ներսոյեանը իր ցուցումներում: *Տե՛ս* Ներսոյեան, *Divine Liturgy, էջ 234:*

[6] Ներսոյեանը ոչ մի տեղ չի յիշատակում խաղաղութեան օրհնութիւնը:

[7] "At the proper time the deacon should read the Gospel and recite the Creed outside the veil. While reciting the Creed he should hold the Gospel book against his chest, instead of raising it. At the end of the

Ընդամին յայտնի են դէպքեր, երբ պահքային Պատարագի ժամանակ քահանան՝ ձեռնադրեալ սարկաւագի բացակայութեան պատճառով, Աւետարանն ընթերցել է փակ վարագոյրի ետեւից: «Տօնացոյցը» որեւէ հրահանգ չի տալիս այն մասին, թէ ինչպէս կամ որտեղից պէտք է ընթերցուի Աւետարանը: Այն սոսկ նշում է, որ Աւետարանը չպէտք է բարձրացուի ո՛չ ընթերցման աւարտին, եւ ո՛չ իսկ դրան անմիջապէս յաջորդող Հաւատամքն արտասանելիս: Բնական հարց է ծագում. եթէ պատարագիչը խաղաղութեան օրհնութիւնը տալիս է փակ վարագոյրի հետեւից, ապա ինչո՞ւ նաեւ սարկաւագը նոյն դիրքից չի ընթերցում Աւետարանը: Պարզ է, որ հնարաւոր է փաստարկներ բերել ի նպաստ երկու տարբերակների: Խնդիրն այն է, որ Հայոց ծիսական մատեանները եւ, առհասարակ, ողջ հայ մատենագրական աւանդութիւնը լիակատար լռութիւն են պահպանում այս խնդրի շուրջ:

Փակ Պատարագի հանգամանքից բխող թերեւս ամենաարտասովոր ու ամենատարօրինակ երեւոյթն այժմ արդէն յատկապէս Սփիւռքում լայն տարածում գտած սովորոյթն է, երբ բարձրադիր բեմի վրայ՝ անմիջականօրէն փակ վարագոյրի դիմաց, տեղադրւում է նոր եւ յաճախ շքեղ զարդարանքով «Պահքի սեղան»: Եւ սա այն վարագոյրի առջեւ, որը քաշուել էր յատկապէս խորանը քօղարկելու նպատակով:

Շատ եկեղեցիներում անխտիր սեւով աքօղուած «Պահքի սեղանն» ամբողջութեամբ կահաւորուած է լինում երեք, չորս կամ աւելի աստիճաններով, շքեղ սփռոցներով, մոմերով, խորանի ակնառու խաչով, ծաղիկներով եւ այլ զարդարանքներով:

«Ժամագիրքը» դրւում է կենտրոնում զետեղուած գրակալի վրայ՝ հոգեւորականների ընթերցումը դիւրին դարձնելու նպատակով: «Պահքի սեղանը» պարտադիր կերպով զարդարւում է նաեւ խաչեալ Քրիստոսի մեծ պատկերով, որ տեղադրւում է սեղանի վերնամասում, կամ կախւում է վարագոյրի ձողից այնպէս, որ զուգակցուի գլխաւոր խորանի վերեւում կախուած սրբապատկերին:

Creed, he should return behind the veil." *(«Պատշաճ ժամանակին սարկաւագը պէտք է ընթերցի Աւետարանը եւ արտասանի Հաւատամքը վարագոյրից դուրս: Հաւատամքն արտասանելիս նա պէտք է Աւետարանը սեղմած պահի կրծքին՝ այն վեր բարձրացնելու փոխարէն: Հաւատամքի աւարտին նա պէտք է վերադառնայ վարագոյրի հետեւը»):* Ներսոյեան, Divine Liturgy, *234.* Cf. *Տօնացոյց, 37:*

«Պահքի սեղան» նախատեսուած չէ մեզ յայտնի որեւէ ծիսական սկզբնաղբիւրով: Այն չունի որեւէ գործնական նպատակ եւ իրենից ներկայացնում է սոսկ մի կոթողային գրակալ: Համաձայն ընդունուած սովորոյթի՝ սակայն դարձեալ առանց ծիսական գրքերում որեւէ յղման, Աւագ Հինգշաբթի օրն այս ծանրաշարժ կազմաւորումը պէտք է մասնատուի Պատարագի եւ Ոտնլուայի անցկացման համար, իսկ յետոյ վերստին ի մի հաւաքուի Խաւարման մեծ հակումն իրականացնելու նպատակով. գործընթաց, որ ամենամեայ յաճախականութեամբ կրկնուող մարտահրաւէր է հոգեւորականութեան եւ դպիրների համար:

Ե. ՆԱԽԱԴԷՊԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

Փակ Պատարագը խնդիրներ է յարուցում նաեւ վարագոյրի միւս կողմում: Որքան էլ որ հաւատացեալներն ընդունում են այն որպէս Հայ Եկեղեցու պահքային յիշատակութեան աւանդական մաս, շատերը դժուարանում են հաշտուել դրա գաղափարի հետ: Չնայած Ադամի ու Եւայի անկման եւ դրանից բխող ապաշխարութեան դասի հռչակուած խորհրդաբանութեանը՝ այնուամենայնիւ, ինչ-որ անբնական բան կայ փակ վարագոյրի, մթնեցուած եկեղեցու եւ անսովոր ծիսական փոփոխութիւնների մէջ՝ այլեւս չխօսելով «Պահքի սեղանի» մասին: Մխական քահանաների մեծ մասը ճնշման տակ կխոստովանի, թէ որքան դժուար է հաւատացեալներին փոխանցել փակ վարագոյրի խորհուրդն ու կարեւորութիւնը եւ, աւելին, համոզել նրանց առհասարակ եկեղեցի գալ պահոց շրջանին համընկնող կիրակիներին, երբ Սուրբ Հաղորդութիւն չի բաշխուում[8], եւ մարդիկ մեկուսացուած են կենսաբեր արարողութիւններից: Արդարեւ, բազմաթիւ ծխական եկեղեցիներում Մեծ Պահքի ընթացքում եկեղեցի յաճախողների թիւն անխուսափելիօրէն նուազում է:

Հայ քահանաներն ու վարդապետները որպէս կանոն չունեն որեւէ ուղեցոյց փակ վարագոյրի աստուածաբանութիւնը պարզաբանելու համար, քանի որ Հայոց հայրախօսական կամ մեկնողական գրականութեան

---

[8] Մեծ Պահքի Պատարագների շրջանում հաւատացեալներին Սուրբ Հաղորդութիւնից զրկելու յոյժ խնդրայարոյց սովորոյթը, որն ըստ էութեան բոլոր հաւատացեալների համատարած հաղորդազրկման անկանոն երեւոյթ է՝ զուրկ հայ եկեղեցական մատենագրութեամբ վկայուած որեւէ հիմքից եւ առանց որեւէ նախադէպի կամ զուգահեռի քրիստոնէական աշխարհում: Այս սովորոյթը շատ հաւանական է, որ կապուած լինի Պահքի փակ վարագոյրի հետ եւ, ամեն դէպքում, արժանի է հետագայ պատմաքննական հետազօտութեան:

մէջ գոյութիւն չունի որեւէ լուծմունք, մեկնութիւն կամ բանք, որտեղ այն յիշատակուի։ Մարդ իզուր է փնտրում հայ աստուածաբանական գրականութեան հսկայական ժառանգութեան մէջ որեւէ յղում Մեծ Պահքի ընթացքում փակուող վարագոյրի վերաբերեալ։ Հայ անուանի քարոզիչները, վարդապետները, ծիսական մեկնիչներն ու կանոնագէտները, որոնց երկասիրութիւններին կարելի է հիմնուել նոյնիսկ շատ աւելի նուազ նշանակալի ծիսական նրբութիւնները մեկնաբանելու հարցում, լիակատար լռութիւն են պահպանում Մեծ Պահքի ընթացքում վարագոյրը փակելու վերաբերեալ։ Թւում է, թէ այդ երեւոյթն իրենց ամենեւին անյայտ է։

Այս կապակցութեամբ մեզ միայն մի ուշ, կողմնակի յիշատակում է յայտնի հայ մատենագրութեան մէջ։ Այն հանդիպում է ԺԷ. դարի կէսերին գրուած մի դաւանաբանական նամակում, որ Կիլիկիոյ Սիմէոն Բ. Սեբաստացի կաթողիկոսն (1633–1648 թթ.) ուղղել է Ամենայն Հայոց Փիլիպոս Ա. Աղբակեցի հայրապետին (1632–1655 թթ.)։ Սիմէոնը հեգնանքով կշտամբում է վերջինիս առ այն, որ նրա անանուն նուիրակը, Արեւմտեան Հայաստանի ծայր արեւմուտքում (Անատոլիա) իր առաքելութեան ընթացքին, «բաց Պատարագ ընել տուաւ, որ սուրբ հայրապետաց կանոնով փակ պէտք է ըլլայ»[9]։ Թէ «հայրապետաց» յատկապէս ո՞ր կանոնին կարող էր յղում անել Սիմէոնը՝ անյայտ է, քանի որ,– կրկնում եմ եւս մէկ անգամ,– Մեծ Պահքի փակ վարագոյրի մասին դոյզն-ինչ յիշատակութիւն չկայ հայ կանոնական, ծիսական կամ հայրախօսական որեւէ երկում։ Տօնացոյցի մէջ առկայ գրեթէ պատահական նշումն, ըստ երեւոյթին, Պահքի ողջ ընթացքում վարագոյրը փակելու սովորոյթի առաջին եւ միակ մեկնաբանութիւնն է։

Դ. VELUM QUADRAGESIMALE

Մինչ եզրակացութեանն անցնելը տեղին է յիշատակութիւնը Velum Quadragesimale-*ի (Քառասնորդաց վարագոյր), որը միջնադարի արեւմտեան եկեղեցիներում Մեծ Պահքի ամբողջ ընթացքում կամ դրա մի որոշ շրջանում կախւում էր սեղանի, խորանային խաչելութեան, սրբապատկերների եւ արձանների առջեւ*[10]։

---

[9] Բաբգէն Աթոռակից Կաթողիկոս (Կիւլեսէրեան), *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ 1441-էն մինչեւ մեր օրերը, Բ. տիպ, Անթիլիաս, Լիբանան. Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1990, սիւնակ 335։*

[10] *Միջնադարեան Անգլիայում Մեծ Պահքի վարագոյրի խորը դիտարկման համար, այդ թւում՝ պատմական փաստաթղթերում արձանագրուած վարագոյրների վերաբերեալ վկայու-*

Առաջին անգամ վկայուած լինելով Թ. դարի մայրամուտի նախընթաց շրջանում[11]՝ պահքային վարագոյրները կախւում էին կամ Մոխրադրոշմի Չորեքշաբթի օրը (“Ash Wednesday”, *Մեծ Պահքի առաջին օրը Հռոմէականթոլիկ եկեղեցում), կամ Պահքի Առաջին Կիրակի օրը, եւ կամ Զարչարանքի կիրակի օրը (*“Passion Sunday”, *Մեծ Պահքի հինգերորդ կիրակին)՝ ըստ տեղական սովորոյթի[12]։*

Վարագոյրները հեռացւում էին կամ Աւագ Հինգշաբթիի նախօրէին, կամ Աւագ Ուրբաթի արարողութեան աւարտին, կամ Զատկական Ճրագալոյցից առաջ[13]։ ԺԱ. դարի վանական բարեփոխիչ Վիլհելմ Հիրշաուա-

---

թիւնը տե՛ս Henry John Feasey, Ancient English Holy Week Ceremonial, 2nd edn. *(*London, *1897) 13–31;* C.E. Pocknee, *The Christian Altar (*London, *1963) 62–63;* Francis Bond, “The Lenten Veil”, *The Chancel of English Churches (*London/New York: Oxford University Press, *1916) էջ 102–105։*

[11] Ալֆրեդ Մեծի եկեղեցական օրէնքների ժողովածուի 40.2 յօդուածը տուգանք է սահմանում այն անձի նկատմամբ, որ Մեծ Պահքի ընթացքում կպատուի կամ վայր կիջեցնի վարագոյրը. «Si quis in Quadragesima sanctum velum in populo sine recto deponat, emendet C. viginti sol.»։ Այս դրոյթը ոչ միայն վկայում է ժողովրդի հակակրանքը տուեալ սովորոյթի հանդէպ, այլեւ օրէնքը ենթադրում է, որ այն նորամուծութիւն է եղել։ Տե՛ս Die Gesetze der Angelsachsen, ed. Felix Liebermann, *3* vols. *(*Halle, *1903,* I, *75., հա. Ա, էջ 75։ Փոքնին գրում է.* “The custom of veiling crucifixes, statues and pictures during the whole of Lent, that is during the forty days, can probably be traced back to the tenth century. At that time Christ was depicted on the Cross as alive and triumphant rather than in the anguish of death, while statues of the Saints were intended to reflect their heavenly glory. To veil these things during the penitential season of Lent seemed fitting and appropriate. The custom of veiling the crucifix only from the fifth Sunday in Lent, commonly called Passion Sunday, appears to have developed in the seventeenth century.” *(«Մեծ Պահքի ողջ շրջանում՝ այսինքն քառասուն օրերի ընթացքում խաչերի, սրբապատկերների, արձանների եւ նկարների ծածկելու սովորոյթը հաւանաբար կարելի է վերագրել Ժ. դարին։ Այդ ժամանակ Քրիստոս խաչի վրայ պատկերւում էր որպէս կենդանի եւ յաղթական, այլ ոչ թէ մահուան տանջանքների մէջ, իսկ սրբերի արձանները կոչուած էին արտացոլելու նրանց երկնային փառքը։ Այս ամենը Մեծ Պահքի ապաշխարական շրջանի ընթացքում ծածկելը թւում էր պատշաճ եւ տեղին։ Խաչը միայն Մեծ Պահքի հինգերորդ կիրակիից՝ (որպէս կանոն կոչում են Զարչարանքի կիրակի), ծածկելու սովորոյթը, ըստ երեւոյթին, ձեւաւորուել է ԺԷ. դարում»)։ Անդ, «The Christian Altar», էջ 62–63։*

*[12] «Մոխրադրոշմի Չորեքշաբթի» (*Ash Wednesday, *լատ.* Feria quarta cinerum*) եւ «Կրքի կիրակի» (*Passion Sunday, *լատ.* Dominica Passionis*) անուանումները յատուկ են Լատին ծիսական օրացոյցին եւ հայ եկեղեցական աւանդութեան մէջ ուղղակի համարժէքներ չունեն։ Առաջինը նշում է Մեծ Պահքի սկիզբը։ Անունն ստացել է այդ օրը կատարուող մոխրադրոշմի հանգամանքով, որը ապաշխարութեան եւ մահկանացու լինելու խորհրդանշական արարողութիւն է։ Երկրորդը համընկնում է Մեծ Պահքի հինգերորդ կիրակիին՝ բացելով այսպէս կոչուած* Passiontide*-ը՝ Քրիստոսի Կրքերին նուիրուած նախապատրաստական շրջանը։ Հայերէնում՝ իբրեւ թարգմանական-բացատրական, ներկայ եզրերը հանդիպում են բացառապէս պատմածիսական եւ համեմատական գիտական գրականութեան մէջ.-ծան. թարգմ.։*

[13] Տուեալ ժամանակաշրջանում ձեւաւորուող ապաշխարական գործելակերպին զուգընթաց, ինչպէս նաեւ հաղորդութեան մատապատկերման ուժեղացման պայմաններում, միջնադարեան ժամանակների Մեծ Պահքի վարագոյրների տարածումը աստիճանաբար նուազեց՝ դառնալով իրենց սկզբնական հեղինակութեան մասունք։ Մեծ Պահքի վարագոյրի գործածու-

ցին (†1091) գրել է, որ Պահքի ընթացքում քահանաներից եւ ոչ մէկին չի թոյլատրւում անցնել դասի ու նաւի (ատեանի) միջեւ ձգուած վարագոյրը՝ լոկ Ահարոնին էր թոյլատրուած մուտք գործել Սրբութիւն Սրբոց: Վիլհելմ Դուրանդուսի (†1296) «Պատճառ Աստուածային Պաշտամանց» («Rationale Divinorum Officiorum») աշխատութեան առաջին գրքում մի ամբողջ գլուխ է նուիրուած տարբեր վարագոյրների կիրառութեանն ու խորհրդաբանութեանը, ներառեալ մի ծաւալուն բաժին, որ ընծայուած է՝ Պահոց վարագոյրին[14]: Դուրանդուսը գրում է, որ «որոշ վայրերում» կախւում էին երկու վարագոյրներ. մէկը՝ երգչախմբի (դասի) շուրջը, իսկ միւսը՝ խորանի եւ դասի միջեւ՝ որպէսզի «Սրբութիւն Սրբոցում գտնուող իրերը տեսանելի չլինեն»[15]:

Անգլերէն հրատարակութեան մի քանի էջերում դիտելի է, թէ ինչպէս է Դուրանդուսը ներկայացնում տարբեր խորհրդաբանական սկզբունքները խորանի եւ դասի միջեւ կախուած վարագոյրի, որը համանման է հայկական խորանի վարագոյրին: Այս բացատրութիւններում Դուրանդուսն անխտիր վերադառնում է Տաճարի վարագոյրի օրինակին, որը «Տիրոջ չարչարանքների ժամանակ պատռուեց երկու կէսի»[16]:

Դուրանդուսը վարագոյրի խորհրդաբանութեամբ հետեւողականօրէն մեկնում է Տիրոջ չարչարանքները՝ ընդգծելով այն պահը, երբ[17] Աստուածութիւնը Քրիստոսի մէջ «ծպտեալ» կամ «քողարկուած» էր. քանզի Նա Ինքն Իրեն հանձնեց ձերբակալութեան եւ խարազանման որպէս մարդ՝ իբրեւ թէ այլեւս Իր մէջ չունենալով Աստուածութեան զօրութիւնը: Այդ պատճառով էլ տուեալ օրուայ Աւետարանում ասւում է. «Յիսուս խոյս ետ՝ եւ ել գնաց ի տաճարէ անտի» (Յովհ. Ը. 59):

Զարմանալի է, սակայն Դիւրանդուսը Ադամի եւ Եւայի արտաքսման հետ կապին անդրադառնում է ընդամենը մէկ անգամ՝ այն էլ զգուշաւոր

թիւնը կարճ ժամանակով դադարեցուեց Վատիկանի երկրորդ ժողովից յետոյ, սակայն, հայեցողական սկզբունքով կրկին յայտնուեց Աղօթագրքի 1975 թ. հրատարակութեան մէջ: Տե՛ս The Sacramentary of the Roman Missal *(Քոլէջվիլ, Մինէսոտա.* The Liturgical Press, *1985), էջ 185:*

[14] ՎԻԼՀԵԼՄ ՀԻՐՍԱՈՒ, Constitutiones Hirsaugiensis seu Gengenbacenses, Patrologia Latina *150:1092, մէջբերուած է Բարբարա Բաերտի՝* A Heritage of Holy Wood*:* The Legend of the True Cross in Text and Image *աշխատութեան մէջ, թարգմ.՝ Լի Փրիդի (*Brill, *2004), էջ 120:*

[15] Rationale Divinorum Officiorum I, *3:34: Անգլ. թարգմ.՝* The Rationale Divinorum Officiorum of William Durandus of Mende*:* A New Translation of the Prologue and Book One, tr. Timothy M. Thibodeau *(*New York*:* Columbia University Press, *2007, էջ 42:*

[16] *Նոյն տեղում, 43:*

[17] *Նոյն տեղում, 42:*

կերպով եւ անմիջականօրէն Տիրոջ չարչարանքների համապատկերում: Վարագոյրը, ինչպէս գրում է նա[18], խորհրդանշում է.

> «…այն զէնքը՝ բոցեղէն սուրը, որը դրուեց Դրախտի դռների առջեւ: Եւ քանի որ այս տեսակի մարմնավոր պաշտամունքը, անհասկանալի օրենքն ու սուրը վերացուել են Քրիստոսի չարչարանքներով, ուստի նմանօրինակ վարագոյրներն ու հողերը հանւում են Աւագ Ուրբաթ օրը»:

Աւելորդ է ասել, որ այս ուղղուածութիւնը հակադրւում է Տօնացոյցում վկայուած՝ փակ վարագոյրի միակ հայկական մեկնաբանութեան ընդհանուր գաղափարին, ըստ որի այն խորհրդանշում է Ադամի եւ Եւայի արտաքսումը Դրախտից:

Է. ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ինչպէս ցոյց տրուեց, Մեծ Պահքի ընթացքում վարագոյրի փակման սովորոյթն ուղեկցւում է մի շարք չպարզաբանուած խնդիրներով.

ա. Տօնացոյցի այն հրահանգը, ըստ որի՝ Մեծ Պահքի սկզբին վարագոյրը պէտք է փակուի, միանշանակ չէ եւ այսօր հանգեցրել է վանական, տաճարական ու ծխական կիրառութիւնների բազմազանութեան:

բ. Պահքի ընթացքում վարագոյրի փակումը եւ դրա հռչակուած խորհրդաբանութիւնը՝ Ադամի եւ Եւայի արտաքսումը Դրախտից, ակնյայտօրէն հակասում են Բուն բարեկենդանի նախորդող Շաբաթ երեկոյեան՝ Կոստանդնուպոլսոյ սուրբ ժողովին հարիւր եւ չիսուն հայրապետացն տօնի ծիսական համատեքստին:

գ. Հայ Եկեղեցում նախաստեղծների արտաքսման պատկերը ոչ թէ Բուն Բարեկենդանի կիրակիին է վերաբերում, այլ յաջորդող կիրակին, որը եւ յայտնի է Արտաքսման կիրակի յորջորջմամբ:

դ. Վարագոյրը վերաբացելու ծիսական կարգը կտրուկ կերպով հակասում է Ղազարու յարութեան ծիսական համապատկերին:

ե. Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Մուտն ի Վիրապ տօնին՝ Մեծ Պահքի վեցերորդ կիրակիին նախորդող շաբաթ օրը, միայն Սուրբ Պատարագի մատուցման համար վարագոյրը վերաբացելու կարճառօտ հրահանգն անբացատրելի է՝ հաշուի առնելով նմանատիպ դրոյթի բացակայութիւնը

---

[18] *Նոյն տեղում*

Մեծ Պահքի ընթացքում պարբերաբար հանդիպող այլ սրբոց յիշատակութիւնների եւ տէրունական կարեւոր տօների համար, որոնց ժամանակ եւս Պատարագ պէտք է մատուցուի։ Սա առաւել քան արտառոց է՝ նկատի ունենալով Տօնացոյցի՝ այլ հարցերում ծիսական եւ կանոնական խիստ մանրամասն հրահանգները։

զ. Վարագոյրը փակելու վերաբերեալ Տօնացոյցի հակիրճ հրահանգն անտեսում է բազմաթիւ անհրաժեշտ մանրամասներ առ այն, թէ ինչպէս պէտք է մատուցուի Պատարագը, երբ վարագոյրը փակ է ողջ ընթացքում։

է. Տօնացոյցում առկայ տարբեր հրահանգները Մեծ Պահքի ընթացքում վարագոյրի դրութեան վերաբերեալ անհամապատասխան են։ Դրանցից որոշները ենթադրում են, որ եկեղեցին ունի բազմաթիւ խորաններ՝ մի երեւոյթ, որը Հայաստանում երկրորդ հազարամեակի սկզբի նորամուծութիւն էր։ Միւսները յղում են անում մէկ խորանի։ Դարձեալ, այս անհամապատասխանութիւնը հակասում է Տօնացոյցի՝ այլ հարցերում եկեղեցական արարողութիւնների անցկացման վերաբերեալ ներկայացրած հանգամանալից, մանրակրկիտ եւ կանոնաւոր հրահանգներին։

ը. Բուն Բարեկենդանին նախորդող երեկոյեան վարագոյրը փակելու հրահանգը յղում է անում մի քանի խորանների, մինչդեռ Ղազարու յարութեան երեկոյեան վարագոյրը վերաբացելու հրահանգը յիշատակում է միայն մէկ խորան։ Այս անհամապատասխանութիւնը յստակ ապացոյց է այն բանի, որ այս երկու հրահանգները համակարգուած եւ մանրակրկիտ կերպով մշակուած ծիսակարգի մաս չեն կազմում, այլ արտացոլում են տարերային մի յաւելում, որը պատահականօրէն է ներմուծուել։

թ. Այսօր «Փակ Պատարագի» անցկացման կարգի մէջ առկայ միասնականութեան ակնյայտ բացակայութիւնը յուշում է, որ Պատարագը պարզունակ կերպով կամ ենթագիտակցաբար յարմարեցուած չէ ողջ ընթացքում փակ վարագոյրով մատուցուելուն։

ժ. Փակ վարագոյրի առջեւ «Մեծ պահքի սեղան» կանգնեցնելու համընդհանուր, թեեւ չհիմնաւորուած սովորոյթը հակասում է վարագոյրը փակելու իմաստաւորմանը, համաձայն «Տօնացոյց»ի հրահանգի մեջ նշուած խորհրդաբանութեանը, որքան էլ որ այն չնչին լինի։

ժա. Մինչեւ ԺԷ. դարի կէսերը հայ մատենագրութեան մէջ տուեալ սովորոյթի որեւէ վկայութիւն չի արձանագրւում, իսկ դրա աստուածաբանական կամ մեկնողական քննութիւն ընդհանրապէս չի պահպանուել՝ բացառութեամբ Տօնացոյցի կարճ կանոնի։

Այս բոլոր հանգամանքների զուգադրումը հաւաստի տպաւորութիւն է ստեղծում, որ Մեծ Պահքի ընթացքում խորանի վարագոյրը փակելու սովորոյթը ոչ այնքան հիմնաւոր քննուած մի նորամուծութիւն է՝ մի ծիսակարգ, որ անտեղի պարտադրուել է աւանդոյթին՝ այդպէս էլ ցայժմ բաւարար չափով չարմատաւորուելով դրա մէջ: Արդեօ՞ք Պահքի ընթացքում սրբարանի վարագոյրը փակելու սովորոյթի որդեգրումը Հայոց մէջ զարգացել է արեւմտեան Velum Quadragesimale-ի ազդեցութեամբ, թէ՞ Պահքի փակ վարագոյրը ինչ-որ կերպ կապուած է ուշ-միջնադարեան հայկական այն սովորոյթի հետ, որը թէեւ կարճ կեանք է ունեցել, բայց լաւ վաւերագրուած է, ըստ որի՝ փակւում էին եկեղեցու հիմնական մուտքը եւ արգելւում էր որեւէ մէկի անցումը՝ բացի խորհրդակատար քահանայից[19]: Այս հարցերին մենք դեռ կանդրադառնանք:

Թարգմ. անգլերենից՝
ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԱՆ

---

[19] *Տե՛ս* Michael Daniel Findikyan, The Function of the *Gavit‘* in Medieval Armenian Monasteries, ΛΟΓΙΚΗ ΛΑΤΡΕΙΑ: Proceedings of the Eighth International Congress of the Society of Oriental Liturgy, Thessaloniki, Greece, *13–18* June *2022*, Studies in Eastern Christian Liturgies, Chrysostom Nassis, Arsenius Mikhail, Daniel Galadza (eds), (Münster: Aschendorff, *2025) 459–486*. Idem, “A Penitential Peculiarity in Armenian Monasticism of the Early Second Millennium”, Monastic Life in the Armenian Church: Glorious Past, Ecumenical Reconsideration, Jasmine Dum-Tragut, Dietmar W. Winkler, eds., in Orientalia-Patristica-Oecumenica *14 (*Zurich: Lit Verlag, *2018*, *էջ 161–181:*

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Doi: 10.56 737/2953-7843-2026.01-80

ՎԱՉԳԵՆ ՀԱԽՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ԵՊՀ, ՀՀԻ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՆՑԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920–1921 ԹԹ.[1]

Հայ Առաքելական եկեղեցին ոչ միայն կրոնական, այլեւ ազգային ինքնության եւ համայնքային կազմակերպման առանցքային կենտրոն էր, ինչի հետեւանքով թիրախավորվեց թուրքական ռազմաքաղաքական ղեկավարության կողմից 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում: Հոդվածում վերլուծվում են թուրքական բանակի իրագործած համակարգային հանցագործություններն ուղղված հայկական եկեղեցական կառույցների, հոգեւորականների եւ եկեղեցական գույքի դեմ: Դրանք ներառում էին եկեղեցիների զանգվածային ավերում, վանական համալիրների թալան եւ հոգեւորականների ոչնչացում կամ բռնի տեղահանում: Ուսումնասիրությունը կատարվել է Հայաստանի ազգային արխիվի, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտական պահոցների, ժամանակի մամուլի, դաշտային-ազգագրական հետազոտությունների եւ մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքում:

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԱՆԴԻ (ԿԱՐՍԻ) ՆԱՀԱՆԳՈՒՄ

1919 թ. ապրիլին Կարսի մարզը միացվում է Հայաստանի Հանրապետությանը: ՀՀ կառավարությունը անմիջապես սկսեց հայրենի այդ տարածքի վերաբնակեցման քաղաքականությունը, որը շարունակվեց մինչեւ 1920 թ. օգոստոսը: Տեղացիներից բացի Վանանդի (Կարսի) նահանգում վերաբնակեցվեցին նաեւ Հայոց ցեղասպանության հետեւանքով Արեւմ-

---

[1]* *Ստացվել է՝ 18.02.2026, գրախոսվել է՝ 25.03.2026: էլ. հասցե՝* van.karno@gmail.com:

տյան Հայաստանի տարբեր շրջաններից տեղահանված գաղթականները։ Ալեքսանդրապոլից, Նոր Բայազետից, Թիֆլիսից եւ Բաթումից Կարսի նահանգ էին տեղափոխվում գարահիսարցիներ, բայբուրդցիներ, բասենցիներ, մշեցիներ, կարնեցիներ, դերջանցիներ եւ այլք[2]։ Գաղթականների տեղափոխություն էր տեղի ունենում նաեւ Ղարաքիլիսայից, Դիլիջանից եւ Բաքվից[3]։

Հայաստանի Հանրապետության կազմում առկա խնդիրները հաղթահարելով՝ Կարսի մարզը գտնում էր իր կենսունակությունը։ 1919-ի մայիսի 28-ը՝ Հայաստանի անկախության տոնը Կարսի ազգաբնակչությունը տոնում է շքեղ հանդիսությամբ։ Ելույթով հանդես է գալիս Ալեքսանդրապոլի գավառի թեմի առաջնորդական փոխանորդ տեր Արտակ վարդապետ Սմբատյանցը, նշելով տոնի կարեւորությունը, ելույթ են ունենում կառավարության եւ զինվորական ներկայացուցիչները։ Շնորհավորում են Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի պաշտոնական ներկայացուցիչները[4]։ Հոգեւորականների խոսքերը հանդիսությունների (մասնավորապես՝ հանրային եկեղեցական տոների, աղոթքների եւ պետական միջոցառումների) ժամանակ շատ մեծ ազդեցություն ունեին Կարսի հայ բնակչության վրա, հատկապես 1918–1920 թթ. անկայուն շրջանում։ Այդ ազդեցությունը կարելի է հասկանալ մի քանի հիմնական ուղղություններով, դրանք ունեին հոգեւոր-բարոյական ազդեցություն, օգնում էին մարդկանց հաղթահարել պատերազմի, սովի եւ անորոշության վախը, ներշնչում էին համբերություն եւ տոկունություն։ Ամրապնդում էին ազգային ինքնագիտակցությունը՝ քրիստոնեական հավատի, հայ ժողովրդի պատմական առաքելության, հայրենիքի պաշտպանության գաղափարի հետ։ Ունեին համախմբման եւ կարգապահության դեր՝ միասնության, փոխօգնության, հասարակական համերաշխության գործում եւ վստահություն էին ձեւավորում Հայաստանի Հանրապետության նկատմամբ։

1919 թ. գարնանը երբ Կարսը անցնում է հայկական իշխանություններին, Ամենայն Հայոց Գեւորգ Ե. կաթողիկոսի կարգադրությամբ Ալեքսանդրապոլի փոխանորդ Արշակ[Արտակ] վարդապետը դիմում է Կարսի

---

[2] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ) ֆ. 205, ց. 1, գ. 799, 2-րդ մաս, թ. 328, 329, 341։*

[3] *Նույն տեղում, 1-ին մաս, թ. 44, նույն տեղում, գ. 801, 2-րդ մաս, թ. 168, 171։*

[4] *Հայաստանի անկախութեան տարեդարձը Ղարսում, «Շիրակի աշխատավոր», թիւ 38, 1919, էջ 4։*

նահանգապետին Սուրբ Առաքելոց տաճարը հետ վերցնելու կապակցությամբ: 1919 թ. հունիսի 2-ից այն դադարում է մզկիթ ծառայելուց, քաղաքի մուսուլման հոգեւորականները ինքնակամ ներկայանում են Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանին եւ տաճարը հայերին վերադարձնելու պատրաստակամություն հայտնում: Նահանգապետի ցուցումով ոստիկանապետն առաջնորդում է այդ պատվիրակությանը դեպի առաջնորդարան եւ Սուրբ Առաքելոց հնադարյան տաճարը հանդիսավոր կերպով հանձնվում է հայերին[5]: 1919 թ. հունիսի 8-ին երկարատեւ դադարից հետո հայոց լեզվով հայկական տաճարում մատուցվում է Սուրբ եւ Անմահ Պատարագ[6]:

Ամենայն Հայոց Գեւորգ Ե. կաթողիկոսը երկրում տիրող բարդ եւ անկայուն պայմաններում բազմիցս հանդես է գալիս հաշտարար կոչով: 1920 թ. մայիսի 14-ին մայիսյան ապստամբության օրերին հայրապետական մաղթանքով եւ օրհնությամբ դիմում է հայ ժողովրդին՝ հոգեւորականներին, մտավորականներին, զինվորականներին ու բոլոր քաղաքացիներին, հիշեցնելով թե ինչ զոհողությունների գնով է հայությունը ձեռք բերել իր անկախությունը, զգաստության կոչ անելով համախմբվել ՀՀ կառավարության շուրջ, զերծ մնալով երկպառակություններից: Նշելով որ ամենքի պարտականությունն է համախմբվել ոչ միայն հայրենիքի պահպանության եւ վերաշինության գործի շուրջ, այլեւ հայ ժողովրդի գոյությունը պահպանելու դժվարին աշխատանքի շուրջ[7]: Հայաստանը գտնվում էր դժվարին ընկերային-տնտեսական իրավիճակում: Երկրում տիրող սովն ու համաճարակները կյանքի համար անհամատեղելի պայմաններ էին ստեղծում արեւմտահայ գաղթականության համար: Ազգամիջյան բախումների ու մայիսյան ապստամբության ճնշումները լրջորեն թուլացրել էին ՀՀ կառավարության դիրքերը եւ էապես նվազեցրել Հայոց բանակի մարտունակությունը: Կանգնած լինելով ՀՀ իշխանությունների կողքին՝ Գեւորգ Ե. կաթողիկոսը բազմիցս հանդես է գալիս կոչով եւ հայրապետական մաղթանքով: 1920 թ. Սեւրի պայմանագրի ստորագրումից հետո, օգոստոսի 28-ին[8] Ս. Աստվածածնի վերափոխման տոնի օրը,

---

[5] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 611, թ. 1–2:*

[6] *Նույն տեղում, թ. 1:*

[7] *ՀԱԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 94, թ. 4–12:*

[8] *Կարծում ենք ամսաթիվը նշված է հին եւ նոր տոմարների տարբերությամբ եւ ոչ ամբողջական է: Պետք է լինի օգոստոսի 15/28:*

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցում է Սուրբ եւ Անմահ պատարագ: 1920 թ. սեպտեմբերի 3-ին վարչապետին ուղղված նամակում կաթողիկոսն ասում է. «...օրհնեցի եւ սրբագործեցի անկախ, միացեալ մեծ Հայաստանի տօնը, որից յետոյ Էջմիածնի միաբանութեան եւ բազմախուռն հասարակութեան ներկայութեամբ Մայր տաճարի գաւթում կատարեցի մաղթանք մեր հայրենիքի բարգաւաճման եւ Հանրապետութեան յարատեւութեան համար եւ որպէսզի լիակատար կատարած լինի Հայոց Հայրապետը իւր պարտքը դէպի հայրենիք, սրանով մայր աթոռ Ս. Էջմիածնի կողմից տալիս եմ Հայաստանի փոխառութեան հիմնադրամին մէկ միլիօն ռուբլի»,– այնուհետեւ խնդրում է վստահելի մարդ ուղարկել՝ գումարը հանձնելու համար[9]: Այսպես Հայոց Եկեղեցին նաեւ նյութապես էր աջակցում ՀՀ կառավարությանը երկրի առջեւ ծառացած խնդիրները լուծելու դժվարին գործում: 1920 թ. աշնանը քեմալական արշավանքի հետեւանքով նորից սկսվեց կոտորածը, գաղթը եւ տեղահանությունը: Հայոց ցեղասպանությունից հետո այստեղ հաստատված արեւմտահայության համար սա կրկնակի ցեղասպանություն էր: Թուրք-հայկական պատերազմի ընթացքում հայ ժողովրդին ուղղված մարտակոչում ե՛ւ ՀՀ կառավարությունը, ե՛ւ Մայր Աթոռը հիշեցնում էին 1918 թ. մայիսյան հերոսամարտերի մասին: Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցը դիմում է հայությանը՝ կոչ անելով, ցուցաբերել Զեյվայի (այժմ՝ Առատաշեն, Արմավիրի մարզում) եւ Սարդարապատի քաջությունը: Հայրապետը նշում է, որ հայրենիքի խաղաղ կյանքը նորից խանգարվել է, որ արյունաքամ հայ ժողովուրդը սահմանների վրա տեղահան, բայց երկնքի տակ է մնացել: Թշնամին ուզում է տնից, հայրենիքից եւ ազատությունից զրկել հայությանը, ուստի պետք է կռվել՝ քաջաբար եւ մեռնել հերոսաբար, որպեսզի Մասիսի գլխին տեղադրված հայկական դրոշը մնա անսասան[10]:

Ռազմական գործողություններով պայմանավորված Վանանդի նահանգում բնակչության տեղաշարժեր էին կատարվում մի բնակավայրից մյուսը: Նահանգի բնակչության մեծ մասը կենտրոնացել էր Կարս քաղաքում, համարելով այն առավել ապահով վայր: Տների ու եկեղեցիների բակերում ապաստանել էր Սարիղամիշից, Կաղզվանից, Օլթիից, Արդահանից փա-

[9] *Նույն տեղում, թ. 13:*

[10] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 80, ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 94, թ. 18–21:*

խած բնակչությունը, ինչպես նաեւ Կարսի շրջակա գյուղերի հայությունը[11]։ Կարսի մերձակա բազմաթիվ մեծ գորանոցները լիքն էին գաղթականներով, քաղաքի մեջ ազատ տեղ չէր մնացել, կայարանի բազմաթիվ վագոններն ամբողջությամբ լիքն էին մարդկանցով։ Հոկտեմբերի 30-ին թուրքերի հարձակումից հետո Կարսում կուտակված բազմության նահանջի միակ ճանապարհը Ջորի խճուղին էր, երկու նեղլիկ կամուրջներով, որը փակեց Ռիձեւսկի ամրոցից իջած հակառակորդը[12]։ Այս վայրում տեղի է ունենում քաղաքի հայ բնակչության մի մասի կոտորածը։ Այդ մասին վկայում է նաեւ ռումինացի Վասիլ Իոնեսկոն։ Թուրքերը գրավելով կարեւոր բարձունքները, բարձրացնում են կարմիր եւ սպիտակ դրոշներ, այս տեսնելով իրարանցման մեջ գտնվող ժողովուրդը հանդարտվում է, սակայն թուրքերը գնդացրային կրակ են բացում ժողովրդի վրա, որը տեւում է մեկ ժամից ավելի։ Բազմաթիվ կանայք նետվում են Կարսի գետը եւ խեղդվում։ Վասիլ Իոնեսկոն շատերի հետ գերի է ընկնում եւ ենթարկվում բռնությունների[13]։ Կարսում գերի ընկածների մեջ էր նաեւ տեր Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանցը (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա.), որը գեներալ Փիրումյանի ցուցումով բարձրանում է Կարսի բերդը՝ հայտնելու հայկական կողմի անձնատվության եւ խաղաղ բնակչությանը կոտորածից փրկելու մասին։ Սրբազանը, հավուր պատշաճի հանդերձավորվելով, վեղարով, պանակեով (կապում է նաեւ քաջության ժապավենը, որն ստացել էր Սարդարապատի հերոսամարտին մասնակցելու կապակցությամբ), մի օդաչու սպայի եւ գնդապետ Տեր-Առաքելյանի հետ նստում են երկձի կառքը եւ ձողի վրա ամրացված սպիտակ սավանով ճանապարհ ընկնում դեպի բերդը։ Երեք օր շարունակ ջրհեղեղի նման անձրեւ է տեղում։ Խճուղիներից մեկով բարձրանալիս նրանց շրջապատում են մի քանի տասնյակ ասկյարներ՝ մի սպայի ղեկավարությամբ։ Պատվիրակությունը պատասխանում է սպայի տված հարցերին՝ ովքեր են եւ ուր են գնում (օդաչու սպան տիրապետում էր թուրքերենին եւ կատարում է թարգմանչի դերը)։ Թուրք սպան կանգնում է կառքի ոտնակին եւ նրանց ուղեկցում։ Ճանապարհին հանդիպում են հայ զինվորների, որոնց շրջապատելով՝ ասկյարները կողոպտում էին՝ հանելով նրանց հագի շորերը։ Լեռնաշղթայից

---

[11] Ա. Ալեքսանդրյան, *Կարս 1920–21*, Երեւան, «Հայաստան», 1986, էջ 22–23։

[12] Վ. Արծրունի, *Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայությունը*, Շատախ, Երեւան, «Մուղնի», 2002, էջ 248։

[13] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ.71–72, գ. 43, թ. 34։

դեպի ձորը ձգվող ցածր պարսպաշար է լինում, որոնց հետեւում պատսպարված թուրք զինվորները համազարկեր են տալիս դեպի ձորը: Կարգադրող սպան, ձիու վրա նստած, մոտենում է եպիսկոպոսին եւ հարցնում նրանց ով լինելը: Հովսեփյանցը նրան դիմում է փոքրիկ ճառով՝ կոչելով նրան փաշա (նրա կարծիքով՝ այդ մարդը ունեցել է գնդապետի աստիճան, մինչդեռ «փաշայով» դիմում են գեներալներին) եւ ասում, որ ձորը լցված է հասարակ բնակիչներով, կանանցով եւ անմեղ երեխաներով, եւ որ այնտեղ են որբանոցները: «Զինվորականը որքան քաջ, նույնչափ վեհանձն, գթոտ պիտի լինի»[14]. դիմում է՝ մարդասիրություն դրսեւորել եւ խնդրում դադարեցնել կրակը: Գնդապետը մի փոքր մտածում, այնուհետեւ ձեռքով նշան է անում, եւ կրակը դադարում է[15]: Այսպես՝ Հովսեփյանցի միջնորդությամբ ձորի կոտորածը դադարում է: Կոտորածներից հետո սկսվում է հայ բնակչության կողոպուտն ու տների թալանը: Բռնության է ենթարկվում նաեւ տեր Խորեն քահանա Ստամբոլցյանը: Վերջինիս, իբրեւ «քաղաքի հարուստ քահանայի» տանում են թաղային բերդակալի մոտ, մի քանի անգամ ապտակում են եւ պահանջում, որ ցույց տա քաղաքի այն տները, որտեղ կան մահճակալներ եւ այլ կահույք: Նրա տանից արդեն տարել էին մահճակալներ ու անկողին: Սպառնում են, որ կսպանեն, հրացանը պահելով վրան, սակայն ասկյարներից մեկը թույլ չի տալիս[16]: Տեր Խորեն քահանա Ստամբոլցյանը կարսում մնում է մինչեւ զատկական տոները: Այնուհետեւ հարկադրված հեռանում է[17]: Վտանգված էր նաեւ Կարսում գտնվող հայ որբերի կյանքը: Կարուց փոխանորդ Կորյուն վարդապետի՝ 1920 թ. հունվար 9՝ Ամենայն Հայոց Գեւորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսին ուղարկված զեկուցագրից իմանում ենք, որ Կարսում կար յոթ ամերիկյան որբանոց, որոնցից հինգը գտնվում էին ձորում, իսկ երկուսը քաղաքում: Այնտեղ հոգեւոր դաստիրակություն ի թիվս այլոց վստահված էր տեր Կորյուն Քոթանջյանցին եւ տեր Գրիգոր Նժդեհյանցին[18]: Դեռեւս 1919 թ. հայ քահանաները նաեւ Հայաստանի սահմաններից

---

[14] *Տ. Տ. Գարեգին Ա. Արքեպս. Յովսէփեան կաթողիկոս Կիլիկիոյ, կենսագրական նօթեր, կեանքիս ամենադժբախտ օրը (Կարսի անկումը) եւ երջանկութեանս րոպէն, Յոբելինական պատգամ եւ մեր իղձերն ու յոյսերը, տպարան Սահակ-Մեսրոպ Գահիրէ, 1945, էջ 24:*

[15] *Նույն տեղում, էջ 24–26:*

[16] *Խորեն քհ. Ստամբոլցյան, Կարսի անկումը, Հուշագրական ժառանգություն, Գիրք ԺԴ., ՀՃՈՒ հիմնադրամի գիտական ուսումնասիրություններ, Երեւան, 2011, էջ 133:*

[17] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 511, թ. 14:*

[18] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1345, թ. 1–2:*

դուրս գտնվող որբանոցներում էին կրոնի դասավանդում։ Վրաստանում ամերիկյան որբանոցներում կրոնի պատմությունը պետք է դասավանդեին եւ հայ քահանաները, եւ բողոքական միսիոներները[19]։ Հայ հոգեւորականներն ականատես լինելով հարազատ ժողովրդի դեմ իրագործված հանցագործություններին, դարձան այդ տեսարանների վավերագրողները։ Հայերի նկատմամբ բռնությունները շարունակվում են նաեւ կոտրածներից հետո։ Ըստ Կարսի Սբ. Լուսավորիչ եկեղեցու ծխատեր Կորյուն քահանա Քոթանջյանի՝ կենդանի մնացածներին վերադարձնում են քաղաք, տղամարդկանց՝ առանձին, կանանց՝ առանձին, իբր իրենց տներում բնակեցնելու նպատակով, սակայն տեղավորում են կայարանի մերձակայքում գտնվող փայտաշեն պահեստանոցներում եւ քաղաքային բանտերում։ Բանտարկվածներին կողոպտում եւ մերկացնում են, օրեր շարունակ քաղցի ու ծարավի մատնում։ Ողջ մնացած կանայք կիսամերկ են վերադառնում իրենց տները, ըստ տեր Կորյունի նրանց հետ պատահածը աննկարագրելի էր[20]։ Կարսի բանտում գտնվող հայերին ձմեռվա սառնամանիքին կիսամերկ, ցրտից կապտած, լծում էին սայլերին եւ մտրակելով ստիպում կրել սպանված հայրենակիցների դիակները, վառելափայտ, մեծ տակառներով ջուր։ Երիտասարդներին սայլերին լծել, դիակներ տեղափոխելուց հետո բաց դաշտում ողջակիզում են[21]։ Անպաշտպան հայ աղջիկներն ու կանայք ենթարկվում էին բռնաբարությունների[22]։ Կարսից մինչեւ Էրզրում ճանապարհին հայ գերիներին սպանում են կազմակերպված ձեւով։ Սարիղամիշից Էրզրում այն կայարանները, որոնք գտնվում էին թուրքական գյուղերին մոտ, թուրք կանայք հայ գերիներին դիմավորում են քարերով, փայտե մահակներով եւ կացիններով, մասնակցելով սպանություններին։ Այդպես սպանվում են կաղզվանցի տեր Ներսես քահանան ու եւս երկու քահանա[23]։ «Կարսից մինչեւ Կարին ձգվող ճանապարհը գերեզմանոց դարձավ պարզապես» գրում է Վահե Արծրունին[24]։ Կարսի Առաքելոց եկեղեցու վերջին քահանա տեր Խորեն Ստամբոլցյանը շրջելով քաղաքի տարբեր տներում եւ բակերում տեսնում է մի պառավ կնոջ դի անկող-

---

[19] *«Հայ որբերը Վրաստանում», «Շիրակի աշխատաւոր», թիւ 33, 1919, էջ 2։*

[20] *ՀԱԱ, Ֆ. 57, ց. 3, գ. 511, թ. 3։*

[21] *Նույն տեղում, թ. 4, 5, 9։*

[22] *Նույն տեղում, թ. 5–6։*

[23] *Նույն տեղում, թ. 4։*

[24] *Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 249։*

նում արնաշաղախ եղած, խեղդված՝ առվի մեջ խեղդամահ արված կնոջ դի, բռնաբարված, սպանված ու այլանդակված աղջիկների դիեր: Չէին խնայել անգամ 8–9 տարեկան աղջիկ երեխային[25]:

Կարսի մարզը իր գավառներով Հայաստանի հարուստ, բարեբեր եւ կենսական նշանակության նահանգներից էր[26]: Թուրքերի կողոպուտի հետեւանքով նրա բնակչությունն ունեզրկվեց, իսկ Հայաստանի Հանրապետությունը կորցրեց իր տնտեսական կարեւոր նշանակության նահանգներից մեկը: Կարսն իր մեծությամբ Երեւանից եւ Ալեքսանդրապոլից հետո Հայաստանի Հանրապետության երրորդ խոշոր քաղաքն էր եւ պատմական Հայաստանի երբեմնի մայրաքաղաքն ու հոգեւոր մշակութային կենտրոններից մեկը:

Կարսի հայ բնակչության բնաջնջումից բացի, թուրքերն իրագործում էին նաեւ մշակութային ժառանգության ոչնչացում կամ յուրացում: Պատերազմի ժամանակ քեմալականները թիրախավորում էին հայկական դարավոր հուշարձանները, գրավելու դեպքում օգտագործում, որպես հայ խաղաղ բնակիչներին ողջակիզելու հավաքատեղի, երբեմն էլ դրանք դարձնում էին անասնագոմ կամ պահեստ՝ հետագայում կանխամտածված ու հետեւողականորեն ոչնչացնելով: Ուշագրավ է Ռիզա Նուրի բեյի՝ 1921-ի մայիսի 25-ի նամակը՝ ուղղված արեւելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշային, որում մասնավորապես ասվում էր. «Անի քաղաքին յուշարձաններու մնացորդներն ու հետքերը երկրագունտի երեսէն պէտք է ջնջուին: Դուք մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլաք Թուրքիոյ՝ այս նպատակը իրագործելու գիծով»[27]: Կարսում ոտնատակ էին տրվում հայկական սրբությունները: Կարսի անկումից հետո հայ բնակչության նկատմամբ կիրառված բռնությունների, կոտորածի եւ հայկական եկեղեցիների վնասման դեպքերի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Կարսի Սբ. Լուսավորիչ եկեղեցու ծխատեր Կորյուն քահանա Քոթանջյանը, զեկուցագիր ուղարկելով Գեւորգ Ե. Ամենայն Հայոց

---

[25] Կ. Աղաբաբեան, *Կարսի անկումը՝ ըստ Առաքելոց եկեղեցու վերջին քահանա Խորէն Ստամբոլցյանի հիշատակարանի:* //http://archive3.ankakh.com/article/22461/%E2%80%8Bkarsi-ankvome-est-arraqyelvots-yekyeghyetsvo-vyerdjin-qahana-khvoryen-stambvoltsyani-hishatakarani / *դիտվել է 22.12.2025/:*

[26] Ա. Մեննակ, *Կարսի նահանգի նշանակությունը, «Յառաջ», թիվ 247, 1920, էջ 3:*

[27] Մ. Կոնինեան, *Հայկական մշակութային ժառանգության նկատմամբ երիտթուրքերի «մշակութային ցեղասպանության» քաղաքականության շարունակությունը քեմալականների կողմից 1920-ական թվականներին, «Գիտական Արցախ», թիվ 4, 2021, էջ 57:*

կաթողիկոսին։ Նորաշեն Սուրբ Լուսավորիչ եկեղեցին ամբողջովին կողոպտվում է, 940-ական թթ. կառուցված Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցին թուրքերը կրկին վերածում են մզկիթի՝ գմբեթից հեռացնելով խաչը, տեղը կիսալուսին դնելով։ Այդ գործը նրանք հանձնարարել էին մի հայ վարպետի, որին կիսալուսինը դնելուց հետո սպանում են[28]։ Կիսալուսին եւ աստղ դնելուց մի քանի օր հետո 1920 թ. դեկտեմբեր ամսի առաջին հինգշաբթի երեկոյան Սուրբ Առաքելոց եկեղեցու զանգակատնից լսվում է թուրքական առաջին ազանը[29]։ Առաքելոց եկեղեցին կառուցվել է ժ. դարում, Բագրատունյաց Հայոց Աբաս Ա. թագավորի օրոք։ Այն պատկանում է «մաստարայատիպ» կենտրոնագմբեթ եկեղեցիների խմբին։ Եկեղեցին բազմիցս վերածվել էր մզկիթի, այն Հայաստանի Առաջին Հանրապետության կազմում շարունակում էր ծառայել, որպես մշակութային, հոգեւոր-կրոնական կարեւոր կենտրոն, համարվելով հայկական միջնադարյան մշակույթի յուրօրինակ նմուշ եւ Կարսի խորհրդանիշը։ Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանն իր հուշերում նկարագրում է նաեւ Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցին, նշելով այդ կառույցի խորհրդանշական դերը, երբ քաղաքի բնակիչները թողնելով տները փախչում էին. «Իսկ այդ վայրկեանում դարձեալ կանգուն եւ դարձեալ խորհրդալից էր միայն Սուրբ Առաքելոց հռչակաւոր եկեղեցին... մենք ակամայ դարձանք դէպի մեր դարաւոր սրբութիւնը, եւ վերջին անգամ թողնելով Բագրատունեաց հռչակաւոր մայրաքաղաքը, մենք լուռ ու պատկառալից բացեցինք մեր գլուխը այդ մամրացած Սրբարանի առջեւով անցնելիս... վերջին անգամ խաչ հանելով»[30]։ Առաքելոց վանքի կարեւորության եւ խորհրդանշական դերի մասին է խոսում նաեւ Եղիշե Չարենցն իր «Երկիր Նաիրի»-ում, համարելով այն այդ հնամյա քաղաքի զարդը[31]։ Առաքելոց եկեղեցին, թեեւ ներկայումս գործում է որպես մզկիթ, շարունակում է ունենալ առանցքային դեր Կարսի համայնապատկերի ձեւավորման մեջ։ Եկեղեցու միջնադարյան հայկական ճարտարապետական առանձնահատկությունները, կառույցի ծավալատարածական գերակայությունը, գմբեթի ուղղաձիգ ընդգծումը եւ զանգվածային քարաշեն հորինվածքը այն դարձնում են քաղաքային համայնապատկերի հիմնական նշանային կետերից մեկը։ 1920 թ.

---

[28] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 511, թ. 14։*

[29] Խորեն Քահանա Ստամբուլցյան, *նշ. աշխ., էջ 134։*

[30] *ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 14, թ. 18–19։*

[31] Եղիշե Չարենց, *Երկիր Նայիրի, Երեւան, 1934, էջ 19։*

ռազմական գործողությունների ընթացքում Կարսի նահանգի շատ վանքեր ու եկեղեցիներ ենթարկվեցին գնդակոծության, թալանի եւ նպատակային ավերման: Ավերածությունների մի մասը տեղի է ունեցել ոչ միայն մարտական գործողությունների ժամանակ, այլեւ պատերազմից հետո՝ համակարգված կերպով, երբ հայ բնակչությանը հեռացրել էին հայրենի հողերից, եւ հուշարձանները մնացել էին անպաշտպան:

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Կարսի անկումից հետո հաջորդ հարվածը հասավ Ալեքսանդրապոլին: Թուրքական զորքերի եւ նրանց հետ շարժվող քրդական ու տեղական ավազակային խմբավորումների գործողությունների հետեւանքով Ալեքսանդրապոլի գավառի բնակչության զգալի մասը կոտորվեց: Ալեքսանդրապոլի գավառի հայկական եկեղեցիներն ու վանքերը նույնպես լուրջ վնասներ կրեցին: Թուրքական զորքերի առաջխաղացումը հաճախ ուղեկցվում էր ոչ միայն բնակչության, այլեւ հոգեւոր-մշակութային ժառանգության ոչնչացմամբ: Եկեղեցիները պղծվում էին, եկեղեցական գույքը ոտնատակ արվում, կողոպտվում: Մեծ Քափանակում (այժմ՝ Բասեն, Շիրակի մարզում) եկեղեցին օգտագործվում էր իբրեւ սպանդի վայր: Իրարանցման մեջ հայտնված ժողովրդի մի մասին հալածելով տանում են գյուղի եկեղեցին, այրում են՝ այն քանդելով մարդկանց վրա[32]: Առավել մեծ վնաս կրեց Ալեքսանդրապոլի գավառի Առաջին գավառամասը: Նույն վիճակում էին նաեւ Փամբակի լեռնաշղթայի լանջերին ծվարած գյուղերը: Պատերազմի վերջին փուլում, երբ թուրքերը, մահ ու ավեր սփռելով, հասել էին Ղարաքիլիսայի (Մարտունական) գավառին: 1920 թ. նոյեմբերի 12-ին դարձյալ հնչում է Ամենայն Հայոց կաթողիկոսի կոչը: Այս անգամ վեհափառը օգնության կոչով դիմում է եւրոպական տերությունների ղեկավարներին: Նա հեռագիր է ուղարկում Անգլիայի թագավոր եւ Հնդկաստանի կայսր Գեորգ Ե.-ին, Իտալիայի թագավոր Վիկտոր Էմմանուել Գ.-ին եւ Հունաստանի թագավորին: Հայրապետը նշում է, որ հայ ազգը Անտանտի պետությունների կողքին համաշխարհային պատերազմի ժամանակ կռվել է ընդհանուր թշնամու դեմ, տեսել իր ավերված երկիրը, ու երբ Սեւրի դաշնագիրը սրբագործելու էր հայ ազ-

---

[32] Բանասաց՝ Անիչկա Բեյբության (ծնվ. 1938 թ., Մուսայելյան), պատմությունը լսել է ականատես պապից՝ Համո Հարությունյանից (ծնվ. 1878 թ., Մեծ Քափանակ), ԴԱՆ, 2021 թ., Շիրակի մարզ, գ. Բասեն:

գի անկախութիւնը, թշնամին դարձեալ ոտնակոխ է անում երկիրը: Վեհափառը դիմում է. «Ուժասպառ եղած, սովի մատնուած, տանջուած հայ ժողովուրդը այս րոպէիս մատնուած է թշնամուն, որի նպատակն է ոչնչացնել ամբողջ ազգութիւնը եւ Հայոց պետութիւնը, ինչպէս եւ ջնջել քրիստոնէական կրօնը եւ եկեղեցին Արեւելքում: Յանուն Փրկչի, կոչ եմ անում Ձերդ մեծութեան քրիստոնէական մարդասիրութեան փրկելու համար իմ ազգի մնացորդը Հայաստանի մէջ՝ ընձեռնելով նրան անհրաժեշտ բարոյական եւ ֆիզիքական օգնութիւն, մինչեւ որ նա հաւաքելով իր ցրուած ուժերը, ի վիճակի լինի ինքնապաշտպանուելու»[33]: Կաթողիկոսը նման հեռագրեր ուղարկում է միաժամանակ նաեւ Փարիզ Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Ալեքսանդր Միլերանին, Վաշինգտոն ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին եւ պատճենները Փարիզի, Պոլսի եւ Ամերիկայի Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչներին[34]:

Պատերազմի ընթացքում Կարսի, Սարիղամիշի եւ Ալեքսանդրապոլի ուղղութեամբ թուրքական զորքերի առաջխաղացումը հասավ նաեւ Փամբակի հովիտ: Տարածքում մեծաթիւ գիւղեր էին հայկական բնակչութեամբ, որոնք հայտնվեցին թուրքական զորախմբերի եւ անընդհատ տեղի ունեցող հետախուզական, զինված հարձակումների թիրախում: Արխիվային փաստաթղթերը, ականատեսների վկայութիւնները ու հայկական եւ միջազգային զեկուցները նկարագրում են պատերազմի վերջին երեք օրերին այստեղ տեղի ունեցած առավել դաժան զանգվածային կոտորածները: Անդրադառնալով թուրքական բանակի գործադրած՝ հայ խաղաղ բնակչութեան սպանութեան եղանակներին, պետք է նշել, որ Ալեքսանդրապոլի եւ Ղարաքիլիսայի գավառներում քեմալականների իրագործած կոտորածներին զուգահեռ տեղի են ունեցել նաեւ զանգվածային ողջակիզումներ: Գիւղերի բնակիչներին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին, ծերերին, հավաքում էին եկեղեցիներում ու անասնակերի մարագներում, պատուհաններից եւ դռներից կրակում էին նրանց վրա, այնուհետեւ դիւրավառ նիւթեր լցնում եւ այրում[35]: Ներխուժելով պատերազմական գոտում գտնվող գիւղերը թուրք զորահրամանատարները պահանջում էին իրենց մոտ ներկայանալ գիւղապետին, գիւղերի ազդեցիկ մարդկանց եւ քահա-

---

[33] *Ժողովուրդ, թիվ 195, շաբաթ, 27 նոյեմբեր, 1920 թ., էջ 2:*
[34] *Ժողովուրդ, թիվ 196, կիրակի, 28 նոյեմբեր, 1920 թ., էջ 2:*
[35] *ՀԱԱ ֆ. 114, ց. 1, գ. 134; ֆ. 114, ց. 2, գ. 27, թ. 85; ֆ. 131, ց.1, գ. 18, թ. 2:*

նային։ Գրավված հայկական գյուղերի մեծ մասում բնակիչները խաղաղասիրություն են ցուցաբերում։ Նոյեմբերի 14-ին Ղալթախչի (այժմ՝ Հարթագյուղ, Լոռու մարզում) գյուղի բնակիչների՝ թուրքերին ուղղված առաջարկությանը, որ զորքի համար ճաշ պատրաստեն, նրանք մերժում են՝ ասելով, որ կճաշեն հաջորդ օրը։ Նրանք իրենց մոտ են կանչում գյուղի երեք ազդեցիկ մարդկանց եւ քահանային, նրանց տանելով իրենց հետ, հեռանալով Փոքր Քափանակի (այժմ՝ Հովիտ, Շիրակի մարզում) ուղղությամբ[36]։ Հաջորդ օրը վերադառնալով՝ իրագործում են ծրագրված զանգվածային կոտորած։ Բնակչության մի մասին կոտորում են գյուղի եկեղեցում[37] եւ բակում, մնացյալին՝ գյուղի տարբեր թաղամասերում գտնվող մեծ շինություններում, ողջակիզում են մարդկանց, խեղդում ջրհորներում[38]։ Հարթագյուղի գնդակոծված պատերով եկեղեցին մինչեւ հիմա կրում է թուրքական բանակի բարբարոսության հետքերը։ Նույն վիճակում է նաեւ Խնկոյանի կիսավեր եկեղեցին։ Ղարաբոյայի (այժմ՝ Խնկոյան, Լոռու մարզում) Սուրբ Աստվածածին եկեղեցում է եղել Շուշանիկ Կուրղինյանը (ծնվ. 1890 թ., Ղարաբոյա), թուրքերը նավթ են լցնում եկեղեցու տանիքին, պատուհաններին ու դռանը, եւ հետո սվինահարում եկեղեցում գտնվողներին։ Նա իր գրկում ունեցել է աղջիկ երեխա։ Սպանդի ժամանակ կինը ծպտվում է երեխայի հետ, բայց նրանք եւս ստանում են սվինի բազմաթիվ հարվածներ, երեխան մահանում է։ Շուշանիկն ութ տեղից սվինահարվելով, արյունաքամ վիճակով, վերցնում է երեխայի դիակը եւ շտապում մոտակա ձորը։ Երեխային իջեցնում է ձորը, հանում է իր կոշիկները, դնում երեխայի գլխի տակ, այնուհետեւ մարմինը ծածկում շորով։ Մի կերպ դուրս գալով ձորից, կարողանում է հեռանալ գյուղից եւ փրկվել[39]։

---

[36] Մ. Ներսիսյան, *Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր*, Երեւան, 2005, էջ 129։ «Ղալթախչի գիւղի կոտորածների մանրամասնութիւնները», «Յառաջ», 1920, թիւ 254, էջ 4։

[37] Եկեղեցին կոչվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 1902 թ., դրանից առաջ՝ 1843–1902 թթ.՝ Սուրբ Ստեփանոս (տես ՀԱԱ ֆ. 47 ց. 6, գ. 162, 164)։ Անհայտ պատճառներով Հարթագյուղի կիսավեր եկեղեցին հիմա կոչվում է Սուրբ Նարեկ։ Փամբակի տարածքի գյուղերում եկեղեցիները առավել հայտնի են որպես «ժամ», շատ դեպքերում բանասացները չեն հիշում անունները։ Եկեղեցիների անունները ճշտվել են չափաբերական մատյանների ուսումնասիրությամբ։ Եկեղեցիներն այժմ խոնարհված վիճակում են։

[38] Վ. Հախոյան, *Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Փամբակի տարածքում (Շիրակի նահանգ) ըստ ականատես-վերապրածների ընտանեկան հիշողությունների (1920–1921 թթ.)*, Ցեղասպանագիտական հանդես 9 (1), 2021, էջ 89։

[39] Բանասաց՝ Ջանիբեկ Մամիկոնի Հարությունյան (ծնվ. 1946 թ., Խնկոյան), ականատեսի թոռը, պատմությունը լսել է տատից։ Դևն, 2020 թ., Վաղարշապատ։

Հայտնի է, որ Աղբուլաղ (այժմ՝ Լուսաղբյուր, Լոռու մարզում) գյուղի գյուղապետը մի քանի մարդկանց հետ «աղ ու հացով» գնացել էր թուրքերին ընդառաջ: Թուրք փաշան դաշույնի հարվածով աղն ու հացը թափել էր գետնին, իսկ գյուղապետին սպանել[40]: Թուրք հրոսակները փաշայի հրամանով ողջ-ողջ խաչում են Աղբուլաղի քահանա տեր Մկրտիչ Մկրտչյանին: Քահանային խաչում են գոմի դռան վրա, ապա նավթ լցնում եւ այրում գոմն ու մարագը, որտեղ նախապես հավաքել էին գյուղի բնակչության մի մասին[41]: 1962 թ. գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում գտնվող տեր Մկրտչի գերեզմանի վերաբացումը փաստում է իրողությունը. նրա գանգի մեջ՝ ճակատի հատվածում, 23 սմ երկարությամբ գամ է մեխված եղել[42]: 1915 թ. Աղբուլաղ գյուղում տեր Մկրտչի կողքին օծվել էր մի նոր քահանա եւս՝ տեր Ղազարոս Հակոբյանը, որ բարեբախտաբար կարողացել էր փրկվել կոտորածից: 1921 թ.՝ թուրքերի հեռանալուց հետո, վերադառնալով գյուղ՝ տեսել էր ընտանիքի անդամների դիերը, գյուղն ավերված եւ եկեղեցին կողոպտված ու պղծված: Թուրքերն այրել էին սրբապատկերներն ու եկեղեցական իրերը, իսկ եկեղեցու պատերին գրել էին պղծության խոսքեր՝ օսմաներեն[43]: Թուրքական ռազմական ղեկավարությունը, լավ գիտակցելով եկեղեցու դերը հայության կյանքում, շատ դեպքերում մարդկանց նպատակային կերպով ուղղորդում էր եկեղեցիներ՝ խոստանալով «պաշտպանություն, օգնություն կամ հաշվառում», ինչը հեշտացնում էր մեծ թվով խաղաղ բնակիչների մեկ վայրում կենտրոնացնելը եւ կոտորելը: Եկեղեցիները փակ տարածքներ էին, հիմնականում ընդարձակ, հեշտ վերահսկվող, տեղակայված էին համայնքի կենտրոնում: Եկեղեցին հայ ժողովրդի համար ուներ ոչ միայն կրոնական, այլեւ ազգային խորհրդանշական արժեք: Քրիստոնեական տաճարները պղծելով, ավերելով, այրելով՝ թուրքերը կոտրում էին նաեւ մարդկանց հոգեբանական դիմադրությունը, նվաստացնում էին համայնքը, ցույց էին տալիս, որ պաշտպանված չեն նույնիսկ սուրբ վայրերում: Այսպիսով՝ եկեղեցիների օգտա-

---

[40] Մ. Խանջադյան, *Իմ հայրենի գյուղը՝ Փամբակի Լուսաղբյուրը*, Երեւան, «Հրազդան», 2000, էջ 178: ՀՅԹի, գիտական ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 38:

[41] Մ. Խանջադյան, նշ. աշխ., էջ 178:

[42] Բանասաց՝ Վոլոդյա Մկրտչյան (ծնվ. 1929 թ., Աղբուլաղ), պատմությունը լսել է հորից, ժամանակակցից՝ Սենիկ Մկրտչյանից (ծնվ. 1905 թ., Աղբուլաղ): ԴԱՆ, 2012 թ., Լոռու մարզ, գ. Լուսաղբյուր:

[43] Մ. Խանջադյան, նշ. աշխ., էջ 69:

գործումը զանգվածային սպանութիւնների համար պատահական չէր, այն պայմանավորված էր գործնական հարմարութիւմբ, հոգեբանական ահաբեկմամբ եւ ազգային ու մշակութային արժեքի ոչնչացման նպատակով։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ թշնամին թիրախավորեց նաեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին։ Պատերազմի ժամանակ հայկական եկեղեցիները ոչ միայն ավերվեցին ու թալանվեցին, այլ նաեւ իրագործվեցին կազմակերպված ու նպատակային սպանութիւններ հայ հոգեւորականների նկատմամբ։ Շատ դեպքերում քահանաները միտումնավոր ընտրվում էին որպես թիրախ։ Հայ հոգեւորականները ենթարկվում էին խոշտանգումների, նվաստացումների եւ սպանութիւնների, որոնք հաճախ կրում էին ծիսական կամ ցուցադրական բնույթ, նպատակ ունենալով բնակիչներին ահաբեկել։ Սրանք ոչ միայն ռազմական բռնութիւնների դրսեւորումներ էին, այլեւ գաղափարական եւ հոգեբանական ճնշման միջոցներ, հայ բնակչութիւնը առաջնորդութիւնից զրկելու եւ համայնքային դիմադրութիւնը կոտրելու նպատակով։ Այս իրադարձութիւնները ծանր հարված հասցրին հայ եկեղեցական ու մշակութային ժառանգութիւնը։ Համատարած բնաջնջմանը զուգահեռ տեղի ունեցավ «մշակութային ցեղասպանութիւն», մասնավորապես Կարսի (Վանանդի) նահանգում։ Ջարդարարները իրականացնում էին մշակութային ժառանգութիւն պղծում, ոչնչացում, կողոպուտ, յուրացում (եկեղեցիների, մատուռների գործառույթի փոփոխում, իսլամացում, թյուրքացում)։ Համայնքների տեղահանութիւն հետեւանքով, տեղի ունեցավ նաեւ ոչ նյութական արժեքների կորուստ։ Գործի դնելով «մշակութային ցեղասպանութիւն» քաղաքականութիւնը քեմալականները շարունակեցին եւ ավարտին հասցրին իրենց նախորդների կիսատ թողած այսօրինակ քաղաքականութիւնը, որն իր մեջ ներառում էր հայկական հետքի իսպառ վերացում հայերի հայրենի արեւմտյան հատվածից։ Այս ամենին զուգահեռ շատ արագ իրականացվում էր հայկական բնակավայրերը մուսուլմաններով բնակեցնելու գործընթացը։ Շիրակի նահանգի եկեղեցիները նույնպես գազանաբարո հարձակումների ենթարկվեցին, ավելին նրանք օգտագործվեցին որպես հայ խաղաղ բնակչութիւն՝ հատկապես կանանց եւ երեխաների հավաքատեղի, ուր վերջիններիս ողջակիզում եւ կոտորում էին։ Հոգեւոր-կրոնական կառույցները իրենց գործառույթը շարունակեցին միայն թուրքերի











Ներկայումս որպես մզկիթ գործող Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցին. Ժ. դ.։ Սուրբ Առաքելոց եկեղեցու արտաքին հարդարանքի քանդակազարդեր (առաքյալների պատկերաքանդակներ, խաչաքանդակներ եւ զարդանախշեր)





Մասամբ ոչնչացված խաչաձանդակ Անիի Մայր տաճարի (989—1001 թթ.) արտաքին հարդարանքում։



Բագրատունյաց զինանշանը Սմբատաշեն պարիսպների վրա, Ավագ դռան մոտ, առանց խաչի պատկերի։



Խաչքար, 1218 թ.։





Անիի պաշտպանական կառույցների վրա կիրառված խաչազարդեր։

հեռանալուց հետո, հանդիպելով նոր փորձությունների, արդեն խորհրդային Հայաստանում: Թուրք-հայկական պատերազմը եւ դրա հետեւանքները հանգեցրին Կարսի նահանգի, Սուրմալուի գավառի եւ այլ տարածքների հայկական հազարամյա ժառանգության լայնածավալ կորստի՝ թե՛ ավերման, թե՛ մշակութային հիշողության խզման առումով:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայ Առաքելական Եկեղեցի, թուրք-հայկական պատերազմ, Կարսի նահանգ, Շիրակի նահանգ, Գևորգ Ե. Սուրենյանց, հայ հոգևորականություն, Սուրբ Առաքելոց եկեղեցի, մշակութային ցեղասպանություն, զանգվածային կոտորածներ, ողջակիզում, թալան, եկեղեցիների պղծում, Հայաստանի Հանրապետություն, քեմալականներ, արխիվային վավերագրեր:

РЕЗЮМЕ

Армянская Апостольская Церковь являлась не только религиозным институтом, но и ключевым центром национальной идентичности и общественной организации. Вследствие этого она стала объектом целенаправленных действий турецкого военно-политического руководства в ходе турецко-армянской войны 1920 г. В статье анализируются системные преступления, совершённые турецкой армией против армянских церковных структур, духовенства и церковного имущества. Они включали массовое разрушение церквей, разграбление монастырских комплексов, а также физическое уничтожение духовенства или его насильственное перемещение. Исследование основано на материалах Национального архива Армении, научных фондов фонда «Музей-институт Геноцида армян», материалах периодической печати того времени, а также на результатах полевых этнографических исследований и анализе специализированной научной литературы.

SUMMARY

The Armenian Apostolic Church was not only a religious institution, but also a key center of national identity and social organization. As a result, it became the target of deliberate actions by the Turkish military and political leadership during the Turkish-Armenian War of 1920. This article analyzes the systematic crimes committed by the Turkish army against Armenian church structures, clergy, and church property. These included the mass destruction of churches, the looting of monastic complexes, as well as the physical extermination of the clergy or their forced displacement. The study is based on materials from the National Archives of Armenia, the research collections of the Armenian Genocide Museum-Institute, periodicals of the time, as well as the results of field ethnographic research and an analysis of specialized academic literature.

Doi: 10.56 737/2953-7843-2026.01-96

ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԷՋԵՐՈՒՄ 1944–1999 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ[1]

ՄՈՒՏՔ

Հայ պարբերական մամուլը՝ հատկապես ամսագրերը, անկախ ուղղվածութիւնից եւ պատկանելութիւնից, Հայոց ցեղասպանութեան թեման իրենց ուշադրութեան կենտրոնում են պահել: Կան բուն թեմային նվիրված մասնագիտական հանդեսներ, կան բազմաթիվ հայագիտական ամսագրեր, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են թեմային: Սակայն, այս առումով Մայր Աթոռի պաշտոնաթերթ «էջմիածին» ամսագիրն առանձնահատուկ դերակատարութիւն ունի:

Իհարկե այն հավատարմորեն շարունակեց եւ մեկ այլ՝ ավելի բարձր գիտա-կազմակերպչական մակարդակի հասցրեց թեմայի վերաբերյալ իր նախորդ՝ «Արարատ»-ի[2] ավանդույթները: Միաժամանակ պետք է նկատի ունենանք, որ ամսագիրը լինելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտոնական խոսնակը, հասկանալիորեն ծավալի որոշակի մեծ հատվածը պարտավոր է տրամադրել զուտ կրոնա-եկեղեցական թեմաների:

Այդուհանդերձ՝ ինչպես «Արարատ»-ը, «էջմիածին» ամսագիրը նույնպես իր էջերն է տրամադրում Հայոց ցեղասպանութեան եւ Հայկական հարցի վերաբերյալ տարաբնույթ նյութերին, դրանով իսկ վկայելով, որ կարեւորագույն նշանակութեան այս թեման Մայր Աթոռի սրտացավ ուշադրութեան եւ հոգատարութեան կենտրոնում է, եւ ապացուցելով, որ ցեղասպանութեան գողգոթան ու Հայկական հարցի քաղաքական ճակատագիրը հոգեհարազատ է ամբողջական պատասխանատվութեամբ:

---

[1]* *Ստացվել է՝ 20.12.2025, գրախոսվել է՝ 13.01.2026:* avag.harutyunyan@yandex.com:

[2] *Տե՛ս* Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Հայոց ցեղասպանությունն ու Հայկական հարցը «Արարատ» ամսագրի էջերում, «էջմիածին», 2018, թ. 12, էջ 88–97:*

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄՈՌԱՑՈՒՄԻՑ ԴԵՊԻ ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Մինչ 1944 թ. ամսագրի հրատարակության վերսկսման շրջանը, դեռեւս 1920 թ. հրատարակված «Էջմիածին» շաբաթաթերթի էջերում թեպետ սակաւ, սակայն նույնպես կան թեմայի վերաբերյալ հրապարակումներ: Առաջին հերթին դրանք վերաբերում են 1920 թ. թուրքական նոր ագրեսիայի եւ արեւելահայությանն սպառնացող նոր ցեղասպանության դեմ պայքարի Գեւորգ Ե.-ի կոչերն[3] եւ համանման նյութերն էին[4], գրախոսականները[5]:

Գեւորգ արք. Չորեքչյանը «Էջմիածին» ամսագրի առաջին իսկ համարում հատակ հռչակեց իր դիրքորոշումը. «Հայրապետական ամսագիրը հանդիսանում է այն միջոցը, որը պետք է համախմբի սփյուռքի հայերին իրենց սրբազան Հայրենիքի շուրջը»[6]:

1945 թ. Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո ԽՍՀՄ-ը Թուրքիայի հանդեպ հողային-տարածքային պահանջներ ներկայացրեց: Ըստ այդմ՝ Մայր Աթոռը եւ նրա Գահակալը նույնպես իրենց բողոքի ու պահանջի ձայնը բարձրացրին:

Արդեն 1945 թ. նոյեմբերի 27-ին Գեւորգ Զ. հատուկ ուղերձով դիմեց ԽՍՀՄ, ԱՄՆ եւ Մեծ Բրիտանիայի ղեկավարներ Ի. Վ. Ստալինին, Հ. Ս. Տրումենին, Կ. Ռ. Էտլիին: Թեպետ ընդհանուր գծերով, սակայն պատմականորեն հիմնավոր եւ քաղաքականապես իմաստուն դրույթներով Վեհափառ Հայրապետը ներկայացրեց միջազգային դիվանագիտական ասպարեզում Հայկական հարցի անցած ուղին, հիմնական շեշտադրումները կատարեց ցեղասպանության եւ հողային պահանջատիրության թեմային. «Սուլթան Աբդուլ Համիդը օգտվելով եւրոպական մեծ պետությունների հակամարտությունից եւ շահամոլությունից, փոխանակ իրագործելու իր հանձն առած բարենորոգումները, սկսեց պարբերաբար գործադրել իր դիվական ծրագիրը՝ ոչնչացնել հայերին, համարելով այն Հայկական հար-

---

[3] *Տե՛ս* Գէորգ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց, *Հայաստանի Հանրապետութեան եւ օտար երկրների սահմանում ապրող համայն հայութեան, 1920, թ. 11, էջ 161–163: Կոչ համայն հայության, 1920, թ. 12, էջ 177–180:*

[4] *Տե՛ս* Արսէն Ծ. Վրդ. Ղւկասեան, *Հայրենիքը վտանգուած, 1920, թ. 12, էջ 183–184:* Գաբրիէլ եպս. Յովսէփեանց, *Մեր թշնամիները, 1920, թ. 12, էջ 181–183:* Ղարաբաղի եւ Բագուի հայերի վիճակը, *1920, թ. 11, էջ 170–172:*

[5] *Տե՛ս* Հ. Աճէմեան, *Յուշարձան Ապրիլ տասնմեկի, 1920, թ. 6, էջ 92–93:* Գիւտ Ծ. Վրդ., *Փաստեր եւ խոհեր Հայկական հարցի մասին, 1920, թ. 7, էջ 103–107:*

[6] *Տե՛ս* Գէորգ Արքեպս., *Հայ եկեղեցու պարտքը ժողովրդի հանդեպ, 1944, թ. 1, էջ 3:*

ցը ջնջելու լավագույն միջոցը: Սուլթանին հաջորդող ռեժիմները՝ Իթթիհատը, Թալեաթ եւ Էնվեր փաշաները եւ քեմալական նոր Թյուրքիան Համիդի այդ «քաղաքական իմաստությունը» հասցրին իր գագաթնակետին, Առաջին իմպերիալիստական պատերազմի նախօրյակին Թյուրքիայում ապրող 2 500 000 հայերից այսօր Թյուրքիայում կան մոտավորապես 100 000 հայեր, որոնք քաշ են տալիս իրենց ողբալի գոյությունը «դեմոկրատիկ» Թյուրքիայում: Ավելի քան մի միլիոն հայեր ոչնչացան զարհուրելի կոտորածների մեջ: Թյուրքերը Բալկանյան ազատագրված ժողովուրդների դեմ ունեցած վրեժը անպաշտպան հայերից հանեցին: Մենք խնդրում ենք առնել Թյուրքիայի ձեռքից այդ բռնագրավված եւ այժմ համարյա ամայացած հողերը եւ վերադարձնել իրենց իսկական տերերին ու միացնել Սովետական Հայաստանին, որով նոքա հնարավորություն կունենան խաղաղ ապրելու իրենց եղբայրակիցների կողքին, աշխատելու եւ իրենց ազգային մշակույթը զարգացնելու: Սա կլինի արդար գնահատականը այն հսկայական զոհաբերությունների եւ անձնազոհության, որ հայ ժողովուրդը բերեց հանուն միավորյալ դեմոկրատիկ պետությունների գործին, հանուն դեմոկրատիայի հաղթանակի: Միակ ելքն է Թյուրքա-Հայաստանի ազատագրումը եւ կցումը Սովետական Հայաստանին»[7]:

Ուշագրավ է, որ կարեւորելով ու արժեւորելով Վեհափառի այս պատմական նշանակության ուղերձը, այն հրատարակվեց առանձին գրքույկով[8] ու գնահատվեց հատուկ մամուլի ասուլիսում[9]:

Հայոց պահանջատիրության թեմային էին նվիրված ամսագրում հրապարակված բազմաթիվ նյութերը «Գաղութահայ կյանք» խորագրի ներքո[10]:

Հողային պահանջատիրությունից զատ եւ զուգահեռ վերսկսվեց նաեւ հայրենադարձությունը, ինչին նույնպես Մայր Աթոռը զորավիգ եղավ: Դրա կարեւորությունը շեշտադրեց Գեւորգ Զ. Զորեքչյանը. «Հայաստա-

---

[7] Տե՛ս Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Զ. դիմումը երեք տերությունների ղեկավարներին, 1945, թ. 11–12, էջ 8–10:

[8] Տե՛ս Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գեւորգ Զ. դիմումը երեք մեծ տերությունների ղեկավարներ Ի. Վ. Ստալինին, Հ. Ս. Տրումենին, Կ. Ռ. Էտլիին: Ե., 1945:

[9] Տե՛ս Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գեւորգ Զ.-ի մոտ մամլո-կոնֆերանսում, 1945, թ. 11–12, էջ 11:

[10] Տե՛ս Գաղութահայ կյանք, 1946, թ. 2–3, էջ 79–83: Տե՛ս «Պահանջներ ԱՄՆ-ում հայկական հողերը Սովետական Հայաստանին վերադարձնելու մասին», «Հայերի իրավունքները պաշտպանող ամերիկյան կոմիտե»-ի նախագահի հայտարարությունը», «Տիրան եպիսկոպոս Ներսոյանի դիմումները»:

նի կառավարությունը, ժողովուրդը եւ Հայ Եկեղեցու կենտրոն էջմիածինը ներկայումս պատրաստվում են դիմավորելու Հայրենիք՝ Սովետական Հայաստան դարձող հայերին: Ամենայն Հայոց կաթողիկոսը չէր կարող անտեսել ու չպաշտպանել արտասահմանյան հայերի արդարացի ու տեղին պահանջները: Հայկական նահանգների բռնագրավումը եւ այդ նահանգներում հայ ազգաբնակչության ոչնչացումը Թյուրքիայի կողմից ավելի քան անարդարացի է: Որպեսզի ընդ միշտ եւ վերջնականապես արմատախիլ արվի այդ անարդարությունը, պետք է հայկական նահանգները միացվեն Սովետական Հայաստանին»[11]:

Օրինաչափ է, որ այնպիսի մի կարեւորագույն հայրենասիրական ծրագիր, ինչպիսին հայրենադարձությունն էր՝ պետք է նույնպես ամսագրի խմբագրության ուշադրության կենտրոնում լիներ: Այդ պարագայի վկայությունն են բազմաթիվ խմբագրականները[12]:

Իհարկե, ցեղասպանության եւ պահանջատիրության համատեքստում բողոքի ձայն բարձրացրեց «Էջմիածին» ամսագիրը՝ անդրադառնալով հատուկ խմբագրականով. «Ծանր, մղձավանջային օրեր ստեղծվեցին Առաջին համաշխարհային պատերազմի օրերին հայ ժողովրդի համար: Ոչ միայն Թյուրքահայաստանն ամայացավ, այլ եւ Ռուսահայաստանը ենթարկվեց թյուրք վանդալների ասպատակության, որոնք ավերի ու ոչնչացման մատնեցին բազմաթիվ շեն գյուղեր ու քաղաքներ: Մի ամբողջ ժողովուրդ ենթարկվեց սիստեմատիկորեն կազմակերպված տարագրման, ջարդի ու ֆիզիկական ոչնչացման: Թյուրքերն ամենավայրագ մեթոդներով ձեռնամուխ եղան հայ ժողովրդի գլխովին բնաջնջմանը: Ոչնչացվում էր հայ ժողովուրդը ոչ միայն ֆիզիկապես, այլեւ ոչնչացվում էին նաեւ նրա դարերի բովից անցած բարձրարժեք մշակույթի մնացորդները եւ հայկական ինքնատիպ ճարտարապետության հոյակապ կոթողները: Թյուրքերը նպատակ էին դրել հայերին ֆիզիկապես ոչնչացնելու հետ միասին ոչնչացնել նաեւ նրա կուլտուրական արժեքները: Սակայն թէ՛ մեկը եւ թէ՛ մյուսը նրանց լրիվ չհաջողվեց»[13]:

---

[11] Տե՛ս Ամենայն հայոց կաթողիկոս Գեւորգ Ջ.-ի զրույցը ՏԱՍՍ-ի թղթակցի հետ, 1946, թ. 4–5, էջ 18:

[12] Տե՛ս Ամենուրեք հնչում է կանչը ներգաղթի, 1946, թ. 2, էջ 15–23: Հայրենի հողի վրա, 1946, թ. 6–7, էջ 59–74: Ամեն ինչ հայրենիքի ու ներգաղթի համար, 1947, թ. 3–4, էջ 9–11: Ներգաղթը եւ մեր թեմական առաջնորդները, 1947, թ. 3–4, էջ 16–20: Հայրենադարձության ուղիով, 1948, թ. 5–6, էջ 40:

[13] Տե՛ս Հանուն հայ մշակույթի զարգացման, 1946, թ. 4–5, էջ 11–12:

Վերոնշյալի առումով բնութագրական է, որ ամսագիրը սփյուռքահայ մամուլից պարբերաբար ցեղասպանությանն ու հողային պահանջներին նվիրված նյութեր էր արտատպում[14]։

Վերջապես, հատկանշական կարեւորություն ունեցավ 1947 թ. ապրիլի 15-ին Գեւորգ Զ. Վեհափառի կոնդակը Նյու Յորքում գումարված Համաշխարհային հայկական կոնգրեսին. «Ազգային սուրբ Դատի բազմադարյան հավատարիմ պաշտպան Մայր Աթոռը, ունկնդիր Սփյուռքի տարագիր մեր զավակների արդար պահանջի, անդրդվելի կանգնած է իր կոչման ու պարտքի կատարման պատասխանատու դիրքերում։ Սակայն նեղ են մեր ազատ Հայրենիքի նվիրական սահմանները, Հայրենիքի հարազատ հողերը տակավին գտնվում են օտարի տիրապետության ու բռնադատության ներքո։ Մեր Դատը քաղաքական ողորմածության եւ ողորմության հարց չէ։ Սերունդներ շարունակ բոլոր երկրների մարդասեր ու արդարամիտ ժողովուրդները, ազնիվ մտավորականները, ազատախոհ քաղաքագետները, կրոնի ճշմարիտ ղեկավարները պաշտպանել են մեր իրավունքների արդարությունը։ 90-ական թվականների հայկական ջարդերը, 1916–1918 թթ. կոտորածները, 1920–1921 թթ. նորանոր ջարդերն ու կոտորածները չեն ջնջվել եւ չեն ջնջվի երբեք ոչ միայն հայ ժողովրդի հոգում, այլ եւ ողջ արդարամիտ ու ողջախոհ քաղաքակիրթ աշխարհի հիշողությունից։ Միլիոնավոր անմեղներ են զոհաբերվել ու նահատակվել ոչ միայն Աբդյուլ Համիդի ու էնվեր փաշաների, այլ եւ Նուրի փաշաների ու Քազիմ Կարաբեքիրների ղեկավարությամբ։ Մեծ է եղել հայ ժողովրդի մարտիրոսագրությունն ու հերոսական պայքարը ընդդեմ գերմանա-տաճկական վայրագ բռնապետության։ Մեր պայքարը հանուն իրավունքի եւ արդարության շատ թանկ արժեց Հայ ժողովրդին. Թուրքիան հարյուր հազարների նոր կոտորածներով վրեժ լուծեց իր անհաջողության համար։ Անիրավ կլինի, քաղաքական ինչ-ինչ անարդար ու միտումնավոր նպատակներով մերժել մեր սիրեցյալ Հայրենիքից վտարանդյալ Հայի արդար պահանջը վերադառնալու իր Հայրենիքը, վերաժիրելու անագորույն բռնությամբ Թուրքիայի կողմից բռնագրավված հայրենի հողամասերը եւ միացնելու այն Ազգային-Անկախ Սովետական Հայաստանին։ Մենք, որպես պատմական

---

[14] Տե՛ս Անրի Վերնոյ, Հայերը եւ իրենց պահանջները, 1946, թ. 4–5, էջ 54–58։ Կարսն ու Արտահանը Հայաստանին կպատկանին, 1946, թ. 4–5, էջ 59։ Ամերիկահայերի միտինգը Նյու Յորքում, 1946, թ. 4–5, էջ 73–75։ Հայ գաղթականների դիմումը Միավորված ազգերի կազմակերպությանը, 1946, թ. 6–7, էջ 88։

ավանդապահն ազգային իրավանց եւ Գերագույն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մեր սրբազնագույն պարտքն ենք համարում արձագանքել բովանդակ հայ ժողովրդի արդար պահանջին եւ պաշտպան կանգնել հարյուր հազարների անմեղ արյամբ ու հերոսական մահով սրբագործված մեր նվիրական Դատին»[15]: Գեւորգ Զ. Վեհափառի կոնդակի գաղափարական տեսլականը շարունակվեց խմբագրականներով[16]:

1953 թ., սառը պատերազմի հակամարտության սրման հետեւանքով, ԽՍՀՄ-ը պաշտոնապես հրաժարվեց Թուրքիայի նկատմամբ հողային պահանջներից, եւ Հայոց ցեղասպանության թեման կրկին արգելվեց: Սակայն, ի տարբերություն պետական-պաշտոնական շրջանակների դրսեւորած քար լռության, Վեհափառ Հայրապետի ու Մայր Աթոռի հովանավորությամբ «Էջմիածին» ամսագիրն եղավ այն եզակի հրապարակային եւ համազգային հարթակը, որտեղ թեպետ հատուկենտ, բայց եւ այնպես եղան պատշաճ հիշատակումներ եւ գնահատումներ:

Այսպես՝ Ցեղասպանության 40-րդ տարելիցի առթիվ ամսագիրը հանդես եկավ խմբագրականով. «Արեւմտահայությունը ապրեց իր արյունոտ golgotha-ն: Թյուրքական սուլթանական բռնակալությունը փոքր ազգերի ոչնչացման քաղաքականություն էր վարում: Թյուրքիայում հայ ժողովուրդը հայակեր քաղաքականության զոհը դարձավ: Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա 1915 թ. ապրիլյան Մեծ եղեռնը: Հայ հոգեւորականությունն էլ ապրեցավ իր golgotha-ն, հովվի արյունը խառնվեց հոտի արյան հետ: Պատմությունը սակայն մեր ժողովրդի ճակատին գրել էր ոչ թե մեռնել, այլ ապրել ու բարձրանալ»[17]:

Տվյալ ժամանակ, հասկանալիորեն, դեռեւս զանգվածային հանդիսությունները բացառվում էին: Բայց եւ այնպես, միակ, թեկուզ փոքրաթիվ ու տեղային միջոցառումը կրկին կազմակերպվեց Մայր Աթոռում: 1955 թ. ապրիլի 24-ին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ուսանողները նշեցին «հայ մարտիրոսագրության սգառիթ թվականը՝ Ապրիլի 24-ը», բանախոսեց վերատեսուչ Մարտիրոս Տեր-Ստեփանյանը[18]:

---

[15] Տե՛ս Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Զ.-ի կոնդակը Նյու Յորքի համազգային կոնգրեսին, 1947, թ. 3–4, էջ 3–7:

[16] Տե՛ս Պաշտոնական կոչ Համաշխարհային հայկական կոնգրեսի, 1947, թ. 3–4, էջ 12–13: Համաշխարհային հայկական կոնգրեսը, 1947, թ. 9–10, էջ 64–69:

[17] Տե՛ս Խմբագրական, Ապրիլյան եղեռն (Հայկական եղեռնի 40-ամյա տխուր տարելիցի առիթով), 1955, թ. 4, էջ 6–8:

[18] Տե՛ս Նահատակաց օրը – Ապրիլի 24-ը, 1955, 4, էջ 47–48: Կա լուսանկար. «Հոգեւոր ճեմարանի մի խումբ ուսանողներ իրենց վերատեսուչի հետ Կոմիտասի շիրմի մոտ»:

Հետագայում ամսագիրը կրկին շեշտադրեց Ցեղասպանության զոհերի ոգեկոչման թեման. «Հայ ժողովրդի գլխին պայթած Ապրիլյան եղեռնը գրեթե իր նմանը չունի բարբարոսությունների տարեգրության մեջ»[19]։

Թեմային սերտորեն առնչվում էր Կոմիտասի կերպարի գնահատում-արժեւորումը, ինչը նույնպես նշյալ ժամանակաշրջանում եզակի երեւույթ էր[20]։

1965 ԹՎԱԿԱՆ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի[21] հետ կապված՝ առանձնահատուկ վերլուծենք ամսագրի հրապարակումները։

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը 1964 թ. օգոստոսի 17-ին «Ապրիլյան Մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ» հրապարակեց ծրագրային բնույթի կոնդակ։ Վազգեն Ա. խորապես համոզված փաստում էր, որ. «Հայոց նահատակութիւնը վերջնապէս պսակուած է յաղթութեան բրաբիոնով ու նոր կեանքի լուսաբացով եւ վերածնած է մեր հինաւուրց երկիրը Հայաստան, իբրեւ ազգային պետութիւն։ Հայ ժողովուրդի զաւակները, որ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, այսօր, Մեծ եղեռնէն յիսուն տարի յետոյ, երկիւղածութեամբ կխոնարհին բիւրաւոր նահատակներու անյայտ գերեզմաններուն առջեւ ու կաղօթեն անոնց անմահ հոգիներու խաղաղութեան եւ երանութեան համար։ Եւ կվերանորոգեն իրենց ուխտը՝ սուրբ պահելու անոնց նուիրական յիշատակը ու մնալու հաւատարիմ անոնց լոյս հաւատքին, անոնց հերոսական ոգիին, հայոց ազգը մէկտեղուած եւ հայոց ամբողջ երկիրը փրկուած տեսնելու անոնց պայծառ երազին»[22]։

Կոնդակով տրվեցին հատակ հրահանգներ. «ա) յառաջիկայ 1965 տարին հռչակուի մեր Եկեղեցիին եւ համայն մեր ժողովուրդին համար ազգային սուգի եւ աղօթքի տարի, բ) Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ, ապրիլ 24-ին տեղի ունենան կրօնական յատուկ արարողութիւններ

---

[19] *Տե՛ս Մեր նահատակները, 1959, թ. 4, էջ 10–11։*

[20] *Տե՛ս Խմբագրական, Կոմիտաս վարդապետ, 1959, թ. 6, էջ 3–5։*

[21] *Մանրամասն տե՛ս Հայոց ցեղասպանության 50-ամյակը եւ Խորհրդային Հայաստանը (փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու)։ Կազմ. եւ խմբ. Ավագ Հարությունյան։ Ե., 2005։* Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը եւ երկրորդ հանրապետությունը։ Ե., 2015։*

[22] *Տե՛ս «Էջմիածին», 1964, թ. 8–9, էջ 3–5։*

եւ հոգեհանգստեան պաշտօններ, աղօթելու համար մեր բիւրաւոր նահատակներու հոգւոց խաղաղութեան եւ լուսաւորման համար, գ) Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ այսուհետեւ պիտի մատուցուի յատուկ սուրբ պատարագ ամէն տարի ապրիլ 24-ին, դ) բոլոր հայ եկեղեցական համայնքներուն եւ գաղութներուն մէջ, Հայ Եկեղեցւոյ հովանիին ներքեւ, անխտիր բոլոր հայկական միութեանց համերաշխ գործակցութեամբ, կազմակերպուին համազգային յուշի եւ յարգանքի հանդիսաւոր հաւաքոյթներ, դասախօսութիւններ, գրական նիստեր հայ եւ այլազգի հասարակութեանց համար, նուիրած Ապրիլեան եղեռնին, ե) հայ եկեղեցական իշխանութիւնները, ազգային-հասարակական կազմակերպութիւնները, պատմագիտական-գրական-մշակութային հիմնարկները եւ հայ մամուլը իրենց սեպուհ պարտքը համարեն խօսքով ու գործով ոգեկոչելու նուիրական յիշատակը Մեծ եղեռնի տարիներուն մարտիրոսացած հայ ժողովուրդին, հայ հոգեւորականներուն եւ գրական հասարակական մեծանուն գործիչներուն, հրապարակելով հայ եւ այլազգի հեղինակներու պատմական վկայութիւնները, վաւերաթուղթերը, ուսումնասիրութիւնները, յուշերը եւ գրական-գեղարուեստական գործերը»[23]։

Ուշագրաւ է, որ Հայոց ցեղասպանութեան միջազգային հնչեղութեան եւ ճանաչման սկզբնաւորումն էլ դրեց հենց Վազգէն Ա., թեկուզ՝ միջեկեղեցական ոլորտում։ Այսպես՝ 1964 թ. սեպտեմբերի 24-ին նա նամակներ հղեց Հռոմի Պողոս Զ. պապին, Մոսկվայի եւ Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսիին, Քենթրբերիի Արքեպիսկոպոս եւ Համայն Անգլիայի Միտրոպոլիտ Մայքլ Ռեմզիին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար Վիսսեր դ'Հուֆտին։ Այդտեղ փաստելով, որ «Նորագոյն պատմութեան մէջ առաջին ցեղասպանութեան մեծ ոճիրն էր, որ կատարվեց։ Նահատակված հայ ժողովրդի միակ մեղքն էր, որ նա կամեցել էր այս աշխարհի վրա ապրել իբրեւ քրիստոնյա եւ ազատ ազգութիւն, խորհելով, թե առաջնորդված քրիստոնեական գութի եւ արդարութեան զգացումից», հորդորում էր նրանց ապրիլի 24-ին իրենց «աղոթքները միացնել մեր աղոթքներին՝ երկու միլիոն նահատակ քրիստոնյա հայերի հոգիների խաղաղութեան համար»[24]։ Նոյն հասցեատերերին Վազգէն

---

[23] *Տե՛ս «Էջմիածին», 1964, թ. 8–9, էջ 3–5։*

[24] *Տե՛ս «Էջմիածին», 1964, թ. 11, էջ 8–9։ ՀԱԱ, ֆ. 823, ց. 7, գ. 73։ Պատասխանները տե՛ս 1965, թ. 1, էջ 23–24։*

Ա.-ն 1965 թ. մայիսի 4-ին տեղեկացրեց Ցեղասպանության 50-ամյակի ոգեկոչման մասին[25]։

Առաջ անցնելով նշենք, որ միջազգային հարթակներում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը սկզբնավորվեց Հելսինկիում խաղաղության համաշխարհային համաժողովում, որտեղ ծանրակշիռ ելույթով հանդես եկավ Վազգեն Ա.-ն։ Եւ նաեւ նրա ներկայության շնորհիվ համաժողովն ընդունեց հատուկ բանաձեւ. «Այս տարի 50-ամյակն է Օսմանյան Թուրքիայի կողմից գործադրված հայկական կոտորածների, ազգային հարցը մի ժողովրդի բնաջնջումով լուծելու նպատակով։ Ցեղասպանությունը խլեց կյանքը ավելի քան մեկ ու կես միլիոն ազատասեր հայերի, այսինքն՝ հայ ժողովրդի երկու երրորդի»[26]։

1965 թ. Ս. Ծննդյան տոնի քարոզում Վազգեն Ա. Վեհափառը, անդրադառնալով Ցեղասպանությանը, պատգամեց. «Մեր եկեղեցին այս ամբողջ տարին պիտի նվիրե անոնց սուրբ հիշատակին։ Անցյալի մեջ թեեւ մեր ժողովուրդի կյանքի բաժինը եղավ գուցե ամենատառապալիցը եւ զարհուրելին, այդ իսկ պատճառով, մենք՝ բոլոր հայերս, Քրիստոս ամուր պահած մեր սրտերուն մեջ, պիտի աղոթենք ու պիտի գործենք այն աննահանջ հավատքով, թե պիտի հաղթեն, պիտի փառավորվին վերջապես արդարությունն ու խաղաղությունը մեր տառապած երկրագնդի վրա, որպեսզի այլեւս աշխարհի մեջ ոչ մեկ տեղ չկրկնվին ապրիլ 24-ներ ու ցեղասպան ոճիրներ։ Այս հավատքով ու այս տեսիլքով, ամբողջ տարի մը, ծունկի եկած Միածնաէջ մեր Ս. Սեղանի առաջ, Մենք պիտի աղոթենք մեր ժողովուրդի մոտ երկու միլիոն անմեղ զոհերու հոգիներուն համար եւ անոնց հիշատակը պիտի հավերժացնենք Հայոց քրիստոսատես այս Մայր Հողին վրա, մեր Մայր Տաճարի կողքին կանգնեցնելով արձան մը անմոռաց հուշի եւ սրբազան ուխտի»[27]։

1965 թ. փետրվարի 4-ին Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը Վազգեն Ա.-ն ոգեկոչման խոսք ասաց Զորավար Անդրանիկի գերեզմանին[28]։

---

[25] Տես «Էջմիածին», 1965, թ. 5–6-7, էջ 24։

[26] Տես Խաղաղության, ազգային անկախության եւ ընդհանուր զինաթափման համաշխարհային համաժողով Հելսինկիում, 1965, թ. 8–9, էջ 66–71։

[27] Տես Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ եւ քարոզ Մայր Տաճարում Փրկչի հրաշափառ ծննդյան տոնի առթիվ, 1965, թ. 1, էջ 20–22։

[28] Տես Ամենայն Հայոց Հայրապետի խոսքը հայ ժողովրդի հերոս Զորավար Անդրանիկի գերեզմանի վրա ծննդյան հարյուրամյակի առթիվ, 1965, թ. 5–6-7, էջ 85։ Կան լուսանկարներ։

Իսկ արդեն 1965 թ. ապրիլի 24-ին Եղեռնի 50-րդ տարելիցի կապակցութիւնամբ հազարաւոր ուխտաւորների ներկայութիւնամբ, Մայր Աթոռում հանդիսութիւններ տեղի ունեցան։ Վազգեն Ա.-ն պատարագ մատուցեց, կատարվեց հոգեհանգիստ «Հայ ժողովրդի հավաքական մարտիրոսագրութեան հիսունամեակին նվիրված», ապա Մայր Տաճարի հիւսիսային կողմում տեղի ունեցավ հուշարձանի հիմնարկեքի օրհնութիւն[29], որի կառուցումը պետք է ավարտվեր 1965 թ. հոկտեմբերին[30]։ Երեկոյան Վազգեն Ա.-ն շքախմբով ներկա եղավ Օպերայի եւ բալետի թատրոնում հանդիսավոր նիստին։ Ապրիլի 25-ին Մայր Տաճարում հանդիսավոր պատարագ մատուցվեց, ապա գումարվեց հուշի նիստ։

Հանդիսութեանը ներկա էին Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքեանը, Մ. Սարեանը, Կ. Մելիք-Օհանջանեանը, Ա. Առաքելեանը, Կ. Զարեանը, Լ. Խաչիկեանը, Ա. Աբրահամեանը, Վ. Հարութիւնեանը, Ռ. Իսրայելեանը, Պ. Սեւակը, Գ. Էմինը։ Հետաքրքիր է, որ Մայր Աթոռի խոսնակի տեղեկատվութիւնն ավարտվում էր զուտ քաղաքական գնահատականով. «Այդ ծանր օրերին, արեւմտեան աշխարհը քար դրավ իր խղճի եւ սրտի վրա։ Մեզ բարեկամութեան ձեռք մեկնեց ռուս մեծ ժողովուրդը, բուժեց մեր վերքերը բարի սամարացու նման։ Հայ ժողովուրդը իր կեանքը, ապագան ընդմիշտ կապեց ռուս ժողովրդի հետ։ Կատարվեց մեր մեծ նահատակների իղձը, երազը։ Հայ ժողովուրդը տիրացավ իր հողին, ազատութեանը, ստեղծեց հայրենիք, պետականութիւն, ապահով եւ խաղաղ կեանք»[31]։

1965 թ. ապրիլեան բացառիկում հրապարակվել էր Վեհափառի «Խօսք աղօթքի եւ ուխտի» պատգամը, որտեղ հատկապես շեշտվում էր հետեւյալը. «Այսօր, 24 Ապրիլ 1965, մեր պատմութեան Մեծագոյն եղեռնի օրերէն չիսուն տարի յետոյ, կանք ահա այստեղ ... նուիրուած չիշատակին առջեւ մօտ երկու միլիոն մեր նահատակներուն, որոնք զոհուեցան վասն Յիսու-

---

[29] *Կան լուսանկարներ. «Վազգեն Ա. օրհնում է Մայր Աթոռում կառուցվելիք նահատակաց հուշարձանի հիմնաքարը», «Հուշարձանի հիմնարկեքի օրհնութիւնից հետո «Էջմիածին»-ի խմբագիր Ա. Հատիտյանը ոգեկոչում է նահատակաց հուշարձանը»։ Տե՛ս 1965, թ. 5–6-7, էջ 108–109։*

[30] *Հուշարձանը բացվել է 1965 թ. հոկտեմբերի 3-ին։ Տե՛ս Հանդիսութիւններ Մայր Աթոռում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալութեան 10-րդ տարեդարձի առթիվ, 1965, թ. 11–12, էջ 44–48։ Կան լուսանկարներ. «Հոգեհանգիստ հուշարձանի մոտ», «Եղիշե պատրիարքն օրհնում է հուշարձանը», «Վազգեն Ա.-ի ուխտի եւ աղոթքի խոսքը բացմանը»։* Ռ. Իսրայելեան, *Մեծ եղեռնի հուշարձանի իմ մտահղացումը, 1965, թ. 11–12, էջ 82–83։*

[31] *Տե՛ս «Էջմիածին», 1965, թ. 5–6-7, էջ 106–113։*

սի, վասն Հայրենեաց։ *Արեւմտեան Հայաստանի երկնքի տակ, 1915-ին, ամբողջ ժողովուրդ մը բնաջինջ եղաւ սեւ ձեռքերով սուլթանական Թուրքիոյ կառավարութեան։ Մարդկային պատմութեան ամենագարհուրելի ոճիրներէն մին, առաջին ցեղասպանութիւնը քսաներորդ դարուն»*[32]։

«Ապրիլեան Մեծ եղեռնի հիսնամեակի առթիվ» եւ «Եղեռն ու վերածնունդ» զույգ խմբագրականներով թեմային հատուկ անդրադարձավ Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնաթերթը[33]։ *Պատկերացում կազմելու համար՝ ուղղակի բնութագրիչ մեջբերումներ կատարենք. «Այդ անլուր ոճիրը իր նմանը չուներ բարբարոսութիւնների եւ ցեղասպանութիւնների ողջ տարեգրութեանց մեջ։ Մեր վերածնված հայրենիքի եւ նրա հերոսական ժողովրդի հետ են նաեւ ապրիլեան եղեռնից մազապուրծ ազատված բեկորները արեւմտահայութեան։ Վերջնական հաղթանակն ու արդարութիւնը կլինեն մեր նահատակների կողմը։ Այդ է հայ ժողովրդի խորունկ հավատը»*[34]։ *«Հայ ժողովուրդը իր բախտը, փրկութեան հույսը ընդմիշտ կապում է ռուս ժողովրդի հետ, որը նրան ոտքի է կանգնեցնում, բուժում նրա վերքերը։ Հայաստանը դարձել է լույսի հայրենիք, հույսի հայրենիք, նոր ու հզոր Սովետական Հայաստան»*[35]։

Մինչ այդ, դեռեւս հունվարին, խմբագրությունը կարեւորել էր ոգեկոչման միջոցառումների կազմակերպման գործընթացը. «Վեհափառ Հայրապետի անմիջական ղեկավարության տակ, Մայր Աթոռում նախապատրաստական աշխատանքներ են կատարվում հայ տառապանքի եւ մեր հավաքական նահատակության 50-ամյակը ըստ արժանվույն նշելու համար»[36]։

1965 թ. ապրիլի 24-ին օպերայի եւ բալետի թատրոնում տեղի ունեցավ «1915 թվականի եւ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված երեւան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողով», որին ներկա էր ՀԽՍՀ ողջ կուսակցական-պետական ղեկավարությունը, Վազգեն Ա. կաթողիկոսը[37]։ *Թատրոնի դահլիճում տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ մեջբերենք ՀԿԿ կենտկոմին 1965 թ. ապրիլի 26-ին հղած ականա-*

---

[32] *Տե՛ս «Էջմիածին», 1965, թ. 2–4։ Ուշագրավ է, որ պատգամը հրապարակվել էր միայն ձեռագիր տեսքով։ Կից հրապարակվել էր Վարդգես Սուրենյանցի «Ոտնահարված սրբություն» կտավի լուսանկարը։*

[33] *Տե՛ս «Էջմիածին», 1964, թ. 11, էջ 3–5, 1965, թ. 2–4, էջ 3–5։*

[34] *Տե՛ս «Էջմիածին», 1964, թ. 11, էջ 3–5։*

[35] *Տե՛ս «Էջմիածին», 1965, թ. 2–4, էջ 3–5։*

[36] *Տե՛ս Խմբագրական, «Բա՛ց մեզ, Տէ՛ր, զդուռն ողորմութեան», 1965, թ. 1, էջ 3–4։*

[37] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 25։*

տես գրող Մկրտիչ Արմենի զեկուցագրից մեկ հատված. «Այն, ինչ որ պիտի աներ մեր կառավարության կամ կուսակցության զեկավարներից որեւէ մեկը, այսինքն՝ խոսեր դահլիճ մտած կամ դրսում սպասող երիտասարդության հետ, արեց ....Ամենայն Հայոց կաթողիկոսը: Նա ասաց այն, ինչ որ պետք էր ասել տվյալ պահին. «Սիրելինե՛ր, սիրելի՛ երիտասարդներ, ես միանգամայն բաժանում եմ ձեր զգացմունքները, սակայն հասկացեք, սիրելինե՛ր, ամեն ինչ այնքան հեշտ չի լուծվում, որքան որ դուք եք ցանկանում: Կան միջազգային նշանակություն ունեցող հանգամանքներ, կան այլեւայլ շատ պատճառներ: Մենք սպասել ենք հիսուն տարի, մի՞թե չպիտի կարողանանք սպասել եւս այնքան, որքան որ հարկավոր է: Վստահ եղեք, որ կառավարությունը եւ կուսակցությունը կանեն եւ անում են ամեն բան, որպեսզի լուծվեն մեր առաջ կանգնած բոլոր հարցերը»[38]:

1965 թ. հոկտեմբերի 31-ին Վազգեն կաթողիկոսը Մայր Տաճարի հյուսիսային կողմում բացեց Եղեռնի նահատակների հուշարձանը, որի հեղինակը անվանի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն էր: Հուշարձանի քարե պատվանդանի վրա գրված էր. «Խաչքար Աղթքի եւ Ուխտի, Ի Հիշատակ 1915 թվի Ապրիլյան եղեռնի Հայ Նահատակների»: Հուշարձանի երկրորդ երեսի վրա փորագրվել էին Վանի, Մուսա լեռան, Շապին Գարահիսարի, Հաճընի, Մարաշի, Եդեսիայի, Զեյթունի, Սասունի եւ Սարդարապատի անունները: Բացմանը Վազգեն Ա.-ն ասաց. «Այս տարի, ապրիլի 24-ին, Մենք օրհնեցինք այս հողը, որպեսզի այստեղ մարմին առնե կոթող մը, նվիրված 1915 թվականի Հայոց Մեծ եղեռնի զոհերու հիշատակին: Ահա այդ կոթողը, խորհրդանիշը հայոց վշտին, խորանը մեր աղոթքին, վեմը մեր ուխտին: Այս օրեն սկսյալ սրբավայր է այստեղ, նվիրված մեր ողբերգական անցյալին, մեր զոհված եղբայրներու եւ քույրերու հիշատակին, մեր ժողովրդի ինքնապաշտպանության հերոսամարտերուն, մեր ազգին ուխտին»[39]:

Ամսագրի որդեգրած դիրքորոշման բնութագրման տեսանկյունից հատկանշական է այն պարագան, որ 1965 թվականի բոլոր համարների շապիկների վրա գրված է «1915–1965»: Այս առումով, միաժամանակ ուշագրավ է, որ բացառիկից զատ՝ ամբողջ տարին ամսագրի բոլոր համարներում հրատարակվեցին Հայոց ցեղասպանության եւ Հայկական հար-

---

[38] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 165, թ. 2–10:*

[39] *Տե՛ս «Էջմիածին», 1965, թ. 11–12, էջ 44–49:*

ցի վերաբերյալ բազմաբնույթ նյութեր: Ի վերջո, կարեւոր է այն փաստը, որ բացառիկում որպես ներդիր հրապարակվել են նահատակ քաղաքական գործիչների լուսանկարներ, որոնց մեջ կան Հ.Յ.Դ. եւ ՍԴՀԿ կուսակցությունների գործիչներ, որոնք խորհրդային տարիներին արգելված էին:

Իհարկե, 1965 թվականը ամսագրի համար լինելով քարոզչա-հրատարակչական առումներով բեկումնային, հետագա տարիներին, բնականաբար, շարունակվեց նման սրտացավ ուշադրությունը թեմայի նկատմամբ:

Շարունակությունը՝ հաջորդիվ

Doi: 10.56 737/2953-7843-2025.12-91

ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Արխիվի եւ թանգարանների տնօրեն

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՎԱՏԻԿԱՆԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1945–1954 ԹԹ.)

Սկիզբը՝ թիվ ԺԲ. 2025 թ.

Ուսումնասիրողներից Հ. Ենգիբարյանն իր գրքում կարծիք է հայտնում, որ կաթողիկոս-պատրիարք կարդինալ Աղաջանյանի համար «հիմնական ու առանցքային պատճառը Հայ կաթողիկե եկեղեցու շահն էր, որին ներգաղթն ընդհանրապես հակացուցված էր»[1]։ Եւ հետագա շարադրանքում եզրակացնելով՝ հեղինակն ի մասնավորի գրում է. «Երբ այսօր տարիների հեռվից փորձում ենք վերլուծել ներգաղթի վերաբերյալ Հայ կաթողիկե եկեղեցու դիրքորոշումը, պետք է ասել, որ այն ամբողջովին արդարացված տեսակետ էր, ուստի շատ իրատեսական ու փաստարկված էին կարդինալ Աղաջանյանի բոլոր կանխատեսումները, հատկապես, երբ այդ ներգաղթը դիտարկվում է Հայ կաթողիկե եկեղեցու շահերի տեսանկյունից»[2]։

Ընդունելով հանդերձ Հ. Ենգիբարյանի եզրահանգումը, այնուամենայնիվ կարծում ենք, որ Հայրենիքի եւ ազգային գերագույն շահերը պահանջում էին համազգային անվերապահ ու անսակարկ միասնություն եւ համերաշխ գործակցություն՝ «միասնական կամք»։ Ստեղծվել էր բարենպաստ պահ՝ աշխարհով մեկ սփռված գաղթական հայությանը Մայր Հայրենիքում համախմբելու, պահանջելու Թուրքիայի կողմից բռնագրավված հայկական հողերը, ի վերջո՝ վերականգնելու հայ ժողովրդի հոգեւոր-կրոնական միությունը՝ ամենայն ջանք գործադրելով, որպեսզի Հայոց Եկեղեցու գիրկը վերադառնային հոգեորսությամբ առաջացած կաթողիկե եւ ավետարանական հայ համայնքները, եւ այդ ամենի արդյունքում, ինքնին, պետք է առավել շենանար Հայրենիքը, հզորանար հայկական պե-

[1] Հ. Ենգիբարյան, նշ. աշխ., էջ 160։
[2] Նույն տեղում, էջ 174։

տութ֊յունը, աճեր հայրենաբնակ հայութ֊յան թիվը եւ զորեղանար հայ ժողովրդի միակ Ազգային Եկեղեցին։ Ահա այս ամենն ի նկատի ունենալով, «երբ այսօր տարիների հեռվից» անդրադառնում ենք կարդինալ Աղաջանյանի ու Հայ Կաթողիկե Եկեղեցու դիրքորոշմանն ու գործունեութ֊յանը, բնավ, որեւէ առումով նրանց մոտեցումները չենք կարող համարել արդարացի։ Մեր խորին համոզմունքն ու դավանանքն է՝ հայ ժողովուրդը, ամբողջովին կամ մասամբ, երբեք չպետք է կախյալ լինի այլ կրոնական եւ եկեղեցական կենտրոններից։

Կարդինալ Աղաջանյանի Շրջաբերականին անդրադարձել է նաեւ Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ Տ. Գարեգին եպիսկոպոս Խաչատուրյանը (Տրապիզոնցի)՝ 1947 թ. Բուենոս Այրեսում հրապարակելով իր «Կաթողիկէ եկեղեցի» հոդվածը[3]։ Տ. Գարեգին եպիսկոպոսի եկեղեցաբանական, մասամբ նաեւ պատմագիտական, խորհրդածութ֊յունները, առանձնահատուկ հոգեւոր շնչով ու բովանդակութ֊յամբ, շարադրվել են՝ հիմքում ունենալով կարդինալ Աղաջանյանի որոշ մտքեր։ Ջոր օրինակ՝ Խորհրդային Հայաստանում կրոնի ազատութ֊յան հետ կապված կարդինալ Աղաջանյանի մտահոգութ֊յան առնչութ֊յամբ Տ. Գարեգին եպիսկոպոսը գրում է. «Բայց գոնէ կրօնական մտահոգութիւնը իր կողմէ՝ մենք կը գտնենք աւելորդ. զի հայ ժողովուրդը Մայր Հայրենիքի սրտին մէջ ունի իր կրօնական կեդրոնը, դարաւոր Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ, որ կարող է, եւ պարտի, իր վրայ առնել այդ հոգը՝ Հայաստ. Եկեղեցւոյ շունչով ու կանոններով, առանց պէտք ունենալու, որ այլադաւան Եկեղեցի մը միջամտէ իր այդ գործին՝ հաւատաձաւալական առաջադրութիւններով։ Նա ունի իր հաւատքը, միս եւ արիւն եղած, անսասան ու ճշմարիտ, կրկնենք՝ ՄԻԱԿ ԿԵՆԴԱՆԻ ՎԷՄԻՆ՝ Քրիստոսի վրայ հիմնուած, եւ չի կարօտիր պետրոսեան փոխանորդութեան»[4]։

Այնուհետ Տ. Գարեգին եպիսկոպոսը խորհրդածութ֊յան նյութ դարձնելով Շրջաբերականի հետեւյալ տողը՝ «երբ հայրենադարձի բանբերները եւ անոնց մունետիկները համազգային այս գործին յարանուանական շեշտուած բնոյթ մը տուին», ի մասնավորի գրում է. «Ակնարկութիւնը, անշուշտ, Հայաստանեայց Եկեղեցւոյն համար է, որուն ներբողն հիւսուեցաւ ըստ արժանւոյն ամէն բերանէ, ինքն եղած ըլլալով, արդարեւ, այն միակ

---

[3] *«Արարատ» (հանդէս ամսօրեայ), 1947, թիւ 7, 8 (յունուար–փետրուար), էջ 198–203։*

[4] *Նույն տեղում, էջ 202։*

*Հաստատութիւնը՝ որ, դարերու ընթացին, հաւատարիմ իր կոչումին, ոչ միայն եղաւ աղբիւր հոգեկան խորագոյն ապրումներու եւ բարձրագոյն ներշնչումներու, մարտիրոսագրական փառաւոր դրուագներ արձանագրելով եկեղեցական պատմութեան մէջ,– այլ եւ քաղաքական անտէրնջութեան եւ վերջին վեցդարեան գերութեան ամենադառն օրերուն հանդիսացաւ ամրապարիսպ բերդը ազգապահպանման»[5]: Այս խոսքերից հետո Տ. Գարեգին եպիսկոպոսը վճռական կերպով մակաբերում է. «Եւ այս եկեղեցին յարանուանական չէ երբեք, բառին անգլիական իմաստով (*denomination*), որով Ամեն. Կարդինալ-Պատրիարքը կը թուի թէ փորձութիւնն է ունեցած տեսնելու, այսօր տակաւին, «հերձուածողութիւնը», եթէ ոչ «հերետիկոսութիւնը» Հայաստանեայց Ուղղափառ եկեղեցւոյն մէջ: Այո՛, Հայաստ. եկեղեցին այն է, ինչ որ է Հռոմէականը, քրիստոնէական կրօնի կամ քրիստոնէական եկեղեցիի կաթողիկէութեան վերաբերմամբ: Ոչ մէկ «ծիրանի», որքան ալ շողշողուն եղած ըլլայ այն, կրնայ երբեք նսեմացնել եկեղեցւոյ կաթողիկէական այս նկարագիրը՝ որ էութիւնն իսկ է նաեւ մեր եկեղեցիին: «Բանբեր» թէ «մունետիկ» Հայաստան աշխարհի եւ Հայաստանեայց եկեղեցւոյ՝ չեն նկատեր անհամեստութիւն բարձրաղաղակ հռչակելու այս ճշմարտութիւնը, վկայութեամբն անհերքելի փաստերու»[6]:*

Կարող ենք միանշանակ սեպել, որ Տ. Գարեգին եպիսկոպոսի հոդվածը որոշակի ընդհանրութիւններ ունի «Էջմիածին» ամսագրի «Թուղթ ընդդեմ Հայրենիքի եւ ներգաղթի» հոդվածի հետ, թեեւ վերջինիս բովանդակութիւնը հիմնականում ազգային-քաղաքական շեշտադրումներով էր:

Կարդինալ Աղաջանյանի Շրջաբերականի առիթով մի գրքույկ է հեղինակել նաեւ Բեյրութում լույս տեսնող «Արարատ» օրաթերթի խմբագիր Աստուր Էլճանյանը՝ «Հայ կաթոլիկ պատրիարքարանին դիրքը Խորհրդ. Հայաստանին, ներգաղթին եւ Հայկական դատին հանդէպ» խորագրով. «Որեւէ պարկեշտ հայ եւ արթնամիտ հրապարակագիր,– գրում է Ա. Էլճանյանը,– լուռ չը կրնար անցնիլ այդ կոնդակին վրայէն, որովհետեւ ան շօշափած եւ յուզած է, մեր լինիլ չը լինելու հրատապ հարցերը, այնպիսի վիճելի, թէական եւ բացասական ձեւով ու կեցուածքով մը, որ չէինք ակնկալեր իր նման եկեղեցական բարձր հեղինակութենէ մը»[7]: Այնուհե-

---

[5] *Նույն տեղում, էջ 202–203:*

[6] *Նույն տեղում, էջ 203:*

[7] Ա. Էլճանեան, «Հայ կաթոլիկ պատրիարքարանին դիրքը Խորհրդ. Հայաստանին, ներգաղթին եւ Հայկական դատին հանդէպ», Պէյրութ, 1947, էջ 5:

տեւ հեղինակը նշում է, որ Շրջաբերականի վերաբերյալ առարկություն ու անդրադարձ չէր ունենա, եթե այն իր բովանդակությամբ լիներ սոսկ կրոնաեկեղեցական, մինչդեռ, ինչպես գրում է Ա. էլճանյանը՝ «ան իր թեմական, ծխական եւ բարոյական ասպարէզի շրջագծէն դուրս ելլելով գաղութահայ զանգւածներուն եւ անոնց ազգային քաղաքական ճակատագրին սխալ ուղղութիւններ կուտայ»[8]։

Ա. էլճանյանն իր հրապարակմամբ անդրադառնում է Շրջաբերականում կարդինալ Աղաջանյանի արտահայտած մտքերին՝ ձեւակերպելով տաս հարցեր եւ շարադրելով դրանց պատասխանները։ Թեեւ գրքույկի հեղինակը որոշապես գտնվում է խորհրդային գաղափարախոսության ազդեցության ներքո, սակայն նրա վերլուծություններն ու քննադատությունները, բացառապես, պայմանավորված են այդ ժամանակի ազգային ու հայրենական գերագույն ու կենսական շահերով։ Այդ իսկ պատճառով, բնավ, տեղին չեն, ավելին՝ արդարացի չեն պատմաբան Հ. Ենգիբարյանի հետեւյալ բնորոշումները. «Ա. էլճանյանը մանրակրկիտ անդրադառնում է պատրիարքի կոնդակի բոլոր հատվածներին՝ մեջբերելով կարդինալի մտքերը եւ ամեն կերպ փորձելով վարկաբեկել եւ նսեմացնել նրան։ ....Ամբողջությամբ խորհրդային իրականությունից բխող քննադատություններ, որտեղ պարզ երեւում է հեղինակի նպատակն՝ ամեն կերպ սեւացնել կաթոլիկ պատրիարքին՝ համարելով նրան հակաազգային ու հակապետական գործիչ»[9]։

Արդար եւ իրավ է Ա. էլճանյանի այն պնդումը, որ «հայրենիքը՝ մտապատկեր մը չէ, որու վրայ պիտի գայ կաղապարուելու հողային հայրենիքը, այլ այդ մտապատկերն է որ պիտի գայ կաղապարուելու եւ յարմարելու այն հողային իրական հայրենիքին, որ այժմ գոյութիւն ունի Արարատի ստորոտը։ Պետութիւնը այն ամուր սիմէնթն է որ պիտի շաղէ եւ իրարու փակցնէ անհատ աղիւսները, հայրենիքը դարձնելով անխորտակելի ամբողջ մը»[10]։ Հետեւաբար, եզրակացնելով՝ Ա. էլճանյանը գրում է. «Հայր Աղաճանեան եւ իրեն պէս եւ իրեն չափ հայրենասէրները, բացասական հայրենասէրներ են, որ իրողութիւնը լքած եւ ուրացած՝ շուքերու ետեւէ կը վազեն։ Անոնք ազգը ինքնասպանութեան կը մղեն, երբ կը յորդորեն ար-

[8] *Նույն տեղում, էջ 5։*

[9] Հ. Ենգիբարյան, *նշ. աշխ., էջ 162։*

[10] Ա. Էլճանեան, *նշ. աշխ., էջ 25։*

տասահման մնալ, այն փուճ պատրուակով թէ մարդու հայրենիքը հոն է, ուր ան իր հացը կը ճարէ։ Ահ անհող հայրենիքն է եւ ահ հայրենասիրութիւն չէ, այլ իւթոբիական, որ կրնայ հասնիլ մինչեւ հայրենադաւութիւն՝ իրական հայրենիքին հանդէպ։ ....Անգամ մը եւս հարկ կը տեսնեմ շեշտել եւ ընդգծել թէ հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնն ու ապահովութիւնը մեր վաղուայ սերունդի բարօրութիւնը՝ մխիթարեան Սովիէթ համամիութենական դաշնակցային եւ եղբայրական իրերօգնութիւնովն ու պաշտպանութիւնովը կարելի է, պատմութեան այս տուեալ պահուն։ Անկէ դուրս ամէն խօսք եւ ուղղութիւն դառն ցնորք է եւ կորուստ անդառնալի»[11]։

Այդ համոզմունքն է, որ Ա. Էլճանյանին մղում է ասելու, որ հակառակ կարդինալ Աղաջանյանի ճիգ ու ջանքի, որով նա վկայում է Հռոմի պապի հայասիրութեան ու Վատիկանի հայանպաստ քաղաքականութեան մասին, «մեզի համար նոյնիսկ զարմանալի անակնկալ մը պիտի չըլլայ, եթէ վաղը, երբ Հայ Դատն ու պահանջները վեհաժողովներու սեղանին վրայ գան, Վատիկան՝ Սովիէթ կօշմարը պատրուակ ծառայեցնելով, հայ ժողովուրդի հակառակորդներու ու թշնամիներու կողքին դիրք գրաւէ, ի հեճուկս Աղաճանեանի տարփողանքին»[12]։ Հետեւաբար, գրքույկի հեղինակն գտնում է, որ Հռոմի պապի կողմից կաթողիկոս-պատրիարքին «կարտինալութեան տիտղոսի բաշխումը՝ չը յենուր ընտրուած կարտինալի ազգային շահերու, նկատողութիւններու, այլ եկեղեցական, քաղաքական եւ շրջանային հաշիւներու»[13]։

Այս ամենով հանդերձ, Ա. Էլճանյանը կարծիք է հայտնում, որ կարդինալ Աղաջանյանի հականերգաղթյա հորդորն ու ընթացքը թելադրված չէ Վատիկանից, ինչպես կարծում են շատերը, այլ այդ ամենի պատճառը հայ կաթոլիկ երիտասարդ, նորընծա «կոսմոպոլիտ» վարդապետներն են, իսկ կարդինալ Աղաջանյանը, ընդամենը, նրանց մոլեռանդության զոհն է. «....Սխալ է մեր ժողովրդին մէջ շրջան ընող այն զրոյցը, թէ Աղաճանեան հօր ներգաղթի դէմ բացած խաչակրութիւնը՝ թելադրուած ըլլայ Վատիկանէն, քանի որ յայտնի է անոր հակասովիէթ տրամադրութիւնը։ Վատիկանի համար կուտ մը արժէք չը ներկայացներ թէ Հայերը Միջին Արեւելք են մնացեր, թէ Հայաստանի մէջ են ամփոփուեր։ Նոյն իսկ

---

[11] *Նույն տեղում, էջ 25, 28։*

[12] *Նույն տեղում, էջ 22։*

[13] *Նույն տեղում, էջ 18։*

ան՝ կրնայ համամիտ ըլլալ անոնց զանգուածային մեկնումին, որոնց մէջ ձախ հոսանքները զօրացած են, մանաւանդ «հայրաբար պատժելու» համար ֆրանսական հոգատարութեան հակառակող Լիբանանի եւ Սուրիոյ «անհարազատ ծուխերը»։

Ներգաղթի դէմ այդ խաչակրութիւնը խմորող եւ ուղղավարողը հայ կաթոլիկ երիտասարդ եւ նորընծայ վարդապետներն են, ...որոնք իրենց մեծաւորներէն շատ աւելի դիւանագէտ են եւ անհաշտ «Նոր-կարգեր»-ուն եւ ոխերիմ հակառակորդ՝ կաթոլիկ նոր սերունդին մէջ ճարակած «Նոր-վարդապետութիւններ»-ու եւ հայրենասիրութեան եւ հայաստանասիրութեան «մոլորանք»-ներուն։ Հիներու մէջ դեռ հայրենասիրութիւնը «անթեղուած կրակ» մըն է, մինչ երիտասարդ վարդապետներու մինչեւ ծուծը՝ «Հերովդէսեան թթու խմոր»-ով թունաւորուած է։ Աղաճանեան պատրիարք, ...ան զոհն է այդ «քօզմօբօլիթ» երիտասարդ վարդապետներու մոլեռանդութեան, որ շեղ դիրքի վրայ հրեցին զայն, անոր բարձր հեղինակութիւնը զէնք գործածելու Հայ կաթոլիկ երիտասարդութեան ու ծուխերուն հայաստանասիրութեան դէմ, հրաւիրելով հայ զանգուածին ատելութիւնը անոր վրայ եւ զայն նկատել տալու երկրորդ Հասունեան մը, առաջինին անփառունակ կարտինալութենէն լման 65 տարի յետոյ»[14]։

Կարդինալ Աղաջանյանի Շրջաբերականին է անդրադարձել նաեւ պատմաբան Հ. Մելիքսեթյանն իր ուսումնասիրությունում՝ նշելով, որ հայ կաթոլիկ հոգեւորականության վերնախավը՝ ի գլուխ կաթողիկոս-պատրիարք կարդինալ Աղաջանյանի, տրամագծորեն հակառակ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դիրքորոշման ու բուռն գործունեության, «հայրենադարձության դեմ դատապարտելի գործունեություն էր ծավալել»[15]։ Ներկայացնելով Շրջաբերականի բովանդակությունը՝ Հ. Մելիքսեթյանը մասնավորաբար անդրադարձ է կատարում Հռոմի Պիոս ԺԲ. պապի այն պնդմանը, որ է՝ «կրնանք արդարեւ մենք իրաւամբ ըսել թէ այս գերազնիւ Ազգը, իր ձախողանքներուն եւ տառապանքներուն մէջ ունեցած է միշտ պաշտպան եւ փաստաբան Հռոմէական Քահանայապետը»։ Այդ առումով նա գրում է հետեւյալը. «Իհարկե, պատմությունը երբեք չի արձանագրել ինչ-որ փաստ, որ հռոմեական որեւէ քահանայապետ պաշտ-

---

[14] *Նույն տեղում, էջ 18–19։*

[15] *Հ. Ոհ. Մելիքսեթյան, «Հայրենիք–Սփյուռք առնչությունները եւ հայրենադարձությունը (1920–1980 թթ.), Երեւան, 1985, էջ 342։*

պան կանգնած լիներ հայութեանը կամ Վատիկանը սեր ու հոգածութիւն տածած լիներ Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ։ Ընդհակառակը, դարերի ընթացքում Հռոմի Եկեղեցին միշտ էլ աշխատել է օգտվել հայ ժողովրդի համար ստեղծված դժնդակ պայմաններից եւ ձգտել է ջլատել, մասնատել նրա ամբողջականութիւնն ու միասնականութիւնը, հարվածել նրա ազգային ինքնուրոյնութեանը՝ հրելով նրան լատինացման-կաթոլիկացման ուղու վրա։ Հակառակ այս իրողութեանը, կարդինալ Աղաջանեանը գովերգում էր Վատիկանի ու նրա պետերի հայասիրութիւնը եւ հանուն կաթոլիկութեան իր հոտին խորհուրդ էր տալիս չդիմել հայրենադարձութեան, որովհետեւ դա կնշանակի ուրանալ հավատքը»[16]։ Հ. Մելիքսեթեանը նաեւ հավելում է, որ կարդինալ Աղաջանեանը «ճգնում էր բամբասանքներով վարկաբեկել Սովետական Հայաստանի ղեկավարներին, որ իբր «պաշտոնական անձեր հայտարարած» են, թե Հայաստան մեկնող կաթոլիկները պետք է հրաժարվեն իրենց հավատքից կամ հայրենիքում կաթոլիկութեան հանդեպ այլ վերաբերմունք գոյութիւն ունի, քան այլ դավանանքների հանդեպ։ Թե երբ, որտեղ եւ ո՞ր «պաշտոնական անձերն» էին այդպիսի հայտարարութիւններ արել, այդ մասին հայր Աղաջանեանը խորհրդավոր լռութիւն էր պահում»[17]։

Այստեղ, այո, ընդունում ենք Շրջաբերականի այս պնդումը՝ «Հայ Կաթողիկէութեան հանդէպ.... կը զլացուէր արդար եւ լիովին արժանացած ազատամիտ վերաբերում մը», սակայն պետք է կատարել մասնակի խմբագրում՝ ոչ թե «Հայ Կաթողիկէութեան», այլ ընդհանրապես «Կաթողիկէութեան», քանի որ Խորհրդային Հայաստանում, խնդրո ժամանակ, կաթոլիկ հայերի նկատմամբ հետապնդումներ ու բռնաճնշումներ չկային, պարզապես Հայաստանի կաթոլիկ համայնքը չուներ հոգեւոր սպասավորներ. նրանք եւս, ինչպես Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, առհասարակ՝ ԽՍՀՄ Եկեղեցիների հոգեւորականները, բռնադատվել էին՝ աքսորվելով ու գնդակահարվելով, իսկ որոշների էլ արտոնվել էր լքել Խորհրդային պետութիւնը[18]։ Խորհրդային Միութիւնում կաթոլիկ համայնքների հետ առկա էին հիմնախնդիրներ հիմնականում Ուկրաինական ԽՍՀ-ում՝ Ուկրաինական Հունա-կաթոլիկ Եկեղեցու (Ունիատ Եկե-

---

[16] *Նույն տեղում, էջ 345–346։*

[17] *Նույն տեղում, էջ 347։*

[18] Ա. Սիմավորյան, Վ. Հովյան, *«Ռուսաստանի Դաշնության հայութեան կրոնադավանանքային կողմնորոշումները», Երեւան, 2011, էջ 84–92։*

ղեցի) հետ կապված. «Թեեւ խորհրդային ռեժիմը հայ կաթոլիկների հետ չէր վարվել նույնքան կոպիտ, որքան Ուկրաինայում, որտեղ ուկրաինական կաթոլիկ եկեղեցին արգելված էր, փաստացի հայ կաթոլիկներին չէր թույլատրվում որեւէ համայնքային գործունեություն»[19],– գրում է կրոնական պատմաբան Ֆելիքս Քորլին։

Մեր հետազոտության ընթացքում, Հայաստանի ազգային արխիվում, ծանոթացանք մի շարադրանքի եւս՝ կապված խնդրո Շրջաբերականի հետ։ «Կարդինալ Աղաճանյանի կոնդակի առթիվ» վերնագրված հոդվածը[20], գրված Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության օրգանի՝ «Սովետական Հայաստան» ամսագրի համար, հեղինակել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանը՝ 1947 թ. փետրվարի 6-ին։ Հոդվածը, սակայն, ինչպես հուշում է առաջին թերթին արված մակագրությունը՝ չի հրապարակվել. «Հոդվածը գրվել է «Սով. Հայաստան» (ԱՕԿՍ) ամսաթերթի համար, սակայն որոշ նկատառումներով չի տպագրվել»[21]։

«Իր կարդինալության անդրանիկ կոնդակում,– գրում է Ս. Ն. Հովհաննիսյանը,– հայր Աղաճանյանն այնպիսի խնդիրներ է շոշափում, որոնք կրոնական շրջանակներից դուրս են գտնվում եւ չեն կարող անուշադրության մատնվել»։

Եւ որպես պետական պաշտոնյա, խորհրդածությունների հիմքում ունենալով պետական ու քաղաքական գաղափարաբանությունը, Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանը կատարում է վերլուծություն. «Սույն կոնդակը կարելի է բաժանել երկու մասի – պապի հայասիրության գովերգություն եւ զրպարտանք Սովետական Հայրենիքի հասցեին ուղղված. իսկ կոնդակի շարժառիթը, նպատակը, լեյտ-մոտիվը հանդիսանում է – բոլոր տեսակի միջոցներով խափանել, կասեցնել հայ ժողովրդի մասսայական ներգաղթը»[22]։

Հոդվածագիրն իրավացիորեն մատնանշում է, որ Շրջաբերականը ծնունդ է առել ոչ թե հայ ժողովրդի եւ Հայրենիքի զավակի մտքից ու հո-

---

[19] *Տես* F. Corley, "Catholicos and Commissar: the Amenian Church under the Soviet Regime", Volume II, London, *2025, էջ 1109։*

[20] *ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 29, թ. 1–5։*

[21] *Կարծում ենք, որ մակագրությունը կատարել է հենց հոդվածի հեղինակ Ս. Ն. Հովհաննիսյանը։*

[22] *ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 29, թ. 1։*

գուց, այլ այն Վատիկանի պաշտոնյայի մի հրահանգավորում է, որը կոչված է ջատագովելու Հռոմի պապին, Վատիկանը եւ հայութիւնը հպատակեցնելու վատիկանյան քաղաքականութիւնը. «Վատիկանի թուղնով թաթախված գրիչը ձեռքն առնելով հայր Աղաճանյանը ճգնում է բառերի շաղակրատանքով հայ ժողովրդի դարավոր պատմութիւն Վատիկանին վերաբերող մռայլ ու սեւ էջերը սրբագրել եւ սեւը սպիտակի տեղ ներկայացնել: Ինչպես երեւում է կարդինալական ծիրանին հանգիստ չի տալիս նրան. իրեն շնորհված կարդինալական կոչման համար իր տերերին վարձահատուցց լինելու նպատակով նա հրապարակ է իջել տաճկական յաթաղանից մազապուրծ ազատված եւ օտար հորիզոնների տակ ապաքաղաքացու վիճակում դեգերող հայ ժողովրդի մնացորդ բեկորներն աճուրդի հանելու եւ Վատիկանի ֆաշիստական քաղաքականութիւն կառքին լծելու: Եւ այս բոլորը նա կատարում է Վատիկանում դաստիարակված հմուտ «դիվանագետի» վարպետութիւնամբ, պատմական փաստերը կրոնական միստիկականութիւնամբ պարուրված, սքողված ձեւով ներկայացնելով: Կարդինալ Աղաճանյանը միտումնաւոր կերպով աշխատում է Վատիկանը ներկայացնել որպես հայ ժողովրդի հարազատ պաշտպանը:

....Իրապես, որո՞նք են այն շարժառիթները, որ դրդել են հայր Աղաճանյանին հանդես գալու Վատիկանի եւ հատկապես Պիոս ԺԲ. պապի «հայասիրութիւն» ջատագովի դերում եւ ինչ հիմունքներ ունի նա ներգաղթի դեմ աղմուկ բարձրացնելու»[23]:

Հետագա շարադրանքում հոդվածագիրն անդրադառնում է դարերի հոլովոյթում հայ ժողովրդի ու Հայաստանի հանդեպ ունեցած պապական վերաբերմունքին եւ Վատիկանի քաղաքականութիւնը՝ վերլուծելով եւ եզրակացնելով. «Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին պապը օժանդակում էր հայ ժողովրդի թշնամիներին՝ ֆաշիստական ոճրագործներին, որոնց ձեռքերը դեռ 1914 թվից ներկված էին հայ բազմատանջ ժողովրդի արյունով եւ որոնց հաղթանակը հավասարազոր կլիներ հայ ժողովրդի մնացորդ բեկորների ֆիզիկական ոչնչացմանը»[24]:

Ներգաղթի վերաբերյալ կարդինալ Աղաջանյանի արտահայտած մտքերի հետ կապված Ս. Ն. Հովհաննիսյանն ի մասնավորի գրում է. «....Հայր Աղաճանյանը իր կոնդակում պնդում է, որ Մերձավոր Արեւելքում հայ ժո-

[23] *Նույն տեղում, թ. 1:*
[24] *Նույն տեղում, թ. 3:*

ղովրդի համար ստեղծվել են «հասարակական կեանքի եւ մշակոյթի ամէն դիւրութիւններ»։ Մինչդեռ նա խուսափում է ասել իր հոտին, որ Սովետական Հայրենիքում պետութիւնը ստեղծել է լիակատար պայմաններ հայ գիտութեան, արվեստի, կուլտուրայի եւ ընդհանրապես հայ մշակոյթի զարգացման ու փթթման համար, որ սովետական կարգերում հայ գիտութիւնը, հայ արվեստն ապրում է նախընթացը չունեցող իր Ոսկեդարը»[25]։ Ի վերջո, հոդվածագիրը կտրուկ նշում է. «Կոնդակից պարզվում է նաեւ, որ հայր Աղաճանյանը դժգոհ է մնացել պատերազմի վախճանից, որովհետեւ չեն արդարացել նրա ակնկալութիւնները «Կրօնքի լիակատար ազատութեան» մասին. այսօր էլ նա շարունակում է «մշտամրմունջ աղօթքներ հղել», որպեսզի «հնչէ Աստուծմէ որոշուած այդ ցանկալի ժամը». երեւի մի նոր պատերազմից հետո՞»[26]։

Ս. Ն. Հովհաննիսյանն իր հոդվածն ավարտում է այն հավաստիացմամբ, որ հայոց հայրենիքում կա կրոնի ազատութիւն եւ բոլոր հայրենադարձները կարող են հայրենաբնակ իրենց եղբայրների հետ միասին «համահավասար իրավունքներով եւ անկաշկանդ կերպով օգտվել աշխարհի ամենադեմոկրատիկ Սովետական Կոնստիտուցիայից բխող խղճի, կրոնական համոզումների լիակատար ազատութեամբ»[27]։

Պետական կարեւոր հաստատութեան ղեկավարի խնդրո հոդվածն ինչո՞ւ չի տպագրվել եւ որո՞նք էին դրա «որոշ նկատառումները»՝ հնարավոր չեղավ վավերագրերով պարզաբանել, սակայն, ըստ մեր տեսութեան, Խորհրդային Հայաստանի ղեկավարները՝ համախորհուրդ միութենական ղեկավարութեան հետ, հավանաբար, չեն ցանկացել, որ պետական պաշտոնյան ուղղակի առճակատման մեջ մտնի օտարերկրյա բարձրաստիճան հոգեւորականի հետ, ինչը կարող էր հիմնավորապես փաստել արդեն Շրջաբերականում արծարծված (առհասարակ Վատիկանում եւ Արեւմուտքում քաղաքացիութեան ստացած) տեսակետը, որ Խորհրդային Միութեունում գոյութեան չունի կրոնական ազատութեւն եւ պետական բռնաճնշման են ենթարկվում հոգեւորականները։ Այն, որ ԽՍՀՄ-ում կային որոշակի կրոնական սահմանափակումներ՝ միանշանակ է, սակայն արդեն 1940-ական թթ. էապես բարելավվեցին պետութեւն–եկեղեցի հարաբերու-

[25] *Նույն տեղում, թ. 5։*
[26] *Նույն տեղում, թ. 5։*
[27] *Նույն տեղում, թ. 5։*

թյունները։ Ուստի միջազգային կրոնական ու եկեղեցական խնդիրներին պետությունը հիմնականում արձագանքում էր ի դեմս ԽՍՀՄ-ում գործող եկեղեցիների, որոնք, ինչպես կտեսնենք մեր հետագա շարադրանքում, համախորհուրդ միմյանց հետ որոշապես աջակցում էին պետության արտաքին քաղաքականությանը՝ բացառապես առաջնորդվելով իրենց հոգեւոր-եկեղեցական, ազգային եւ հայրենական գերագույն շահերով։

Հայաստանյայց եկեղեցին, ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, պետական ծանր հարձակումների ու բռնաճնշումների ժամանակ իսկ պահպանում էր իր ինքնիշխան առաջնորդությունն ու կառավարումը։ Այս առումով հատկանշական է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղակալ եւ Գերագույն հոգեւոր խորհրդի նախագահող Տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի եւ Տ. Գեւորգ արքեպիսկոպոս Չեորեքչյանի հանդիպումը ՀԽՍՀ կենտգործկոմի նախագահ Սարգիս Կասյանի հետ՝ 1930 թ. մայիսի 29-ին։ Տեսակցության ժամանակ Ս. Կասյանն անդրադառնալով կառավարության հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վերաբերմունքին՝ մասնավորաբար նշել է, որ «այդ վերաբերմունքը համենայն դեպս բարյացակամության նշան չէ», քանի որ նույն թվականի փետրվարի 9-ի Հռոմի Պիոս ԺԱ. պապի «Աղոթքների խաչակրաց արշավանք» խորագրով ուղերձի առիթով Հայոց Կաթողիկոսը մերժել է հանդես գալ բողոքի գրությամբ։ Մինչդեռ Խորհրդային պետության «բոլոր եկեղեցիների գլուխները անհրաժեշտ համարեցին հանդես գալ բողոքի գրություններով»։ Պատասխանելով Ս. Կասյանին՝ Տ. Խորեն եւ Տ. Գեւորգ արքեպիսկոպոսներն ուղիղ եւ իրավ կերպով արիաբար իրենց անհամաձայնությունն են հայտնել. «Հայոց Կաթողիկոսը (Տ. Տ. Գեւորգ Ե. Սուրենյանցը.– Ա. Կ.) այլ կերպ վարվել չէր կարող, տեսնելով այն անօրինակ հալածանքը, որ գործադրվում էր հանդեպ Հայ Եկեղեցին ամենուրեք եւ մասնավորապես Խորհրդային Հայաստանում, որ Հայոց Կաթուղիկոսի մերժումը ունի եւ այն լավ կողմը, որ դրսի աշխարհում չեն կրկնվիլ այն բացատրությունները, թե էջմիածինը գտնվում է որոշ հաստատության ճնշման տակ։ Պնդեցինք, որ էջմիածնի վերաբերմունքը հանդեպ Հայաստանի կառավարությունը միշտ էլ եղել է ոչ միայն լոյալ, այլեւ բարյացակամ»[28]։ Արդարեւ, ինչպես գրում է ռուս պատմաբան Ա. Լ. Բեգլովն իր հոդվածում, Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատրիարքա-

[28] *Տե՛ս «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921–1938 թթ.), կազմեց Սանդրո Բեհբուդյանը, Երեւան, 1994, էջ 219–220։*

*կան տեղապահի տեղակալ մետրոպոլիտ Սերգին, ԽՍՀՄ-ում գործող Հռոմեականթոլիկ Եկեղեցու որոշ հոգեւորականներ եւ որոշ հրեա ռաբբիներ հանդես են եկել Հռոմի Պիոս ԺԱ. պապի ուղերձում ասվածները հերքող հայտարարություններով ու հարցազրույցներով, որոնք, սակայն, ինչպես պարզել է հոդվածագիրը՝ ոչ այլ ինչ էին, քան կուսակցական եւ խորհրդային գործիչ Եմելյան Յարոսլավսկիի կողմից շարադրված եւ Քաղբյուրոյի (*Политбюро*) որոշ անդամների կողմից խմբագրված տեքստեր[29]։*

Վերջապես, ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի հոդվածը, շատ հավանական է, չի տպագրվել հետեւյալ բանավոր պատճառով՝ Խորհրդային Հայաստանը ցանկանում էր ինչ-ինչ կապեր ու հարաբերություններ հաստատել Մխիթարյան միաբանության հետ։ Իսկ այդ հարցում, ըստ էության, կարեւոր էր նաեւ կաթոլիկ աշխարհի ամենաակնառու դեմքերից մեկի՝ կաթողիկոս-պատրիարք կարդինալ Աղաջանյանի բարեհաճությունը, ինչպես նաեւ անհրաժեշտ էր նրա ազդեցությունը Վատիկանում։

Տակավին 1946 թ. մարտի 25-ին Հայկական գիտությունների Ակադեմիան պաշտոնական գրություն էր առաքել Վենետիկի Մխիթարյան միաբանության աբբահայր Հ. Սրապիոն վարդապետ Ուլուհոճյանին։ Ակադեմիայի պրեզիդենտի տեղակալ մեծանուն գիտնական Վիկտոր Համբարձումյանը, ի դիմաց Ակադեմիայի նախագահության, նշյալ ուղերձ-նամակում, «գրուած ամենալայն գնահատանքի զգացումով հանդէպ Մխիթարեան Միաբանութեան կատարած դարաւոր գրական-մշակութային գործունէութեան»[30], խոսելով վերածնված Մայր Հայաստանի «աննախընթաց մասշտաբով» ծաղկած ու բարգավաճած հայ գիտության ու արվեստի վերաբերյալ՝ ի մասնավորի գրում է. «Յարգելի Աբբահայր, բնական է, որ հայագիտութեան ասպարիզում մեզ մօտ ծաւալուած այս աշխատանքը մեր հետաքրքրութիւնն ուղղում է նաեւ դեպի այն մեծ գործը, որ կատարել եւ կատարում են այդ ուղղութեամբ Մխիթարեան Միաբանութեան կազմում աշխատող գիտական ուժերը։ Մենք յոյս ունինք, որ Դուք մեր հայագէտներին չեք մերժի Մխիթարեանների հետ կապ հաստատելն ու հնարաւորութիւն կընձեռնեք»՝ Զեզ մօտ գտնուող հարուստ ձեռագրական ժառան-

---

[29] *Տե՛ս* А. Л. Беглов, «Крестовый поход молитв» *1930* г. и реакция на него в СССР // Электронный научно-образовательный журнал «История». *2018*. Т. *9*. Выпуск *4 (68)*. URL: https://history.jes.su/s*207 987 840 002 219–9-1/* DOI: *10.18 254/S0 002 219–9-1*:

[30] *«Բազմավէպ», 1843–1946, օգոստոս, թիւ 8, էջ 213։*

գութիւնն ուսումնասիրելու համար, որպէսզի աւելի մեծ թափով ծաւալենք ամէն մի հայի սրտին նուիրական հայագիտութիւնը, որպէսզի կատարենք մեր ժողովրդի հանդէպ մեր սրբազան պարտքը։

Այս կարեւոր խնդիրն իրականացնելու նպատակով, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիան գործուղում է Ձեզ մօտ Հայաստանի Պետական Ձեռագրատան (Մատենադարանի) դիրեկտոր պրոֆէսոր Գ. Աբովին եւ նրա անձնական քարտուղար Ա. Տէր-Գրիգորեանին։

Մենք յուսով ենք, որ Դուք բարեհաճ կերպով կընդառաջէք՝, որպէսզի պրոֆէսոր Աբովը եւ նրա քարտուղար Տէր-Գրիգորեանը օժանդակութիւն ստանան՝ կատարելու իրենց տրուած առաջադրանքը, որ է մեզ լիակատար տեղեկութիւններ բերել Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան վերջին տասնամեակների գրական, գիտական նուաճումների մասին եւ ծանօթանալ այն ձեռագրերի տարբերակներին, որոնց լոյս ընծայումը նախատեսուած է Հայկական Հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիայի առաջիկայ հրատարակչական ծրագրում»[31]։

Անմիջապես այս խոսքերից հետո Վ. Համբարձումյանը շեշտում է՝ «մենք միանգամայն դրական վերաբերմունք ունենք՝ Մխիթարեան Միաբանութեան հետ փոխադարձ կապ հաստատելու նկատմամբ եւ ուրախութեամբ կընդունենք Ձեր ներկայացուցիչներին՝ տեղում նրանց ծանօթացնելու համար գիտութեան ասպարիզում հայրենի երկրի ունեցած նուաճումների հետ»[32]։

Գիտութիւնների ակադեմիայի ուղերձ-նամակն ավարտվում է այն հույսով, «որ մեր այս նամակը սկիզբ կը հանդիսանայ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիայի եւ Մխիթարեան Միաբանութեան գիտական ուժերի միջեւ կապ եւ փոխադարձ գիտական օժանդակութիւն հաստատելու գործին»[33]։

Հատկանշական է, որ Խորհրդային Հայաստանի պետությունն ի դեմս Գիտությունների ակադեմիայի, հակառակ ԽՍՀՄ-Վատիկան ակնբախ հակամարտության, միջոցներ էր ձեռնարկում կապ եւ հարաբերություններ հաստատելու կաթոլիկ հայ աշխարհի՝ Ս. Ղազար կղզյակի հետ, որտեղ,

---

[31] *Նույն տեղում, էջ 216։*

[32] *Նույն տեղում, էջ 216–217։*

[33] *Նույն տեղում, էջ 217։*

միանշանակ, հաստատված էր վատիկանյան գերիշխանությունը… Սակայն Մխիթարյան միաբանությունը, որ «կողջունէր այդ զոյգ պատուիրակները….., եւ ուրախ էր դիտելով անոնց նկարագրութիւններուն ընդմէջէն հայրենիքին վերելքը շինարարական եւ գիտական մարզերու մէջ»[34], Միաբանություն, որն իր երախտարժան հայրերի շնորհիվ խոշոր ներդրումներ էր արել «հայ կուլտուրայի, հայ մշակույթի զարգացման գործում, ու բորբոքել հայի սրտում հայրենասիրական սրբազան զգացմունքները»[35], բնականաբար, պետք է սեղմեր իրեն պարզված Հայոց պետության ձեռքը, պետք է, ինքն էլ իր հերթին, կամենար ու ձգտեր վերականգնելու Մայր Հայրենիքի հետ կապն ու հարաբերությունները՝«խզուած ըլլալով…. քաղաքական կեանքի վրդովումին հետեւանքով»[36]: Իսկ այդ ամենի համար հարկավոր էր ստանալ Վատիկանի՝ անմիջապես Հռոմի պապի արտոնությունը: Հետեւաբար, Մխիթարյան միաբանության աբբահայրը մինչ այդ պետք է ունենար համաձայնությունը «Հայութեան լաւագոյն դեսպան» կարդինալ Աղաջանյանի, որի անունն այն օրերին, ինչպես վկայում է Հայ Կաթողիկե Եկեղեցու կաթողիկոս-պատրիարք Իգնատիոս-Պետրոս ԺՉ. Պաթանյանը, «եղած է…. «թուղթ ընծայութեան», ազդու՝ ամէն շրջանակներու»[37]: Եւ եթե Խորհրդային Հայաստանի գիտության ներկայացուցիչներին հաջողվել է այցելել Ս. Ղազար եւ գիտական ուսումնասիրություններ կատարել, բայց եւ այնպես Միաբանության ներկայացուցիչներին տակավին վիճակված՝ արտոնված չէր մեկնելու Մայր Հայրենիք: Այս առումով բացահայտ էր կարդինալ Աղաջանյանի անբարեհաճությունը եւ Վատիկանում զգալի էր նրա ոչ բարենպաստ ազդեցությունը: Նա դեմ էր, որ նաեւ Մխիթարյան հայրերը, նույնիսկ գիտակրթական կամ ճանաչողական նպատակներով, մեկնեին Խորհրդային Հայաստան: Նա գտնում էր, որ հարկավոր էր առնվազն մի որոշ ժամանակով խստիվ պահպանել այդ արգելքը, որպեսզի տուրք չտրվեր Խորհրդային քարոզչությանը, քանի որ կարդինալ Աղաջանյանը, “Tamquam arma, veritas!”[38] նշանաբանով, Դավթի նման պայքարում էր Գողիաթի՝ կոմունիզմի եւ դրա մարմնացում Խորհրդային Միության դեմ. «….Դավթի նման,– 1947 թ. հունվարի 15-ի

---

[34] *Նույն տեղում, էջ 212:*

[35] *«Էջմիածին» ամսագիր, օգոստոս–սեպտեմբեր–հոկտեմբեր, 1946 թ., էջ 22:*

[36] *«Բազմավէպ», 1843–1946, օգոստոս, թիւ 8, էջ 212:*

[37] *«Ձայն հովուական», էջ գ:*

[38] *Թարգմանությունը լատիներենից՝ «Ճշմարտությունը՝ որպես զենք»:*

թիվ-1457/21 գրութեամբ նա գրում է Վատիկանի Արեւելեան Եկեղեցիների Ս. Կոնգրեգացիայի քարտուղար կարդինալ Տիսերանին,– պայքարում ենք Դողիաթի դեմ խոնարհ աշխատանքի եւ համառ աղօթքի միջոցով՝ թողնելով, որ Տերը խոնարհեցնի Իր Եկեղեցու թշնամիներին եւ պահպանի ու փառավորի այն՝ հակառակ մեր հակառակորդների, նոյնիսկ մեր փոքր ժողովրդի մեջ։

....կարծում եմ, Ս. Դիկաստերիային հայտնի է, որ Խորհրդային Հայաստանի ակադեմիկոսներն այցելել են Վենետիկի Սուրբ Ղազար վանքը եւ գրավոր հրաւեր են փոխանցել Մխիթարեան հայրերին՝ Հայաստան գնալու որպես ակադեմիայի գիտնականներ եւ գործընկերներ։ Կարծում եմ, նման հրաւեր ուղարկվել է նաեւ Վիեննայի Մխիթարեան հայրերին։

Այս փաստը Սբ. Դիկաստերիայի ուշադրութեանը ներկայացնելով՝ պարտք եմ համարում հայտնել իմ տեսակետը։

Կարծում եմ, որ այսպիսի հրաւերի ընդունումը մեծապես կծառայեր Խորհրդային քարոզչութեանը՝ սփյուռքի ժողովուրդների շրջանում գովաբանելու Խորհրդային վարչակարգը եւ պնդելու, թե Հայաստանում գոյութիւն ունի կրոնական ազատութիւն՝ հակառակ մեր հովվական նամակի ասածների։ Միաժամանակ դա կխթաներ դեպի Խորհրդային Հայաստան մեկնողների թվի աճը, նաեւ մեր հավատացյալների մեջ, գալիք գարնան եւ ամռան տեղափոխության ժամանակ։ Եւ կասեին. «Եթե գնում են Մխիթարյան հայրերը, ինչո՞ւ դուք չեք գնում»։

Ինչ որ ասում եմ Մխիթարյան հայրերի մասին, վերաբերում է նաեւ ցանկացած այլ քահանայի։

Ուստի, պարտք եմ համարում ներկայացնել, թե որքան լուրջ խոչընդոտներ կան, որոնք ստիպում են առնվազն մեկ տարի հետաձգել որեւէ քահանայի գործուղումը։ Ուստի երախտապարտ կլինեմ, եթե Ձերդ Գերազանցութիւնը նախազգուշացնի այն միաբանութիւնների Գլխաւոր Վանահայրերին, որոնցից քահանաներ կցանկանան մեկնել Հայաստան, որ առանց Ձերդ Արժանապատուութեան հստակ համաձայնութեան եւ հաւանութեան՝ չձեռնարկեն նման քայլ։

Ձեմ անտեսում այն դժվարութիւնը, որ կարող է առաջանալ այս բացասական դիրքորոշման դեմ։ Կարող են ասել, թե չնայած ամեն ինչին՝ շատ կաթոլիկներ արդեն մեկնել են, եւ քիչ չեն նրանք, ովքեր դեռ պատրաստվում են մեկնել Խորհրդային Հայաստան, եւ չպետք է նրանց լքել, այլ պետք է խրախուսել եւ նոյնիսկ ապահովել, որ նրանց հետ լինեն քա-

հանաներ: Կգտնվեն նաեւ քահանաներ, որոնք վերադասների թույլտվությամբ, սիրով կցանկանան հանձն առնել այդ առաքելությունը:

Ես ուշադիր կշռադատել եւ համեմատել եմ երկու կողմերի առավելությունները ու վնասները, եւ, ցավով, եկել եմ այն եզրակացության, որ պետք է պահպանել այս բացասական դիրքորոշումը՝ գոնե որոշ ժամանակով:

Իրոք, ակնհայտ են Խորհրդային վարչակարգի պայմաններում կաթոլիկ հավատքի համար առկա վտանգները ու վնասները, եւ խիստ կասկածելի ու խնդրահարույց է քահանայի արդյունավետ գործունեությունը՝ հաշվի առնելով վերադարձողների ցրվածությունը Հայաստանի Հանրապետության տարածքով, ինչպես նաեւ քահանայական գործունեության նկատմամբ կիրառվող խիստ սահմանափակումները: Ուստի ավելի մեծ չարիք կլիներ խրախուսել կաթոլիկ ընտանիքների վերադարձը, որոնք հակառակ դեպքում չէին մեկնի՝ իրենց ընտանիքների ճակատագիրը վտանգի տակ դնելով, չնայած նախապես զգուշացվել են վտանգների մասին:

Անշուշտ, եթե հայտնի դառնա, որ նույնիսկ կաթոլիկ քահանաներ են պատրաստվում մեկնել Խորհրդային Հայաստան, ապա դեպի հայրենիք վերադարձը կստանա նոր չափեր, եւ դա մեծ ծառայություն կլինի խորհրդային քարոզչությանը»[39]:

Հարկ է նշել, որ Վենետիկի Մխիթարյան միաբանությանը հնարավորություն է տրվում միայն 1962 թ. մայիսին, Վատիկանի եկեղեցական (տիեզերական) Բ. ժողովի գումարման տարում (երբ որոշապես բարելավվել էին Վատիկան-ԽՍՀՄ հարաբերությունները), ներկայացուցիչ ուղարկելու Խորհրդային Հայաստան: Մայր Հայրենիք է այցելում, Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով, Հայր Եղիա վարդապետ Փեչիկյանը[40]՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-

---

[39] Թարգմանություն իտալերենից, ACO, Armeni Affari Generali, Fasc. *514/1946,* P. *11–16* [Invito rivolto ai Padri Mechitaristi di Venezia da parte di alcuni Academici Sovietici di recarsi in Armenia Sovetica]. *Շնորհակալությամբ նշենք, որ այս վավերագրի ստացումը հնարավոր դարձավ անկախ հետազոտող պատմագիտության դոկտոր Աննա Հունանյանի աջակցությամբ:*

[40] Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի հրավերով Մայր Հայրենիք պետք է այցելեին Վենետիկի Մխիթարյան միաբանության երկու ներկայացուցիչ, սակայն ներկայացուցիչներից Հայր Ներսես վարդապետ Տեր-Ներսեսյանը հիվանդության պատճառով չի կարողանում ճամփորդել. «Թույլ տուէք, որ յայտնեմ Ձեր Վեհափառ Տէրութեան,– Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետին գրում է Միաբանության ընդհանուր աբբահայր Հ. Սրապիոն վարդապետ Ուլուհոճյանը, - ամենախորին եւ ջերմ շնորհակալութիւններս Ձեր այնքան սիրալիր վերաբերումին համար, որով զոհողութիւնը յանձն կ'առնէք Հայաստան հրաւիրելով Միաբանութեանս Հայրերը եւ Ձեր մօտ հիւրասիրելու,

ամյա հոբելյանի տոնակատարութեանց առիթով[41]։ Բոլորովին այլ էր, սակայն, Վիեննայի Մխիթարյան միաբանության պարագան։ Ինչպես վկայում է Հայր Ներսես վարդապետ Ակինյանը, Վիեննայի Մխիթարյան միաբանությունից, Հռոմեական կուրիայի «գեղեցիկ խորհրդով» եւ խոստացված նյութական աջակցությամբ, հենց ինքը 1924 թ.՝ միջնորդությամբ Խորհրդային Հայաստանի Բեռլինի առեւտրական ներկայացուցիչ Սիմոնիկ Փիրումյանի եւ համաձայնությամբ Անդրկովկասյան Դաշնության Դաշնակցային խորհրդի նախագահ Ալեքսանդր Միասնիկյանի[42], այցելում է Խորհրդային Հայաստան՝ «բանակցելու Հայաստա-

---

որպէսզի անոնք բարեպատեհ առիթին ունենան տեսնելու մեր ժողովրդեան արիւնով ու քրտինքով կերտուած նոր Հայրենիքը եւ անոր մշակութային ու շինարարական մեծ յաջողութիւնները։

Տայ Աստուած, որ նոյն թափով շարունակէ ծաղկիլ մեր սիրելի Հայրենիքը եւ վերականգնին մեր տաճարներն ու վանքերը, եւ Մեսրոպի լեզուն ու անով հիւսուած աղօթք եւ շարական խունկի բուրումով առ Աստուած բարձրանան եւ այնպէս նորոգուին ոսկի դարերու փառքերը։

Վեհափառ Տէր, կը ցաւինք, որ Հ. Ներսէս Վ. Տէր-Ներսէսեան հիւանդ ըլլալով Հ. Եղիա Վ. Փէշիկեանը Միաբանութեանս Ընդհ. Առենադպիրը մինակը կու գայ Հայրենիք եւ Զեզի կը բերէ անձամբ մեր բարի լուրերուն հետ մեր ամենախորին սէրն ու յարգանքը Զեզի ու մեր բոլոր ժողովրդեան կարօտի ջերմագին զգացումներով» (տե՛ս Մայր Աթոռի Արխիվ, ֆ. 130, ց. 2, գ. 1576, թ. 66)։

[41] Ս. Ղազար վերադարձի ճանապարհին Հ. Եղիա վարդապետ Փէշիկյանը՝ 1962 թ. հունիսի 22-ին Մոսկվայից հետեւյալ երախտագեաց ու սիրալիր տողերն է գրում Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին. «Տողերս կ'ուղղէմ Ձեր Վեհափառ Սրբութեան սրտիս ամենախոր յուզումով եւ սիրով՝ այն պահուն երբ կը մեկնեմ Վիեննայի վրայով դէպի իմ սուրբ կղզեակս։ Ըսի յուզումով, որովհետեւ չեմ կրնար մոռանալ այն բացառիկ սէրը, գուրգուրանքը, խնամքը, հիւրասիրութիւնները զոր շռայլեցիք իմ նուաստ անձիս հանդէպ այն պահէն որ ոտք դրի Հայաստանի սուրբ հողին վրայ մինչեւ մեկնելու ժամս։ Ամէն կողմ զիս ընդունեցան յարգանքով ու սիրով, ամէն կողմ կատարեցին նիւթական ու բարոյական անհաշիւ զոհողութիւններ, եւ այդ ամէնը Ձեր բարձր հրամանով։– Ըսի սիրով, որովհետեւ այսքան անշահախնդիր բարիքին հանդէպ կարելի չէ ուրիշ զգացում եթէ ոչ սէր։

Այդ սիրով կը հիւսեմ իմ ամենախոր եւ ամենէն բարձր եւ լայն երախտագիտութեանս արտայայտութիւնը։ Պիտի պատմեմ նոյն յուզումով եւ սիրով ամէնուն ինչ որ տեսայ եւ ինչ որ վայելեցի։

Գիտեմ, որ այդ ամէնը զոր ըրիք ինծի՝ յանուն իմ սրբազան Ուխտիս է, որուն հանդէպ այնչափ սէր եւ յարգանք ունիք։

Շնորհակալ եմ ի բոլոր սրտէ։ Թող Աստուած ինքը վարձահատոյց ըլլայ Զեզի ինծի ըրած անփոխարինելի բարիքներուն համար զոր երբեք պիտի չմոռանամ։

Կը տանեմ մեր սիրելի Աբբահօր եւ բոլոր միաբաններուն Ձեր ողջոյնները, օրհնութիւնը եւ սիրոյ արտայայտութիւններն ու սրբազան նուէրները։

Հայրենիքիս հետ զոր կը պաշտեմ, տեսայ եւ սիրելիներս Ձեր շնորհիւ եւ Սովետական իշխանութեան բարեացակամութեան, եւ յատկապէս սիրելի Ա. Միկոյեանի բարձր միջամտութեան։ Թոյլ տուէք ինծի համբուրել ծնրադիր Ձեր Ս. Աջը եւ մաղթել երջանիկ եւ երկար տարիներ։ Աստուած օրհնէ մեր Հայրենիքը, տայ խաղաղութիւն աշխարհին եւ պայծառութիւն Հայ Եկեղեցւոյ» (տե՛ս Մայր Աթոռի Արխիվ, ֆ. 130, ց. 2, գ. 1576, թ. 70)։

[42] Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1929, ապրիլ, թիւ 4, էջ 194։

նի կառավարութեան հետ՝ Հայաստան որբանոց կամ դպրոց բանալու մասին եւ ուսումնասիրել տեղւոյն պայմանները եւ այն տեղ Մխիթարեան առաքելութիւն մը հիմնելու հնարաւորութիւնը», այլեւ՝ «դեգերիլ մի ժամանակ Հայաստան, զբաղելու հին ձեռագիրներու ուսումնասիրութեամբ»[43]: Թեեւ առաքելությունն իր այդ փուլում, ինչպես վկայում է Հայր Ներսես վարդապետ Ակինյանը, չուներ նպատակ «կաթողիկեայ քարոզութիւնը՝ յորդորելու չմիացողներն ի սուրբ Միութիւն», սակայն այն, ըստ էության, միտված էր հող նախապատրաստելու «մինչեւ որ ծագի բարեպատեհ առիթը զբաղելու իսկական քարոզչական գործունէութեամբ»[44]: Հատկանշական է, որ 1925 թ., Հայր Ներսես վարդապետ Ակինյանի դիմում-խնդրանքով եւ Խորհրդային իշխանությունների արտոնությամբ, Վիեննայի Մխիթարյան միաբանությունից Խորհրդային Հայաստան եւ Վրաստան են ժամանում եւս երկու միաբան՝ Հայր Սահակը եւ Հայր Ղեւոնդը՝ այցելելու «իրենց ծնողաց Ախալցխա»[45]: Խորհրդային իշխանությունների, ի մասնավորի հայ բոլշեւիկների նման բարյացակամությունն ուներ հստակ նպատակներ՝ նյութական շահ եւ Ազգային եկեղեցու քայքայում ու իսպառ կործանում. «1925 թվականին Մխիթարյանները դիմեցին Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը՝ ստանալու Հայաստանի սահմաններում իրենց գործունեությունը ծավալելու իրավունք: Իհարկե, բարեգործությունից զատ, այժմ ենթադրվում էր զուտ միսիոներական գործունեություն՝ կաթոլիկության տարածմամբ: Դա արդեն երկրորդ դիմումն էր: Նման առաջարկով Մխիթարյանները հանդես էին եկել Հայաստան ժամանելով, 1924 թվականին: Այս նույն թվականի դեկտեմբերի 22-ին ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության նիստում որոշում ընդունվեց թույլ տալ կաթոլիկամետ գործունեությունը Հայաստանում, բայց պայմանով, որ «ձեռք բերվի Մխիթարյանների միաբանության ունեցվածքը»:

Հանձին Մխիթարյանների հայ բոլշեւիկները տեսնում էին մի ուժ, որն ունակ է խառնակչություն մտցնելու եկեղեցական գործերի մեջ, հեղինակազրկելու Հայ Առաքելական եկեղեցին, ազգային եկեղեցուն այլընտրանք ստեղծելու, վերջնականապես թուլացնելու եւ քայքայելու այն: Իսկ

---

[43] *Տե՛ս* Մ. Հ ա յ ո ւ ն ի, «Բանասիրութեան ուղեւորը՝ Դոկտ. Հայր Ներսէս վարդապետ Ակինեան (1883–1963), Անթիլիաս, 2020, էջ 218–219:

[44] *Նույն տեղում, էջ 218:*

[45] *Նույն տեղում, էջ 248:*

թուլացած Հայ Եկեղեցու ոչնչացման մասին արդեն հոգ կտանեին իրենք՝ հայ բոլշեւիկները»[46]։

Մխիթարյան հայրերը, սակայն, որոշ ժամանակ անց ստիպված են լինում ընդհատելու իրենց այցը. 1926–1927 թթ. Հայր Սահակը եւ Հայր Ղեւոնդը[47], իսկ 1929 թ. Հայր Ներսես վարդապետ Ակինյանը, վերջինս իննամսյա բանտարգելությունից հետո, արտաքսվում են Խորհրդային պետությունից. «Այսպէս որքան ալ լռիկ էր կեանքս եւ միշտ պրկուած աշխատանքներու մէջ, բայց եւ այնպէս կային հանգամանքներ, որոնք կարող էին մի օր խափան հանդիսանալ յառաջադէմ խաղացումներուս. հանգամանքներ, սակայն որոնք պիտի մնային անյեղլի, քանի կապրէի ես ինքնակաց։ ....Մօտ էի ես «Բուրժուազիային ես Պրոլետարին»։ ....Այս ամէնը թէեւ անմեղ հողի վրայ եւ առանց քաղաքական ձգտումներու, բայց եւ այնպէս կարող էին առիթ տալ թիւրիմացութեանց իմ շուրջս, եթէ ոչ մերձաւորներուն, գոնէ հեռաւորներուն»,– տեղեկագրում է Վիեննա վերադարձած Հայր Ներսես վարդապետ Ակինյանը[48]։ Իսկ թե ինչո՞ւ «յեղակարծօրէն ընդհատած է» Վիեննայի Մխիթարյան հայրերի այցը Խորհրդային պետություն՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ստեփանյանցն այդ պայմանավորում է Վատիկանի եւ ԽՍՀՄ-ի հարաբերությունների վատթարացմամբ[49]։ Այսպիսով՝ միջեկեղեցական թշնամանք եւ ընդհարում հրահրելու միջոցով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ Հայաստանյայց Եկեղեցուն կործանարար հարված հասցնելու պետական նենգամիտ նախաձեռնությունը ձախողվում է։

Շարունակությունը՝ հաջորդիվ

---

[46] Ս. Ստեփանյանց, «Հայ Առաքելական Եկեղեցին Ստալինյան բռնապետության օրոք», Երեւան, 1994, էջ 33–34։

[47] Տե՛ս Մ. Հայունի, նշ. աշխ., էջ 250–251։

[48] Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1929, ապրիլ, թիւ 4, էջ 203։

[49] Տե՛ս Ս. Ստեփանյանց, նշ. աշխ., էջ 36։

Doi: 10.56 737/2953-7843-2026.01-128

ՇԱՎԱՐՇ ԱԶԱՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՍՈՆՊՈՆԵՐՆ ՈՒ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԳՐԻԳՈՐ ԿԱՐՆԵՑՈՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.–ԺԸ. դդ. հայ սրբախոսական գրականության մեջ սկսում են տիրապետել «ժողովրդական» տեսակի վկայաբանությունները: Ընդլայնվում է վկաների կազմը՝ բարձր ծագում ունեցող նահատակների փոխարեն ավելի հաճախ սկսել են երեւալ հասարակ գյուղական քահանաներ եւ սովորական հավատացյալներ: Այս երկերը գրվել են պարզ լեզվով՝ հաստատակամություն եւ հավատարմություն ներշնչելով օտար տիրապետությունների ներքո կքած հայ ժողովրդին: Այժմ վկայաբանությունները գրի են առել վկաներին հարազատ մարդիկ, որոնք իրապատում ներկայացրել են ժամանակի քաղաքական, սոցիալական եւ կրոնական պատկերը: Եւ այնքան մանրամասն է նկարագրվել վկաների արտաքինն ու արարքները, որ կորել է նրանց ընդհանրացման սկզբունքը: Եթե նախկինում վկան ընկալվում էր ընտրյալ էակ, որի սխրանքն անհասանելի էր սովորական մահկանացուներին, ապա այժմ վկայի եւ ժողովրդի միջեւ տարածությունը կրճատվել է: Հաճախ կարելի է տեսնել, թե ինչպես են այլ մարդիկ փորձում փրկել վկային, ինչը հակասում է վաղ վկայաբանությունների տրամաբանությանը, երբ վկաների մտերիմներն իրենք էին խրախուսում նրանց նահատակությունը[2]:

Պետք է նշել, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վերաբերյալ երկերը ընդգրկված են Հ. Մանանդյանի եւ Հ. Աճառյանի կազմած «Հա-

---

[1]* *Ստացվել է՝ 1.03.2026, գրախոսվել է՝ 22.03.2026: Էլ. հասցե՝* shavarshazatyan@gmail.com:

[2] Ք. Տեր-Դավթյան, *Հայկական սրբախոսություն. վարքեր եւ վկայաբանություններ (V–XVIII դդ.), Երեւան, 2011, էջ 300–306:*

յոց նոր վկաներ» (1155–1843 թթ.) ժողովածուում[3]: Մոնղոլների եւ Կիլիկյան Հայաստանի մասին տեղեկությունները պահպանվել են գլխավորապես Գրիգոր Կարնեցի եպիսկոպոսի վկայաբանության էջերում: Վերջինս Ղեւոնդ Ալիշանը ներառել է նաեւ «Հայապատում»-ում[4], ցավոք, չնշելով, թե ինչ ձեռագրից է օգտվել: Հարկ է նշել, սակայն, որ նրա գրառած օրինակը, չնայած որոշ մանր տարբերությունների, համընկնում է Մանանդյանի եւ Աճառյանի հրատարակած օրինակին:

ՄՈՆՂՈԼՆԵՐՆ ՈՒ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Կարնեցու վկայաբանությունը գլխավորապես պատմում է փոքրասիական տիրույթների կառավարիչ Թեմուրտաշի հակաքրիստոնեական գործունեության մասին: Նշանավոր Զոբանյան տոհմից սերված եւ մուսուլմանություն ընդունած այս զորավարը որոշում է հալածել քրիստոնյաներին եւ թուլացնել նրանց դիրքերը տարածաշրջանում: Նրա հարձակման թիրախ են դառնում հայոց թագավորությունը եւ Կեսարիայի հույները: Բացի այդ՝ նա բարձրացնում է նաեւ քրիստոնյաներից հավաքվող հարկը[5], ինչը տնտեսական մեծ հարված էր առանց այդ էլ ծանր վիճակում գտնվող հայության համար: Տեղի տալով կարին քաղաքի մուսուլմանների սադրանքներին՝ նրա թուլլտվությամբ մահապատժի է ենթարկվում Կարինի եպիսկոպոս Գրիգորը[6]: Ահա հենց նրա նահատակությունն էլ հիմք է դարձել սրբախոսական երկի ստեղծման համար:

Ինչպես նշեցինք, վերոնշյալ Թեմուրտաշը փորձել է կողոպտել նաեւ հայոց թագավորությունը. «Եւ առդ միւնչ էր թուականն Հայոց Ջ. եւ Հ. (1321), ամբարիշտ ոմն յազգէն Նետողացն՝ որում անուն Դամուր Տաշասի, այս է իմն երկաթահար. եւ անօրէնն գայ յաշխարհն Հոռոմոց եւ տեսեալ զերկիրն Հայոց զԿիլիկիա, զի որպէս ճիւղ մի ձիթենւոյ մնացեալ դադարէիւն ի նեղ եւ անձուկ եւ ի խորշակահար երկրին բազում տառապանօք, ի մէջ երկուց անօրէն ազգացն այն՝ եգիպտացւոց եւ Արակլիացոց[7]:

---

[3] *Հայոց նոր վկաներ (1155–1843), աշխատ.՝* Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, *Վաղարշապատ, 1903:*

[4] Ղեւոնդ Ալիշան, *Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 530–532:*

[5] *Հայոց նոր վկաներ, էջ 121–122:*

[6] *Նույն տեղում, էջ 126–127:*

[7] *Ըստ Ղեւոնդ Ալիշանի՝ վկայաբանը նկատի է ունեցել Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը (*Ղեւոնդ Ալիշան *1901, էջ 530):*

Առ աւուրէն երկաթաբառն այն ի նախանձ մտեալ ընդ թագաւորն Հայոց վասն իրիք պատճառանաց եւ խորհէր աւարի առնուլ զերկիրն խոռխտանօք եւ մոմոայր իբրեւ զառիւծ, զօրս ժողովէր, հեծեալս կազմէր, դեսպանս առաքէր խաբեբանօք, զի ըմբռնեսցէ զթագաւորն Հայոց եւ զաշխարհս աւարի առցէ: Ջոր իմացեալ զչար խորհուրդն նենգաւորին՝ ոչ հնազանդեցան հրամանի նորա. այլ ամրացան յիւրաքանչիւր դղեակս եւ յամրոցս, ի բարձանս եւ այլ անառ կլանիս»[8]: *Վկայաբանի այս հաղորդումը, չնայած որոշ տարբերություններին, համընկնում է ժամանակի այլ աղբյուրների տվյալներին*[9]: *Սամուել Անեցու շարունակողը խոսելով Թեմուրտաշի այս նույն արշավանքի մասին, հայտնում է, որ նա բազում մարդկանց սպանեց եւ գերիներ տարավ*[10]: *Ներսես Պալիանենցն իր ժամանակագրության մեջ նույնպես արձանագրում է, որ հայերը կռահել էին Թեմուրտաշի նենգ ծրագիրը, կարողացել էին հաջողությամբ պաշտպանվել եւ սակավ կորուստներ կրել*[11]: *Միեւնույն ժամանակ, դեպքերին քաջատեղյակ Պալիանենցը մանրամասներ է նշում, որոնք համահունչ են նաեւ վկայաբանության տվյալներին.* «Յորում ժամանակի ասացեալ Դամուրտաշն բազում հեծելօք, ավելի քան ԼՌ (30 000) եւ բազում հետեւակօք, այսինքն ամենայն օդդուիւն իւր, ակամայ եւ բռնութեամբ ի յաշխարհն Հայոց ի Կիլիկեա մտաւ եւ բազում աւերս արար, սպանութիւն եւ աւար եւ բազում ջան եդ եթէ ամրոց ինչ կարիցէրն առնուլ, բայց ոչ կարաց: Այլ եւ ի նոյն Հայերոյն Թաթարինն բազում պակասութիւն եւ կորուստ ի յոմանս յանցս եւ ի կիրճս ընկալան եւ եթէ ոչ էր լեալ, զի ասէր Դամուրդաշն, եթէ «Ի սիրելաբար եւ ի տեսութիւն եմ եկեալ» եւ վասն այն զի երկընչէին Հայերն յայտնի վնասել Թաթարնոյն, ապայ թէ ոչ զամենայն կոտորեալ էին եւ սպառեալ»[12]: *Ղեւոնդ Ալիշանը, առանց հայտնելու իր տեղեկությունների աղբյուրը, նշում է, որ* «Թիմուրտաշ կամ Տամուրտաշ ասպատակէ ի Մսիս եւ յԱտանա եւ հալածի: Լեւոն ամրանայ յԱյաս»[13]:

Բնականաբար, Թեմուրտաշի հարձակումն ունեցել է ավելի զորավոր պատճառներ, քան մանկահասակ Հայոց արքա Լեւոն Ե.-ին (1320–1341)

---

[8] *Հայոց նոր վկաներ, 1903, էջ 122:*

[9] Լ. Տեր-Պետրոսյան, *Հայերը եւ խաչակիրները, հտ. Բ., Երեւան, 2007, էջ 404:*

[10] Սամուել Անեցի եւ շարունակողներ, աշխատ.՝ Կ. Մաթեւոսյանի, *Ժամանակագրություն, Երեւան, էջ 275:*

[11] Ն. Պալիանենց, *Ժամանակագրություն, Մանր ժամանակագրություններ, հտ. Բ., կազմեց՝ Վ. Հակոբյանը, Երեւան, 1956, էջ 188:*

[12] Ն. Պալիանենց, *1956, էջ 188:*

[13] Ղեւոնդ Ալիշան, *Սիսուան, Վենետիկ – Սբ. Ղազար, 1885, էջ 558:*

նախանձելը, ինչպես միամտաբար նշում է վկայաբանը, մանավանդ, որ հարձակումը սկսելուց առաջ նա որոշակի կապեր էր հաստատել նաեւ Եգիպտոսի մամլուքների հետ[14]։

Արաբ պատմիչ Աբուլ-Ֆիդան նույնպես չի նշում մոնղոլ կառավարչի հարձակման պատճառները։ Սակայն, ի տարբերություն հայկական աղբյուրների, հաղորդում է, որ Թեմուրտաշը, ճիշտ է, շուրջ մեկ ամիս ավերել ու կողոպտել է երկիրը, սակայն չի կարողացել բռնել Այասի բերդում ապաստանած Հայոց արքային. «Հիջրի թվականին բարձր Դուռը ժամանեց մի դեսպան Տեմիրտաշ իբն Զոբանի կողմից, որը Ռումի երկրի տեղակալն է։

Նույն տարին հիշյալ Տեմիրտաշը իր զորեւոր մտավ Սսի երկիրը եւ ասպատակեց ու ջարդեց, իսկ Սսի տերը փախավ Այասի բերդը, որը գտնվում էր ծովի վրա։ Տեմիրտաշը մոտ մի ամիս շարունակ կողոպուտի մատնեց երկիրը եւ վերադարձավ»[15]։ *Կարծում ենք՝ այս արշավանքի հիմնական պատճառն այն էր, որ իրեն մահդի հռչակած Թեմուրտաշն իր մուսուլման հովանավորների շրջանում սեփական հեղինակությունը ամրապնդելու համար սրբազան պատերազմ է նախաձեռնել ընդդեմ քրիստոնյաների[16], ինչպես նշում է Սմբատն իր Տարեգրքում.* «առ ի բառնալ զհրիստոնէութիւն»[17], *մանավանդ, որ այս շրջանում ունիթորական շարժումն ավելի էր խորացել՝ գրգռելով հարեւան մուսուլմանական կառավարիչներին[18]։*

Համաձայն վկայաբանության՝ այս արշավանքի ժամանակ մոնղոլական զորքը ներխուժել է Էջմիածնի վանք եւ կողոպտել այն. «Եւ անօրէն երկաթահարն այն մտեալ յերկիրն Հայոց բազում հետեւակօք եւ ձիաւորօք եւ բազում աւերմունս առաւին եւ զհրաշափառ եկեղեցին Էջմիածինն այրեցին հրով, ընդ նմին եւ զկէս քաղաքին»[19]։ *Հաշվի առնելով Էջմիածնի հեռավո-*

---

[14] Դ. Թունոյան, *Կիլիկիո հայոց թագավորությունը եւ ինքնիշխան կազմավորումները 1320–1424 թթ., Երեւան, 2011, էջ 25։*

[15] Աբուլ-Ֆիդա, *Ժամանակագրություն, Արաբական աղբյուրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյանը, Երեւան, 1965, էջ 247։*

[16] *Տես* J. Brack, A Mongol Mahdi in Medieval Anatolia: Rebellion, Reform, and Divine Right in the Post-Mongol Islamic World, Journal of the American Oriental Society *139.3 (2019), էջ 615, 618–620,* P. Cowe, Chapter Patterns of Armeno-Muslim Interchange on the Armenian Plateau in the Interstice between Byzantine and Ottoman Hegemony, Islam and Christianity in Medieval Anatolia, Routledge, *2015, էջ 97։*

[17] Ս. Սպարապետ, *Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 129։*

[18] Մ. Օրմանեան, *Ազգապատում, հտ. Բ., Սբ. Էջմիածին, 2001, էջ 2143։*

[19] *Հայոց նոր վկաներ, 1903, էջ 122։*

րութիւնը Կիլիկիայից եւ այլ աղբյուրների լռությունը նրա արշավանքի մասին, ինչպես նաեւ էջմիածնի Մայր տաճարի անմխիթար վիճակը, որի մասին կարճ ժամանակ առաջ (1300 թ.) ողբ էր գրել Ստեփանոս Օրբելյանը[20], կարծում ենք, որ Թեմուրտաշի արշավանքը չի վերաբերում Վաղարշապատի Մայր տաճարին[21]: Այս արշավանքի մասին խիստ կարեւոր տեղեկություն է պահպանվել 1321 թ. Երուսաղեմում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում. «Աւդ, աղաչեմ զամենեսեան, որ հանդիպիք ի սմա ընթերցման բանի եւ սղալի, նա դուք ուղղեցէ՛ք սիրով եւ մի՛ եպերելի, զի ի վշտալից ժամս գրեցի, յորժամ անաւէն ազգն Մահմետի յարեան ի վերա երկրին Կիլիկէի եւ աւար արարին եւ բազումք գերիվարեցին, եւ զսուրբն եկեղեցիսն վերուստ ի վայր տապալեցին, որ էջմիածին անուն կոչի, եւ զայլսն»[22]: Համադրելով վկայաբանության եւ Ավետարանի գրիչ Ներսես աբեղայի հաղորդած տեղեկությունները՝ կարող ենք ասել, որ այս Սուրբ էջմիածին եկեղեցին եղել է Կիլիկիայի քաղաքներից մեկում: Յավոք, էջմիածին անունով եկեղեցու մասին տեղեկություններ չեն պահպանվել այլ աղբյուրներում, ինչը վկայում է, որ այս եկեղեցին երկար կյանք չի ունեցել: Ըստ ամենայնի, այն եղել է Սսի մեծ եկեղեցիներից մեկը[23] եւ կառուցվել է կաթողիկոսական աթոռը 1292 թ. Հռոմկլայից հարկադրաբար տեղափոխելուց հետո՝ գոյատեւելով մինչեւ 1321 թ., երբ Թեմուրտաշն այն ավերել է: Ըստ ամենայնի, Սիս մայրաքաղաքում Սբ. էջմիածին անունով եկեղեցու կառուցումն, ի թիվս այլ ձգտումների, ներառված էր հայոց կաթողիկոսության վերակառուցման կամ վերակազմակերպման ծրագրում, որի համաձայն՝ նվիրապետական կառույցը պետք է ունենար խորհրդանշա-

---

[20] *Նույն այդ ժամանակ էջմիածնի Մայր տաճարի տխուր պատկերի մասին կարելի է պատկերացում կազմել նաեւ Մխիթար Սասնեցուն նվիրված ներբողից, երբ նա իր ընկերակիցների հետ կարճ ժամանակով լինում է այնտեղ (*Ստեփաննոս Օրպելեանի Ողբ ի Ս. Կաթողիկիեին, *հրատարակեց* Կ. Կոստանեանցը, *Թիֆլիս, 1885,* Գ. Յովսեփեան, *Մխիթար Սասնեցի (1260?-1337), Արարատ, 1899,* Դ.–Դ., *էջ 166):*

[21] *Ըստ Պ. Քաուի՝ Թեմուրտաշը Կիլիկիայում հաջողության չհանելուց հետո արշավել է Մեծ Հայք եւ այստեղ ավերել էջմիածնի Մայր տաճարը (տե՛ս* P. Cowe, Martyrology of Boshop Grigor of Karin *(*Erzurum*), էջ 795): Կարծում ենք, որ հետազոտողի նման ենթադրության պատճառը եկեղեցիների հարանունությունն է եղել, եւ վկայաբանը չի հիշատակել էջմիածնի Մայր տաճարը: Նույն սխալը կարելի է հանդիպել նաեւ այլ հետազոտողների մոտ (տե՛ս* Dashdondog Bayarsaikhan, Armenian Hagiography on the Ilkhans, New Approaches to Ilkhanid History, Editors: T. May, B. Dashdondog, and Ch. P. Atwood. Series: Brill's Inner Asian Library, *2020,* Vol. *39, էջ 380):*

[22] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԴ. դար, մաս Ա., կազմեցին* Լ. Խաչիկյանը, Ա. Մաթեւոսյանը, Ա. Ղազարոսյանը, *Երեւան, 2018, էջ 433:*

[23] Ղեւոնդ Ալիշան, *1901, էջ 530:*

կան, արժեբանական կենտրոն[24]: Ըստ ամենայնի, այս հարցը եղել է Գրիգոր Է. Անավարզեցի կաթողիկոսի (1293–1307) ծրագրերում՝ ընդդեմ հակամետ գործիչների[25]:

Ինչպես արդեն նշել ենք, Թեմուրտաշը բռնություններ է իրագործել ոչ միայն հայերի նկատմամբ, այլ նաեւ՝ հույների: Համաձայն Գրիգոր Կարնեցու վկայաբանության՝ «Եւ ելեալ անդրէն եկաւ ի Կեսարիա Կապադովկացւոց եւ զխաչն Սերախայ, առեալ մանրեցին, բանզի էր կազմեալ յոսկոյ սրբոյ. եւ բազում բահանայս ի հռոմադաւան հրիստոնէիցն նահատակեցին. զոր Տէր Յիսուս հատուցէ նոցա զհատուցումն նոցա նոցին»[26]:

Անկասկած, այս Սերախայի խաչը եղել է Կեսարիայի քրիստոնյաների կարեւոր սրբություններից մեկը եւ բազմաթիվ այլ մասունքների հետ միասին թալանվել եւ ոչնչացվել է Թեմուրտաշի կողմից: Այս փաստը նույնպես ամրապնդում է այն տեսակետը, որ Թեմուրտաշի գլխավոր նպատակն էր քրիստոնեության ոչնչացումը Կիլիկիայում եւ Փոքր Ասիայի այլ տարածքներում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ Գրիգոր Կարնեցու վկայաբանությունը եզակի տեղեկություններ է հայտնում Թեմուրտաշի հակաքրիստոնեական գործունեության մասին, որը վրիպել է ժամանակագիրների աչքից: Կարեւոր է, որ վկայաբանի տեղեկությունները հաստատում է ժամանակակից հիշատակարանագիրը: Վկայաբանությունը փաստում է, որ այդ ժամանակ իսլամ ընդունած մոնղոլները փոխել էին իրենց դրական վերաբերմունքը Հայոց թագավորության նկատմամբ եւ անցել էին նրանց թշնամիների կողմը:

---

[24] Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Հայոց կաթողիկոսության տեղագրական-կանոնական կազմակերպման առանձնահատկությունները եւ հեռանկարները ԺԳ. դարում – ԺԴ. դարի սկզբին, Կանթեղ, 2007, № 4, էջ 108–118,* Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Հայոց կաթողիկոսության դավանաբանական կազմակերպման խնդիրները ԺԴ. դարի առաջին կեսին, Հայոց պատմության հարցեր, 2006, № 7, էջ 13–29:*

[25] Մ. ՕՐՄԱՆԵԱՆ *2001, էջ 2031–2106:*

[26] *Հայոց նոր վկաներ, 1903, էջ 122–123:*

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Վկայաբանություն, Գրիգոր Բալուեցի, Գրիգոր Կարնեցի, Թեմուրտաշ, Կիլիկիա, Էջմիածին, Լեւոն Ե., Կեսարիա, Սերախայի խաչ:

РЕЗЮМЕ

Армянские мартирологи XII–XVIII веков отличаются простотой и непосредственностью повествования. В отличие от аналогичных произведений предшествующего периода, они характеризуются реализмом; в них отсутствует тенденция к абстрагированию образов героев. Следует подчеркнуть, что данные агиографические памятники более детально отражают реалии эпохи: иностранное владычество, мировоззрение, а также быт и повседневную жизнь населения.

Этим же чертам соответствуют мартирологии, описывающие период монгольского господства. В частности, мартиролог Григория Карнеци повествует о непрекращающемся насилии и беззаконии со стороны монголов, а также о процессе постепенного усиления чужеродного элемента, в особенности мусульманского населения, в городах Армении.

Исключительную важность представляют сведения, касающиеся взаимоотношений между монголами и Киликийским армянским царством. Согласно свидетельствам агиографа, Тимурташ (из рода Чобанидов), наместник подвластных монголам территорий в Малой Азии, принял ислам и инициировал гонения на христиан. Его военная экспансия была направлена прежде всего против армян и, в частности, против Армянского королевства. Как отмечает автор, монгольское войско вторглось в Киликию, разрушило крепости и предприняло попытку захватить в плен царя Левона V. Не достигнув значительных успехов, захватчики разрушили церковь Св. Эчмиадзин и отступили. Хотя другие источники также упоминают об этом походе, в них отсутствует информация о разрушении вышеупомянутого храма. Лишь в колофоне одного из Евангелий, датируемого тем же временем (1321 г.), содержится аналогичное свидетельство. Это позволяет сделать вывод, что данная церковь была одним из значимых духовных центров Киликии, который просуществовал недолго и не был восстановлен после нашествия Тимурташа, оставшись неизвестным последующим авторам и исследователям. Мартиролог также сообщает важные сведения о разоре-

нии одного из греческих монастырей Кесарии и уничтожении Креста Серахи – одной из важнейших местных святынь.

SUMMARY

Armenian hagiographies from the 12th to the 18th centuries are distinguished by the simplicity and directness of their narrative. Unlike similar works from the preceding period, they are characterized by realism; there is no tendency to abstract the images of the heroes. It should be emphasized that these hagiographic monuments reflect the realities of the era in greater detail: foreign rule, worldview, as well as the daily life and customs of the population.

Hagiographies describing the period of Mongol rule share these same characteristics. In particular, the Martyrdom of Grigor Karnetsʿi recounts the Mongols' unceasing violence and lawlessness, as well as the gradual increase in the foreign elements–especially the Muslim population–in the cities of Armenia.

Information regarding the relations between the Mongols and the Armenian Kingdom of Cilicia is of exceptional importance. According to the hagiographer, Timurtash (of the Chobanid dynasty), the governor of the Mongol-controlled territories in Asia Minor, converted to Islam and initiated the persecution of Christians. His military expansion was directed primarily against the Armenians and, in particular, against the Armenian Kingdom. As the author notes, the Mongol army invaded Cilicia, destroyed fortresses, and attempted to capture King Leo V. Having failed to achieve any significant success, the invaders destroyed the Church of Holy Etchmiadzin and retreated. Although other sources also mention this campaign, they contain no information about the destruction of the aforementioned church. Only the colophon of one of the Gospels, dated to the same period (1321), contains similar evidence. This leads to the conclusion that this church was one of the significant spiritual centers of Cilicia, which did not last long and was not restored after Timurtash's invasion, remaining unknown to subsequent authors and researchers. The hagiography also provides important information about the destruction of a Greek monastery in Caesarea and the loss of the Cross of Serakha – one of the region's most important relics.

Doi: 10.56737/2953-7843-2026.01-136

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԺԶ.–ԺԷ. ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը գիտական.ակադեմիական շրջանակի եւ Հայոց պատմությամբ հետաքրքրվող հանրության դատին է հանձնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գիտնական միաբան, Արժանապատիվ Տեր Արարատ քահանա Պողոսյանի «Սուրբ Էջմիածնի դերը ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում» մենագրությունը[2]: Ուսումնասիրությունը նիրված է ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազգային-ազատագրական պայքարում համահայկական ազգային կառույց-միջնաբերդ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ նրա արժանավոր գահակալների գործունեության լուսաբանմանն ու արժեւորմանը:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը որակական նոր փուլ նշանավորեց հայոց ազգային պատմության անաչառ եւ համակողմանի հետազոտության առումով: Նախկինում գոյություն ունեցող կուսակցական-գաղափարական կաղապարների ու սահմանափակումների վերացումը հնարավորություն ընձեռեց նորովի արժեւորելու Հայոց Եկեղեցու՝ որպես առանցքային ազգային-պետական կառույցի պատմական դերակատարությունն ու նշանակալի ներդրումը:

Հատկանշական է, որ հայոց միասնական պետության բացակայության շրջափուլերի ուսումնասիրությունն անխզելիորեն շաղկապված է Հայոց Եկեղեցու պատմության քննության հետ: Պետական, կենտրոնական իշխանության մարմինների ու կառույցների բացակայության պայ-

---

[1]* *Ստացվել է՝ 22.12.2025, գրախոսվել է՝ 13.03.2026:*

Էլ. հասցե՝ avharutunyan@mail.ru, armanmaloyan1976@gmail.com, nare-luys@mail.ru:

[2] Տեր Արարատ քահանա Պողոսյան, *Սուրբ Էջմիածնի դերը ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում (խմբ.՝ Աշոտ Մելքոնյան), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2025 թ., 312 էջ:*

մաններում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ստանձնել եւ իրականացրել է պետական իշխանությանը բնորոշ բազմաթիվ գործառույթներ՝ հանդես գալով որպես համայն հայության ներկայացուցչական մարմին: Սուրբ Էջմիածինը, լինելով հայության հարատեւ հոգեւոր կենտրոնն ու ազգային ինքնության պահապանը, հետեւողականորեն վարել է պետականամետ ու ազգանվեր քաղաքականություն: Այդ համատեքստում Հայոց Եկեղեցու գահակալները դիտարկվում են ոչ միայն որպես հոգեւոր-կրոնական գերագույն իշխանության ղեկավարներ, այլեւ համազգային առաջնորդներ, որոնք ուղղորդել են հայ ժողովրդի քաղաքական եւ մշակութային կյանքը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայության անխաթար ու հարատեւ հոգեւոր կյանքի առանցքն է, որը դարեր շարունակ վարել է հայ ինքնության եւ ազգային դիմագծի անդավաճան ու նվիրյալ պահապանի առաքելությունը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը գործել է որպես համազգային բարձրագույն հոգեւոր-կրոնական հաստատություն՝ հետեւողականորեն շարունակելով իր որդեգրած պետականամետ եւ ազգակենտրոն ռազմավարությունը: Հետեւապես՝ Հայոց Եկեղեցին ոչ միայն ազգային-հոգեւոր կյանքի կազմակերպիչն է, այլեւ համազգային շահերի ջերմեռանդ պաշտպանը, որն իր բազմադարյա գործունեությամբ նպաստել է հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային համախմբմանը, առանձնապես՝ ազգային միասնական պետության բացակայության պայմաններում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ սույն մենագրության քննության առարկա ժամանակաշրջանը հայոց պատմության առավել քիչ ուսումնասիրված պատմափուլերից է: Այս շրջափուլի բազմաթիվ առանցքային հիմնահարցեր ու իրադարձություններ դեռեւս կարոտ են համակարգված եւ խորքային գիտական հետազոտության ու վերլուծության: Հետեւաբար՝ առաջնահերթություն է դառնում հետազոտական հետաքրքրության խթանումը պատմագիտական այն թեմաների նկատմամբ, որոնք, չնայած իրենց կարեւորությանը, դուրս են մնացել գիտական լայն շրջանակների ուշադրությունից ու համակողմանի ուսումնասիրությունից: Այսօր առավել, քան երբեւէ, հայ պատմագիտությունը պարտավորություն ունի՝ սեփական ժողովրդի պատմությունը եւ քաղաքակրթական ձեռքբերումները պաշտպանելու տարատեսակ ոտնձգություններից, զեղծարարություններից ու կեղծարարություններից, օտարների կողմից հայկական մշակութային ժառանգությունը սեփականելու մոլուցքից եւ նկրտումներից: Այս համատեքստում հրատապ է դառնում աղբյուրագիտական լայն հենքով ու

համապատասխան մեթոդաբանական հիմնավորմամբ կատարված գիտական հետազոտությունների հրատարակումը: Հատկապես շատ կարեւոր է օտարալեզու վավերագրերի համակողմանի ու քննողաբար օգտագործումը: Դա մեծապես կնպաստի տարածաշրջանում հայկական մշակութային-քաղաքական ներկայության հանրահռչակմանը:

*Արժանապատիվ Տեր Արարատ քահանա Պողոսյանի «Սուրբ էջմիածնի դերը ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում» մենագրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ընտրված թեմայի արդիականությամբ եւ հրատապությամբ: Հատկապես նշելի է այն հանգամանքը, որ ԺԶ.–ԺԷ. դարերում հայ ազատագրական պայքարի գաղափարական նախապատրաստման եւ կազմակերպման գործում Հայոց Եկեղեցու դերակատարությունը՝ որպես առանձին ուսումնասիրության թեմա, հեղինակից առաջ գիտական առանձին, լուրջ հետազոտության չի ենթարկվել: Այս դիտանկյունից մենագրությունը հայ պատմագիտության մեջ առաջին գիտական աշխատանքն է, եւ, ի պատիվ հեղինակի, պետք է արձանագրենք, որ նաեւ՝ արժեքավոր աշխատանք: Ուսումնասիրության գիտական նորույթն ապահովում են գիտական շրջանառության մեջ դրված եւ համապատասխան ժամանակաշրջանի հայոց պատմությունն ուսումնասիրող մասնագետներին հասանելի դարձրած՝ հայերեն եւ օտարալեզու բազմաթիվ արխիվային վավերագրերից, պատմագրական երկերից, պատմագիտական աշխատություններից, ուսումնասիրություններից եւ մամուլից մեջբերված՝ սկզբնաղբյուրային արժեք ունեցող մեծածավալ տեղեկություններն ու տվյալները: Մենագրության մեջ լայնորեն օգտագործվել են ինչպես նորահայտ, այնպես էլ արդեն հրապարակված արխիվային փաստաթղթեր, որոնց հիման վրա նորովի են լուսաբանվել մի շարք առանցքային հարցեր: Այդ արխիվային փաստաթղթերը՝ վավերագրերն ու զեկուցագրերը, հիմնականում պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության, Վատիկանի Առաքելական եւ Հավատի տարածման ժողովի (*Sacra Congregatio de Propaganda Fide *կամ ուղղակի՝* Propaganda Fide, *հայերեն՝ Հավատասփյուռ ժողով, Հավատի տարածման հանձնախումբ կամ Հավատի տարածման հանձնաժողով) պահոցներում: Դրանց մի մասը սույն մենագրությամբ գիտական շրջանառության մեջ է դրվել առաջին անգամ:*

Հեղինակը հանգամանորեն լուսաբանել ու ներկայացրել է ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական շարժման պատմությունը՝ առանձնապես կա-

րեւորելով հայ ազատագրական պայքարի գաղափարական հիմքերն ու նպաստող հանգամանքները եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղն ու դերը, 1547 թ. Ս. Էջմիածնի եւ 1562 թ. Սեբաստիայի գաղտնի ժողովների արդյունքներն ու Աբգար դպիր Եվդոկացու (Թոխատեցի) բանագնացությունը, Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսի՝ ազատագրական պայքարի ուղղությամբ իրականացրած գործունեությունը եւ դրանց առնչվող տարաբնույթ այլ հարցեր: Առաջադրված խնդիրների բարեհաջող լուծմանը մեծապես նպաստել են հեղինակի կողմից թեմային վերաբերող աղբյուրագիտական հասանելի նյութերի գրեթե ամբողջական ուսումնասիրությունը եւ դրանց քաջատեղյակությունը: Ամբողջովին քննական ու վերլուծական բնույթ ունի թեմային վերաբերող մասնագիտական գրականության տեսությունը[3], որը, բացի իր հիմնական նշանակությունից, հեղինակին լրացուցիչ հնարավորություն է ընձեռել թեմայի գիտականությունն ու արդիականությունը համոզիչ ու հիմնավոր ներկայացնելու համար:

Ներկայացված աշխատությունը, հիրավի, համակողմանի եւ արժեքավոր հետազոտություն է: Հեղինակին հաջողվել է ապահովել թեմայի տրամաբանական եւ հետեւողական զարգացումը՝ ցուցաբերելով գիտական վերլուծության բարձր մակարդակ եւ հետազոտական ակնառու հմտություններ: Աշխատանքին բնորոշ է առաջադրված դրույթների ու եզրահանգումների փաստարկված հիմնավորվածությունը: Շարադրանքն աչքի է ընկնում լեզվաոճական պատշաճ հղկվածությամբ եւ ակադեմիական գրագիտությամբ, ինչը լիովին համապատասխանում է գիտական աշխատությանը ներկայացվող արդի չափանիշներին:

Մենագրությունն ունի կուռ կառուցվածք եւ տրամաբանական բաժանում: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, անգլերեն ու ռուսերեն ամփոփումներից, որոնք ապահովում են հետազոտության միջազգային հասանելիությունը, հատուկ անունների (անձնանուններ եւ տեղանուններ), օգտագործված աղբյուրների եւ գրականության ցանկերից: Ընդհանուր ծավալը 312 էջ է:

Հետազոտության արժանիքներից են թեմային առնչվող աղբյուրների ու մասնագիտական գրականության տվյալներին քննողաբար մոտենալը, օգտագործված սկզբնաղբյուրների եւ մասնագիտական գրականության

---

[3] *Տե՛ս* Տեր Արարատ քահանա Պողոսեան, *Սուրբ Էջմիածնի դերը ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում, էջ 43–47:*

հարուստ մատենագիտական ցանկը, ինչպես նաեւ օժանդակ ցուցիչների (անձնանունների եւ տեղանունների բառարաններ) ցանկերը։

Գիրքը բացվում է մենագրության խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի խմբագրականով։ Ականավոր հայագետը, առանձնակի կարեւորելով այն աքսիոմատիկ ճշմարտությունը, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունը հնարավոր չէ դիտարկել հայ ժողովրդի պատմությունից առանձնացված, մեկուսի, արձանագրում է հետեւյալը. «....Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մշտապես հանդես է եկել ոչ միայն որպես հոգեւոր կենտրոն, այլ նաեւ հայի ինքնության պահապան ու ազգային բաղաձականություն վարող գործուն հաստատություն, որի կաթողիկոսները հանդես են եկել իբրեւ ազգային առաջնորդներ»[4]։ *Այնուհետեւ արժանիորեն գնահատելով աշխատության հեղինակի կատարած գործը՝ Ա. Մելքոնյանը դրվատանքի խոսքերով է արտահայտվում ամբողջ մենագրության մեջ կարմիր թելի պես ակնառու եւ հիմնավորված այն թեզի մասին, ըստ որի՝ Սուրբ Էջմիածինը դարձել է* «ոչ միայն հավատի ամրոց, այլեւ ազատագրական շարժման գաղափարական օջախ՝ կազմակերպչական եւ բաղաձական դերակատարություն ստանձնած Ամենայն Հայոց կաթողիկոսների գլխավորությամբ»[5]։ *Վաստակաշատ պատմաբանն իր խոսքում ուշադրություն է հրավիրում նաեւ այն հանգամանքի վրա, որ մենագրության հեղինակն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել ներհայաստանյան միավորումն ապահովող նախապայմաններին՝ համազգային դիմադրության նպատակով համախմբման, միասնական պայքարի անհրաժեշտության գիտակցման ու այդ պայքարի կազմակերպման նախադրյալներին։ Համահայկական միասնական պայքարի կազմակերպման տեսանկյունից կարեւորելով Մայր Աթոռի գործունեությունը՝ մեծանուն հայագետն իրավացիորեն եզրակացնում է, որ* «....Սուրբ Էջմիածինը դառնում է ոչ միայն անցյալի, այլեւ մեր ժամանակների համահայկական հոգեւոր-բաղաձական խորհրդանիշ, որի պատմական փորձը կարող է ուղենշել ազգային բաղաձական նոր օրակարգերի հիմքում ընկած արժեհամակարգային առանցքները»[6]։

---

[4] Տեր Արարատ քահանա Պողոսեան, *Սուրբ Էջմիածնի դերը ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում, էջ 7։*

[5] *Նույն տեղում, էջ 8։*

[6] *Նույն տեղում, էջ 8–9։*

Ա. Մելքոնյանը, բարձր գնահատելով Տեր Արարատ քահանա Պողոսյանի հեղինակած մենագրությունը, այն համարում է ակադեմիական համայնքի, եկեղեցագիտական, պատմագիտական ու հայագիտական շրջանակների, ինչպես նաեւ պետական, ռազմավարական ու կրթական ոլորտների համար «բացառիկ արժեք ունեցող գիտական ուղեցույց՝ հայ ազգային գաղափարախոսության եւ այն կրող եկեղեցու պատմական դերակատարման վերարժեւորման ճանապարհին»[7]:

Իր «Երկու խոսք»—ում մենագրության հեղինակ Տեր Արարատ քահանա Պողոսյանը անդրադառնում է գրքի լույսընծայման նպատակին, ուսումնասիրության առանցքում ընկած դեպքերին ու իրադարձություններին, աշխատության առանձնահատկություններին, ազատագրական շարժման աշխուժացման ներազգային ու անդրազգային-արտաքին գործոններին: Երախտագետ հետազոտողը գոհունակությամբ է հիշատակում եւ որդիական խոնարհությամբ շնորհակալություն հայտնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որի օրհնությամբ հնարավորություն է ունեցել ուսանելու Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Ապա գնահատանքի ու երախտիքի խոսք է հղում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում իրեն դասավանդած հոգեւորական ու աշխարհական բոլոր դասախոսներին, իր ընտանիքի անդամներին, թեկնածուական ատենախոսության ղեկավարներին՝ պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, լուսահոգի Պետրոս Հովհաննիսյանին եւ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանին, որոնց մասնագիտական խորհուրդներն ու օժանդակությունն անփոխարինելի են եղել թեկնածուական ատենախոսության շարադրման ընթացքում: Հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում նաեւ Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի՝ մասնավորապես Հայոց պատմության ամբիոնի բոլոր դասախոսներին, որոնք նպաստել են ուսումնասիրության իրականացմանը[8]:

Ներածության մեջ մենագրության հեղինակն ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է աշխատության արդիականությունը, հետազոտության առարկան, նպատակը եւ խնդիրները, ժամանակագրական ընդգր-

---

[7] Տեր Արարատ քահանա Պողոսյան, *Սուրբ Էջմիածնի դերը ԺՉ.—ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում*, էջ 9:

[8] *Տե՛ս նույն տեղում*, էջ 9—10:

կումը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը եւ գիտական նորույթը, թեմայի ուսումնասիրման աստիճանը, օգտագործված աղբյուրների եւ գրականության համառոտ, բայց եւ համապարփակ տեսությունը, աղբյուրագիտական հիմքը եւ հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, մենագրության ստեղծման անհրաժեշտությունը եւ գործնական-կիրառական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը։

Առաջին գլխում՝ «Հայ ազատագրական պայքարի գաղափարախոսությունը եւ դրան նպաստող հանգամանքները», որը բաժանված է երեք ենթագլուխների (ա. «Խաղաղության եւ պատերազմի ընկալումներն Աստվածաշնչում եւ Եկեղեցում», բ. «ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարի գաղափարական հիմքերը «արդարացի պատերազմ» սկսելու արդի տեսության լույսի ներքո», գ. «ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարի աշխուժացմանը նպաստող հանգամանքները»), ներկայացված ու լուսաբանված են խաղաղության եւ պատերազմի ընկալումներն Աստվածաշնչում, ինչպես նաեւ Հայոց Եկեղեցու դիրքորոշումը պատերազմների եւ արյունահեղությունների նկատմամբ։ Այս գլխի առաջին ենթագլխում ներկայացնելով պատերազմի եւ խաղաղության վերաբերյալ քրիստոնեական Եկեղեցում առկա երկու հիմնական մոտեցումները՝ խաղաղարարական ու պատերազմի միջոցով արդարության վերահաստատման մասին, ինչպես նաեւ Հին եւ Նոր Կտակարանների, հայ ու օտար եկեղեցական հայրերի, հայ եկեղեցական մատենագրության, պատմագրության ու որոշ ծիսամատյանների քննությունը, հեղինակն արձանագրում է, որ ներդաշնակ ընկալում կա պատերազմի եւ խաղաղության հարցում։ Եթե ըստ խաղաղասիրական գաղափարների՝ պատերազմը որեւէ պարագայում չի կարող արդարացվել, ապա ըստ արդարացի պատերազմի տեսաբանների՝ պատերազմը կարող է արդարացվել որոշակի պայմաններում։ Այս մոտեցումը Եկեղեցին համակարգել եւ մշակել է դարեր շարունակ։ Արդարացի պատերազմի հիմնավորման տարրեր կարելի է գտնել Հայ Եկեղեցու եւ հայ ազատագրական պայքարի պատմության բոլոր շրջափուլերում[9]։ Հետագա շարադրանքում հեղինակը նշում է, որ համաձայն քրիստոնեական ոգուն եւ ավետարանական պատվերներին՝ տարփողվում է խաղաղությունը, ու երանի է տրվում խաղաղարարներին, բայց եւ միա-

[9] *Տե՛ս* Տեր Աբրահամ քահանա Պողոսեան, *Սուրբ էջմիածնի դերը ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում, էջ 38–39։*

ժամանակ արդար են հանուն քրիստոնեական արժեքների պաշտպանության ու «Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» մղվող պատերազմներն ու ինքնապաշտպանական մարտերը, որոնք ընթացել են «արդարացի պատերազմ»—ի սկզբունքների եւ չափորոշիչների խստիվ պահպանմամբ ու հայկական միջավայրին բնորոշ ուրույն ճանապարհով: Թեեւ Եկեղեցին իր բնույթով, էությամբ ու առաքելությամբ խաղաղության ջատագով է, սակայն դա չի նշանակում, որ Եկեղեցին չի կարող նախաձեռնել անհրաժեշտ գործողություններ՝ սեփական սրբություններն ու իր հետեւորդներին պաշտպանելու համար[10]:

Մենագրության առաջին գլխի երկրորդ ենթագլխում հեղինակը ներկայացնում ու բացահայտում է հայ ազատագրական պայքարի գաղափարական հիմքերը «արդարացի պատերազմի» արդի տեսության ներքո: Նա հանգամանորեն մեկնաբանում է արդարացի պատերազմ սկսելու այսօրվա՝ միջազգայնորեն ընդունված վեց չափանիշները (արդարացի հիմք, արդար նպատակ, համապատասխան իշխանություն, վերջնահանգրվան, հաջող ավարտի հավանականություն, համաչափություն)՝ դրանք համադրելով հայ ազատագրական պայքարի ընթացքի հետ: Հիրավի, իր հիմնադրման առաջին դարերից սկսած՝ Հայոց Եկեղեցին մշտապես հանդես է եկել հայոց պետության ինքնիշխանության պաշտպանության ու քաղաքական անկախության պահպանման դիրքերից: Հայոց Եկեղեցին իր առաքելությանը զուգահեռ որդեգրել ու վարել է այնպիսի քաղաքական գիծ, որի նպատակն էր իր պատմական հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում, կերտել համահայկական միասնական զորեղ պետություն, որտեղ Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդն ստիպված չէր լինի պայքարել իր հավատի ուղղափառությունը պահպանելու համար, Հայոց Եկեղեցու հետեւորդ քրիստոնյան երկյուղ չէր կրի իր հոգեւոր պատկանելության համար կամ հարկադրված չէր թաքցնի սեփական կրոնական համոզմունքներն ու հավատքը՝ բարձր պաշտոններ ստանձնելու, այլադավանների խտրական վերաբերմունքին չարժանանալու, ինչպես նաեւ հետապնդումներից ու բացահայտ հալածանքներից խուսափելու համար: Հայոց Եկեղեցու՝ ազատագրական պայքարի կազմակերպչի եւ գաղափարական ու հոգեւոր առաջնորդի նպատակը միմիայն իր հետեւորդների համար ապահով, խաղաղ ներքաղաքական իրադրության ստեղծումն էր: Անչափ կա-

[10] *Տե՛ս նույն տեղում, էջ 88–89:*

րեւոր էին նաեւ ինքնիշխան, անկախ, միասնական ազգային պետության վերականգնումն ու զորեղացումը, որը, հաստատապես, յուրաքանչյուր ժողովրդի համար արդարացված, նվիրական ու գերագույն նպատակ է, նույնիսկ եթե դա կարող է խախտել հարեւան կամ այլ ասպատակիչ ու նվաճող ցեղերի եւ ժողովուրդների հոգեւոր ու քաղաքական անկախության կամ բռնակալական տիրապետության սահմանները։ Հետազոտողը, ամփոփելով այս ենթագլխի շարադրանքը, ընդհանրացնում է, որ ուշ միջնադարում հայ եկեղեցականներն արդեն իսկ ծանոթ էին արդարացի պատերազմի գաղափարական հիմքերին ու տեսությանը, իսկ ուսումնասիրված ժամանակաշրջանի եկեղեցականները՝ հատկապես Հայոց կաթողիկոսները, ժամանակի ուսյալ եւ քաջատեղյակ գործիչներ լինելով, խորագիտակ էին հայ եւ օտարալեզու եկեղեցական գրականությանը, ուստի իրենց՝ հայ ազատագրական պայքարի ուղղությամբ ծրագրած գործողություններն ու նախաձեռնություններն իրականացրել են այդ գաղափարական հիմքով, որը չի հակասել ընդհանուր քրիստոնեական եւ առավել եւս Հայոց Եկեղեցու դավանած գաղափարներին, մոտեցումներին ու դիրքորոշումներին[11]։

Առաջին գլխի երրորդ ենթագլխում ներկայացնելով ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարի աշխուժացմանը նպաստող հանգամանքները՝ հեղինակն առանձնացրել ու մանրամասնորեն լուսաբանել է ներքին ու արտաքին նպաստավոր պայմանները, այս համատեքստում դիտարկել հայ ժողովրդի ազատագրական պայքարում հայ գաղթավայրերի խաղացած դերը, մասնակցության եղանակները՝ հատկապես հայ ժողովրդի ազատագրական խնդիրները եվրոպական արքունիքներում ներկայացնելուն եւ գաղութահայության գործուն մասնակցությունը հակաթուրքական պայքարին (դիվանագիտական կամ ռազմական՝ պատերազմական գործողություններին անմիջականորեն մասնակցելու ձեւով)։ ԺԶ.–ԺԷ. դդ. խիստ կարեւորվում էին բուն հայրենիքի շուրջ համախմբումը, պայքարի գաղափարախոսության հղկումն ու տարածումը, ինչի շնորհիվ Սուրբ Էջմիածինը ԺԶ.–ԺԷ. դդ. դառնում է կապող օղակ նախորդ դարերի եկեղեցական-քաղաքական գաղափարների եւ որոնումների ու ԺՀ. դ. ծավալված հայ ազատագրական պայքարի միջեւ։

---

[11] *Տես* Տեր Աբաբաս քահանա Պողոսեան, *Սուրբ Էջմիածնի դերը ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում, էջ 109–110։*

Ամփոփելով ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության եւ ազգային-ազատագրական պայքարի աշխուժացմանը նպաստող հանգամանքների լուսաբանումը՝ Տեր Արարատ քահանան եզրակացնում է, որ ԺԶ. դարում թե՛ Հայաստանում, թե՛ հայ գաղթօջախներում ապրող հայության շրջանում հասունացել էր Հայաստանն օտար տիրապետություններից ազատագրելու մտայնությունը: Այդ գիտակցումն ունեին ԺԶ.–ԺԷ. դարերի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ նվիրապետական որոշ աթոռների գահակալներն ու թեմակալ առաջնորդները, որոնք, Ամենայն Հայոց կաթողիկոսների առաջնորդությամբ, գործադրում էին մեծ ջանքեր՝ հրավիրելով գաղտնի հանդիպումներ, խորհրդաժողովներ, կազմելով ու առաջնորդելով պատվիրակություններ ու բանագնացների խմբեր, ստեղծելով ուղիղ եւ միջնորդավորված կապեր ու հարաբերություններ Հայաստանի ազատագրության խնդրով շահագրգիռ ազգակից կամ օտար ուժերի հետ[12]:

Երկրորդ գլխում, որը վերնագրված է «1547 թ. Սուրբ Էջմիածնի եւ 1562 թ. Սեբաստիայի խորհրդաժողովների նշանակությունը ԺԶ. դարի հայ ազատագրական պայքարի ծրագրերում», բաղկացած է երկու ենթագլուխներից (ա. «1547 թ. Ս. Էջմիածնի խորհրդաժողովը եւ դրա արդյունքը», բ. «1562 թ. Սեբաստիայի խորհրդաժողովը եւ Աբգար դպիր Եւդոկացու (Թոխաթեցու) բանագնացությունը»): Առաջին ենթագլխում Արժանապատիվ Տեր Արարատ քահանա Պողոսյանը համակողմանի անդրադարձ է կատարել 1547 թ. Սուրբ Էջմիածնում գումարված գաղտնի խորհրդաժողովին՝ ընդգծելով, որ պայքարն այս շրջանում կրել է համակարգված բնույթ, եւ այդ պայքարը գլխավորողներն են դառնում ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոսները՝ ստանձնելով Հայաստանի ազատագրության շարժումը կազմակերպելու գործը: Ենթագլխում փաստարկումներով ներկայացված եւ բացահատված են քննվող ժամանակաշրջանում տեղի ունեցած ազատագրական ոգորումների միտումներն ու առանձնահատկությունները: Այս համատեքստում քննական շարադրմամբ լուսաբանվել է Հայոց Կաթողիկոս Ստեփանոս Ե. Սալմաստեցու (1545–1567 թթ.) նախաձեռնությամբ գումարված 1547 թ. Սուրբ Էջմիածնի խորհրդաժողովի կարեւորագույն դերը: Սալմաստեցու օրոք Հայաստանի ազատագրու-

[12] Տե՛ս Տեր Արարատ քահանա Պողոսյան, *Սուրբ Էջմիածնի դերը ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում*, էջ 135:

թյան համար որոշ քայլեր նախաձեռնվեցին գաղափարական ու տեսական մակարդակից ավելի գործնական միջոցառումների՝ հստակ գործողությունների անցնելու առումով։

Հայ ժողովրդի համար հատկապես աղետալի ու կորստաբեր էին ԺԶ.–ԺԷ. դարերի թուրք-պարսկական՝ պարբերաբար կրկնվող պատերազմական գործողություններն ու առճակատումները, որոնք մղում էին տարածաշրջանում գերիշխանության հաստատման, ազդեցության ոլորտների ու տիրապետության սահմանների ընդլայնման համար։ Աշխարհաքաղաքական այսպիսի դժնդակ իրադրության պայմաններում հայ ազատագրական՝ հիմնականում տեղային բնույթ կրող պայքարը թեւակոխեց նոր՝ առավել համակարգված գործողությունների ձեռնարկման շրջափուլ։ Հայ ազատագրական պայքարի կազմակերպչի ու այդ պայքարը համակարգողի դերն ստանձնեց Հայոց Եկեղեցին՝ ընդգրկելով ազգային-հասարակական ու եկեղեցական բոլոր դասերի ներկայացուցիչներին։ Այդպիսով Հայոց Եկեղեցին ազատագրական պայքարին փորձում էր տալ համազգային, համահայկական բնույթ։ Հենց այս նպատակի իրականացմանն էր միտված 1547 թ. Ս. Էջմիածնում գումարված գաղտնի խորհրդաժողովը։ Գաղտնի ժողովում որոշվեց ստեղծել պատվիրակություն, որը լիազորված կլիներ բանակցելու եվրոպական պետությունների հետ եւ փորձելու լուծել Հայաստանի արեւելյան՝ Սեֆյան Պարսկաստանի տիրապետության ներքո եղած հատվածի ազատագրման հարցը։ Պետք է նշել, որ 1530–1540-ական թթ. Եվրոպայում ստեղծված իրադրությունը եւ քաղաքական բարենպաստ պայմանները որոշակիորեն նպաստավոր էին թվում հայ գործիչներին եւ հույսեր էին ներշնչում, որ Հայաստանի ազատագրության ուղղությամբ ձեռնարկված գործնական քայլերը կարող էին հաջողությամբ պսակվել։ Ստեղծված պատվիրակությունը, եվրոպական մի շարք երկրների տիրակալների ու Ռուսաստանի գահակալ Իվան IV Ահեղի (1547–1584 թթ.) հետ տեղի ունեցած բանակցությունների արդյունքում խոստումներից ավելի էլ ոչինչ չստանալով, Հայոց հայրապետի գլխավորությամբ ձեռնունայն վերադառնում է Հայաստան։ Ինչպես իրավամբ եզրակացնում է հետազոտողը, Հայոց կաթողիկոս Ստեփանոս Ե. Սալմաստեցու նախաձեռնությամբ գումարված գաղտնի խորհրդաժողովի կարեւորագույն դերն այն էր, որ առաջին անգամ համակարգված պայքար սկսելու եւ օտարի լծից Արեւմուտքի օգնությամբ ազատագրվելու խնդիր առաջա-

ցավ՝ նախանշելով այն ճանապարհը, որով հետագայում երկար ժամանակ պետք է ընթանար հայ ազատագրական պայքարը[13]։

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում հետազոտողը քննության է առել Հայաստանի ազատագրության գործի կազմակերպիչ, Ամենայն Հայոց Կաթողիկոս (1567–1576) Միքայել Ա. Սեբաստացու գործունեությունն ու Հայաստանի ազատագրության խնդրին անմիջականորեն առնչվող մի շարք հարցեր։ Միքայել Ա. Սեբաստացին շուրջ մեկուկես տասնամյակ, աշխարհաքաղաքական ու ներքաղաքական անբարենպաստ հանգամանքներով պայմանավորված, հարկադված դադար առնելուց հետո կրկին ձեռնամուխ եղավ հայ ազատագրական պայքարի կազմակերպման գործին։ Ավելորդ կասկածներից խուսափելու համար գաղտնի խորհրդաժողովի կազմակերպման գործը վստահվեց Միքայել Աթոռակից կաթողիկոսին, որին Մայր Աթոռից բացակայելու համար հարկավոր էր հիմնավոր պատճառաբանություն։ Ըստ պատմական վկայությունների՝ Միքայել կաթողիկոսը իբր բռնություններից խուսափելու նպատակով է հեռացել Մայր Աթոռից, սակայն ակնհայտ է, որ եթե նպատակը բռնությունից խուսափելը լիներ, ապա նա ընդամենը մի քանի ամիս անց ու հապճեպ չէր վերադառնա Մայր Աթոռ, բացի այդ՝ հետապնդումների ու հալածանքների պետք է ենթարկվեին նաեւ աթոռակից մյուս կաթողիկոսները, այդ թվում նաեւ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ստեփանոս Ե. Սալմաստեցին, սակայն նրանց՝ Մայր Աթոռը հարկադրաբար լքելու վերաբերյալ պատմական որեւէ հիշատակություն կամ ակնարկ չի պահպանվել։ Ի տարբերություն Ս. Էջմիածնի գաղտնի ժողովի, որի մասնակիցների ինքնության վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել, մեզ հայտնի են Սեբաստիայի ժողովի մասնակից շուրջ քսաներկու բարձրաստիճան եկեղեցականներ ու նրանց գործունեության վայրերը։ Այս տեղեկություններից պարզվում է, որ նրանք հրավիրված են եղել Հայաստանի թե՛ արեւելյան, թե՛ արեւմտյան հատվածներից։ Ուշագրավ է նաեւ այն փաստը, որ Սեբաստիայի ժողովի մասնակիցների թվում հիշատակվում է Երուսաղեմի Հայոց պատրիարք Անդրեաս արքեպիսկոպոսը։ Ամենապատիվ սրբազան հոր եւ մի շարք այլ նշանավոր արքեպիսկոպոսների մասնակցությունը ժողովին մեզ հուշում է, որ ժողովում քննարկված հարցերը կարեւոր, համահայկական բնույթ են ունե-

[13] *Տե՛ս* Տեր Աբրահամ քահանա Պողոսեան, *Սուրբ էջմիածնի դերը ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում, էջ 153։*

ցել։ Սեբաստիայի Ս. Նշան վանքում Միքայել Սեբաստացու նախաձեռնությամբ 1562 թ. հրավիրված ժողովը ձեւավորում է պատվիրակություն՝ Աբգար դպիր Թոխատեցու գլխավորությամբ, որը պետք է հատուկ հանձնարարություններով ու դիմում-գրություններով եվրոպա մեկներ։ Հարկ է շեշտել, որ երկրորդ գլխում աշխատության հեղինակը, սկզբնաղբյուրների եւ ուսումնասիրությունների քննությամբ, հիմնավորում է, որ 1562 թ. ժողովում հաշվի առնվեց նախորդ՝ 1547 թ. փորձառությունը եւ գաղտնի ժողովի գումարման վայրը պարսից տիրապետության ներքո գտնվող տարածքից՝ Ս. Էջմիածնից տեղափոխվեց Օսմանյան Թուրքիայի ենթակա տարածք։ Ըստ հեղինակի՝ խորհրդաժողովի վերաբերյալ պահպանվել են մի շարք վավերագրեր եւ պատմական վկայություններ, որոնց մի մասն այսօր տարբեր հետազոտողների շնորհիվ հասանելի է, սակայն այս ժողովին վերաբերող որոշ գրություններ շարունակում են անհայտ մնալ։ Տեր Արարատը եզրակացնում է, որ Ստեփանոս Ե. Սալմաստեցուց սկսած՝ հայ ազատագրական պայքարի գաղափարախոսներն աստիճանաբար զարգացնում էին մի նոր քաղաքական կողմնորոշման ուղղություն՝ Հայաստանն ազատագրել Ռուսաստանի օժանդակությամբ, իսկ Միքայել Ա. Սեբաստացի կաթողիկոսի նախաձեռնությամբ գումարված 1562 թ. Սեբաստիայի ժողովն էլ գնահատում որպես ազատագրական պայքարի կարեւորագույն հանգրվան։

Այս ենթագլուխն ամփոփելով՝ հեղինակը ցավով արձանագրում է., որ «1562 թ. Սեբաստիայի խորհրդաժողովը թեեւ չհասավ իր բուն նպատակին՝ Հայաստանի ազատագրությանը, այնուամենայնիվ, այն եւ Աբգար Թոխատեցու բանագնացությունն իրենց ուրույն տեղն ունեցան հայ ազատագրական պայքարին համահայկական բնույթ հաղորդելու եւ Հայաստանի ամբողջական ազատագրման գաղափարը կյանքի կոչելու հետագա ծրագրերում»[14]։

Երրորդ գլխում՝ «Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսը եւ հայ ազատագրական պայքարը», որը բաղկացած է երկու ենթագլուխներից (ա. «Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսի՝ հայ ազատագրական պայքարի ուղղությամբ իրականացրած գործունեությունը 1655–1674 թթ.», բ. «Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսի գործունեությունը 1677–1680 թթ.»), համա-

[14] Տեր Արարատ քահանա Պողոսյան, *Սուրբ Էջմիածնի դերը ԺՋ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում, էջ 193։*

կողմանի ու հիմնավոր ներկայացված է հայ ազատագրական պայքարի կազմակերպման գործում կարեւոր դերակատարում ունեցած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գահակալ Հակոբ Դ. Ջուղայեցի (1655–1680) հայրապետի գործունեությունը։

Առաջին ենթագլխում հետազոտողը ԺԷ. դարը իրավամբ, բացառությամբ առաջին քառորդի, բոլոր առումներով համարում է Հայոց Եկեղեցու վերազարթոնքի շրջան՝ եզրահանգելով, որ այն մեծ ազդեցություն է թողել ոչ միայն Հայոց Եկեղեցու, այլեւ բովանդակ հայ ժողովրդի պատմության հետագա ընթացքի վրա։ Վերազարթոնքի այս շրջանը պայմանավորված էր հատկապես ԺԷ. դարում ուսյալ եւ նվիրյալ հոգեւորականների գործունեությամբ, ինչը եւ նպաստեց հայ ազատագրական պայքարի վերելքին։ Միաժամանակ՝ միջազգային կարեւոր նշանակությամբ մի քանի հաշտության պայմանագրերի կնքումը Եվրոպայում, ինչպես նաեւ Կրետեի պատերազմը (Կանդիայի պատերազմ, 1645–1669 թթ.) 1640-ական թվականներին կրկին իրատեսական էին դարձնում Հայաստանի ազատագրության հարցը։

ԺԷ. դարի երկրորդ կեսի հայ իրականության մեջ շուրջ երկուսուկես տասնամյակ հայ ազատագրական պայքարը կազմակերպելու փորձերը սերտորեն առնչվում են Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսի անվան հետ, ուստի մենագրության մեջ վերոնշյալ ենթաբաժանումներով հանգամանալից ու համոզիչ ներկայացվել է Հակոբ Դ. Ջուղայեցու կարեւոր ներդրումը հայ ազատագրական պայքարի կազմակերպման եւ պայքարի հետագա կողմնորոշման հարցում։ Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսը գահ բարձրացավ պատմական մի ժամանակաշրջանում, երբ աշխարհում տեղի էին ունենում աշխարհաքաղաքական կարեւոր փոփոխություններ։ Բացի դրանից՝ նրա գահակալությունը զուգադիպեց Հայոց Եկեղեցու ներքին կյանքի խռովահույզ անցքերին։ Մենագրության հեղինակը, հիրավի, կարեւորելով Հակոբ Ջուղայեցու ազատագրական ձեռնարկումները, եզրակացնում է, որ նրա նպատակն էր պատրաստել հայությանն ազգային-ազատագրական պայքարի, միավորել ժողովրդի ուժերը, ստեղծել դիվանագիտական կապեր։

Երկրորդ ենթագլխում Արժանապատիվ Տեր Արարատ քահանան հանգամանորեն լուսաբանում է Հակոբ Դ. Ջուղայեցու գահակալության տարիներին հայ ազատագրական պայքարի ուղղությամբ 1678 թ. (հեղինակը Ս. Էջմիածնի գաղտնի ժողովի գումարման ավելի արժանահավատ թվական է համարում 1678 թ., քան 1677 թ.) կաթողիկոսի անմիջական նախա-

ձեռնութ յամբ հրավիրված Ս. Էջմիածնի գաղտնի ժողովն ու դրան առնչվող մի շարք հարցեր: Այս համատեքստում արժեւորելով Հակոբ Դ. Ջուղայեցու գործունեութ յունը՝ հեղինակն արձանագրում է, որ հասունացել էր պահը, երբ հնարավոր դարձավ հայ ազատագրական պայքարի կազմակերպումը եւ քաղաքական կողմնորոշումը անիրատեսականից տեղափոխել առավել իրատեսական տիրույթ: Փաստորեն, Ս. Էջմիածնի գաղտնի ժողովը շրջադարձային, ուղենշող դերակատարութ յուն ունեցավ հայ ազատագրական պայքարի գաղափարական կողմնորոշման հարցում, ինչպես նաեւ հող նախապատրաստեց հետագա գործիչների՝ առավել իրատեսական ծրագրերի մշակման եւ գործնական քայլերի համար:

Ս. Էջմիածնի գաղտնի ժողովի մասին տեղեկութ յունները սերտորեն կապված են հայ ազատագրական շարժման երեւելի գործիչ Իսրայել Օրու գործունեութ յան հետ: Հակոբ Դ. Ջուղայեցու գործունեութ յան շնորհիվ, շուրջ երկու տասնամյակ հայութ յան եւ օտար շահագրգիռ ուժերի շրջանում համապատասխան աշխատանքներ տանելուց հետո, հայ ազատագրական պայքարի կազմակերպումը եւ քաղաքական կողմնորոշումը, ինչպես նշվեց, անիրատեսականից տեղափոխվեց առավել իրատեսական, գործնական քայլերի կազմակերպման տիրույթ. աստիճանաբար հասունացավ Հայաստանը Ռուսաստանի օժանդակութ յամբ ազատագրելու քաղաքական կողմնորոշումը: Ցավոք, 1680 թ. մայիսի 30-ին Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսը ծանր հիվանդացավ ու անկողին ընկավ՝ չկարողանալով իրականացնել ծրագրված ուղեւորութ յունը եւ շարունակել Կ. Պոլսում սկսված բանակցութ յունները: Անկարող լինելով հաղթահարել հիվանդութ յունը՝ Հայոց Հայրապետը օգոստոսի 1-ին կնքեց իր մահկանացուն: Այս ենթագլխի շարադրանքն ավարտելով՝ հետազոտողն իրավացիորեն նշում է. «Թեեւ Հակոբ Դ. Ջուղայեցու նախաձեռնած՝ Հայաստանի ազատագրութ յան ծրագիրը մնաց անավարտ եւ առժամանակ հետաձգվեց, իսկ բանակցութ յուններին վերաբերող փաստաթղթերը ցիրուցան եղան, այնուամենայնիվ, Հայոց Հայրապետի՝ հայ ազատագրական պայքարի կազմակերպման, արտաքին ու ներքին ուժերի համախմբման եւ հատկապես արտաքին կողմնորոշման համար շուրջ երկու տասնամյակ ձգվող անվհատ պայքարը տվեց իր դրական արդյունքները»[15]:

---

[15] Տեր Արաքս քահանա Պողոսեան, *Սուրբ Էջմիածնի դերը ԺՋ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում, էջ 257:*

Մենագրության վերջում՝ եզրակացություններում, հանրագումարի են բերվել մենագրության հիմնական արդյունքներն ու հետեւությունները: Ուշագրավ է նաեւ, որ մենագրության 160 եւ 161 էջերի ներդիրում զետեղված է «Հայ ազատագրական շարժումը XVI–XVII դդ.» գունավոր քարտեզը (քարտեզագիր՝ Վ. Մխիթարյան), որում նշված են բանագնացությունների ճանապարհային ուղղությունները: Իր բովանդակային եւ ժամանակագրական ընդգրկմամբ՝ «Հայ ազատագրական շարժումը XVI–XVII դդ.» թեմատիկ գունավոր քարտեզը նորույթ է, քանզի ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարի պատմությանն ու նրա առանձին դրվագներին նվիրված ոչ մի ուսումնասիրություն չունի նմանօրինակ քարտեզ: «Հայ ազատագրական շարժումը XVI–XVII դդ.» թեմատիկ քարտեզն ուսումնասիրողին կամ ընթերցողին կօգնի ավելի լավ պատկերացնել ԺԶ.–ԺԷ. դարերում Հայաստանի ազատագրության նպատակով ձեռնարկված եւ Ստեփանոս Ա. Սալմաստեցու, Աբգար դպիր Թոխատեցու (Եւդոկացի) եւ Հակոբ Դ. Ջուղայեցու գլխավորած պատվիրակությունների բանագնացական երթուղիները:

Ամփոփելով մեր խոսքը՝ նշենք, որ գրախոսվող մենագրության նյութն արդիական է, ունի գիտաճանաչողական եւ հայագիտական կարեւոր նշանակություն: Աշխատանքը գրված է պատմականության եւ գիտականության դիրքերից: Այն լուրջ ներդրում է Հայոց Եկեղեցու եւ հայ ժողովրդի ու հայ ազատագրական պայքարի պատմությունն ամբողջացնելու ուղղությամբ: Մենագրության ամբողջ շարադրանքում Տեր Արարատ քահանա Պողոսյանը դրսեւորել է բարեխիղճ հետազոտողին հարիր քննախույզ, անկողմնակալ եւ նորովի մոտեցում՝ ինչպես առանձին հարցերի, այնպես էլ հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ: Մենագրությունն ընթերցվում է չթուլացող հետաքրքրությամբ՝ երբեմն լարված պահելով ընթերցողին: Բարձր գնահատելով մենագրության գիտական արժեքը՝ հավելենք, որ այն գնահատելի, գիտական արժեքավոր ներդրում է Հայոց պատմության՝ քննարկվող ժամանակաշրջանի ամբողջական ուսումնասիրության գործում:

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, պրոֆեսոր

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքար, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի, Տեր Արարատ քահանա Պողոսյան, Ստեփանոս Ե. Սալմաստեցի, Միքայել Ա. Սեբաստացի, Հակոբ Դ. Ջուղայեցի, 1547 թ. Ս. Էջմիածնի գաղտնի ժողով, 1562 թ. Սեբաստիայի գաղտնի ժողով, 1678 թ. Ս. Էջմիածնի գաղտնի ժողով:

РЕЗЮМЕ

Данная статья представляет собой рецензию на монографию «Роль Святого Эчмиадзина в армянской освободительной борьбе XVI–XVII веков», написанную учёным-монахом Первопрестольного Святого Эчмиадзина, преподобным отцом иереем Араратом Погосяном. Исследование посвящено освещению и оценке деятельности Святого Эчмиадзина, общеармянского национального учреждения-цитадели, и работы достойных правителей престола в армянской национально-освободительной борьбе XVI–XVII веков.

Необходимо подчеркнуть, что рассматриваемый в данной монографии период является одним из наименее изученных исторических периодов армянской истории. Многие ключевые вопросы и события этого периода до сих пор не получили систематического и глубокого научного исследования и анализа. Поэтому становится приоритетной задачей стимулирование исследовательского интереса к тем историческим темам, которые, несмотря на свою важность, были исключены из внимания и всестороннего изучения широких научных кругов. В этом контексте становится актуальной публикация научных исследований, проведенных на основе обширной источниковой базы и с соответствующим методологическим обоснованием.

Сегодня армянская историография как никогда сталкивается с необходимостью защиты исторического пути и цивилизационных достижений собственного народа от различных фальсификаций. Поэтому армянским ученым следует и дальше расширять источниковую базу своих научных исследований. Особенно важно всестороннее и критическое использование документов на иностранных языках. Это в значительной степени будет способствовать более основательному и убедительному представлению армянского культурного и политического присутствия в регионе.

Тема рецензируемой монографии актуальна, имеет важное научное и арменологическое значение. Работа написана с позиции историцизма и научного подхода. Это серьезный вклад в обобщение истории Армянской Церкви, армянского народа и армянской освободительной борьбы.

SUMMARY

This article is a review of the monograph "The Role of Holy Etchmiadzin in the Armenian Liberation Struggle of the 16th–17th Centuries," written by Fr. Ararat Poghosyan, a scholar-clergyman of the Mother See of Holy Etchmiadzin. The study is devoted to highlighting and evaluating the activities of Holy Etchmiadzin, the pan-Armenian national institution and citadel, and the work of its worthy rulers in the Armenian national liberation struggle of the 16th–17th centuries.

It should be emphasized that the period examined in this monograph is one of the least studied periods in Armenian history. Many key issues and events of this period have yet to be subjected to systematic and in-depth scholarly research and analysis. Therefore, it has become a priority to stimulate research interest in those historical topics which, despite their importance, have been excluded from the attention and comprehensive study of the broader academic community. In this context, the publication of scholarly research conducted on the basis of an extensive source base and with appropriate methodological justification becomes particularly relevant.

Today, more than ever, Armenian historiography faces the need to defend its people's historical path and civilizational achievements against various distortions. Therefore, Armenian scholars should continue to expand the source base for their research. The comprehensive and critical use of documents in foreign languages is particularly important. This will significantly contribute to a more thorough and convincing presentation of Armenia's cultural and political presence in the region.

The subject of this monograph is timely and holds significant scholarly and Armenological value. The work is written from a historicist perspective and employs a scholarly approach. It represents a substantial contribution to the synthesis of the history of the Armenian Church, the Armenian people, and the Armenian liberation struggle.

СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Послание **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** по случаю праздника Святого Рождества и Богоявления Господа нашего Иисуса Христа 5

ПРОПОВЕДИ

Проповедь **ИЕРОМОНАХА ГРИГОРА МИНАСЯНА**, произнесенная во время Св. Литургии в Первопрестольном Святом Эчмиадзине 9

Проповедь **ИЕРОМОНАХА АСОГИКА КАРАПЕТЯНА**, произнесенная во время Св. Литургии в Первопрестольном Святом Эчмиадзине 14

Проповедь **АРХИМАНДРИТА АНДРЕАСА ЕЗЕКЯНА**, произнесенная во время Св. Литургии в Первопрестольном Святом Эчмиадзине по случаю праздника Наречения имени Иисуса Христа 20

РЕЛИГИОВЕДЕНИЕ

АРСЕН ШАГИНЯН — Еще раз об упоминаемом армянским епископом VII века Себэосом Персидском синоде 24

АРХИМАНДРИТ МАТЕОС ДЖУГАЕЦИ — Проповедь о свойствах веры, о слове «Итак, всякого, кто слушает слова Мои эти и исполняет их, уподоблю человеку благоразумному, который построил дом свой на камне». 46

ЕПИСКОП ДАНИЕЛ ФИНДИКЯН — «Закрытая» Литургия: *Вопрос о завесе алтаря в Великий пост в Армянской Апостольской Церкви* 69

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

ВАЗГЕН АХОЯН — Турецкие преступные действия против Армянской Апостольской Церкви в 1920—1921 гг. 80

АВАГ А. АРУТЮНЯН — Тема геноцида армян и армянский вопрос на страницах журнала «Эчмиадзин» в 1944—1999 гг. 96

ИЕРОМОНАХ АСОГИК КАРАПЕТЯН — Отношения Первопрестольного Святого Эчмиадзина и Ватикана после Великой Отечественной войны (1945—1954 гг.) 109

СООБЩЕНИЯ

ШАВАРШ АЗАТЯН — Отношения монголов и киликийского армянского царства по данным мартиролога Григория Карнеци. 128

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

АВЕТИС АРУТЮНЯН, АРМАН МАЛОЯН, НАРИНЕ ОГАНЕСЯН — Ценный труд о роли Святого Эчмиадзина в армянской освободительной борьбе XVI—XVII веков 149

CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasion of the feast of Nativity and Theophany of our Lord Jesus Christ 5

SERMONS

Sermon delivered by **HIEROMONK GRIGOR MINASYAN** during the Divine Liturgy celebrated at the Cathedral of Holy Etchmiadzin 9

Sermon delivered by **HIEROMONK ASOGHIK KARAPETYAN** during the Divine Liturgy celebrated at the Cathedral of Holy Etchmiadzin 14

Sermon delivered by **ARCHIMANDRITE ANDREAS YEZEKYAN** during the Divine Liturgy celebrated at the Cathedral of Holy Etchmiadzin on the occasion of the feast of the Holy Name of our Lord Jesus Christ 20

RELIGIOUS STUDIES

ARSEN K. SHAHINYAN — Once again on the Persian Synod mentioned by Sebēos, Armenian Bishop of the 7th century 24

ARCHIMANDRITE MATTHEOS OF JULFA – Sermon on the characteristics of faith, on Mt. 7.24, “Therefore whosoever heareth these sayings of mine, and doeth them, I will liken him unto a wise man, which built his house upon a rock.” 46

BISHOP DANIEL FINDIKIAN — “Closed” or “Veiled” Liturgy: the question of the altar curtain during Great Lent in the Armenian Church 69

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

VAZGEN HAKHOYAN — Turkish criminal actions against the Armenian Apostolic Church in 1920–1921 80

AVAG A. HARUTYUNYAN — The Armenian Genocide and the Armenian Issue in the pages of "Etchmiadzin" magazine from 1944 to 1999 96

HIEROMONK ASOGHIK KARAPETYAN — Relations between the Mother See of Holy Etchmiadzin and the Vatican after the Great Patriotic War (1945—1954) 109

ESSAYS

SHAVARSH AZATYAN — The Mongols and the Armenian Kingdom of Cilicia according to the Martyrdom of Grigor Karnetsʿi. 128

LITERARY REVIEW

AVETIS HARUTYUNYAN, ARMAN MALOYAN, NARINE HOVHANNISYAN — A valuable work on the role of Holy Etchmiadzin in the Armenian liberation struggle of the 16th—17th centuries 136

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
պատգամը մեր Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան
եւ Աստուածայայտնութեան տօնի առիթով. 5

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԳՐԻԳՈՐ ԱԲՂՅ ՄԻՆԱՍԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Էջմիածնի
Մայր Տաճարում մատուցուած Ս. Պատարագին 9

Տ. ԱՍՈՂԻԿ ԱԲՂՅ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Էջմիածնի
Մայր Տաճարում մատուցուած Ս. Պատարագին 14

Տ. ԱՆԴՐԵԱՍ ՎՐԴ. ԵԶԵԿԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Մայր Տաճարում մեր
Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի անուանակոչութեան տօնի առիթով մատուցուած
Ս. Պատարագին. 20

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՍԷՆ ՇԱՀԻՆԵԱՆ — Դարձեալ Է. դարի Սեբէոս եպիսկոպոսի յիշատակած
պարսից եկեղեցաժողովի մասին. 24

ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՋՈՒՂԱՅԵՑԻ — Քարոզ հաւատքի յատկութիւններուն
մասին, այն խօսքին մասին, որ կ’ըսէ. «[Ով որ իմ այս խօսքերս կը լսէ ու կը
կատարէ զանոնք], կը նմանի իմաստուն մարդու մը, [որ իր տունը ժայռի վրայ
շինեց]» 46

ԴԱՆԻԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՖԼՆՏԼԳԵԱՆ — «Փակ» կամ «Գոց» Պատարագ.
Մեծ պահոց փակ վարագոյրի հարցը Հայ Առաքելական Եկեղեցում 69

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՉԳԷՆ ՀԱԽՈՅԵԱՆ — Հայ Առաքելական Եկեղեցու դէմ թուրքական հանցաւոր գործողութիւնները 1920—1921 թթ. 80

ԱՒԱԳ Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ — Հայոց ցեղասպանութիւնը եւ Հայկական հարցը «Էջմիածին» ամսագրի էջերում 1944—1999 թուականներին 96

ԱՍՈՂԻԿ ԱԲՂՅ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ — Հայրենական մեծ պատերազմից յետոյ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Վատիկանի առնչութիւնները (1945—1954 թթ.) 109

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՇԱՒԱՐՇ ԱԶԱՏԵԱՆ — Մոնղոլներն ու Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը՝ ըստ Գրիգոր Կարնեցու վկայաբանութեան 128

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՒԵՏԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԵԱՆ, ՆԱՐԻՆԷ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ — Արժէքաւոր աշխատութիւն ԺԶ.—ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում Սուրբ Էջմիածնի դերի մասին 136

ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակւում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխաւորութեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քհնյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal “Etchmiadzin”

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374 10) 517 276

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.04.2026 թ.